11748

П

3(075)
П-87

Ի. ՑԵ. ՊՈՏՑՈՄԿԻՆ

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ

ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ



ԴԱՍԱԳՐՔԵՐ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1932 ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ" ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

Арм.
4-4502
25 SEP 2006
3(075)
П-87
1 DEC 2009
4-450а

ԴԱՍԱԳՐՔԵՐ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ի. ՅԵ. ՊՈՏՅՈՄԿԻՆ

# ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ

### ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Г.П.Б. в Лнгр. Ц
О.Э. 1932 г.
Акт № 641

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ
ՄՇԱԿՎԱԾ ՅԵՎ ԼՐԱՑՐԱԾ

Инв. № 20964

1932 ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ» ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

23.07.2013
11748

«Լենինն ասում էր, վոր առանց գիտության, առանց բնության ու հասարակության լուրջ ուսումնասիրության չի կարելի կոմունիզմ կառուցել։ Ուստի յեվ սովորեցեք, սովորեցեք, սովորեցեք»։

(Հին բոլշևիկների ընկերության պիոներներին արած դիմումից)։

«Պետք է աճեցնել բանվորների նոր սերունդ՝ առողջ յեվ կենսուրախ, ընդունակ բարձրացնելու խորհրդային յերկրի հզորությունը ու կրծքով այն պաշտպանելու թշնամիների կողմից յեղած փորձերից»։

(ՍՏԱԼԻՆ)։

## ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ՊԵ՞Ք Է ԳԻՏԵՆԱԼ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

*Խորհրդային Միության մեջ կառուցվում է սոցիալիզմ։*

*Սոցիալիզմի գիտակից և ակտիվ շինարար դառնալու համար անհրաժեշտ է շատ բան գիտենալ, շատ սովորել։ Պետք է գիտենալ թե մինչև հեղափոխությունը Ռուսաստանում բանվորներն ու գյուղացիներն ինչպես էյին ապրում թագավորի, կալվածատերերի, բուրժուազիայի ու յեկեղեցու լծի տակ։ Պետք է գիտենալ թե աշխատավորները բոլշևիկների կուսակցության և նրա առաջնորդ Լենինի ղեկավարությամբ ինչպես են պայքարել իրենց ճնշողների դեմ։ Պետք է գիտենալ, թե ինչպես տապալեցին թագավորին, կալվածատերերին, բուրժուազիային և ստեղծեցին խորհուրդների հանրապետությունը։ Այդ բոլորի մասին պատմում է հասարակագիտությունը։*

*Հասարակագիտությունը պատմում ու սովորեցնում է, թե ինչպես է ներկայումս մեզ մոտ ընթանում սոցիալիզմի կառուցման գործը։ Նա ցույց է տալիս պրոլետարիատի և կոլտնտեսականների դասակարգային կռիվը կուլակների, վնասարարների և խորհրդային իշխանության բոլոր թշնամիների դեմ։ Հասարակագիտությունը պատմում է, թե ինչպես են ապրում ու պայքարում բանվորներն ու աշխատավոր գյուղացիները մյուս յերկրներում, ինչպիսի ոգուտ ենք բերում մենք ամբողջ աշխարհի պրոլետարներին, ինչպես և նրանք՝ մեզ։*

*Մեր դպրոցականներն իրենց ուսման հենց առաջին տարուց պետք է պատրաստ լինեն սոցիալիստական շինարարության բոլոր թշնամիների և համաշխարհային բուրժուազիայի դեմ վճռական պայքար մղելու։*

*Այդ հարցի մասին մեր պրոլետարական գրող Մաքսիմ Գորկին հետևյալն է գրում. «մեր բանվորա գյուղացիական յերիտասարդությունը պետք է լավ գիտենա իրենց հայրերի աշխատանքի ու հերոսությունների մասին, պետք է մանրամասն կերպով գիտենա բանվոր դասակարգի և նրա կոմունիստական կուսակցության դերի մասին՝ բոլոր յերկրների պրոլետարիատի առաջապահ ջոկատի մեծ հաղթանակի կազմակերպ[illegible]*



Գոս. Библиотека ՀՍՍՀ Арм ССР им. А. Мясникяна
40596-63

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԻՆՉԵՎ 1905 ԹԻՎԸ

«Մեր յերեխաները պիտի գիտենան վոչ միայն խորհուրդների յերկրի հերոսական պայքարի անցյալի մասին սոցիալիզմի համար, այլեվ խորհուրդների իշխանության պրոլետարիատի դիկտատուրայի համար վարած մեծ պայքարի անցյալի մասին։ Մեր յերեխաները պետք է գիտենան այն անցյալը, յերբ նրանց պապերի, հայրերի ու մայրերի մեջքին սուլում էր կալվածատերերի ճիպոտը, ցարական դահիճների հրացանը; յերբ սոցիալիզմի գործի հազարավոր հերոսներ բարձրանում էյին ցարական կախաղան, յերբ մեր դասակարգի ամենալավ, ամենաառաջավոր մարդկանցից հազարավորները գնում էյին շղթայակապ սիբիրական ճանապարհներով դեպի դաժանակիր աշխատանքի ու աքսորի։

Այդ բոլորը նրանք պիտի նրա համար գիտենան, վորպեսզի ավելի աշխույժ, ավելի հավատացած լինեն մեր յերրորդ սերնդի յերթը՝ աշխատավորների վերջնական հաղթանակի ուղիով»։

(ՊՈՍՏԻՇԵՎ)։

«Ճորտատիրությունը Ռուսաստանում վոչնչով չէր տարբերվում ստրկությունից»։

(ԼԵՆԻՆ)



## ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

*Մինչև XIX դարի կեսերին Ռուսաստանում գոյություն ուներ ճորտատիրություն։ Ամբողջ հողը, հարստությունն ու իշխանությունը մեր յերկրում պատկանում էր կալվածատերերին։ Դա տիրող դասակարգն էր։ Կալվածատերերի դասակարգի գլուխ կանգնած էր ամենամեծ կալվածատերը՝ թագավորը։ Բնակչության մեծամասնությունը ճորտ գյուղացիներն ու ճորտ արհեստավորներն էյին։ Դա շահագործվողների, ճնշվածների դասակարգն էր։ Կալվածատերե-*

րը տեր էին ճորտերին՝ ինչպես իրենց սեփականությունը։ Որքան կալվածատիրոջ ճորտերի թիվը մեծ էր՝ այնքան նա հարուստ էր։ Այնպիսի կալվածատերեր կային, վորոնք ունեյին մինչև հարյուր հազարավոր ճորտ գյուղացիներ։ Համեմատաբար պակաս հարուստ կալվածատերերից ամեն մեկն ուներ մի քանի հազար։

Կալվածատերերի հողը գյուղացիներն եյին մշակում։ Գյուղացին իր ամբողջ ընտանիքով կլոր տարին պետք է աշխատեր տիրոջ համար։ Վարում էր, ցանում, նրա հացը ժողովում էր, տանում շուկա։ Կալվածատիրոջ համար կատարած այդպիսի աշխատանքը կոչվում էր կոռ։ Գյուղացին տիրոջ համար շաբաթվա մեջ 5—6 օր աշխատում էր՝ լուսաբացից մինչև արևի մայր մտնելը։

Գյուղացիական հացահատիկը փոքրիկ անհարմար հողաբաժինների վրա կծղում էր, անձրևի տակ փտում, վորովհետև տիրոջ համար կատարած աշխատանքը խլում էր գյուղացու ամբողջ ժամանակը։ Իր կիսով չափ փչացած հացահատիկը գյուղացին ժողովում էր յերբեմն մինչև իսկ ձյուները կամ ձմռանը։

Այն ժամանակ յերկաթուղի դեռ չկար։ Գյուղացիք իրենց ձիերի վրա հարյուրավոր վերստերով կալվածատիրոջ հացը կրում եյին դեպի Մոսկվա կամ ուրիշ քաղաքների շուկաները։

Դաշտում աշխատեցնելուց բացի՝ կալվածատերն իր գյուղացիների մի մասը ծառայելու յեր վերցնում տանը։ Այդ ծառաներն աշխատում եյին տիրոջ տանը վորպես հյուսներ, շնապահներ, խոհարարներ և այլն։ Այդ տանու ծառաներից շատերը կալվածատիրոջ զանազան արհեստավորներն եյին։

Ճորտ արհեստավորը ձեռքով կարում էր զգեստ, կոշիկ, շինում էր ամաններ, կահույք, փայտեղենից և այլն զանազան իրեր պատրաստում։ Այդ բոլորն ստանում էր կալվածատերը։ Ճորտ գյուղացի ձկնորսը ձուկ էր վորսում, ճորտ գյուղացի վորսորդը գազան էր վորսում՝ և այդ բոլորն անցնում էր կալվածատիրոջը։

Շնորհիվ գյուղացիական ձրի աշխատանքի՝ կալվածատերերը հարստանում եյին։ Կալվածատերերն իրենց հաճույքի համար պահում եյին ճորտ նվագողներ, դերասաններ, նկարիչներ։ Ճորտ գյուղացիներին թղթախաղով տանուլ եյին տալիս, փոխում եյին շան հետ, աքսորում եյին Սիբիր տաժանակիր աշխատանքի, տալիս եյին զինվոր։

Անբերրի նահանգների կալվածատերերն իրենց գյուղացիներին ուղարկում եյին սեփական ունեցող նահանգներն ու քաղաքներն աշխատանքի։ Նման ճորտ գյուղացիները կալվածատիրոջը հողատուրք եյին վճարում։

Հողատուրքերն այնպիսի չափերի եյին հասնում, վոր հաճախ կալվածատերերը խլում եյին գյուղացուց վոչ միայն նրա ամբողջ վաստակն, այլև ձին։

Գյուղացու համար ամենածանր գործը ճորտական ֆաբրիկում աշխատելն էր։ Շատ հաճախ ֆաբրիկները կալվածատիրոջ կալվածքից հեռու եյին շինվում, յերբեմն մինչև իսկ հարյուրավոր վերստով հեռու։

Կալվածատերերն ամբողջ գյուղերի իրենց ճորտերին քշում եյին այդ ֆաբրիկները։

Ֆաբրիկներում ու գործարաններում աշխատանքը մեծ մասամբ կատարվում էր վոչ թե մեքենայով, այլ ձեռքով։ Աշխատանքի պայմանները շատ ծանր եյին, բանվորական օրը տևում էր 16—18 ժամ։ Առանձնապես ծանր էր աշխատանքը Ուրալի գործարաններում։

Կալվածատերերից բացի՝ առևտրականներն էլ ունեյին ֆաբրիկներ։ Նրանք ունեյին ապահանքեր, գործարաններ և այլն։ Այդ գործարաններում աշխատում եյին փախած ճորտերը։ Առևտրականների գործարաններում ու ֆաբրիկներում աշխատող գյուղացիք նույնպես ամրացվում եյին այդ արտադրություններին. ինչպես կալվածատերերը, նրանք նույնպես ճնշում ու շահագործում եյին, ինչպես ճորտ գյուղացիներին։

Այդպիսով ճորտատիրությունը ստրկությունից տարբերվում էր նրանով, վոր գյուղացին ուներ իր վողորմելի փոքրիկ տնտեսությունը, թեպետ և այդ վողորմելի տնտեսության հետ նա կալվածատերը կարող էր վարվել իր ուզածի պես։ Ահա թե ինչու Լենինը գրել է, վոր ճորտատիրությունը Ռուսաստանում վոչնչով չի տարբերվում ստրկությունից։

## ՃՈՐՏԱՏԵՐ ԿԱԼՎԱԾԱՏԻՐՈՋ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանց տիրոջ կամքի ճորտը չէր համարձակվում մի քայլ անգամ անել։ Տերն իրավունք ուներ ճորտին վաճառել, նրան զոռում ծեծել, փոխանակել լավ տեսակի շան ձագի կամ ձիու հետ, ցմահ զինվորության տալ, աքսորել Սիբիր, փտեցնել բանտում։

Գյուղացուն ծեծելը նույնպիսի սովորական յերևույթ էր, ինչպես և ձիուն ծեծելը, վոր շատ գնա։ Սակայն այդ սովորական մտրակով չէր, վորով ձիուն եյին ծեծում, այդ մտրակը մանր կաշվից հյուսած մտրակ էր՝ ծայրին յերկաթալար փաթաթած։

Այդպիսի մտրակը վոչ միայն մաշկն էր պատռում, այլ և վոսկորները ջարդում։ Գյուղացիների ծեծը կատարվում էր բոլորի ներկայությանը, վորպեսզի ծեծվողի տանջանքներով գյուղացիական ամբողջ մասսային վախեցնեն։

Ճորտ գյուղացիք անասուններից էլ ցածր եյին գնահատվում։ Այդպես՝ մեծ տղամարդ ճորտը կարելի յեր գնել 100 ռուբլով, իսկ լավ վորսի շան ձագին վճարում եյին 300 ռուբլի։ Ճորտ աղջիկը գնահատվում էր 3—30 ռուբլի, յերեխայի համար հաճախ վճարում եյին միայն 10 կոպեկ։



Գյուղացին վոչ վոքի չէր կարող գանգատվել։ Նիկոլայ I թագավորը հրաման արձակեց «կալվածատիրոջ վրա գանգատվելու համար՝ 50 ճիպոտ հասցնել»։ «Կուզեմ՝ կծեծեմ, կուզեմ կխնայեմ».—ահա թե ինչ օրենքով եյին կալվածատերերը կառավարում գյուղացիներին։

Կալվածատերերը թագավորի գլխավորությամբ ունեյին զորք, վոստիկանություն և յեկեղեցի։

Թագավորը յերկրում ամենահարուստ կալվածատերն եր։ Նրան եյին պատկանում հսկայական քանակությամբ լավագույն հողեր Կենտրոնական Ռուսաստանում, Սիբիրում, Միջին Ասիայում, Հեռավոր արևելքում։ Թագավորը յերկիրը կառավարում եր կալվածատերերի հետ լիակատար համաձայնությամբ։

Ցարն ու կալվածատերն այն պատճառով եյին կարողանում այդպես կառավարել, վոր հենվում եյին զինված ուժի վրա։ Ամբողջ զորքում ու նավատորմիղում պետեր եյին ազնվական-կալվածատերերը։ Ցարն ու կալվածատերերը հատկապես կայուն զորամասեր եյին կազմում գյուղացիական ապստամբությունները ճնշելու նպատակով։

Զորքի հետ միասին՝ ցարի ու կալվածատերերի հավատարիմ ծառաներն եյին յեկեղեցին ու յեկեղեցականները։

Վանքերն ունեյին հազարավոր ճորտ գյուղացիներ, նրանք նույնպես ճնշում ու թալանում եյին գյուղացիներին։ Վանքերն ունեյին մեծ կալվածքներ, մարգագետիններ, հարուստ վարելահողեր, անտառներ։ Բացի այդ, մի քանի վանքեր իրենց ձեռքին ունեյին և աղահանքեր, ձկնորսարաններ։ Ահա թե ինչու հաճախ ապստամբած գյուղացիները գործ եյին ունենում ինչպես կալվածատերերի՝ այնպես և վանքերի հետ։

---

ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչպես եյին ապրում կալվածատերերը և ի՞նչպես եյին ապրում ճորտերը։
2. Ինչո՞ւմն եր կայանում կոռը (բարշչինա)։
3. Կալվածատերերից բացի եվ ո՞վ եր տիրում հողին ու գյուղացիներին։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Եկսկուրսիա կազմակերպեցեք կալվածատիրոջ նախկին կալվածքը։ Եկսկուրսիայից հետո գրեցեք, թե ի՞նչպես են ապրել կալվածատերերը (նկարագրեցեք նրա տունը, միջավայրը, բակը, պարտեզը, օժանդակ շենքերը)։ Սենյակների դասավորումով և հարմարություններով համեմատեցեք կալվածատերերի ու ճորտ ծառաների կյանքը։

Իմացեք, թե ձեր ռայոնում քանի՞ կալվածատիրական տնտեսություն է յեղել։ Ո՞րքան հող է կալվածատերերին պատկանել։ Ո՞րքան է պատկանել յեկեղեցիներին ու վանքերին. ո՞րքան է պատկանել գյուղացիներին։

Իմացեք, թե ինչպե՞ս են այժմ օգտագործվում կալվածատերերի տները։ Հավաքած նյութերը մշակեցեք դասարանում ուսուցչի ղեկավարությամբ։

2. Կարդացեք հետևյալ գրքերը ճորտ գյուղացիների կյանքից (ռուսերեն).—
Սալտիկով-Շչեդրին—Միշա և Վանյա։
Տերպիգորեվ—Վաճառված մանուկներ։
Ֆոգանով—Ճորտ տատիկը։
Տուրգենյեվ—Մումու։
Մարկո-Վովչոկ—Ճորտ մանուկներ։
Դմիտրիյեվ—Մարգեր։
Խմելյեվ—Մարյա ժանյակագործ։
Զամոյսկի—Պարոնի մորակը։

## ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՃՆՇՈՒՄ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կալվածատերերն ու ցարը ճնշում ու թալանում եյին վոչ միայն ճորտ գյուղացիներին։ Նրանք նույն ձևերով թալանում եյին այլ ժողովրդների բազմամիլիոն մասսաներին, վորոնք բնակվում եյին Ռուսաստանում,—բաշկիրներին, կալմիկներին, չուվաշներին, մորդվաներին, բելոռուսներին, լեհերին, ուկրաինացիներին, հայերին, վրացիներին, թաթարներին, լեռնցիներին և ուրիշներին։ Բոլոր այդ ժողովրդները նվաճված եյին Ռուսաստանի կողմից։ Ցարն ու կալվածատերերը թալանում ու վոչնչացնում եյին այդ ժողովրդներին։ Առանձնապես տուժեցին մորդվաները, չուվաշներն ու բաշկիրները։

Վոլգյան ջրային ճանապարհը կապում եր Ռուսաստանը Պարսկաստանի և Միջին Ասիայի հետ։ Ցարն ու կալվածատերերը հրով ու սրով բացեցին այդ ճանապարհը։ Ցարից հետո հանդես եր գալիս վաճառականը, վորը նրանցից պակաս չեր շահում։ Կալվածատերերը, ցարն ու վաճառականը թալանում եյին մորդվաներին ու չուվաշներին, վորոնք ապրում եյին Վոլգա գետի ափունքների մոտ։ Նրանց բոլոր գետերի մոտից ու ճոխ մարգագետիններից հեռու քշեցին։ Արգելեցին նրանց առևտրով զբաղվել վոչ միայն քաղաքներում, այլ մինչև իսկ և գյուղերում։ Արգելեցին քաղաքներում բնակվել։ Քշեցին նրանց իրենց նախկին բնակավայրերից և վերջապես մեծ տուրքերով ծանրաբեռնեցին ու ճորտացրին։

Մորդվաներն ու չուվաշները ցրվեցին անտառները։ Նրանց վորսում եյին անտառներում, վերադարձնում եյին ու բռնի կերպով ստիպում կալվածատիրոջ համար աշխատել։

Ռուսական կալվածատերերը թալանում եյին նաև բաշկիրներին։ Ձիերի ամբողջ ջոկեր քշում եյին ու յուրացնում, խլում լավագույն հողերը։ Այդ բոլորին բաշկիրները պատասխանեցին ապստամբելով։

Բաշկիր բնակչության մեջ հենակետ ստեղծելու համար կալվածատերերը տուրքից ազատում եյին բաշկիր կուլակներին—թարխաններին։ Հայտարարվեց բաշկիրների հողերի ազատ վաճառք։ Կալվածատերերը հողը «գնում եյին» ուղղակի ձրի, խաբեբայությամբ, օղիով, մորակով, կուլակներին կաշառելով։ Բռնագրավում եյին մարգագետինները։ Բաշկիրների անասուններն սկսեցին կոտորվել, վորովհետև նրանց լավագույն հողերից հեռու քշեցին։ Բաշկիրներից խլած հողերն անցնում եյին կալվածատերերի ու ցարի սեփականություն։

## ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ՝ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԱԳՐՎԵԼՈՒ

Ճորտ գյուղացիների կյանքը անտանելի յեր դառնում։

Ուժ չեր մնում այդպիսի կյանքի հետ հաշտվելու։ Առանձնապես ծանր եր գործարանային գյուղացիների կյանքը։ Գործարանային գյուղացիներ ամենից շատ Ուրալում կային։ Գործարանատերերը բանվորներին շատ չնչին չափով եյին վարձատրում։ Գործարանային վարչությունը ճորտ գյուղացիների վերջին հյութն եր քամում։

Գործարանային գյուղացին ուղղակի ուժից վեր եր աշխատում, օրական՝ 16—18 ժամ։ Նրան գործարան եյին քշում հարյուրավոր վերստեր հեռավորությունից. հաճախ մոտիկ գործարանը թողած՝ 600—700 վերստ հեռավորության վրա յեղած գործարանի եյին ամրացնում։ Բացի գործարանի աշխատանքից՝ գյուղացիներին ստիպում եյին կալվածատիրոջ մարգագետիններում խոտը հարել, ցանքսը ժողովել։

Գործարանային վարչության բռնությունները հաճախ առաջ եյին բերում գործարանային գյուղացիության կողմից դժգոհություններ և շարժումներ։

1760 թվից մինչև 1764 թիվը լեռնագործարանային գյուղացիների մեջ առաջ յեկան մի շարք շարժումներ։ Դրանք միշտ գազանային դաժանությամբ եյին ճնշվում։ Գյուղացիներին սպանում եյին, աքսորում եյին ցմահ տաժանակիր աշխատանքի, կամ թե նրանց տաժանակիր աշխատանքը փոխարինում եյին գործարանում աշխատելով։

Ավելի ու ավելի հաճախ էյին փախչում։ Փախչում էյին, վոր ազատվեն նիզութեյունից, փախչում էյին դեպի Դոնի տափաստանները։ Փախուստի համար տված պատիժները չեյին պահում տանջված գյուղացիներին։

Ավելի ու ավելի հաճախակի յեր ծագում ապստամբությունը։ «Պետի մոտ ճշմարտություն չես գտնի. պետք ե սեփական միջոցներով գործ տեսնել», ասում եյին գյուղացիները։

Սկզբում գյուղացիները պայքարում եյին կալվածատերերի դեմ մեկ-մեկ։ Մեկ այստեղ, մեկ այնտեղ սպանում եյին կալվածատերերին, հրդեհում նրանց տները։

Վերջապես շարժումներն այնպիսի չափերի հասան, վոր այլ ես դժվար եր նիզակներով ու գնդակներով դրանց առաջն առնել։

Ընդհանուր դժգոհությունը առաջ բերեց Պուգաչովյան հսկա ապստամբությունը։

## ՀԵՌՈՒ ԱՆՑՅԱԼԻՑ

(Ըստ Զամոյսկու)

Մեր գյուղական կոմունայում ապրում ե մի շատ ծերուկ պապ։ Բայց դեռ իրեն ամուր ե զգում։

Մի անգամ նրա հետ միասին պարտեզում փոս եյինք փորում։ Փոսն արդեն փորված եր և պապը նրա հատակն եր մաքրում։ Մեկ ել հանկարծ պապը կանգ առավ, դեն ձգեց բահն ու սկսեց ինչ վոր բան հանել հողի տակից. Թափթփեցին աղյուսի, կրի և ածխի կտորներ:

— Ա՛յ, ա՛յ։ Դու տես թե վորտեղ ե մնացել... — քթի տակ մրթմրթաց պապին։

— Պապի՛, այդ ի՞նչ ե։

— Կա՛ց, հիմի կտեսնես։

Նա փոսից դուրս յեկավ և յես նրա ձեռքում տեսա յերկաթալարով ծայրը փաթաթած կարճլիկ մտրակ։

Յերեկո յեր. մենք կրակ արինք և նստեցինք պապի շուրջը։

Նա յերկար լռեց, վերջապես լցրեց ծխամորճն ու սկսեց.

«Շատ վաղուց ե դա. այնքան վաղուց, վոր դժվար ե վերհիշել։ Յես այն ժամանակ քսան և մեկի մեջ եյի։ Հենց այս կալվածքում ապրում եր մի իշխան։ Դաժան մարդ եր։ Բոլոր ճորտերին փշոտ ձեռների մեջ եր սեղմել։ Մենք հպատակվում եյինք նրա իշխանությանը և ինչ վոր ուզում եր, անում եր մեզ հետ։ Վորքա՜ն մարդ ե անդամալույծ արել, քանիսի՜ն ծեծով մահվան դուռը հասցրել, քանիսին շներին գզգզելու տվել։ Շատերը փախան անտառները։

Շաբաթվա մեջ վեց որը մենք նրա համար եյինք աշխատում։ Մեր վաստակած հացով նա խնջույքներ եր սարքում, քեֆ անում, պարահանդեսներ տալիս։ Այդպես եյին ապրում բոլոր կալվածատերերը. հողը նրանց եր պատկանում, աշխատում եյին ճորտ գյուղացիք։

Բոլոր գործերը կառավարչի ձեռքին եր։ Դա տիրոջ ամենագլխավոր ծառան եր։

Աշնանը զինակոչության հրաման յեկավ. Թագավորին պետք եր զինվոր ուղարկել։

Տիրոջ կամքն եր, թե ում կտար զինվոր։ Իսկ զինվորի ծառայությունը համարյա ցմահ եր։ Քանի՜ քանիներին ծառայության մեջ ջարդում եյին, անդամալույծ դարձնում... Զինվորության այնպես եյին ճամբու դնում՝ ինչպես դեբեզման։

Իշխանը կանչեց իր կառավարչին։



— Վորո՞նց տանք զինվոր։

Իսկ կառավարիչն ինձ տանել չեր կարողանում։ Յես համարձակ տղա եյի ճշմարտությունը ճակտին եյի խփում։

Յեվ ահա նա ցույց ե տալիս մեր ընտանիքը. իսկ իմ մասին իշխանին պատմում ե։

— Պետք ե, ասում ե, սկսել Սերգունկինների ընտանիքից։

Յեկան ինձ կանչեցին. ընտանիքում սկսվեց լաց ու կոծ. իսկ յես նրանց հանգստացնում եմ։

—Վոչինչ, վիճակը վոր ինձ ե ընկել՝ կքաշեմ։

Գնացի։ Յեկան և ուրիշները։ Մյուսները դողում են, իսկ յես՝ բոլորովին հանգիստ եմ։

Իշխանը դիտեց մեզ, հրամայեց շուռ գալ, բոլորին տուն ճամբեց, միայն ինձ թողեց։ Այստեղ արդեն յես մի քիչ քաշվեցի։

—Դո՞ւ յես Պետրոս Սերգունկինը։

—Յես եմ.—իսկ ինքս գլուխ եմ տալիս։

—Դու ի՞նչ ճառեր ես ասում գյուղում, հ՞ը։



—Ինչպես բոլորը,—պատասխանում եմ յես։

—Իսկ իմ մասին ի՞նչ ես խառնակում։ Ասե՛լ ես։

Հետո թե ինչ յեղավ՝ ել չեմ հիշում։ Կարծես թե մի ինչ վոր բանով դեմքս այրեցին... Յես ընկա: Մշուշի միջով տեսնում եմ, վոր կառավարիչը հրհռում ե, վոր ժողովուրդը հավաքվում ե...Յես վեր թռա, տեսա շուրջս մարդկանց և կանչեցի.

—Յեղբայրնե՛ր, ինչո՞ւ համար ե այդ բոլորը։

Ամբողջ ժողովուրդը ցնցվեց, տնքաց։ Իսկ իշխանը կանգնած ե առջես՝ կրակ կտրած։ Յես ել կանգնած եմ կատաղած: Իշխանը հաղթանդամ ե, յես նրանից հաղթանդամ։

—Մարդի՛կ, կապեցեք դրան.—գոռաց իշխանը

Իսկ գյուղում արդեն լուրը տարածվեց։ Այնտեղից վազում եյին մարդիկ։ Յերբ ինձ սկսեցին կապոտել՝ այդտեղ յեկան և մայրս ու յեղբայրներս։ Մայրս

ընկավ իշխանի վոտները. աղաչում, եր խնդրում։ Բոլոր ազգականներս էլ նրա հետ ծնկի յեկան։ Իսկ նա էլ ավելի յեր կատաղում։ Տեսնում եմ, թե ինչպես այս անիծյալ մորակը և հարազատներիս ե հասնում... Մայրս նիհար եր, թույլ ձիապանի ձեռքից դուրս պրծավ, սկսեց տնքալով փախչել։

Յես էլ չհամբերեցի, ինձ թափ տվի, վորքան ույժ ունեյի։ Բոլոր պարանները դեն շպրտեցի...Իշխանն ինձ մոտ ցատկեց և ուզեց գլխիս հարվածել։ Մեկել տեսնում եմ՝ մայրս բարձրացավ ու հարձակվեց իշխանի վրա... Այստեղ ամբողջ ժողովուրդը վրդովվեց, հարձակվեց իշխանի և նրա բոլոր ծառաների վրա, կապեցին նրանց բոլորին և քաշ տվին գետի մոտ։ Այդտեղ էլ դրանք իրենց վերջը գտան»։

Պապին ղադարեց, խոր շունչ առավ։

«Զորքեր յեկան։ Սկսվեց կոտորածը, հոսեց այրունը։ Բունտ բարձրացրին և մյուս գյուղերը։ Թաքնվում եյին անտառներում։

Մի լավ քեֆ արինք տերերի կալվածական տներում։ Իշխանությունն իմ գլխի համար մեծ գին խոստացավ. բայց դե վոչ մի վորսորդ բախտ չունեցավ ոգտվել»...

Պապին լռեց։ Աչքերը խփեց ու մտածմունքի մեջ ընկավ։

—Պապի, իսկ հետո ի՞նչ յեղավ,—չհամբերեցինք մենք։

—Հետո, հետո...գյուղացիք սորկական վիճակից ազատագրվեցին, բայց կալվածատերերի ձեռքում դեռ ույժը մնաց։ Բանի տարիներ ելի մեզ կալվածատերերը սղմում եյին, չեյին թողնում ազատ շնչենք։

—Իսկ դո՞ւ պապի, ի՞նչպես արիր։

—Յե՞ս։ Յես էլ ստիպված յեղա թաքնվել ոտար տեղերում... Իսկ հետադայում արդեն, յերբ ամեն ինչ մոռացվեց, ծերացած այստեղ վերադարձա. իսկ այժմ, ինչպես տեսնում եք, մինչև իսկ բախտ ունեցա նոր կյանք տեսնելու։

## ՊՈՒԳԱՉՈՎՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղացիական ամենամեծ ապստաբություններից մեկը Պուգաչովյան ապստամբությունն եր 1773 թվին։ Այդ հսկայական շարժումը ծավալվեց ամբողջ



Ուրալում և Վոլգայում։ Ապստամբության գլուխ էր կանգնած Դոնի կազակ Յեմիլյան Իվանովիչ Պուգաչովը։



Պուգաչովի դրոշի տակ միացան և ճորտ գյուղացիները, և կազակները, և ճորտ բանվորները, և քաղաքների չքավորությունը, և ճնշված ժողովուրդներ-բաշկիրները։ Պուգաչովցիների զորքը վատ չեր զինված։ Պուգաչովցիք հայտնաբերեցին մեծ կազմակերպվածություն։

Սկսվեց կալվածատերերի հետ հաշվեհարդարը։ Այրվում եյին նրանց կալվածքները։ Ամբոխները անձնատուր եյին լինում Պուգաչովին։ Ցարական զինվորները, վորոնց նրա դեմ կռվի եյին ուղարկվում՝ անցնում եյին Յեմիլյան Իվանովիչի կողմը։ Նա ազատություն խոստացավ խավար, մոռացված ու ցարական չինովնիկների և կալվածատերերի կողմից թալանված ժողովրդին։

Իր անցած ճանապարհին Պուգաչովը կալվածատերերի հողերը գյուղացիներին եր հանձնում։

Պուգաչովցիներին մեծ ոգնություն եյին ցույց տալիս Ուրալի ճորտ բանվորները։ Նրանք միացան ապստամբության, այն էլ վոչ թե դատարկ ձեռներով։ Նրանք ապստամբածների համար ձուլում եյին թնդանոթներ և ռումբեր։ Թնդանոթաձիգները Ուրալի գործարանի բանվորներից եյին։ Բաշկիրները տալիս եյին հեծելազոր։

Ամբողջ Մերձվոլգյան շրջանն անցավ Պուգաչովի կողմը։ Յերբ Պուգաչովը մոտենում եր քաղաքին՝ վերջինս իսկույն նրա դեմ պատգամավորություն եր ուղարկում։

Յեկատերինայի վախեցած կառավարությունը մեկը մյուսի հետևից բանակներ եր ուղարկում Պուգաչովի դեմ կռվելու։

Նրան չթողին կենտրոնական կալվածատիրական Ռուսաստանը։ Նրա զորքը բավականաչափ լավ եր կազմակերպված՝ վոր կառավարական առանձին փոքր զորամասերը ջարդեր. սակայն կառավարական ամբողջ բանակի հանդեպ Պուգաչով անզոր գտնվեց։ Ցարիցինի (Ստալինգրադ) տակ Պուգաչովի բանակը ամհաջողության հարված ստացավ։ Պուգաչովը ստիպված փախավ։ Հարուստ կոզակները նրան դավաճանեցին ու հանձնեցին, և Մոսկվայում, Բալոտնի հրապարակի վրա 1775թ. հունվարի 10-ին նա մահապատժի յենթարկվեց։

Գյուղացիական ապստամբությունը բարբարոսային դաժանությամբ ճնշվեց. պատժի զորամասերն ամբողջ գյուղերը վոչնչացրին։

Ինչո՞ւմն եր այդպիսի մեծ շարժման անհաջողության պատճառը։

Ուրալի բանվորները Պուգաչովյան ապստամբության մեջ մեծ դեր խաղացին։ Բայց այն ժամանակ դեռ կազմակերպված բանվոր դասակարգ, վորպես գյուղացիության առաջնորդ՝ չկար։ Դեռ այն հզոր ուժը, վոր կարողանար գյուղացիության առաջնորդել հեղափոխական հաղթանակի՝ չկար։ Այդ կարող եր միայն կազմակերպված բանվոր դասակարգն անել։

Համենայն դեպս, ամեն մի ապստամբություն թեպետ և անհաջող՝ ելի մի քայլ եր հետագա հեղափոխության պայքարի ուղիյով։

> «Գյուղացիական ապստամբությունները կարող են հաջողության հասցնել միայն այն դեպքում, յերբ դրանք զուգադիպում են բանվորական ապստամբությունների հետ և յերբ բանվորները ղեկավարում են գյուղացիական ապստամբությունները»։
>
> **ՍՏԱԼԻՆ**

ՀԱՐՑԵՐ.

1) Գյուղացիներն ի՞նչպես եյին կռվում կալվածատերերի դեմ։
2. Գյուղացիական ինչ խոշոր ապստամբություններ յեղան և վո՞ր թվականին։
3) Ինչո՞ւ գյուղացիական ապստամբությունները հաջողություն չունեցան։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

*Տեղական Հեղափոխության թանգարանում ծանոթացեք այն նյութերի հետ, վորոնք բնորոշում են գյուղացիական ապստամբությունները։*

## ԻՆՉՈ՞Ւ ՎԵՐԱՑՐԻՆ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հարյուր տարի առաջ Ռուսաստանում սկսեց զարգանալ արդյունաբերությունը։ Ճորտատիրական իրավունքը վերացնելու նախօրյակին, 1860 թվականին, արդեն կային 15 հազար ֆաբրիկներ ու գործարաններ, 565 հազար բանվորներով։ Տարեց-տարի բացվում եյին նորանոր ֆաբրիկներ և գործարաններ։ Գործարանատերերին հարկավոր եյին ազատ բանվորական ձեռներ և վոչ թե ճորտ գյուղացիներ։ Հարկավոր եր, վոր բանվորներն ավելի լավ և ավելի շատ ապրանքներ արտադրեյին, վոր ֆաբրիկն ավելի շատ յեկամուտ տար։

Սակայն ճորտ բանվորը վատ աշխատող եր ֆաբրիկում։ Նրան զոռով քշում եյին ֆաբրիկ և նա հաճախ փախչում եր այնտեղից։ Այդ ձեռնտու չեր ֆաբրիկի տիրոջ։ Ճորտերի աշխատանքն oգտագործող ֆաբրիկները քիչ յեկամուտ եյին տալիս և փակվում եյին։ Բացի դրանից, ֆաբրիկատիրոջ համար անհրաժեշտ եր, վոր նրա ֆաբրիկի ապրանքը—չթեղենն ու կոշկեղենը մեծ քանակությամբ ծախվեյին։ Իսկ Ռուսաստանի բնակչության մեծամասնությունը գյուղացիներն եյին։ Ճորտ, աղքատ գյուղացին, վորին թալանում եր կալվածատերը, ֆաբրիկատիրոջ համար լավ գնորդ չեր։

Այսպիսով ֆաբրիկատերերի ու գործարանատերերի համար ճորտատիրությունը ձեռնտու չեր, կալվածատերերի համար ել ճորտ գյուղացու աշխատանքը սկսում եր քիչ յեկամուտ տալ։ Այդ նույն ժամանակ, արդյունաբերության զարգացման հետ միասին, ավելանում եր գյուղատնտեսության մթերքների պահանջը։ Քաղաքներն ավելի ու ավելի շատ հաց և միս եյին գնում։ Սկսեցին արտասահման արտածել միլիոնավոր փութ հաց. կտավատ, կանեփի թել, յուղ։ Կալվածատերերին ձեռնտու յեր հացը ծախել արտասահմանում։ Նրանք աշխատում եյին վորքան կարելի յե շատ ցանել և վորքան կարելի յե շատ հաց ստանալ։ Դրա համար հարկավոր եր բարելավել իրենց տնտեսությունը։ Իսկ ճորտ գյուղացին, ինչպես և ճորտ բանվորը, նոր պայմաններում սակավ յեկամտաբեր աշխատող եր դառնում։ Վատ մշակված հողը վատ բերք եր տալիս։ Մտրակի, յերկյուղի տակ կատարվող աշխատանքը քիչ բան եր տալիս։

Բացի դրանից, ճորտ գյուղացիները, վորոնք դժգոհ եյին իրենց դրությունից, միշտ պատրաստ եյին ապստամբել իրենց տերերի դեմ և դեն շպրտել նրանց լուծը։ Մինչև ճորտատիրական իրավունքը յեղած վերջին 30 տարվա ընթացքում տեղի ունեցան 677 առանձին գյուղացիական խռովություններ։ Կարիք յեղավ մտածել, թե չլինի՞ հանկարծ խռովությունները տարածվեն ամբողջ Ռուսաստանում։ Գյուղացիներին տիրապետելը վտանգավոր եր դառնում։

Ալեքսանդր II թագավորը ստիպված եր բացարձակորեն հայտարարել ազնվականներին, թե անհրաժեշտ ե վերացնել ճորտատիրական իրավունքը։

— Ավելի լավ ե ճորտատիրական իրավունքը վերացնել վերևից, քան սպասել այն ժամանակվան, յերբ գյուղացիներն իրենք ներքևից կվերացնեն այն,—ասաց նա ազնվականների մի ժողովում։

1861 թվականի փետրվարի 19-ին ճորտատիրական իրավունքը վերացվեց։ Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո գյուղացիներն առաջվա պես ստրուկներ եյին մնում կալվածատերերին, վանքերին, կուլակներին։



Գյուղացիներն ինչպես հատուցեցին իրենց «ազատագրման» համար։

| Նահանգներ | Գյուղացիներին տրված հողը ազատվելուց հետո | Գյուղացիներին ինչքան վճարեցին այդ հողի համար | Փաստորեն ինչքան արժեր այդ հողը |
|---|---|---|---|
| Սեահող . . . . . . | 984.100 հեկտար | 342.000.000 | 284.000.000 |
| Վոչ սեահող . . . . . | 12.286.000 » » | 342.000.000 | 180.000.000 |

> Ճորտերի հին շղթաների փոխարեն հարուստները շատ նոր շղթաներ սեղմեցին։

## ԻՆ՞Չ ԵՐ ԳՐՈՒՄ ԼԵՆԻՆԸ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԿԱԽՈՒՄԻՑ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ «ԱԶԱՏԱԳՐՎԵԼՈՒ» ՄԱՍԻՆ

«Իրականում այդ գյուղացիներն ազատվեցին հողից, վորովհետև գարերի ընթացքում գյուղացիների տիրած հողաբաժիններից կտրվեցին հսկայական տարածություններ, իսկ հարյուր հազարավոր գյուղացիներ բոլորովին առանց հողի եյին—աղքատիկ, չնչին բաժնով։ Իրականում գյուղացիները թալանվեցին կրկնակի. բավական չեր վոր կտրեցին նրանց հողը, նրանց դեռ ստիպեցին «փրկանք» վճարել իրենց թողած և միշտ իրենցը յեղած հողի համար, և այն ել հողի «փրկանքի» գինը նշանակված եր ավելի բարձր, քան իսկապես նա արժեր։ Իրենք, կալվածատերերը «ազատագրումից» տասը տարի հետո կառավարական չինովնիկների առաջ,—վորոնք հետազոտում եյին գյուղատնտեսության դրությունը,—խոստովանում եյին, վոր գյուղացիներին ստիպեցին վճարել վոչ միայն իրենց հողի, այլև ազատության համար»,

## ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

> Ցարական, կալվածատիրական, կուլակային բռնություն, ստրկանք յեվ ուժից վեր հարկեր, աղքատություն յեվ հիվանդություններ—ահա թե ինչ եյին ստանում գյուղացիները ցարի ժամանակ։ (ԼԵՆԻՆ)

«Ճորտատիրական իրավունքը վերացրին, բայց վոչ բոլորովին։ Գյուղացիները ելի մնացին առանց իրավունքի, մնացին աղքատ, ծանր հարկեր տվող, սևգաս, մնացին ճորտատիրական ստրկանքի ճանկերում։ Կալվածատիրոջ հողը գտնվում ե գյուղացիական հողի կողքին։ «Ազատագրման» ժամանակ գյուղացիներից կտրեցին նրանց անհրաժեշտ հողերը, կտրեցին արոտավայրերը, անտառադաշտերը, կտրեցին անտառը, կտրեցին անասունների ջրելու տեղերը։ Գյուղացիներին տեղ չեր մնում առանց այդ կտրված հողի, առանց արոտավայրի, առանց անասունների ջրելու տեղի։ Ուզես-չուզես, ստիպված ես գնալ կալվածատիրոջ մոտ, խնդրել, վոր թույլ տա անասուններին տանել ջրելու, կամ արածելու տեղ տա և այլն... Իսկ կալվածատերն իր տնտեսությունը չի վարում և դրամ փող ել չունի, այլ միայն նրանով ե ապրում, վոր ստրկացնում ե գյուղացիներին. Գյուղացիները կտրված հողի վրա աշխատում են առանց փողի, իրենց ձիերով վարում են նրա հողը, հնձում են նրա հացն ու խոտը, կալսում են նրա համար, նույնիսկ մի քանի տեղերում իրենց սեփական աղբը տանում են կալվածատիրոջ հողը պարարտացնելու, նրա տունն են տանում և քաթան, և ձվերը և ամեն տեսակ կենսական առարկաներ։ Ճիշտ այնպես ե, ինչպես ճորտատիրական

իրավունքի ժամանակ: Այն ժամանակ գյուղացիները ում հողի վրա ապրում էին, նրա համար էլ ձրի աշխատում էին, հիմա էլ շատ հաճախ աղայի համար աշխատում են հենց այն հողի վրա, որը վերցրել էին գյուղացիներից, նրանց «ազատագրման» ժամանակ: Այդ նույն ճորտությունն էր, ինչ որ առաջ:



Սակայն լինում են տարբեր գյուղացիներ: Կռմանք աղքատության մեջ են և քաղցած, ոմանք էլ հարստանում են: Ճորտատիրական իրավունքի վերացվելուց հետո ավելի շատանում են այն գյուղացիները, որոնք կալվածատերերի դիրքն են գտնում, որոնք հարուստների կողմն են պահում, ընդդեմ բանվորների և գյուղական չքավորության:

Հարուստ գյուղացիները պարապտանում են ոչ իրենց հողաբաժիններով. նրանք շատ հող են գնում իրենց «եղբայր» գյուղացիներից, նրանցից, ովքեր լքում են հողը, ով կարիքից ստիպված՝ տալիս է իր հողաբաժինը: Նրանք խլում են գյուղական չքավորության հողը, գնելով մեծ տարածություններ: Չքավորները լքում են իրենց հողաբաժինները, որովհետև չունեն լծկան, չունեն սերմացու, ոչնչով չեն կարող վարել իրենց տնտեսությունը:

Ամեն տարի տասնյակ և հարյուր հազար մանր գյուղացիներ և արհեստավորներ փակում են իրենց խրճիթները և դառնում են վարձու բանվորներ, բատրակներ, սևագործ բանվորներ, պրոլետարներ: Հարուստներն ավելի են ուժեղանում, ավելի շատ են ճնշում թե չքավորության և թե միջակ գյուղացիներին: Հարուստներն իրենց ձեռքումն են պահում թե հողի, թե անասունների, թե գործիքների և թե փողերի մեծ մասը: Ոչ միայն չքավորներն, այլև միջակ գյուղացիները երբեք չեն ազատվի կարիքից...

Կալվածատերերի նման, հարուստ գյուղացիներն էլ ապրում են ուրիշի աշխատանքով: Կալվածատերերի նման նրանք հարստանում են, որովհետև քայքայում և աղքատանում են գյուղացիության մասսաները: Կալվածատերերի պես նրանք աշխատում են որքան կարելի է շատ աշխատանք ծծել իրենց բատրակներից և որքան կարելի է քիչ վճարել նրանց»:

> «Կուլակին կարելի է և հեշտությամբ կարելի է հաշտեցնել կալվածատիրոջ, ցարի ու տերտերի հետ, եթե նույնիսկ նրանք կռվել են, բայց բանվոր դասակարգի հետ—երբեք:
>
> (ԼԵՆԻՆ)



> «Կուլակները ամենագազանային, ամենակոպիտ, ամենավայրենի շահագործողներն են, որոնք հաճախ վերականգնել են երկրների պատմության ընթացքում կալվածատերերի, թագավորների, տերտերների և կապիտալիստների իշխանությունը: Այդ արյունարբուները հարստացել են ժողովրդի կարիքի գծով, այդ տզրուկները խըմել են աշխատավորների արյունը, հարստանալով այնքան շատ, որքան շատ սովել են բանվորները քաղաքներում ու «ֆաբրիկներում»:
>
> ԼԵՆԻՆ

## ՀԱՐԿԱՀԱՎԱՔԸ

Բաչալ Գասպարը (այդպես էին անվանում նրան ճաղատության համար)—գյուղի քյոխվան էր,—գյուղացիներին ժողովի էր հավաքում:

— Դեհ, ականջ չունե՞ք, ինչ է, պրիստավը պիտի գա, հավաքվեցեք,—գոռում էր նա և քյոխվայական մտրակով խփում էր պատահած քարին ու փայտին, սպառնական շարժումներ անում:

Հայրս շատ ուշ վերադարձավ ժողովից: Ես արդեն քնած էի: Առավոտը նա լուռ էր և բարկացոտ: Ճանճը երեսից ընկներ, հազար կտոր կլիներ:

— Ի՞նչ էին ասում էդ անաստվածները—հարցրեց մայրս:

Հայրս այնպես գոռաց նրա վրա, որ ես վախենալուց չգիտեի ինչ անեի: Մեր տանը բոլորը լուռ էին:

Այնուհետև հայրս Վարդանի հետ (մեծ եղբայրս էր) գնացին գոմ և երկար ժամանակ այնտեղ թրխկոց էր լսվում: Մտա գոմ և ինչ տեսնեմ:

Գոմի մութ խորքում նրանք տախտակներով ու փայտերով առանձին տեղ էին շինում, այնպես, որ մտնողը չտեսնի, թե այնտեղ ինչ կա: Այնուհետև այնտեղ տարան ու կապեցին մեր մի տարեկան հորթը, կեր տվին: Գոմի մնացած մասում թողին միայն կովը:

— Ես մի հատ կովը որ տեսնեն, չեն տանի—ասաց հայրս վստահությամբ:

Ես սաստիկ վախեցա: Հը՛մ, ուրեմն կարող են տանե՞լ մեր կովը կամ հորթը—իմ սիրած կարմիրը, որն այնքան սիրուն էր ու շատ լավ եզ պիտի դառնար...

Կեսօրին մոտ էր, երբ մեր դուռը կոպիտ ու բարձրաձայն ծեծեցին: Հայրս պատվիրելով մեզ, որ ինքնագլուխ ոչինչ չանենք ու չխոսենք, բացեց դուռը...

Ներս մտան երեք հոգի: Մեկը մեր քյոխվա Բաչալ Գասպարն էր, մյուսը տանուտեր Համազասպը, որն ավելի լավ էր հագնված և մինչև անգամ կրծքին ինչ որ նշան էր կպցրել: Երրորդը երկրավեր կոշիկներով, գայլի աչքերով ու կարմրած քթով ստրաժնիկն էր:

— Ես մարդը Գալոյան Կիրակոսն է—զեկուցեց Բաչալ Գասպարը տանուտերին, քծնելով ու գլուխ տալով: Տանուտերը ձեռքում խաղացնելով մտրակը (որն ավելի երկար էր ու լավ, քան Բաչալ Գասպարինը), կոպիտ ու սպառնական գիժեց հորս—:

— Ինչու խարջը չես տալիս, շուն շան որդի...

Հայրս գլխարկը հանեց, ճկեց գլուխը և աղերսական ձայնով—

— Աղա ջան, խիղճ արա, չունեմ, մի քանի օր սպասի, ճարեմ, կտամ...

Տանուտերը գազանի նման գոռաց՝ «ինչ մի քանի օր» և սկսեց մտրակով ծեծել հորս... հայրս «ո՜ֆ, ո՜ֆ» էր անում և կիսալացակումած կանչում—«անաստ-

վածներ, անխիղճներ»։ Մայրս փռվեց տանուտերի վոտների տակ, իսկ Վարդանը գայրացած փորձեց բռնել տանուտերի ձեռքը։

Տանուտերն ավելի գազազացավ և հարվածներն ուղղեց Վարդանին (յես անկյունում թագնվել եյի ու լաց եյի լինում)։ Վարդանը փորձում եր պաշտպանվել, հետո կորցրեց ինքն իրեն, դոռաց և փորձեց ինքն էլ խփել, բայց այստեղ հանդես յեկավ ստրաժնիկը, վորի վոտքի հարվածից նա ընկավ գետին։



Ի՞նչ սուգ ու լաց եր մեր տանը, դժվար ե պատմել։

Քաչալ Գասպարը և ստրաժնիկը մտան գոմ, կտրեցին կովի կապը և դուրս քշեցին...

Տարան մեր միակ կովը։

Իզուր մայրս փորձեց մի վերջին անգամ գութ աղերսել գազաններից։ Նրան էլ վոտով հրեցին և նա գլորվելով, վայր ընկավ և ուշաթափվեց։

Տարան մեր վերջին կովը...

Կես ժամ հետո, յերբ մենք նստել եյինք լուռ ու տխուր, ներս մտավ Քաչալ Գասպարը ստրաժնիկի հետ և հայհոյելով բռնեց Վարդանի թևից.

— Վեր կաց, ախմախ, պրիստավը կանչում ե։ Տո հայվան, ախր քանի՞ գլուխ ունես ուսիդ, վոր տանուտիրոջ վրա ձեռք ես բանձրացնում...

---

ՀԱՐՑԵՐ.

1) Ինչու կալվածատերերն ու ֆաբրիկատերերը հարց բարձրացրին ճորտատիրությունից գյուղացիների «ազատվելու» մասին։

2) Վ՞որ թվին տեղի ունեցավ գյուղացիների «ազատագրումը»։

3) Ի՞նչ եր գրում Լենինը ճորտատիրական իրավունքի վերացման մասին։

4) Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո ի՞նչ նոր շահագործող յերևաց գյուղում։

5) Կուլակներն ինչպես եյին շահագործում գյուղացիներին։

## ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ ՖԱԲՐԻԿԱՏԵՐԵՐԸ, ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ, ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Ճորտատիրական իրավունքը վերացվելուց հետո, ֆաբրիկատերերն ու գործարանատերերը ստացան մեծ քանակությամբ ազատ և եժան բանվորական ձեռ-



քեր։ Շատ գյուղացիներ չեյին կարող ապրել իրենց մի փոքրիկ կտոր հողով, գնում եյին ֆաբրիկներ, գործարաններ և նոր ստրկության մեջ եյին ընկնում,—կապիտալիստի մոտ։

Արագությամբ շատանում եյին ֆաբրիկները, գործարանները, շատանում եր բանվորների թիվը։ Այսպես, օրինակ, մինչև ճորտատիրական իրավունքի վերացումը Ռուսաստանում կար 700 հազար բանվոր, 1897 թվին—1 միլիոն 400 հազար, 1897 թվին—2 միլիոնից ավելի։

Աշխատավորների հաշվին ավելանում եր կապիտալիստների հարստությունը։ Բանվորական օրը 14 ժամ եր, իսկ մի քանի ֆաբրիկներում հասնում եր մինչև 18—20 ժամի։ Ֆաբրիկներում կապիտալիստներն սկսեցին լայն չափով օգտվել անչափահասների աշխատանքով։ Անչափահասների աշխատանքը շատ եժան եր գնահատվում (օրական տալիս եյին 10 կոպեկ. հաճախ անչափահասն աշխատում եր չափահասի փոխարեն)։ Սակայն չափահաս բանվորն ես քիչ աշխատավարձ եր ստանում,—ամսական 8-ից մինչև 12 ռուբլի։ Այդ փողը հազիվ հազ բավականանում եր քաղցից շուտ չմեռնելու համար։

Ֆաբրիկներում բանվորներին տուգանում եյին կամայականորեն, առանց վորևե կանոնի։ Պատահում եր, վոր ամբողջ աշխատավարձը դուրս եյին գալիս իբրև տուգանքներ։ Բանվորները վոչ մի իրավունք չունեյին։ Յերբեմն նրանք խնդրագրեր եյին տալիս տեղական վոստիկանությանը։ Իսկ ինչպես եր պատասխանում տեղական վոստիկանությունն այդ խնդրագրերին։ Ահա մի օրինակ, 1879 թվականին Պերմի մի խոշոր գործարանում բանվորները խնդրեցին ցարական վոստիկանությանը՝ գոնե մի քիչ լավացնել անտանելի ծանր դրությունը։ Ցարական վոստիկանությունը բանվորների այդ խնդրին պատասխանեց մի այսպիսի հրամանով—«ծեծել ամբողջ գործարանը»։ Այնտեղ ուղարկվեց զինվորական մի ջոկատ։ 1000 բանվորներից 37-ը մահացու ծեծի յենթարկվեցին, իսկ 25 բանվոր շուտով մեռան ծեծից։

Ցարը, կապիտալիստը, կալվածատերը, վաճառականը, կուլակը, տերտերը—բանվոր դասակարգի թշնամիները՝ յոթը կաշի եյին քերթում թե բանվորից և թե աշխատավոր գյուղացուց։ Ռուսաստանում, ինչպես և արտասահմանում, կապիտալը զարգանում, աճում եր բանվորական ամենալայն մասսաների և աշխատավոր գյուղացիների արյուն-արցունքով ու քրտինքով։ Չնայելով բանվորների անտանելի ծանր դրության, նրանց գիտակցությունն աճում եր, բանվոր դասակարգն իր միջից տալիս եր կապիտալիստների դեմ մղվող պայքարի ղեկավարներ, սակայն նա դեռ չեր կազմակերպված և կապիտալիստների դեմ մղվող պայքարը հաճախ անհաջող եր վերջանում։

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՆԱՐՈԴՆԻԿՆԵՐԸ

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո կալվածատերերի ստրկանքը, ուժից վեր հարկերը, աղքատությունը մնում եյին նույն չափով, ինչպես և ճորտատիրական իրավունքի ժամանակ։ Այս պատճառով լինում եյին գյուղացիական ապստամբություններ, վորոնք ճնշվում եյին նույնպիսի դաժանությամբ՝ ինչպես առաջ։

Հեղափոխական յերիտասարդությունն ուզում եր օգնել աշխատավորներին, կալվածատերերի դեմ նրանց մղած պայքարում։

Հեղափոխական յերիտասարդությունը նարոդնիկներ եյին կոչվում։ Նրանք ժողովրդի մեջ գնում եյին աշխատելու, ձևանալով իբր առողձագործներ, բուժակներ, ուսուցիչներ։ Նրանք աշխատում եյին կտրել ժողովրդի հավատը դեպի ցարը, աստվածը, գաղտնի գրուքներ եյին կազմակերպում, տարածում եյին ար-

40556-67
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР

գելված գրքեր, Նրանք պայքարում եյին գյուղացիների ազատագրության համար։

Նրանք ժողովրդի հետ խոսում եյին կալվածատերերի, ֆաբրիկատերերի, ցարի ու մինիստրների դաժանության մասին։ Նրանց հետևում եյին, բռնում, բանտ գցում, կախում...

Աշխատանքը վտանգավոր եր... և նարոդնիկները համարյա հաջողություն չեյին ունենում։ Նրանք չեյին կապված ժողովրդական լայն մասսաների հետ։

Նարոդնիկները վորոշեցին սպանել—վոչնչացնել աշխատավորների թշնամիներին—ցարերին, մինստրներին, ժանդարմներին։

Ցարի դեմ կազմակերպված մահափորձի մասնակիցներից մեկը Ստեփան Խալտուրինն եր, վորը պատրաստում եր Ձմեռային պալատի պայթեցումը։ Այստեղ ապրում եր Ալեքսանդր 2 թագավորը։

## ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ ՊԱՅԹՈՒՄԸ

Խալտուրինը Ռուսաստանի ամենաառաջին բանվորական կազմակերպություններից մեկի ղեկավարն եր։ Չնայելով, վոր Խալտուրինը հեռու յեր նարոդնիկներից, նա մտածեց սպանել թագավորին։

Իր նպատակին իրագործելու համար նա վորոշեց մտնել ձմեռային պալատ և պայթեցնել պալատը։

1880 թվ. ձմեռը նրան հաջողվեց ծանոթանալ պալատի վառարանները վառողի հետ և նրա միջոցով, ուրիշի անունով՝ ընդունվել պալատում իբրև կահկարասիների վողորկող։

Պալատի բանվորներն ու ծառաներն ապրում եյին նկուղահարկում։ Այնտեղ տեղավորեցին նաև Ստեփանին։ Բայց սպանությունն իրագործելու համար այդ բավական չեր։ Հարկավոր եր ուսումնասիրել նկուղի վրա գտնվող ցարական սենյակների դիրքը, ցարի սովորությունները, հետևել՝ թե նա վո՞ր ժամին և վո՞ր սենյակումն է լինում, պալատը տանել պայթուցիկ նյութ —դինամիտ։

Պալատը լեփլեցուն եր լրտեսներով ու վոստիկաններով: Ցուրաքանչյուր բանվորի հետևում եյին բազմաթիվ աչքեր։ Արթուն պաշտպանում եյին թագավորին։ Վերևի սենյակներն ընկնել անկարելի յեր։

Սակայն Ստեփանի համար անկարելի վոչինչ չկար: Նա բարեկամանում է պալատի սպասարկուների հետ և աշխատում է ձեռք բերել նրանց վստահությունը։ Նրա գործը քայլ առ քայլ առաջ է գնում։ Նա կարողանում է մտնել թագավորի սենյակները և իմանում է, վոր նկուղի վերևը գտնվում է թագավորի սեղանատունը և վոր թագավորն այնտեղ ճաշում է յերեկոյան ժամը ճիշտ 6-ին։

Մի անգամ, աշխատելով թագավորի սենյակներում, Ստեփանը դեմ առ դեմ հանդիպեց նրան։ Դա շատ հարմար րոպե յեր նրան սպանելու համար, բայց Ստեփանը զենք չուներ։

Ստեփանը սաստիկ ցավեց այդ անհաջողության համար։ Նա այնքան էլ չեր ուզում պայթում կազմակերպել, վորովհետև պայթումի դեպքում թագավորի հետ պիտի զոհվեյին անմեղ մարդիկ—պահակները, ծառաները։ Բայց ի՞նչ արած, —ուրիշ յելք չկար։

Կազմելով նկուղի վերև գտնվող սենյակների դիրքը, Խալտուրինն սկսում է պայթման նախապատրաստությունը։ Նրան հարկավոր եր մինչև 20 կիլոգրամ դինամիտ։ Ի՞նչ անել այդքան քանակությամբ դինամիտն աննկատելի անցկացնելու համար։ Վո՞րտեղ պահել դինամիտը, վոր լրտեսների սրատես աչքերը չընկատեն նրան։



Ստեփանը կտոր-կտոր հավաքում է դինամիտներն իր բարձի մեջ։ Դինամիտի գոլորշումներից նա տանջվում է սաստիկ գլխացավով։ Ամեն րոպե դինամիտը կարող է պայթել տաքությունից:

Պալատ մտնողներին ու դուրս յեկողներին խուզարկում եյին։ Խալտուրինը դինամիտը տանում եր մազերի և ականջների մեջ:

Վերջապես հասավ այն որը, յերբ ամեն ինչ պատրաստ եր պայթումի համար։ 1880 թվականի փետրվարի 5-ին Ստեփանը դինամիտը դնում է պատրաստած անցքի մեջ և վառում է պատրույգը։

Յերեկոյան ժամը վեցից պակաս եր հինգ րոպե։ Ձմեռային պալատի հրապարակում Ստեփանին սպասում եր նրա ընկերը։

— Հ՞ը, վոնց է,—հարցրեց նա Ստեփանին։

Մինչև Ստեփանը պատասխաներ, զռռաց սարսափելի պայթյունը, վորից դուրս թռան հրապարակի մյուս կողմից տների ապակիները։ Հսկայական, սև ձագարի նման ծուխը բարձրացավ Ձմեռային պալատի վրա... սեղանատունն ավերվեց:

Սակայն թագավորն այս անգամ անվնաս մնաց։ Նա մի քանի րոպեյով ուշացավ ճաշից։

Մի տարի հետո նարոդնիկներն սպանեցին Ալեքսանդր 2-րդ թագավորին։

> «Կապիտալիստը բանվորին զրկում է ոդից, արևի լույսից, քնից։ Կապիտալիստը չի հոգում բանվորի կյանքի մասին։ Նա ձգտում է շատ աշխատեցնել բանվորին։ Բանվորների ազատագրումը պետք է դառնա հենց իրենց՝ բանվորների գործը»։
>
> (Կ. ՄԱՐՔՍ)

## ԿԱՐԼ ՄԱՐՔՍՆ ՈՒ ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍԸ

Այն ժամանակ, յերբ Ռուսաստանում դեռ նոր եր առաջ գալիս բանվոր դասակարգը, մյուս յերկրներում պրոլետարիատն արդեն բացարձակ կերպով դուրս եր գալիս պայքարելու բուրժուազիայի դեմ։ Բանվորական շարժման ղեկավարներն եյին Կ. Մարքսը և Ֆ. Ենգելսը։

Ամենամատաղ տարիներից Կ. Մարքսն աչքի յեր ընկնում իր փայլուն ընդունակություններով։ Նա խորապես մտածում եր այն ամենի մասին, ինչ վոր շրջապատում եր նրան։

Ինչո՞ւ մարդիկ այնպես վատ են ապրում։

Ինչո՞ւ մարդկանց մեծամասնությունն աշխատում է ուրիշների և վոչ թե իրեն համար։

Յերբ Կարլ Մարքսն ավարտեց Բեռլինի համալսարանը և ստացավ գիտնականի կոչում, նա ինքն իրեն պատասխան տվեց գլխավոր հարցերից մեկի առթիվ։ Նա հասկացավ, վոր հասարակության կյանքում բոլոր չարիքները առաջ են գալիս նրանից, վոր մարդկանց մասսան աշխատում է աղքատության ու տառապանքների մեջ, իսկ մարդկանց մի փոքրիկ խմբակ օգտվում է աշխարհիս բոլոր բարիքներից։ Մարքսը չուզեց միանալ մարդկանց այդ խմբակին։

Նա ասաց իր բարեկամներին—

— Ապրել, նշանակում է աշխատել, իսկ աշխատել նշանակում է պայքարել։

Յեվ նա մեծ պայքար մղեց բուրժուազիայի դեմ և այդ պայքարը չդադարեցրեց իր ամբողջ կյանքում։ Բանվոր դասակարգի գործի համար նա մեծ հեղափոխական մարտիկ եր։

Զանազան յերկրների աչքի ընկնող հեղափոխականներն սկսեցին հավաքվել նրա շուրջը:

Կարլ Մարքսը բարեկամացավ մի ուրիշ մեծ հեղափոխականի—Ֆրիդրիխ Ենգելսի հետ։

Ֆրիդրիխ Ենգելսը Մարքսի նման վառվռուն մարտիկ եր աշխատավոր մարդկության յերջանկության համար։ Կապիտալիստական աշխարհի դեմ մղվող պայքարում նա դառավ Մարքսի հավասար մարտակիցը։



Իրենց ուսմունքով Մարքսն ու Ենգելսը պարզ և ճշգրիտ պատասխան տվին գլխավոր հարցերին.—

— Ումից ե բաղկացած հասարակությունը:

— Նախ և առաջ յերկու հիմնական դասակարգերից—պրոլետարիատից ու բուրժուազիայից:

— Արդյոք այդ յերկու դասակարգերը կարո՞ղ են հաշտ ապրել իրար հետ։

— Վոչ, յերբեք։

— Ինչո՞ւ։

— Վորովհետև բուրժուազիան—այդ շահագործողների դասակարգն ե։ Նա լարում ե իր բոլոր ույժերը, վորպեսզի միշտ կարողանա պահպանել իր տիրապետությունը պրոլետարիատի վրա։

— Իսկ պրոլետարիատն ինչի՞ յե ձգտում։

— Պրոլետարիատը պայքարում ե բուրժուազիայի դեմ, վորպեսզի ստեղծի իր, պրոլետարական իշխանությունը։

— Վերջ ի վերջո ինչ հետևանք կունենա պրոլետարիատի և բուրժուազիայի այդ դասակարգային պայքարը։

— Պրոլետարիատը լիովին կհաղթանակե։

— Ինչո՞ւ համար ե այդ հաղթանակը։

— Վորպեսզի կառուցվի նոր, կոմունիստական հասարակություն, վորտեղ չեն լինի դասակարգեր և վորտեղ չի լինի մարդու շահագործումը մարդու կողմից։

Կ. Մարքսի և Ֆ. Ենգելսի գրած «Կոմունիստական մանիֆեստը» վերջանում ե հետևյալ խոսքերով.—

— Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

Կարլ Մարքսը կազմակերպեց բանվորների միջազգային միությունը—առաջին Ինտերնացիոնալը։

Մեծ ուսուցիչների—Մարքսի և Ենգելսի ավանդներով պայքարում են ամբողջ յերկրագնդի պրոլետարները։

> «Բանվոր դասակարգը վոչինչ չունի կորցնելու՝ բացի իր շղթաներից, իսկ նվաճել նա կարող ե ամբողջ աշխարհը»։
>
> Կ. ՄԱՐՔՍ ԵՎ Ֆ. ԵՆԳԵԼՍ

## ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ

Բուրժուազիայի դեմ վճռական պայքարի որինակ կարող ե ծառայել Փարիզի կոմունան Ֆրանսիայում։

1871 թվականի մարտի 18-ին Փարիզում իշխանությունն անցավ բանվոր դասակարգին։

Փարիզի բանվորներն առաջինն եյին ամբողջ աշխարհում, վորոնք ստեղծեցին բանվորական իշխանություն—պրոլետարիատի դիկտատուրա։

Բուրժուական մինիստրները Փարիզից փախան իրենց հավատարիմ մնացած զորամասերի հետ։

Բուրժուազիայի դեմ տարած հաղթանակը մի մեծ տոն եր Փարիզի աշխատավորների համար։

Կոմունան վոչնչացրեց մշտական բանակն ու վոստիկանությունը։ Սահմանվեց դատավորների և պաշտոնյաների ընտրականություն։ Յեկեղեցին բաժանեցին պետությունից։ Դպրոցներից դուրս քշեցին կրոնն ու տերտերներին։ Հայտա-



րարեցին ձրի ուսում։ Յեկեղեցիներում ակումբներ բացվեցին։ Փախած տերերի արհեստանոցները հանձնեցին բանվորներին։ Քաղաքում սկսեցին կազմակերպվել բանվորների հեղափոխական միություններ։ Փարիզն սկսեց նոր կյանք կառուցել։

Հեղափոխական լրագրերը գրում եյին.—«Փարիզը վերջին հաշվով ուզում ե հող՝ գյուղացիների համար, աշխատանքի գործիքներ՝ բանվորների համար, աշխատանք՝ բոլորի համար»։

Սակայն կոմունարները մի շարք սխալներ կատարեցին։ Նրանք թույլ տվին վոր բուրժուազիան և նրա զորքերը ազատ հեռանան Փարիզից։

Բուրժուազիան գնդակահարում եր գերի վերցրած կոմունարներին, հալածում եր նրանց։ Իսկ կոմունան, ընդհակառակը, մեղմ եր վարվում թշնամիների հետ։

Փարիզի կոմունան ընկավ, վորովհետև բանվոր դասակարգն այն ժամանակ դեռ թույլ եր և լավ չեր կազմակերպված։ Պայքարի ընթացքում ամբողջ Ֆրանսիայի բանվորներն ու գյուղացիները չոգնեցին Փարիզի բանվորներին։

Բուրժուազիան Փարիզը կտրեց մյուս Ֆրանսիայից։ Կոմունան վոչ մի տեղից չեր կարող լրացնել իր ուժերը։ Մինչդեռ բուրժուական կառավարությունը կարող եր ազատ կերպով զորքեր հավաքել։ Վերջ ի վերջո հակահեղափոխականները մեծ ուժեր հավաքեցին և կոմունան ջարդվեց։

Բուրժուազիան դաժանաբար վրեժխնդիր յեղավ կոմունարներից։ Փողոցներում բռնում եյին բոլոր նրանց, ովքեր նման եյին բանվորի։ Ում ձեռքերն այրված եյին վառոդից, իսկույն գնդակահարվում եր։

Գնդակահարում եյին բանտերում, փողոցներում, այգիներում։ Հաճախ համոզում եյին մնացած խիզախներին հանձնել զենքերը, խոստանալով ազատ թողնել, իսկ հետո գնդակահարում եյին։

Մահը շրջում եր Փարիզի փողոցներում։ Բուրժուազիան ցույց եր տալիս իր «կուլտուրականությունը», գնդակահարում եր հազարավոր բանվորների, յերբ պայքարն արդեն դադարել եր, յերբ նրանց ձեռքին այլևս զենք չկար։

Փարիզի կոմունան ընկավ։ Բայց նա ցույց տվեց, թե բանվորները կարող են ազատվել բուրժուազիայից, կարող են կազմակերպել իրենց իշխանությունը։ Կոմունարները բարձրացրին լավագույն կյանքի, կոմունիզմի համար պայքարի դրոշը։

Ամբողջ աշխարհի բանվորները յերբեք չեն մոռանա հեղափոխության նահատակներին—Փարիզի կոմունարներին։

Մեր մեծ ուսուցիչ Կարլ Մարքսը Փարիզի կոմունայի մասին գրում եր, վոր նա մեծ ազդեցություն ունեցավ բոլոր յերկրներում բանվորների ու բուրժուազիայի միջև դասակարգային պայքարի զարգացման վրա։

Փարիզի կոմունայի սխալներից բանվոր դասակարգը տեսավ, թե ինչպես պիտի պայքարել կապիտալիստների դեմ և հասկացավ, վոր ամենից առաջ հարկավոր ե ուժեղ կուսակցություն, վորը ղեկավարվի Կարլ Մարքսի ուսմունքով։

## ՖԱԲՐԻԿԱՏԵՐԵՐԻ ԴԵՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՍԿԻԶԲԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ճորտատիրական իրավունքի անկումից հետո, ավելի արագ են շատանում ֆաբրիկներն ու գործարանները։

Աճում ե բանվոր դասակարգը։

Ռուսաստանի բանվորների համար դժվար եր միանալը։ Նրանք տառապում եյին կարիքի ու աղքատության մեջ՝ կապիտալիստների ու կալվածատերերի համար մշտական կատարած տաժանակիր աշխատանքում։ Բանվորները ժամանակ չունեյին մտածելու այն մասին, թե ինչու նրանք շարունակ աղքատ են մնում, ինչպես ազատվել դրանից։ Ամեն կերպ խանգարվում եր բանվորների միանալը, կամ գազանային բռնություններ եյին գործադրվում նրանց դեմ, կամ խաբեբայություն։ Սակայն այնու ամենայնիվ վոչ մի բռնություն, վոչ մի հալածանք չկասեցրեց բանվորներին։

Բանվոր դասակարգն սկսում ե ավելի կազմակերպված պայքարել իր շահագործողների դեմ։ Կապիտալիստների դեմ բանվորների պայքարը սկսվում ե գործադուլներով։ Այս կամ այն գործարանի բանվորները դադարեցնում եյին աշխատանքը և հայտարարում եյին, վոր չեն աշխատի մինչև այն ժամանակ, յերբ կավելացնեն իրենց աշխատավարձը, կպակասեցնեն բանվորական օրը և այլն։ Գործադուլավորներին ձերբակալում եյին, աքսորում։

Այնուամենայնիվ բանվորական գործադուլների թիվը շատանում եր, ավելանում եր նաև գործադուլավորների թիվը։ Իրենց գործադուլների ժամանակ բանվորները սովորեցին պայքարելու համար դուրս գալ միասին, միահամուռ։



Առաջավոր, գիտակից բանվորների աշխատանքի շնորհիվ սկսեցին ամրապնդվել բանվորական խմբակները։ Բանվորների գործադուլներն անցնում եյին ավելի կազմակերպված և ավելի մեծ հաջողություններով, քան առաջ եր։ Իր կազմակերպվածությամբ, համախմբվածությամբ առանձնապես աչքի յե ընկնում 1884 թվականի Մորոզովյան գործադուլը։

## ՈՐԵԽՈՎՈ—ՄՈՐՈԶՈՎՅԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

(Բանվոր Մոիսեենկոյի պատմվածքը)

1884 թվին յես աշխատում եյի Որեխովո-Զուևվում Մորոզովի ֆաբրիկում։

Ֆաբրիկում աշխատում եյին խեղճ ու խավար, բոլորովին անգրագետ մարդիկ։ Խոշոր շենքերում, ամբողջ ֆաբրիկում վխտում եյին լրտեսներն ու վոստիկանները։

Եղ տեսակ մարդկանց հետ աշխատելը դժվար եր, համարյա անկարելի։ Յերկու ատաղձագործներ եյինք,—յես, մեկ էլ հանգուցյալ Վոլկովը։ Դե, ինչ խորամանկություն ասես, վոր չեյինք բանեցնում։ Կամ ուղղակի հանրակացարաններում (կազարմաներում) եյինք պրոպագանդ մղում, կամ ֆաբրիկում։ Տղերքը հավաքվում են ծխելու, իսկ յես ու Վոլկովը վերցնում ենք մի վորևե լրագիր, ինչ տեսակն էլ լինի, թեկուզ թագավորին գովող, թեկուզ հերվանը։ Բաց ենք անում եղ «թարմ» լրագիրը, յերբեմն նույնիսկ թարս բռնած (միևնույն ե, ով կտեսնի) իբր թե կարդում ենք, բայց մեր գլխից յեկած բաներն ենք ասում,—«Մինչև յե՞րբ պիտի դուք տանեք եղ տաժանակրությունը։ Ձե՞ վոր ֆաբրիկատերը ծծեց մեր արյունը, մենք խո վոչխարներ չենք»։

Բոլորը կանգնում են շունչները պահած, լսում են ու զարմանում.—«Ինչ լավ են հիմի գրում լրագրերում, եղ վո՞նց ե ցենզուրան բաց թողնում, ամա ժամանակներ յեկան, հա՞»։ «Բա դու, Անիսիմիչ, մութ տեղն եղ վո՞նց ես ջոկում գրերը, կասվի աչքեր են աչքերդ»։ Ե՞հ, ջոկելս վորն ե, յերբ լրագիրը գլխիվայր ես բռնել։ Ու ետպես կարդում ես, մեկ էլ տեսար յերևաց վարպետը ու ցրվեցին բոլորը։

Մեզ մոտ սկսվեց գործադուլը։ Ութը հազար մարդը մի մարդու պես թողին աշխատանքը։ Իսկույն և յեթ յեկան ու յեկան «մեծերը»։ Նահանգապետը զինվորներ ու կազակներ ուղարկեց։ Բանվորները մի սիրտ ու մի հոգի դարձան—«քար ու քանդ կանենք ֆաբրիկը և կցրվենք»։

Վոլկովի հետ մենք աշխատում եյինք, վոր բանը տուր ու դմփոցի չհասնի (մենք դեռ ենքան ուժ չունեյինք) և գործադուլն ինչքան կարելի յե, յերկար շարունակվի։ Խոսելն էլ շատ դժվար եր։ Հենց վոր հավաքվում եյին մի քանիսը, իսկույն վրա եյին վազում զինվորներն ու կազակները, գործի դնում մտրակներն ու հրացանների կոթերը...

Մի անգամ վոնց յեղավ, վրա հասան կազակները, բազմությունից հավաքեցին հարյուր հոգի և լցրին ճաշարան։ Դռան մոտ լիքը հրացանով զինվորներ կանգնեցրին։ Տեսնում եմ, վոր հարկավոր ե ազատել տղերանց, թե չե եղ ձերբակալությունը վատ տպավորություն կթողնի բանվորների վրա, կհուսահատվեն։ Ետեղ ինձ մոտ են վազում մեր ֆաբրիկի փոքր տղերքը—նրանք վոնց վոր հիմիկվա պիոներները—և շշնջում են —

—Բեռի, են կողմից պահակ չկա։

Մենք վազում ենք շենքի շուրջը։ Ճիշտ վոր, պահակ չկա, ամա դուռն էլ փակ ե, կողնուց ե դուռը, ծանր։ Փորձեցի ուսերովս—հեյ, վո՞րտեղ ես։ Նորից տղաները կամաց ասում են —

—Բեռի, հրեն նստարանը,—նստարանով..

Տեսնեմ առաջս յերկար նստարանն ե, վորի վրա նստում եյինք ճաշելիս։ Տղերանց հետ մենք բարձրացրինք եղ նստարանը, «ուռա» գոռացինք և ձերբա-

կալվածներն սկսեցին դուրս պրծնել։ Նայում եմ—բոլոր բանվորներն էնտեղ են վազում, զինվորներն էլ...զինվորները խոցել են ուզում բանվորներին... աչքերս մթնեցին, միտք եմ անում, թե էս է, արյուն կթափվի... Թռա դեպի զինվորները ու գոռում եմ ամբողջ կոկորդովս—

—Վո՛նց թե, մերոնց խոցե՞լ, հա՞...

Մի զինվոր հրացանը տարավ-բերեց և հենց իմ կրծքին։ Կիսամուշտակ եյի հագել, կարողացա բռնել սվինը, խլեցի հրացանը և այնպես շպրտեցի սառույցի վրա, որ կոթը կտոր-կտոր դես-դեն թռավ։ Զինվորին հետ հրեցի ու նորից կոկորդովս մեկ գոռացի։։

—Իմ ու քո յեղբայրներին ես սպանում, հա՞...

Իմ գոռոցից զինվորները յետ-յետ գնացին։ այսպիսով յես ճամփա բացի նրանց մեջ, անցնում եյի և ասում. «ձեռ մի տաք, յեղբայրներ, չէ՞ որ դուք էլ մեր հարազատ յեղբայրներ եք»։

Իրիկունը հանրակացարանում հանում եմ շորերս, ինչ եմ տեսնում. շապիկս կպել է կրծքիս՝ վոնց որ վիրակապ։ Հը՛մ, ուրեմն էն զինվորը խփեց ինձ սվինով։ Վերքն էլ բացվել էր, արյունն էլ շապկիս վրա չորացել, բայց էն ժամանակ, յերբ որ ինձ խոցել են, չեմ իմացել»։

Մարոզովյան գործադուլը մեծ նշանակություն ունեցավ բանվորների հետագա պայքարի համար։ Իր կազմակերպվածությամբ և ընկերական համախմբվածությամբ նա ցույց տվեց, որ բանվորական մասսաները գնում են իրենց ղեկավարների յետևից, պաշտպանում են նրանց՝ ձերբակալության դեպքում, կանգ չեն առնում զինված ույժով պայքարելու առաջ։ Բանվորները պահանջում եյին բարձրացնել աշխատավարձը, պակասեցնել տուգանքները, թույլ տալ բանվորների միջից նշանակվող ավագների ընտրությունը։

Կարևոր է մատնանշել բանվորների ներկայացրած պահանջների նոր բովանդակությունը։ Բանվորները չեյին դիմում խեղճուկ խնդրագրերով, այլ պահանջում եյին, որ օրենք հրատարակվի բանվորներ վարձելու պայմանների մասին։

Գործադուլը բացեց բանվորների աչքերն այն ուղղությամբ, որ ճնշումներն ու աշխատանքի պայմանները պետք է վերացնել վոչ միայն իրենց, այլ և բոլոր մյուս ֆաբրիկներում։ Գործադուլը բանվորների համար հաջողությամբ վերջացավ և կառավարությունը ստիպված եր զիջումներ անել։

Նա ստիպված եր հրատարակել օրենքներ, վորոնց միջոցով մի քիչ լավացավ ֆաբրիկի բանվորների դրությունը։ Լենինն այսպես եր գրում Մարոզովյան գործադուլի մասին.—«Կառավարությունը վախեցավ, զիջեց։ Բանվորներն իրենց դրության թեթևացման համար պետք է շնորհակալ լինեն վոչ թե պետերից, այլ իրենց ընկերներից, վորոնք աշխատում եյին վերացնել և վերացրին այլանդակ ճնշումները»։

---

ՀԱՐՑԵՐ

1) Բանվորներն ինչպես եյին պայքարում կապիտալիստների դեմ։
2) Վո՞ր թվականին տեղի ունեցավ Մարոզովյան գործադուլը։
3) Ի՞նչ նշանակություն ունեցավ Մարոզովյան գործադուլը։
4) Ցարական կառավարությունն ինչպես նեղեց բանվորներին։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Մինչև հեղափոխությունը ֆաբրիկներում ու գործարաններում աշխատող բանվորներին հարցրեք, թե նրանք քանի՞ ժամ եյին աշխատում, վորտեղ են աշխատել, յեղե՞լ են գործադուլներ և ինչպե՞ս են անցել։



## ՉՊԵՏՔ Է ԳՆԱԼ ԱՅՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ, ՎՈՐՈՎ ԳՆՈՒՄ ԵՅԻՆ ՆԱՐՈԴՆԻԿՆԵՐԸ

Նարոդնիկները ցարիզմի դեմ կռվում եյին անհատ անձնավորություններին—թագավորների ու մինիստրների սպանության միջոցով։ Ալեքսանդր II թագավորի սպանությունից հինգ տարի հետո, մահափորձ կազմակերպվեց նրա վորդու—Ալեքսանդր III թագավորի վրա։ Այդ մահափորձի կազմակերպիչն եր Վ. Ի. Լենինի յեղբայրը—Ալեքսանդր Ուլյանովը։

Ուլյանովը մտածում եր Ալեքսանդր թագավորի սպանությամբ աշխատավորներին ազատել ցարական բռնություններից։ Սակայն նրան չհաջողվեց սպանել թագավորին։ Նա ձերբակալվեց և մահապատժի յենթարկվեց (կախեցին)։



Վլադիմիր Իլյիչ Լենինը շատ եր սիրում յեղբորը։ Յեղբայրը կախվեց։ Վլադիմիր Իլյիչը տեսնում եր նարոդնիկների պայքարի անհաջողությունը, տեսնում եր լավագույն մարդկանց անկումն այդ անհավասար պայքարում։ Նա ուսումնասիրեց Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի աշխատությունները դասակարգային պայքարի մասին և՞ ցարական բռնակալության դեմ նարոդնիկների մղած պայքարի փորձը։ Լենինը մտածում եր այն մասին, թե արդյոք ուղի՞ղ է ցարի ու կալվածատերերի դեմ նարոդնիկների մղած պայքարի ուղին։ Գործը միմիայն թագավորին սպանելու մեջ չէ կայանում։ Կսպանես մեկին, կալվածատերերը մի նոր թագավոր կնստեցնեն։ Լենինն յեկավ այն յեզրակացության, թե հարկավոր է գնալ ուրիշ ճանապարհով և վոչ թե թագավորների ու մինիստրների սպանության ճանապարհով։

Հարկավոր է ստեղծել բանվորական կուսակցություն, վորի ղեկավարությամբ բանվոր դասակարգը, զինակցելով գյուղացիության հետ, կտապալե կալվածատերերի ու ֆաբրիկատերերի իշխանությունը։

Յեվ Վլադիմիր Իլյիչ Լենինն սկսեց կազմակերպել բանվորին, համախմբել նրանց սկզբում բանվորական խմբակներում, ապա կուսակցության մեջ։

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻՑ ԴԵՊԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Զարգացնելով Մարքս-Էնգելսի ուսմունքը, Լենինն աշխատավորներին առաջնորդեց ճշգրիտ ճանապարհով։

Այդ ժամանակ Ռուսաստանում այստեղ ու այնտեղ արդեն կային բանվորական գաղտնի խմբակներ։ Բանվորական խմբակների անդամները ծանոթանում եյին Կ. Մարքսի ու Էնգելսի ուսմունքի հետ, ինչպես և արտասահմանյան պրոլետար ընկերների հեղափոխական պայքարի հետ։ Այդպիսի խմբակներում եր աշխատում ընկ. Լենինը։ Լենինը բանվորական խմբակների կազմակերպիչն ու ղեկավարն

եր, Թռուցիկներ էր գրում, սովորեցնում եր, թե վորն ե կապիտալիստների դեմ պայքարելու ամենալավ ճանապարհը։ Բանվորների գիտակից մասը Լենինի հետ միասին ստեղծեց սոցիալ-դեմոկրատական,—բոլշևիկների գաղտնի կուսակցությունը։

Լենինի նպատակն եր հաջողեցնել, վոր յերկրիս վրա չլինեն տերեր և ըստրուկներ, չլինեն հարուստներ և աղքատներ։

Նա ուզում եր, վոր չլինի մարդու շահագործումը մարդու կողմից։

Նա պահանջում եր, վոր ամբողջ հողը, բոլոր ֆաբրիկներն ու գործարանները պատկանեն նրանց, ովքեր աշխատում են։ Այդ բոլորը կարելի յե հաջողեցնել լավ կազմակերպված կուսակցության ոգնությամբ, վորը պիտի ղեկավարե գիտակից բանվորներին և զինակցության մեջ լինի աշխատավոր գյուղացիության հետ։ Ի՞նչ ճանապարհով։ Կապիտալիստների դեմ հեղափոխական, դասակարգային պայքարի ճանապարհով։

Բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ սովորեցնում եյին, թե բանվորի վաստակի համար մղվող պայքարը չի կարելի բաժանել ցարական ինքնակալության և բուրժուազիայի դեմ մղվող պայքարից։

Դիմելով բանվորներին, Վ. Ի. Լենինը գրում եր.

«Հապա մենք ինչ միջոցներ ունենք, վորպեսզի լավացնենք մեր դրությունը, բարձրացնենք աշխատավարձը, կրճատենք բանվորական որը, պաշտպանվենք վիրավորանքներից, կարդանք խելացի գրքեր։ Մեր դեմ են բոլորը,—թե տերերը,—վորովհետև նրանք այնքան լավ են ապրում, ինչքան մենք վատ ենք ապրում։—և թե նրանց բոլոր սպասարկուները, բոլոր նրանք, վորոնք ապրում են կապիտալիստների փշրանքներով և նրանց գոհացնելու համար մեզ պահում են տգիտության և գերության մեջ։ Մենք վոչ մի տեղից չենք կարող ոգնություն սպասել։ Մենք կարող ենք հույս դնել միայն մեզ վրա։ Մեր ույժը—միությունն ե։ Մեր միջոցները—միահամուռ, միասնական և համառ դիմադրությունը տերերին։

Ժամանակ ե, վոր մենք էլ միանանք մեր յեղբայրներին, մյուս պետությունների բանվորներին և նրանց հետ կանգնենք մի ընդհանուր դրոշակի տակ. վորի վրա գրված ե՝ «բոլոր յերկրների բանվորներ, միացե՛ք»։

Կուսակցության վերջնական նպատակը Լենին այսպես եր վորոշում.—«Մենք ուզում ենք հաջողեցնել հասարակության նոր, ավելի լավ կառուցվածք։ Այդ նոր, լավագույն հասարակության մեջ չպիտի լինեն վոչ հարուստներ, վոչ աղքատներ, այլ բոլոր աշխատավորները պետք ե ոգտվեն ընդհանուր աշխատանքի արդյունքներով։ Այդ նոր, լավագույն հասարակությունը կոչվում ե սոցիալիստական հասարակություն։

Նրա վերաբերյալ ուսմունքը կոչվում ե սոցիալիզմ»։

Ցարական կառավարությունը, ֆաբրիկատերեր կալվածատերերը պայքարում եյին բոլշևիկների սոցիալ-դեմոկրատական կուսակցության դեմ.

Կուսակցության անդամներին սկսեցին հետևել։ Լրտեսները հետևում եյին՝ թե ով ե աշխատում կուսակցության մեջ։ Կուսակցության անդամներին ձերբակալում եյին, աքսորում Սիբիր տանջում եյին բանտերում։

## ՆԻԿՈԼԱՅ ՊԵՏՐՈՎԻՉ

(Բանվորի պատմածը)

Այն նավակայանում, վորտեղ յես աշխատում եյի վորպես փականագործ, շատ զարգացած բանվորներ կային։ Աղմկալի արհեստանոցում, մեջքներս թեքած սեղանների վրա, մենք դժվարությամբ եյինք կարողանում խոսել իրար հետ։ Մեր պետերը խիստ եյին և մեզ թույլ չեյին տալիս թեկուզ մի րոպեյով կտրվել աշխատանքից։ Ճաշի համար ժամանակ եյին տալիս մի քանի րոպե և մենք հազիվ



հազ կուլ եյինք տալիս կերակուրը։ Այս պատճառով մենք հավաքվում եյինք յերեկոյան պետերից գաղտնի։

Ինձ մոտ հավաքվում եր բանվորական գաղտնի մի խմբակ։ Յես իմ հյուրերին տանում եյի մի կիսախավար սենյակ, վորի լուսամուտը փակուղու վրա յեր, և սեղանի վրա դնում եյի մի փոքրիկ լապտեր՝ կանաչ լուսամփոփով։ Սեղանի մոտ նստում եր մեր ղեկավարը,—վորևե ուսանող կամ փորձված բանվոր և մենք սկսում եյինք զրույցը։ Խոսում եյինք մեր կարիքների և այլի մասին, թե ինչպես կարելի յե բարելավել մեր կյանքը։ Կարդացվում եյին գրքեր, վորտեղ պարզ խոսվում եր բանվորի կյանքի, նրա ուժից վեր աշխատանքի մասին։

Մի անգամ ինձ ասացին, վոր մեր խմբակում կլինի նոր ղեկավար։ Յես հարցրի—

—Ո՞վ ե նա։

Ինձ պատասխանեցին հպարտությամբ։

—Ձեզ մոտ կգա Նիկոլայ Պետրովիչը։ Նա ամենալավ ղեկավարներից մեկն ե։ Խմբակը պետք ե բաղկանա ամենահուսալի բանվորներից։

Յես անհամբերությամբ սպասում եյի Նիկոլայ Պետրովիչին։ «Նա ամենալավերից ե, մտածում եյի յես, ուրեմն պարապմունքներն էլ լավ կլինեն... տեսնես ինչպիսի մարդ ե այդ Նիկոլայ Պետրովիչը»։



Նշանակված ժամին դուռը ծեծեցին։ Բանալով դուռը, յես տեսա մոտ յերեսուն տարեկան մի տղամարդու, շիկախառն փոքրիկ մորուքով, կլոր դեմքով և թափանցող աչքերով։ Նա հագած եր աշնանային վերարկու, վորի ոձիքը բարձրացրած եր, չնայած վոր ամառ եր, գլխարկը քաշած եր աչքերին։ Այս մարդն ինձ իր տեսքով թվաց ամենասովորական։ Մտնելով սենյակ, նա հարցրեց.—

—Այստե՞ղ ե ապրում Կնյազևը։

Յես դրական պատասխան տվի։ Այդ ժամանակ նա ասաց իր անունը։

—Իսկ յես Նիկոլայ Պետրովիչն եմ։

—Մենք բոլորս սպասում ենք,—ասացի յես։

Յեվ Նիկոլայ Պետրովիչն իսկույն ավելացրեց, վոր նա մի քանի պտույտներ արավ փողոցներում. կարող եյին հետևել նրան։

Մենք մտանք կիսախավար սենյակը։ Բոլորն արդեն ներկա եյին։ Նա նստեց ցույց տրված տեղը և սկսեց մեզ ծանոթացնել, թե ինչ՞ ենք անելու խմբակում։ Նա խոսում եր այնքան վառ և խելացի, վոր վոչ մի կերպ չեր կարելի նրան չհավատալ։ Բանվորներն ուշադրությամբ լսում եյին նրան։ Նա հարցնում եր, թե

ո՞վ, վո՞րտեղ ե աշխատում, վո՞ր գործարանում, բանվորներից վո՞րոնք են զարգացած, արդյոք գրագե՞տ են նրանք, ի՞նչ, են կարդում, արդյոք գիտե՞ն բանվորները, թե ինչի համար պիտի պայքարեն։

Նիկոլայ Պետրովիչը մեզ բացատրեց, վոր մեն մենակ գործելուց վոչինչ չի չի դուրս գա։ Միայն այն ժամանակ՝ յերբ մենք կհամախմբվենք, կդառնանք մի ուժ, վորից կվախենան տերերը։

Բանվորները մի անգամից դուր յեկավ այն հանգամանքը, վոր Նիկոլայ Պետրովիչը խոսում եր պարզ և հասկանալի։ Մյուս ղեկավարները հաճախ խոսում եյին այնպիսի խոսքերով, վոր հասարակ բանվորներին անհասկանալի եյին... իսկ Նիկոլայ Պետրովիչը խոսում եր հասարակ, բանվորավարի։

«Հիանալի խոսում ե,—մտածում եյինք մենք,—առանց դես ու դենի, պարզ, վոնց վոր մեր միջից լինի։

Այն ժամանակից սկսած՝ Նիկոլայ Պետրովիչը հաճախ գալիս եր մեզ մոտ։ Նա մեզ գրքեր չեր կարդում. գրքերը մենք ինքներս եյինք կարդում, վորոնք նա մեզ հանձնարարում եր։ Նա ինքը պատմում եր մեզ։ Նա ասում եր, թե ինչպես ուրիշ յերկրների բանվորները պայքարում են լավագույն կյանքի համար, ինչպես պետք ե պայքարել այդպիսի կյանքի համար և դառնալ ազատ քաղաքացիներ։

Մենք ընտելացանք Նիկոլայ Պետրովիչին, սիրեցինք նրան։ Նրա յուրաքանչյուր այցելությանը մենք սպասում եյինք անհամբեր։ Յեթե մի վորևե բան մեզ անհասկանալի յեր, մենք ասում եյինք մեկ-մեկու.

— Նիկոլայ Պետրովիչը կգա, կբացատրի.

Մի անգամ սպասում եյինք Նիկոլայ Պետրովիչին, բայց նա չեկավ։ Ի՞նչ կարող եր պատահել նրա հետ։

Յես կողմնակի կերպով իմացա, վոր Նիկոլայ Պետրովիչը պարապում եր նաև մի ուրիշ խմբակում և այնտեղ ել ձերբակալվել եր։

Նիկոլայ Պետրովիչից հետո մեզ համար դժվար եր ընտելանալ մի ուրիշ ղեկավարի. ինչու։ Չե՞ վոր մենք նույնիսկ չգիտեյինք, թե ով ե Նիկոլայ Պետրովիչը։ Մենք միայն գիտեյինք վոր նա միայն մերն ե, այդ հասարակ, մեզ մոտիկ բանվոր մարդը։

Բայց յես ինչքա՜ն զարմացա, յերբ հետո, արդեն ծերացած, արդեն հեղափոխությունից հետո իմացա, թե ով եր Նիկոլայ Պետրովիչը։ Իմ ուրախությանը չափ չկար։ Մեր Նիկոլայ Պետրովիչը՝ Լենինն եր։

Յես հպարտանում եմ նրանով, վոր Լենինը մեզ հետ պարապում եր գաղտնի խմբակում և վոր յես յեղել եմ նրա աշակերտը։

## Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԲԱՆՏՈՒՄ

*(Լենինի քույր Յելիզարովայի պատմածը)*

1895 թվականի դեկտեմբերին Պետերբուրգում Վլադիմիր Իլյիչը ձերբակալվեց։

Յես Պետերբուրգ յեկա 1896 թվականի հունվարի առաջին կեսին, մնացի մոտ մի ամիս, մի քանի անգամ տեսնվեցի յեղբորս հետ, նրան մեծ քանակությամբ գրքեր տարա, բացի դրանից, վորոշ չափով կատարեցի այն հանձնարարությունները, վորոնք Իլյիչը միշտ տալիս եր առատությամբ։

Մենք բաժանեցինք տեսակցությունները։ Մայրս ու քույրս գնում եյին յերկուշաբթի որերին, անձնական տեսակցության համար։ Այդպիսի տեսակցությունը կես ժամ եր տևում։ Իսկ յես գնում եյի հինգշաբթի որերը, վանդակի միջով տեսնվելու։ Այդպիսի տեսակցությունները մենք գերադասում եյինք, նախ, նրա համար, վոր նրանք ավելի յերկարատև եյին—մի ժամ, և գլխավորապես նրա համար, վոր այդպես ավելի շատ բան կարելի յեր ասել. մի քանի վանդակների վրա մեկ վերակացու յեր նշանակվում և խոսել կարելի յեր ավելի ազատ։ Մեծ քանակությամբ գրքեր եյի տանում նրան։ Ստանալով գրքերի կապոցը, նա ամենից առաջ փնտրում եր այն գիրքը, վորտեղ, մեր պայմանավորված նշանի համաձայն նամակ կար։ Յեղբայրս բանտում գտնվող ընկերների հետ նամակագրություն ուներ՝ բանտի գրադարանի գրքերում կետեր նշանակելու միջոցով և հարկավոր եր նրանց հարազատների միջոցով իմաց տալ, թե վոր գիրքն ե հարկավոր վերցնել։ Վլադիմիր Իլյիչը նամակագրություն պահպանելով նրանց հետ, գլխավորապես նպատակ ուներ հուսադրել նրանց և առանձնապես ինձ գրում եր և հոգատարություն հայտնում նրանց մասին, ովքեր, ըստ Իլյիչի ունեցած տեղեկությունների, ջղայնանում եյին ու վատ զգում իրենց։ Նա ինձ մեծ ուշադրությամբ հարց ու փորձ եր անում նրանց առողջության մասին, թե արդյոք նրանք մի վորևե բանի կարիք չե՞ն զգում։

Իլյիչն սկսեց գաղտնի գրություններ անել առարկաների վրա և գտավ նրանց բանտից դուրս տանելու մի յեղանակ։ Անշուշտ դա նրա բանտային կյանքի ամենահետաքրքրական եջն ե։ Դրսից ստացված նամակներում նրան հայտնում եյին, թե ինչ թռուցիկներ և գաղտնի հրատարակություններ են դուրս յեկել. ցավ եր հայտնվում, վոր թռուցիկներ նա չի կարող գրել։ Վլադիմիր Իլյիչը հիշեց մանկական մի խաղ, վորը նրան մայրն եր սովորեցրել,—գրել կաթով, վոր հետո կարդացվում ե մոմի կամ լամպերի լույսի դիմաց։ Բանտում նա ամեն որ կաթ եր ստանում։ Յեվ ահա նա սկսեց փոքրիկ թանաքամաններ շինել փափուկ հացից և, նրանց մեջ լցնելով մի քանի կաթիլ կաթ, գրել գրքերի տողերի մեջ։ Այսպիսի կետերով գրվող գաղտնի նամակները փոխարինվեցին կաթե նամակներով, վորոնք ավելի արագ եյին գրվում։ Կետերով գրվող նամակներում Իլյիչը հայտնում եր, վոր այսինչ եջում կա քիմիական նամակ, վորը պետք ե բռնել ու կարդալ լամպերի դիմաց։ Վլադիմիր Իլյիչը դիտմամբ շատ փոքրիկ թանաքամաններ եր շինում, քանի վոր նրանց հեշտությամբ կարելի յեր կուլ տալ՝ հենց վոր դռնից վորևե կասկածելի ձայն լսվեր։ Նա ծիծաղելով պատմում եր, թե մի որ գործն այնքան ձախ գնաց, վոր նա ամբողջ վեց թանաքաման կուլ տվեց։

Հիշում եմ, վոր այն տարիներում Իլյիչը թե բանտարկվելուց առաջ և թե հետո սիրում եր ասել, «չկա այնպիսի խորամանկություն, վորից ավելի մեծ խորամանկություն չլինի»։

Յեվ նա բանտում հատուկ հնարամտությամբ վարժվում եր այս ուղղությամբ։ Բանտից նա գրում եր թռուցիկներ, բրոշյուրներ։ Այնուհետև գրեց կուսակցության ծրագիրը և նրա բավական ընդարձակ «բացատրական գրությունը»։

Մենք շատ եյինք վախենում, վոր յերկարատև բանտարկությունը կվնասե յեղբորս առողջությանը, ուստի մենք նրան յերեք տարով աքսորելու դատավճիռը իմանալով, ավելի հանգստացանք։

## ԼԵՆԻՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Աքսորից հետո Լենինը, վորին հալածում եր ցարական վոստիկանությունը, ստիպված եր ապրել արտասահմանում։ Ապրելով այնտեղ, նա ղեկավարում եր բանվորների պայքարը բուրժուազիայի դեմ։

Ընկ. Ստալինն այսպես ե գրում արտասահմանում Լենինի կատարած աշխատանքների մասին.—

«Ռուսաստանում մնացածներից շատ քչերը յերկրի ներսում կապված եյին բանվորական շարժման հետ՝ այնպես, ինչպես Լենինը, թեև նա յերկար ժամա-

նակ գտնվում եր արտասահմանում։ Միշտ, յերբ յես գնում եյի նրա մոտ, արտասահման,—1907, 1908, 1912 թվականներին, յես նրա մոտ տեսնում եյի Ռուսաստանում գործնական աշխատանքներ կատարող անձանց նամակների կույտերը և Լենինը միշտ ավելի շատ բան գիտեր, քան թե նրանք, վորոնք ապրում եյին Ռուսաստանում»։

1900 թվականի վերջում նա կազմակերպեց «Իսկրա» գաղտնի լրագիրը՝ կուսակցության անդամների, բանվորների և չքավոր գյուղացիների համար։

Բոլշևիկների կուսակցությունն «Իսկրա»-յի միջոցով պատմում եր բանվորներին, թե ինչ պիտի անել և կռվի կոչ եր անում ցարիզմի և կապիտալիզմի դեմ։

Լրագրի միջոցով կուսակցությունը կազմակերպում եր տասնյակ հազարավոր բանվորներին՝ պայքարելու համար։ Լենինն ուզում եր, վոր իրենք, բանվորներն ել մասնակցեն լրագրին։ Նա գրում եր.—«ավելի մեծ հնարավորություն տվեք բանվորներին՝ գրելու մեր լրագրին, գրել վճռականապես ամեն ինչի մասին, գրել վորքան կարելի յե շատ՝ իրենց առօրյա կյանքից, շահերից, աշխատանքներից. առանց այդ նյութերի՝ գրոշ կարժենա մեր լրագիրը»։

Յեվ սահմանվեց սերտ կապ լրագրի ու բանվորների միջև։

Ցարական ժամանակ լրագիրն իր գոյության ընթացքում դաստիարակեց բոլշևիկ-լենինցիների մի ամբողջ սերունդ, վորոնք գաղտնի եյին աշխատում։

## ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԵՄ

Այն ժամանակ, յերբ Վ. Ի. Լենինն ապրում եր արտասահմանում և ղեկավարում եր բանվորների պայքարը, Ռուսաստանում մեկը մյուսի հետևից գործադուլներ եյին ծագում։ Ավելանում եր վոչ միայն գործադուլների, այլ և նրանց մասնակցող բանվորների թիվը։ Այսպես՝ յերեք տարվա ընթացքում (1878—1881 թ. թ.)—գործադուլ եյին արել 30—35 հազար բանվորներ, վեց տարվա ընթացքում (1881—1899 թ. թ.) գործադուլ եյին արել 434 հազար բանվորներ։ Գործադուլավորների թիվը ամեն տարի ավելանում եր։



Գործադուլներն սկսում եյին անցնել ավելի կազմակերպված, քան առաջ։ Սոցիալ-դեմոկրատական (բոլշևիկների) կուսակցությունը ղեկավարում եր գործադուլները։ Գործադուլ անելով, բանվորները առաջադրում եյին վոչ միայն աշխատավարձի հարցերը (տնտեսական պահանջները), այլ և պահանջում եյին տապալել ինքնակալությունը։



Բանվոր դասակարգն այդ ժամանակ դարձավ մի ույժ, վորը ինքնակալությունը չեր կարող հաշվի չառնել։ Ցարական կառավարությունը և ֆաբրիկատերը պատասխանում եյին բանվորների արձակումով։ Նրանք դաժանությամբ եյին վարվում գործադուլավորների հետ։ Կառավարությունն ուներ զինված բանակ, և նա այդ բանակի ոգնությամբ ճնշում եր խռովությունները։ Բացի դրանից, կառավարությունը պահում եր հայտնի ու գաղտնի վոստիկանների մի ամբողջ բանակ, վորոնք հետևում եյին բանվորների յուրաքանչյուր քայլին։ Ցարական կառավարությունն իր ամբողջ ույժն ուղղում եր հեղափոխական բանվորների դեմ։ Առանձնապես հալածում եյին բանվոր դասակարգի առաջնորդներին։ Այդ ժամանակ գաղտնի աշխատանք եր տանում ընկեր Ստալինը։ Նա աշխատում եր Թիֆլիզի յերկաթուղային բանվորների միջև։ Ցարական կառավարությունն ընկեր Ստալինին աքսորեց Սիբիր։ Նրա հետ միասին Սիբիր աքսորվեցին շատ բոլշևիկներ։ Տասնյակ հազարավոր յերիտասարդություն մեռնում եր Սիբիրի ձյուներում և փթում բանտերում։ Չնայելով ցարական հալածանքներին, բանվոր դասակարգի ույժերն աճում եյին։

## ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ—ՊԱՅՔԱՐԻ ՏՈՆ

Ի՞նչպես սկսվեց մայիսի 1-ի տոնակատարությունը։ 1886 թվականի մայիսի 1-ին Ամերիկայում, Չիկագո քաղաքում, բանվորները գործադուլ արին և պահանջեցին 8 ժամվա բանվորական որ։

Գործադուլ արեց կես միլիոն բանվոր։ Վոստիկանությունն ու զորքերը դուրս յեկան բանվորների դեմ։ Յեղան շատ սպանվածներ ու վիրավորվածներ։

Գործադուլի առաջնորդները, թվով 8 հոգի, մահապատժի յենթարկվեցին։ Ամերիկայի բանվորները վորոշեցին ի հիշատակ սպանված բանվորների, ամեն տարի տոնել մայիսի մեկը։



Այդ դեպքից մեկ տարի հետո աշխարհիս 15 յերկրների բանվորների ներկայացուցիչները հավաքվեցին սոցիալիստական կոնգրեսի (համագումարի), վորը տեղի ունեցավ Փարիզում։ Այստեղ վորոշվեց ամեն տարի տոնել մայիսի մեկը՝ Մայիսի մեկի բանվորական տոնը դարձավ պրոլետարիատի մարտական ույժերի

և կապիտալիզմի դեմ վերջին, վճռական ճակատամարտի յելնելու նրա պատրաստակամության ստուգատեսի օրը:

Այդ ժամանակվանից սկսած, տարեց-տարի բոլոր յերկրներում բանվորները տոնում են մայիսի մեկը: Այդ օրն ամբողջ աշխարհի բանվորները մեկ-մեկու յերդում են տալիս կապիտալիստների դեմ կռվել մինչև վերջին հաղթանակը: Այդ օրը բոլոր յերկրների միլիոնավոր բանվորները հավաքվում են կարմիր դրոշակի տակ. դրանով արտահայտելով իրենց պրոլետարական միությունն ու բողոքը իրենց շահագործողների դեմ:

Մայիսի մեկին բանվորները պահանջներ են առաջադրում՝ սահմանել ութ ժամյա բանվորական օր, ազատություն տալ բանվորական կազմակերպություններին և վոչնչացնել կապիտալիզմը:

1896 թվականի մայիսի մեկին Լենինը գրում եր:

«Ամեն տարի մայիսի մեկին սարսափում են մեր թշնամիները, սկսած մանր ֆաբրիկատերերից մինչև հզոր արքաները: Նրանք զգում են, վոր մայիսի մեկի ամեն տարվա տոնակատարությունները կարծես բանվորական զումարտակների ստուգատես և զորաշարժեր լինեն: Դրանք—կայծի հարվածներ են, վորոնք կտրում են այն ճյուղը, վորի վրա նրանք են նստած: Դա—մուրճի հարված է, վորը մեխում է նրանց դագաղի կափարիչը»:

## ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Սև ույժերի զորահավաքը վոչ մի տեղ չի առաջացրել այնպիսի կատաղի պայքար, ինչպես Կովկասում:

Ցարական կառավարությունը շատ լավ եր հասկանում, վոր Անդրկովկասում նույնպես գյուղացիական հեղափոխական շարժումը ղեկավարում եր կուսակցությունը: Կուսակցությունը հենվում եր բանվորների վրա, ահա թե ինչու ցարական կառավարությունը հեղափոխության դեմ պայքարելու համար պետք է պայքարեր բանվորների դեմ:

Ցարական կառավարության գիտությամբ և աջակցությամբ, դաշնակների, մուսավաթիստների, տերտերների, մոլլաների, դուքանչիների և ամեն տեսակ հակահեղափոխական մութ ույժերի շնորհիվ, 1905 թվին տեղի ունեցան հայ-թուրքական ընդհարումները:

Անկազմակերպ հայ թուրք ամբոխը տգիտության պատճառով զոհ է գնում պրովոկացիայի և բորբոքված շովինիզմի թույնով դուրս են յելնում յեղբայրասպան կռվի իրար դեմ: Սակայն կոմունիստական կուսակցությունը (այն ժամանակ սոց-դեմոկրատ բոլշևիկ) կազմակերպված հեղափոխական բանվորության միջոցով բացատրում է մասսաներին ցարի կառավարության հրեշավոր և զզվելի պրովոկացիայի և սպանության գործը, կոչ է անում յեղբայրական ցույցերի և համերաշխության: Սկզբում այդ ցույցարարները յենթարկվում են պրովոկացիոն հարձակումների, սակայն սև ու մութ ույժերի դեմ դուրս յելնող բանվորները կազմակերպվում են, ուժեղանում և սկսում են կռվել ազատության, հեղափոխության համար:

Այդպիսով ցարական կառավարությունն ինքն եր իր համար գերեզման փորում, մասսաներին մղելով դեպի ապստամբությունը: Զարդերն ու թալանները համոզեցին բանվորներին ու գյուղացիներին, վոր նրանց համար մնում է միայն մի ճանապարհ—տապալել ցարական զզվելի իշխանությունը, դիմել հեղափոխական զինված ապստամբության: Յեվ լենինյան կուսակցությունը շարունակ բացատրում եր այդ բանը բանվորներին ու բոլոր աշխատավորներին,



շարունակ նախապատրաստում եր հեղափոխական, աշխատավոր ժողովրդին վերջնական ճակատամարտերի համար:

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՃԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մեր յերկրամասում արդյունաբերության ծագումն ու աճը, ինչպես նաև յերկաթուղային ու ծովային հաղորդակցության զարգացումը 19-րդ դարի յերկրորդ կեսում առաջ բերին նաև բանվոր դասակարգի աճում: Յերկրամասի բանվոր դասակարգը կենտրոնացած եր արդյունաբերական և տրանսպորտային գլխավոր կենտրոններում—Ռոստովում, Տագանրոգում, Գրոզնում, Նովոռոսիյսկում, Կրասնոդարում և Դոնի հանքավայրերում, ապա նաև Վլադիկավկազի յերկաթուղու հանգուցային կայարաններում:

Ռոստովում կային մի քանի տասնյակ հազար բանվորներ, վորոնք ավելի զարգացած և կազմակերպված եյին, քան Հյուսիսային Կովկասի մյուս կենտրոնների բանվորները: Ռոստովի բանվորությունն ուժեղ կապ ուներ Ռուսաստանի հեղափոխական բանվորական կազմակերպությունների հետ:

Տագանրոգում կային մինչև 10 հազար արդյունաբերական բանվորներ, Նովոռոսիյսկում—մինչև 2 հազար, Գրոզնում—միքանի տասնյակ հազար: Կրասնոդարում, Արմավիրում, Տիխորեցկում, Կավկազսկում, Հանքային Ջրերում—մինչև 10 հազար, Դոնի հանքավայրերում—30 հազար:

Առանձնապես բազմաթիվ եր յերկաթուղային պրոլետարիատը, վորը Հյուսիսային Կովկասի բանվորական շարժման մեջ ղեկավար դեր եր խաղում:

Հյուսիսային Կովկասի մնացած մասերում գերակշռում եյին մանր տնայնագործական—արհեստավորական ձեռնարկությունները, վորտեղ բանվորներն ամբողջովին գտնվում եյին տերերի իշխանության տակ: Այս բանվորներն ավելի քիչ եյին գիտակից և կազմակերպված: Նրանք համեմատաբար քիչ եյին.—Նախկին Կուբանի շրջանում մոտ 10 հազար մարդ, նախկին Ստավրոպոլի նահանգում ավելի քան 5 հազար: Նույնպիսի քանակությամբ կային և նախկին Թերեքի մարզում:

Վերջապես, Հյուս. Կովկասում կային մեծ քանակությամբ սեզոնային բանվորներ, վորոնք հարևան նահանգներից գալիս եյին դաշտային աշխատանքների:

Բանվորների այդ ամբողջ մասսայից հեղափոխական շարժմանն ամենագործունյա մասնակցություն ունեցան խոշոր ձեռնարկությունների արդյունաբերական բանվորներն ու յերկաթուղայինները, առաջին հերթին Ռոստովի պրոլետարիատը:

## ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ամբողջ Ռուսաստանում սկսեցին առաջ գալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները: Նրանք ծագեցին նաև Հյուսիսային Կովկասում: Ռոստովում և Հյուսիսային Կովկասի այլ քաղաքներում բանվորական շարժումն սկսվեց խմբակների կազմակերպումով: Խմբակները, վորտեղ թափանցեց մարքսիզմը (այսինքն Մարքսի ուսմունքը), ստեղծվեցին 1889 թվականի ժամանակներում: Այս խմբակների կազմակերպիչներն ու ղեկավարներն եյին՝ Մոխսենկոն (Մարոզովյան գործարանի կազմակերպիչը), Ալաբիշև, Մաշիցկին և այլն:

1891 թվականին տեղի ունեցավ Մայիսի 1-ի առաջին տոնակատարությունը: Այս տոնակատարությանը, վոր տեղի ունեցավ Դոնի ձախ կողմում, ներկա յեր 40 մարդ: Կազմակերպիչները խմբակների անդամներն եյին: Նրանք կազմակերպեցին նաև 1894 թվականի գործադուլը:

1898 թվականին կազմակերպվեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Դոնի կոմիտեն, վորը ղեկավարում եր Հյուսիսային Կովկասի և Դոնբասի բանվորների պայքարը:

## ՌՈՍՏՈՎԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Վորքան ել ինքնակալությունը, կապիտալիստներն ու տերտերները պայքարում եյին բանվոր դասակարգի դեմ, նրանք չեյին կարող շարժումը կանգնեցնել: 1902 թվականին ծագեց Ռոստովի հռչակավոր գործադուլը: Նա սկսվեց յերկաթուղային արհեստանոցներում և տարածվեց ամբողջ քաղաքում: Բանվորների տրամադրությունը մարտական եր: Մի ամբողջ շաբաթ վարչությունները սիրտ չեյին անում նրանց մոտենալ: Ահա թե գործադուլն ինչպես են նկարագրում ականատեսները.—«Տեղի յեր ունենում մինչև այժմ Ռուսաստանում չտեսնված յերևույթ: Ամենորյա բազմամարդ, բացօթյա միտինգներ, բազմահազար ամբոխը լսում եր համարձակ ճառերը՝ ինքնակալության, չինովնիկների կամայականության ու բռնության դեմ պայքարելու մասին: Գլուխը կորցրած վարչությունները չգիտեյին ինչ անել, վոստիկանությունն ու կազակները կանգնում ու լսում եյին սոցիալ-դեմոկրատական հռետորների ճառերը: Վարչությունները ուշքի գալով, կամաց-կամաց հասկացան, վոր այստեղ հարկավոր են վոչ թե մտրակներ ու սրեր այլ գնդակներ: Բազմության վրա համազարկ բանալով, կազակներն սպանեցին 6 և ծանր վիրավորեցին 12 մարդ: Սակայն գնդակահարությունը չկանգնեցրեց բանվորներին:



Մեկ տարի հետո, 1903 թվականի ամառը բանվորները վոտքի յելան արդեն վոչ թե մի քաղաքում, այլ ամբողջ հարավային Ռուսաստանում, Ոդեսայից մինչև Բաքու: Ռուսաստանում դա ընդհանուր գործադուլի առաջին որինակն եր:

Առանձնահատուկ տեսք ունեյին մեծ քաղաքները գործադուլի ժամանակ: Բոլոր վաճառատները, դրասենյակները, հացթխարանները, արհեստանոցները փակված եյին, ձիաքարշերն ու տրամվայները չեյին աշխատում, կառապաններ համարյա չեյին յերևում, լրագիրներ չկային, գնացքները անշարժ կանգնած եյին



ծովափնյա քաղաքներում: Մթերքները թանկանում եյին, չկար վոչ հաց և վոչ միս: Տեղ-տեղ պատահած փոքրաքանակ հացը կռվով եյին խլում իրար ձեռքից: Չկար վոչ ելեկտրական և վոչ ել գազային լուսավորություն, յերեկոյան մութ եր փողոցներում, իսկ բնակարաններում մոմի թույլ լուսավորություն եր: Փողոցները չեյին մաքրվում, չկար վոչ աղբակիրներ և վոչ ել բեռնակիրներ: Քաղաքում բոլորովին կանգ եր առել առևտուրն ու կյանքը: Բանվորների հազարավոր բազմությունները գնում եյին փողոցներով, կազմակերպում եյին հավաքներ, միտինգներ, տեղի յեր ունենում ցույցեր կարմիր դրոշակներով: Լսվում եր հեղափոխական յերգեր, մարտակոչ եր: Յերևում եր բազմաքանակ շրջիկ պահակներ, վոստիկանության քաղաքապահներ ու զինվորներ»:

Ցարական կառավարությունն իր զորքերով ու վոստիկանությամբ անզոր եր կասեցնել բանվորական շարժումը, վորը զարգանում եր բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ: Յերկու տարի հետո մեր յերկրում սկսվեց առաջին ռուսական հեղափոխությունը:

---

### ՀԱՐՑԵՐ

1) Ի՞նչու յեր Լենինն ասում, թե հարկավոր ե գնալ վոչ այն ճանապարհով, վորով գնում եյին նարոդնիկները:

2) Ինչո՞ւ անհրաժեշտ եր կուսակցություն կազմակերպել:

3) Ի՞նչ նշանակություն ունեցավ «Իսկրա» գաղտնի լրագիրը:

4) Վո՞ր թվականին տեղի ունեցավ Ոբուխովյան գործադուլը և ինչ նշանակություն ունեցավ:

6) Ցարական կառավարությունն ինչպես եր պայքարում բոլշևիկների կուսակցության դեմ:

6) Ի՞նչպես առաջ յեկավ Մայիսի մեկի տոնակատարությունը:

## ՄԻՆՉԵՎ 1905 ԹՎԱԿԱՆԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

1773 թվականին տեղի ունեցավ Պուգաչովի ապստամբությունը:

1861 թվ. վերացրին ճորտատիրական իրավունքը, իրականում գյուղացիներին թալանեցին կրկնակի չափով:

1871 թվ. մարտի 18-ին Փարիզում իշխանությունն անցավ բանվոր դասակարգին:

1885 թվ. տեղի ունեցավ Մարոզովյան գործադուլը:

1895 թվ. դեկտեմբերի Վ. Ի. Լենինը բանվորների մեջ հեղափոխական աշխատանք կատարելու համար ձերբակալվեց և բանտարկվեց, ապա աքսորվեց:

Աքսորից հետո, հալածվելով վոստիկանությունից, Լենինն ստիպված եր ապրել արտասահմանում, վորտեղից ղեկավարում եր կուսակցությունն և բուրժուազիայի դեմ բանվորների մղած դասակարգային պայքարը:

1901 թվականի մայիսին տեղի ունեցավ Ոբուխովյան գործադուլը, կառավարությունը մի քանի դիջումներ արեց:

1902 թվականին բռնկվեց Ռոստովի գործադուլը:

Գտեք և կարդացեք հետևյալ գրքերը (ռուսերեն):

Գորկի—Գործադուլ:

Մյուլլեն Ալի—Ջուհլակ Կովրովը:

Ջեկ Լոնդոն—Գործադուլ:

Ֆրոլենկո—1881 թվականը:

Սրինբուրգ—Կոմունարի մուրճը:

Կորգիս—*Սոֆիա Պերովսկայա։*
Ախտիրսկայա—*Արքայասպանը։*
Կրոպոտկին—*Ամրոց և փախուստ։*
Սավելյեվ—*Արքայավորս։*
Կուդելլի—*Իմ մայիսի մեկը։*
Նակորյակով—*Սենկայի մայիսի մեկը։*
Ոլեյնիկով—*Զարմանալի տոն։*
Կարոտի—*Նրա առաջին մայիս մեկը։*
Յուրցեվ—*Առաջվա մայիս մեկերը։*



# 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

## 1932 ԹՎԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

*XX դարի սկզբին Ռուսաստանի արդյունաբերությունը մի ամբողջ շարք դժվարությունների մեջ եր։ Ֆաբրիկների ու գործարանների պատրաստած ապրանքները չեյին սպառվում և կուտակված մնում եյին։ Պրոլետարների և աշխատավոր գյուղացիների աղքատացած մասսաները չեյին կարող ապրանքներ գնել, թեև շատ եյին զգում նրանց կարիքը։*

*Կապիտալիստներն սկսեցին կրճատել արտադրությունը, փակել ֆաբրիկները, գործարանները, նրանք մասսաներով բանվորներ եյին արձակում, պակասեցնում եյին աշխատավարձը, վատացնում եյին աշխատանքի պայմանները։ Սկսվեց ընդհանուր հարձակում բանվոր դասակարգի դեմ։ Աճում եր գործազրկությունը։ Բանվորների դրությունն անտանելի յեր դառնում։ Դասակարգային պայքարը սրվում եր։ Սակայն բանվոր դասակարգն այն չեր, ինչ վոր առաջ։ Նա աճել ու ամրապնդվել եր։ Խոշոր չափով բարձրացել եր բանվորների գիտակցությունը։ Կապիտալիստների դեմ մղած իրենց պայքարում նրանք արդեն սովորել եյին գործել միասին, պայքարել կազմակերպված։ Բանվորների մեջ կոփվեց նրանց մարտական կարգապահությունը։*

*1895 թվականից մինչև 1904 թ.—տասը տարվա ընթացքում յեղան մինչև 1684 գործադուլներ։ Գործադուլ արեցին մոտ 430 հազար բանվորները, բանվորական շարժումը զարգանում եր, ծավալվում եր պայքարը կապիտալիստների դեմ։*

*Ցարական կառավարությունն ու բուրժուազիան տեսնում եյին հետզհետե աճող ուժը և յելք եյին փնտրում ստեղծված դրությունից։*

*Բանվորներին հեղափոխական պայքարից շեղելու համար, 1904 թվականին Նիկոլայ 2-րդ թագավորը կռիվ սկսեց Յապոնիայի հետ։ Այդ կռիվը հարկավոր եր միայն թագավորին ու բուրժուազիային, վորոնք ուզում եյին նոր հողերի տիրանալ։*

*Պատերազմի սկզբում ցարական գեներալները պարծենում եյին, թե յապոնացիներին կհաղթեն մեկ ամսում։ Սակայն Ռուսաստանը կրում եր պարտություն պարտության յետևից։ Ամբողջ գնդեր թակարդի մեջ եյին ընկնում։ Ռուսական նավերը դիպչում եյին հենց իրենց նետած ականներին և ջրասուզվում եյին։ Մարդկանց շարունակ ուղարկում եյին հեռավոր ռազմաճակատ։ Բանվորներին կտրում եյին հաստոցից, գյուղացիներին—հողից։ Ընտանիքները զրկվում եյին իրենց պահողներից։ Ֆաբրիկատերերն ու վաճառականները չեյին գնում պատերազմ, այլ մնում եյին թիկունքում։ Ֆաբրիկներն ու գործարանները աշխատում եյին զորքի մատակարարման համար և մեծ յեկամուտ եյին բերում, իսկ բանվորների անկյուններում և գյուղացիական խրճիթներում ավելանում եր աղքատությունն ու քայքայումը։*

*Այս բոլորն ուժեղ դժգոհություններ եր առաջ բերում կառավարության դեմ։ Սկսվեցին խլրտումներ։*

Ահա թե բոլշևիկներն ինչ էյին գրում ռուս-ճապոնական պատերազմի մասին, դիմելով զինվորներին.—

«Վորոտում են հրանոթները հեռավոր արևելքում, գետի պես թափվում է զինվորների արյունը։

Ընտանիքների կերակրողները բռնությամբ ուղարկվում են պատերազմ։ Քանի-քանի նոր վորբեր ու հաշմանդամներ կլինեն։ Իսկ ում համար կլինի հաղթությունը։ Ազնվականները, չինովնիկները, կապիտալիստները նոր հողեր կստանան։

Սակայն պատերազմն իզուր չի անցնի։

Աշխատավորների դժգոհությունն ու ցասումը սաստկանում են որեցոր և մոտ է այն ժամը, յերբ ժողովուրդն իր հերթին բացահայտ պատերազմ կհայտարարե ինքնակալությանը։

Կորչի ցարը, կորչի պատերազմը»։

1904 թիվ. հունիս։

> «Հանցագործ լեվ խայտառակ պատերազմը... լցրեց ժողովրդի համբերության բաժակը»։
>
> (Վ. Ի. ԼԵՆԻՆ)

## ԲԱՎԱԿԱՆ Ե ՀԱՄԲԵՐԵԼ

1904 թվականի դեկտեմբերին, Պետերբուրգի մեծ գործարաններից մեկում—Պուտիլովի գործարանում արձակվեցին 4 բանվորներ։ Մյուս բանվորները պահանջում են, վոր արձակված ընկերները հետ ընդունվեն։ Գործարանի վարչությունը չի համաձայնվում։ Բանվորները վճռականապես պնդում են իրենց պահանջի վրա։ 1905 թ. հունվարի 3-ին սկսվեց գործադուլը Պուտիլովի գործարանում։ Մյուս գործարաններում ևս բանվորները դժգոհ էյին։ Հարկավոր էր միայն առիթ՝ գործադուլի համար։ Այդպիսի առիթ յեղավ Պուտիլովի գործարանի բանվորների գործադուլը։ Վերջինիս միացան մյուս գործարանների բանվորները։ Արդեն հունվարի 7-ին, գործադուլն սկսվելուց 4 որ հետո, Պետերբուրգում աշխատանքը թողին 140 հազար բանվորներ։ Գործադուլավորներն իրենց պահանջներն էյին ներկայացնում կապիտալիստներին։ Նրանք պահանջում էյին ավելացնել աշխատավարձը, կրճատել բանվորական որը և ձրի բժշկություն հիվանդանալու դեպքում։

Գործադուլը ծավալվում էր։

## ԴԵՊԻ ՑԱՐԸ

Բանվորներին հեղափոխական պայքարից շեղելու և նրանց մեջ դեպի թագավորը հավատ պահպանելու համար, քաղաքական վոստիկանությունը Պետերբուրգում կազմակերպեց «Ռուս բանվորների ընկերություն»։

Այդ ընկերության գլուխը կանգնած էր ցարական վոստիկանությունից կաշառված Գապոնը։ Բազմաթիվ անգիտակից բանվորներ մտնում էյին այդ ընկերության մեջ։ Դեռ մեկ տարի չանցած՝ Գապոնին հաջողվեց իր շուրջը հավաքել մոտ 10 հազար բանվոր։ Գապոնն աշխատում էր ներշնչել բանվորներին, թե նրանց դժբախտության պատճառը թագավորը չէ, այլ նրա մերձավորներն ու ֆաբրիկատերերը։

Բանվորների մի մասը հավատում էր թագավորին և չէր կարծում, վոր Գապոնը դավաճան լինի։ Յերբ գործադուլներն սկսվեցին, Գապոնը՝ կամենալով բանվորներին հեռու պահել հեղափոխությունից, առաջարկեց նրանց դիմել թագավորին խնդրագրով, վորի մեջ մատնացույց անել իրենց կարիքներն ու զրկանքները։

Բանվորներից վոմանք դուրս յեկավ այս առաջարկությունը. նրանք դեռ հավատում էյին, վոր յերբ թագավորին դիմեն, նա կթեթևացնի նրանց ծանր վիճակը։

Բոլշևիկների կուսակցությունն էր միայն, վոր բանվորներին նախազգուշացնում էր թագավորին չդիմել։ Հացի և ազատության փոխարեն թագավորը նրանց արճիճ ու գնդակ կտա։ Այնպես էլ յեղավ։ Գնդակներով և սվիններով դիմավորեց թագավորը բանվորների այս խաղաղ թափորը։

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԹԱԳԱՎՈՐԻՆ

*(Հատված)*

«Տեր թագավոր, մենք—բանվորներս, կանայքս, յերեխաներս և անկար ծերունիներս—յեկել ենք քո մոտը՝ արդարություն ու պաշտպանություն գտնելու։ Մենք աղքատ ու տնանկ ենք, մեզ ծանրաբեռնում են ուժից վեր աշխատանքով, մեզ հետ վարվում են այնպես, ինչպես կվարվեյին ստրուկների հետ։ Ամբողջ ժողովուրդը, բանվորներն ու գյուղացիները գերի յեն դարձել դող չինովնիկների ու թալանողների ձեռքում։ Մենք այսոր այն տեղն ենք հասել, վոր ավելի լավ է մեռնել, քան այլ ևս տանել այս անտանելի տանջանքները։ Մենք թողինք մեր աշխատանքն ու էլ չենք վերսկսի, մինչև մեր պահանջները չկատարվեն։ Մենք շատ բան չենք խնդրում—աշխատանքի ժամերը պակասեցնել մինչև 8 ժամ որեկան, ավելացնել աշխատավարձը, արհեստանոցներն այնպես սարքավորել, վոր կարելի լինի նրանց մեջ աշխատել»։

## ԱՀԱ ԹԵ ԻՆՉ ԷՅԻՆ ԱՍՈՒՄ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

«Ընկերներ, զուր տեղը թագավորին եք դիմում դուք ու նրանից ազատություն սպասում։ Ազատությունը խնդիրներով չեն գնում։ Թագավորին վոչ թե խնդրել է պետք, այլ գահից վար առնել նրան—միայն այս կերպ կարելի յե նվաճել ազատությունը։

Ազատությունն արյունով է գնվում. ազատությունը նվաճվում է զենքը ձեռքին, կատաղի կռվում։ Բանվորների ազատագրումը կարող է գլուխ գալ միայն իրենց բանվորների ձեռքով։ Դուք ազատություն չեք ստանալ վոչ տերտերներից և վոչ էլ թագավորից։ Մենք հիմա յել կրկնում ենք այն, ինչ վոր հազար անգամ ասել ենք մեր թռուցիկներում—«Կորչի ինքնակալությունը, կեցցե—ժողովրդի զինված ապստամբությունը»։

(Բոլշևիկների 1925 թ. հունվարի 8-ի կոչից)։

## ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ը

Պետերբուրգի փողոցներում վաղ առավոտվանից կենդանություն էր տիրում։ Թագավորական պալատի դիմաց գտնված հրապարակը զորքերն էյին բռնել։ Այնտեղ վոչ վոքի չէյին թողնում։ Ալեքսանդրյան պարտեզի մոտ խումբ խումբ ժողովուրդ էր կանգնած։ Հատ-հատ և խմբերով սկսեցին յերևալ բազմաթիվ բանվորներ։ Նրանք տոնական զգեստներ էյին հագած։ Ամենքը խաղաղ խոսում էյին իրար հետ։ Հանաքներ էյին անում, ծիծաղում էյին։

Շուտով յերևացին ժանդարմների ու կազակների հեծյալ պահակախմբերը։ Ժողովուրդն ասում էր «կարգ պահպանելու համար են գալիս, բայց զուր անհանգիստ են յեղել, մենք ինքներս այնպիսի կարգ ենք պահպանում, վորպիսին նրանք յերբեք չեն տեսել»։

Այդ միջոցին ֆաբրիկների ու գործարանների մասերը Թափորի համար շարք եյին կանգնում։ Բանվորուհի Վարվառեն յեկավ սուրբ պատկերը ձեռքին։ Մինչև բազմությունը շարժվում եր Թափորի համար, Վարվառեն գտավ իր Վանյային, խաչակնքեց նրան, տվեց նրա ցրտից կարմրած ուռած ձեռքը սուրբ պատկերը ու կանգնեցրեց նրան բազմության առաջ։



— Դե՛հ, Վանյա, լավ նայիր Թագավորին։ Թե վոր նրանցից մեկնումեկը ուզի խոսել հետդ և հարցուփորձ անել, տես, չվախենաս, համարձակ պատմիր ամբողջ ճշմարտությունը։

— Կասեմ—փնթփնթաց Վանյան, հետո հարցրեց՝—Մեր վրա հո չե՞ն կրակի։

Վարվառեն ծիծաղեց։

— Ի՞նչեր ես ասում։ Չե՞ս տեսնում—մեր առջևից գնում է ինքը պրիստավը ոկոլոդոչնին (Թաղային վոստիկանը) ու տերտերը։ Ո՞վ է տեսել վոր սուրբ պատկերի վրա կրակեն։

Առջևում արդեն յերևում եյին Նարվսկի դարպասները, դրանց յերկու կողմում Վանիկը տեսավ գորշազգեստ զինվորներին փայլուն սվիններով, հրացանները ձեռքերին։ Ըստ յերևույթին զինվորները խաղաղ սպասում եյին բազմության մոտենալուն։ Մի պահ Վանյայի սիրտն ահ ընկավ։

Նույն րոպեյին նա տեսավ, վոր ձիավորների ջոկատը սրարշավ առաջ է անցնում։ Բազմությունը յերկու կեսի բաժանվեց՝ զորախմբին ճանապարհ տալու համար։ Վանյան հետ նայեց ու հանկարծակիի յեկած հուզված, սարսափած, դեմքեր տեսավ չորս կողմը։ Նա ինքն էլ սուրբ պատկերն իրեն դեմ արած ցնցվեց մի կողմ ու ճզմված դեմ ընկավ հետևի շարքերին։ Թրերը ճոճելով նրա կողքից սլացան ինչ վոր ձիավորներ։

Յեվ անմիջապես սկսվեց ականջ խլացնող մի ճարճատյուն։

— Կրակում են,—կանչեց մեկը։

— Այդ ի՞նչ է ձեր արածը։

— Այսպես ուրեմն։

— Այսպես է ընդունում Թագավորը։

Վանյան ճիգ եր անում վոտքի կանգնելու, սաստիկ ցավ զգաց փորի մեջ. բայց հազիվ կարողացել եր ցրտից սառած ձեռքերով կռթնել ձյունին, բազմության գլխավերևում նորից ճարճատեց, ու Վանյան ուսի վրա նոր ցավ զգալով



ընկավ գետին ձյունի մեջ խրվեց։ Զուր աշխատում եր Վարվառեն ճեղքել ամբոխն և առաջ անցնել։ Խիտ ամբոխի միջից դուրս պրծնելն անկարելի յեր։ Ինչպես և ուրիշները, նա էլ հեռվում լսում եր համազարկերի տրաքտրաքոցը, ու Վանյան կյանքի համար սարսափած արյուն եր գնում նրա սրտից։ Մի րոպե փորձեց հետ գնալ, բայց մեկը մյուսի հետևից մարդկային նոր ալիքներ եյին լցվում փողոցը։ Վարվառեն չեր կարող շարժվել ու առաջ անցնել։ Բազմության միջից մեկը բարկացած բղավում է Վարվառեյի վրա։

— Ու՞ր ես խցկվում, այ կնիկ, չե՞ս լսում, ինչ է կատարվում այնտեղ։

Վարվառեն խելակորույսի նման կանգ առավ։

— Զավակս, զավակս այնտեղ է։

— Մեծ բան. կգա էլի։

— Բա վոր սպանեն։

— Ի՞նչ արած։

Բարձրահասակ մի մարդ, ձեռներն այս ու այն կողմ ճոճելով, կանչում եր։

— Տեսա՞ք, չէ՞, ընկերներ։ Ահա ինչպիսի Թագավոր ունենք մենք։ Դե՛հ, բավական է։

— Էլ մենք Թագավոր չունենք։

— Կորչի՛ Թագավորը։ Էլ բավական է։

Վարվառեն լսում եր նրանց. նա կամացուկ ասաց.

— Աստված էլ չկա, Թագավորն էլ չկա—վոչ վոք չկա։

Հիշեց նորից Վանյային, նետվեց դեպի հետ, հանկարծ բռնեց մեկի ձեռքից ու հարցրեց.

— Բա տղես չե՞ք տեսել։

— Ի՞նչ տղա։ Տղա շատ կա էնտեղ։

— Սուրբ պատկերը ձեռքին, սուրբ պատկերը դիտմամբ առջևը կանգնացրի։

Մեկը մտաբերելով ասաց։

— Սուրբ պատկերը, սպիտակ գդակով։

Վարվառեն կարծես քար կտրած հազիվ Թոթովեց.

— Այո, սպիտակ...

Մարդը ասաց—

— Ընկավ։ Սպանեցին. յերևի չվերկացավ։

Վարվառեն նայեց նրա յերեսին խելքը կորցրածի պես ու ամբոխը ճեղքելով վազեց ձյունածածկ լայն փողոցով՝ սպանված Վանյային գտնելու համար։

---

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ւր և ինչի համար եյին գնում բանվորները հունվարի 9-ին։
2. Ի՞նչ բանի կոչ եյին անում բոլշևիկները։
3. Ի՞նչպես դիմավորեց Թագավորը բանվորների խաղաղ Թափորը։
4. Ի՞նչ դաս ունեցավ այդ օրը պրոլետարիատը։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կոլեկտիվ կերպով մշակեցեք դասարանում և գրեցեք՝ բուրժուազիայի դեմ պայքարի վո՞րպիսի միջոցառումներ եյին կիրառում բանվորները հեղափոխությունից առաջ։

> Հեղափոխությունն սկսված է։ Ինքնակալության յեվ ժողովրդի միջև խաղաղության մասին վոչ մի խոսք չի կարող լինել։
>
> (ԼԵՆԻՆ)

## 1905 ԹՎԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-ԻՑ ՀԵՏՈ

*Արդեն բանվորների գնդակահարումը Պետերբուրգում և բովանդակ Ռուսաստանում հեղափոխական դասակարգային պայքարի պոռթկում առաջ բերեց։*

*Արյունոտ կիրակի օրը ռուս բանվորը կորցրեց դեպի թագավոր ունեցած իր հավատը։*




*Ջախջախված էր վերջնապես հավատքը դեպի այն հեքյաթը, թե թագավորը արդարության պաշտպանն է։*

*Հունվարի 9-ին, յերեկոյան դեմ, Պետերբուրգում յերևացին առաջին բարիկադները, վորի կառուցողներն ու հերոսաբար պաշտպանողները բանվորներն եյին,*




Ինչպես անդրադարձավ բանվորների վրա հունվարի 9-ի գնդակահարությունը։

*Հունվարի 9-ի դեպքերը համոզեցին բանվորներին, վոր իրավացի եյին բոլշևիկները՝ յերբ ասում եյին, թե ապարդյուն բան է խնդրով թագավորին դիմել։*

*Նրանք ցույց եյին տալիս ուրիշ ճանապարհ—պայքարի և ինքնակալությունը տապալելու ճանապարհը։ Բոլշևիկների ազդեցությունն որեց-որ աճում եր,*



*նրանք սկսեցին յեռանդուն բացատրական աշխատանք տանել բանվորների շըրջանում։ Բաց եյին թողնում բազմաթիվ թռուցիկներ, վորով կոչ եյին անում բանվորներին դադարեցնել աշխատանքները և պայքարել կարմիր դրոշի հովանու տակ ու զենքը ձեռքին գրոհ տալ թագավորի և բուրժուազիայի վրա։*

*Ամբողջ Ռուսաստանում, կարծես մի ազդանշանով, ծայր առավ ժողովրդական շարժումը։ Յուրաքանչյուր ֆաբրիկում, յուրաքանչյուր գործարանում գործադուլ եյին հայտարարում բանվորները։*

*Բանվորների այս յելույթը լոկ հունվարի 9-ի գնդակահարության դեմ չեր ուղղված. նրանք բաց ե ի բաց հրապարակել եյին. «Կորչի թագավորը» լոզունգը։ Բանվորական շարժման ազդեցությամբ սկսվեցին գյուղացիական ապստամբությունները. խռովություններ և հուզմունքներ ծագեցին զորաբանակում և նավատորմիղում։*

## ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՉԸ ԲՈԼՈՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

*Դուք գնում եյիք թագավորին ձեր իրավունքը ձեռք բերելու համար, բայց նա դիմավորեց ձեզ հրացանի ու թնդանոթի համազարկերով, իր կատաղի գործակալների տեգերի ու սրածայր թրերի հարվածներով։*

*Դուք նրանից հաց և աշխատանք եյիք խնդրում, բայց նա շիկացրած յերկաթ ու արճիճ հրամցրեց ձեզ...*

*Չե՞ վոր մենք ասում եյինք, վոր արյունարբու թագավորից դուք վոչինչ չեք ստանա, վոր նա ժողովրդի թշնամին է և վոչ բարեկամը, և վոր նա ժողովրդի ոգտի մասին չի մտածում, այլ աչքի առաջ ունի միայն իր արքունյակների ոգուտը...*

*Սպանվածներ.... վիրավորներ... Ցեվ դրանց թիվը հարյուրներով է ու հազարներով։ Վրեժ են պահանջում այդ զոհերը։ Հավաքվեցեք ուրեմն, կարմիր դրոշի շուրջը.... Շրջեցեք փողոցները և պահանջեցեք, վորպեսզի ամենուրեք դադարեցնեն աշխատանքները, վորպեսզի բոլոր քաղաքացիներն էլ իբրև մի մարդ զենքը ձեռին դուրս գան թագավորի դեմ, նրա կառավարության դեմ. տվեք զինվորներին մեր թռուցիկներն ու պահանջեցեք, վոր նրանք ժողովրդի վրա կրակելուց հրաժարվեն։*

*Թող կորչի՛ թագավորը։*

*Թող կորչի՛ ինքնակալությունը։*

*Հունվար. 1905 թ.*

## ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ՆԱՎԱՏՈՐՄԻՂՈՒՄ

### ՊՈՏՅՈՄԿԻՆ ԶՐԱՀԱՆԱՎԸ

*Բանվորներին ու գյուղացիներին համակած շարժումը փոխանցվում եր նավատորմիղին ու բանակին, վորոնք բաղկացած եյին նույն բանվորներից ու գյուղացիներից։*

*Նախ ապստամբեցին նավաստիները, ապա ապստամբությունը տարածվեց ցամաքի զորքի մեջ։*

*Ապստամբությունն սկսեցին Սևծովյան նավատորմիղի նավաստիները։ «Պոտյոմկին» զրահանավի վրա բռնկվեց այդ ապստամբությունը։ Յոթը սպա, վորոնց թվում նաև հրամանատարն ու ավագ սպան, սպանվեցին ու ծովը նետվեցին։ Մյուս սպաները ձերբակալվեցին։ Այդ իսկ ժամանակ Ոդեսայում գործադուլ եր հայտարարված։ Ապստամբ «Պոտյոմկինցիները» Ոդեսայի ճամբան բռնեցին, բայց նրանց չհաջողվեց միանալ Ոդեսայի բանվորների հետ։*

Տասնմեկ օր դիմանալուց ու վոչ մի տեղից օգնություն չստանալուց հետո, «Պոտյոմկին»նավաստիները տեսնելով, վոր մենակ վոչինչ չեն կարող անել, վճռեցին



Ռումինիա անցնել ու այնտեղ անձնատուր լինել։ Նավակազմն ափն իջավ, իսկ նավը Ռումինական կառավարության կողմից հանձնվեց Ռուսաստանին։

---

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.

Ցանկալի յե աշակերտների հետ «Պոտյոմկին զրահանավը» կինո-պատկերը տեսնել։

## 1905 ԹՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Հունվարի դեպքերից հետո հեղափոխական շարժումն անընդհատ աճում եր։ Դասակարգային պայքարը գնալով սրվում եր։ Բանվորական շարժումն ուժեղացավ մանավանդ 1905 թ. աշնանը։ Գործադուլն սկսվեց Մոսկվայում։ Նախաձեռնարկները տպագրիչներն եյին. նրանց միացան հացթուխները։ Առաջ գործադուլ արին Մոսկվայի բանվորները, բայց հետո շարժումն անցավ և մյուս քաղաքները։ Հոկտեմբերի սկզբին գործադուլը դարձավ ընդհանուր, համառուսական։ Հոկտեմբերի 5-ին գործադուլ հայտարարեցին մեքենավարները և Մոսկվա-Կազան յերկաթուղու արհեստանոցների բանվորները։ Հոկտեմբերի 18-ին գործադուլ եր արել արդեն 11 յերկաթուղի։ Հոկտեմբերի 12-ին յերկաթուղիները կանգ առան ամբողջ Ռուսաստանում։ Դադարեցին աշխատել պոստը և հեռագիրը։ Յերկրի բովանդակ կյանքը մարեց։ Կառավարության ուժից վեր եր արդեն ճնշել հեղափոխությունը։ Գործադուլի շնորհիվ նա զրկվեց զորքերը փոխադրելու, հրամաններ արձակելու և հաղորդագրություններ ստանալու հնարավորությունից։ Թագավորական կառավարությունը, յերկյուղ կրելով հեղափոխության հետագա զարգացումից, սկսեց զիջումներ անել։ Հոկտեմբերի 17-ին թագավորը մի հրովարտակ հրապարակեց, վորով խոսքի և մամուլի ազատություն եր խոստանում ժողովրդին։ Խոստացավ թույլ տալ, վոր ժողովրդի ընտրյալները յերկրի կառավարության գործում մասնակցություն ունենան։

Հենց վոր դադարեց գործադուլը, վերսկսվեց յերկաթուղիների յերթևեկը, սկսեցին աշխատել պոստը, հեռագիրը, ֆաբրիկներն ու գործարանները, Թագա-



վորական կառավարությունն սկսեց ավելի ուժգնորեն պայքարել ազատամտությունների դեմ։ Նա այս պայքարում ներգրավեց սև հարյուրակներին, վոստիկանությունը, ժանդարմներին և հոգևորականներին։ Սկսվեցին հեղափոխականների ձերբակալությունները, ուսանող յերիտասարդության կոտորածը, հրեական ջարդերը։ Հրովարտակում խոստացված ազատությունը թագավորը չտվեց։

## ԼԵՆԻՆԸ ՀՐԵԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Յերբ անիծված թագավորական ինքնակալությունն իր որհասականն եր ապրում, նա աշխատում եր հետամնաց բանվորներին ու գյուղացիներին հրեաների դեմ գրգռել։ Թագավորի վոստիկանությունը կալվածատերների ու կապիտալիստների հետ ձեռք ձեռքի տված՝ հրեական ջարդեր եյին կազմակերպում։ Կարիքից տանջված բանվորների ու գյուղացիների ատելությունը դեպի հրեաներն եյին աշխատում ուղղել կալվածատեր- շահագործողները։ Հաճախ ուրիշ յերկրներում ել կարելի յե տեսնել, թե ինչպես կապիտալիստները թշնամություն են հրահրում դեպի հրեաները, վորպեսզի դրանով փակեն բանվորի աչքերը և նա չկարողանա տեսնել աշխատավորների իսկական թշնամին—կապիտալը։ Թշնամությունը դեպի հրեաներն անխափանելի կերպով շարունակում է իր գոյությունն այնտեղ, ուր կալվածատերերի ու կապիտալիստների բռնության տակ բանվորներն ու գյուղացիները խարխափում են անթափանցելի խավարի մեջ։ Ամենատգետ ու ամենախավար մարդիկ միայն կարող են հավատ ընծայել հրեաների մասին տարածված ստերին ու զրպարտություններին։

Աշխատավորների թշնամիները հրեաները չեն։ Բանվորների թշնամիները բոլոր յերկրների կապիտալիստներն են։ Հրեաների մեջ կան բանվորներ, աշխատավորներ—դրանք մեծամասնություն են կազմում։ Նրանք մեր յեղբայրներն են, վոր մեզ պես յենթարկված են կապիտալի հարստահարմանը։ Նրանք մեր ընկերներն են ու մեզ պես պայքար են մղում սոցիալիզմի համար։ Հրեաների մեջ ել կան կուլակներ, շահագործողներ, կապիտալիստներ, ինչպես և բոլոր ազգերի մեջ... Հարուստ հրեաները, հարուստ ռուսները, հարուստ հայերը, ինչպես և բոլոր յերկրների հարուստները ձեռք ձեռքի տված ճնշում ու բաժան-բաժան են անում բանվորներին։

---

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վքեր եյին կազմակերպում ջարդերը։
2. Ինչի՞ եյին պետք թագավորին հրեական ջարդերը։

## ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Բանվորների գործադուլային շարժումը պետք ուներ ղեկավարության։ Պետք եր իմանալ՝ յերբ պետք է սկսել գործադուլը, ինչպես տանել նրան, ինչպես վերջացնել նրան։

Բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ բանվորներն իրենց միջից ջոկում եյին գործադուլային հատուկ կոմիտեներ, վորոնք բանվորների՝ կապիտալիստների դեմ մղած պայքարի ղեկավարներն եյին հանդիսանում։ Յուրաքանչյուր գործարանից, յուրաքանչյուր ֆաբրիկից ընտրում եյին ամեն մեկ 500 բանվորից մի-մի պատգամավոր։ Գործադուլի ամբողջ ղեկավարությունը նրանց ձեռքում եր։ Նրանք թռուցիկներ եյին բաց թողնում, հրամաններ եյին արձակում, նրանք եյին թագավորական կառավարության դեմ մղվող պայքարին ուղղություն տվողը։ Այդ կոմիտեների դերն ու նշանակությունը փոքր առ փոքր

անում եր։ Ահա նրանցից կազմվեցին բանվորական պատգամավորների առաջին խորհուրդները։

Լենինը դեռ այն ժամանակ համարում եր, վոր խորհուրդները վոչ միայն գործադուլների ղեկավարներ ու ապստամբությունների կազմակերպիչներ են հանդիսանում, այլ և պրոլետարական իշխանության սաղմն են կազմում։

Առաջին խորհուրդը կազմվեց 1905 թվի մայիսին Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքում։

1905 թ. հոկտեմբերին բանվորական պատգամավորների խորհուրդն ընտրվեց Պետերբուրգում։ Նա յեր ընդհանուր գործադուլը ղեկավարողը։ Նրան եյին ստորադասվում բոլոր գործարանները, պոստը, հեռագիրը, յերկաթուղիները։

Հեղափոխական պայքարի ամբողջ ղեկավարությունն իր ձեռքն առավ բանվորական պատգամավորների խորհուրդը։

Թագավորական կառավարությունն ուներ զորք, վոստիկանություն, ժանդարմներ, հարյուր հազարավոր չինովնիկներ և ահագին դրամական միջոցներ։ Բանվորական պատգամավորների խորհուրդը այդ բաներից և վոչ մեկը չունենալով, անուամենայնիվ մեծ ուժ եր ներկայացնում իրենից։

Խորհրդի կարգադրությունները իրագործվում եյին անշեղորեն ու ճշտությամբ վոչ միայն բանվորների, այլ և քաղաքացիների ահագին մասսայի կողմից։ Իրենց բոլոր կարիքներով նրանք խորհրդին եյին դիմում։

Բանվորական պատգամավորների Պետերբուրգի խորհուրդը գոյություն ունեցավ հիսուն յերկու որ։ Հիսուն յերեքերորդ որը, դեկտեմբերի 3-ին, այն շենքը, ուր ժողովի յեր գումարված խորհուրդը, շրջապատեցին Իզմայլյան գվարդիական գնդի զինվորները, կազակները, վոստիկանները և ձերբակալեցին խորհուրդը։

> «Անկազմակերպ բանվորական դասակարգը վոչինչ ե, կազմակերպվածը—ամեն ինչ ե»։
>
> (ԼԵՆԻՆ)

## ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Յերեկոյան 7 ժամին այս խոսքը դեռ առեղծված եր ու անհասկանալի։ Ուղիղ մեկ ժամ անց նրա մասին տեղեկություն ստացավ ամբողջ Ռուսաստանը։

Ժամը 8-ին յերկաթուղային կայարանների բոլոր հեռագրական ապարատներն սկսեցին թխթխկացնել շատ հուզիչ ազդանշաններ՝

—«Ընկերներ, հասեք ոգնության, սոսկալի րոպեներ ենք ապրում։

Շաբաթից ավելի յե, հեռագիրը չեր գործում։ Դա այն որերին եր, յերբ ամբողջ յերկիրը բռնված եր գործադուլով։ Ապարատներն ութերորդ որն և լուռ եյին։ Յեվ հանկարծ նրանք խոսեցին,—վոչ, չխոսեցին, այլ աղաղակեցին ոգնության մասին։

—«Ընկերներ, հասեք ոգնության, սոսկալի րոպեներ ենք ապրում»։

Դա հեռավոր, Անդրկասպյան ավազուտներում կորած Կուշկան եր, վոր ամբողջ յերկրին ոգնության կոչ եր անում։

«Այսոր, յերեկոյան հինգ ժամին զինվորական դաշտային դատարանը մահվան պատժի դատապարտեց ինժիներ Սոկոլովին և մի քանի յերկաթուղայիններին։ Մահապատիժը նշանակված ե լուսաբացին։ Միջոցներ գործադրեցեք դրա առաջն առնելու»։

Ո՞վ կարող եր դրա առաջն առնելու միջոցներ գործադրել. ով կարող եր կասեցնել մահապատիժը, քանի վոր ամեն բան թագավորի կառավարության ձեռքում եր։ Յեվ վերջապես ինչ կարելի յեր անել այն մի քանի ժամվա մեջ, վոր մնացել եր մինչև լուսաբացը։



Իսկ այնտեղից, հեռավոր Կուշկայից, շարունակում եյին հաղորդել նույն ազդանշանը՝

—«Ընկերներ, հասեք ոգնության, սոսկալի րոպեներ ենք ապրում»,

Ուղիղ ութը ժամին այս հեռագիրը ստացավ նաև Վիտտեն, թագավորական կառավարության գլուխը՝ մինիստրների խորհրդի նախագահը։

Դեռ ժամանակ չեր ունեցել նա վորևիցե կերպով մտածել այս հեռագրի մասին, սպասավորը հանկարծ մատուցանում ե մի ուրիշ հեռագիր։ Նա գրված եր հակիրճ վոճով և կտրուկ՝—

### ԿՈՄՍ ՎԻՏՏԵՅԻՆ

> «Պահանջում ենք անմիջապես փոխել մահավճիռը։ Կսպասենք մինչև գիշերվա 12 ժամը։ Չկատարելու դեպքում գիշերվա ժամը 12-ից հայտարարում ենք յերկաթուղիների ընդհանուր գործադուլ»։

Հեռագիրը կրում եր մի ստորագրություն, վորից ահուդողի մեջ ընկավ ամենակարող մինիստրը։

Նա գիտեր, վոր բավական ե հեռագրին ուղարկողների մի խումբը, վորպեսզի բոլոր գնացքները կանգ առնեյին։

— Ձերդ բարձր գերազանցություն,—լսվեց հանկարծ ներս մտնող քարտուղարի ձայնը.—Կիյեվի և Յարոսլավի յերկաթուղային վարչություններից հեռագիր են ստացված։ Սոկոլովի ու ընկերների մահապատժի դեպքում՝ այդ յերկաթուղագծերը գործադուլ են հայտարարելու։

Այս ասաց ու դուրս յեկավ քարտուղարը։ Մի քանի րոպե անցած-չանցած նորից ներս մտավ նա։

— Մինսկի յերկաթուղագիծը նույնպես սպառնում ե գործադուլ հայտարարելու։

Քսան րոպեյի ընթացքում մի տասն անգամ գնաց-յեկավ քարտուղարը։

Ռուսաստանի բոլոր ծայրերից հեռագրեր եյին տեղում, թե նրանք անմիջապես գործադուլ կհայտարարեն, յեթե...

Իսկ այդ միջոցին կոմսին այդպիսի հանդուգն հեռագիր ուղարկողները համբերությամբ սպասում եյին։ Ժամանակ-ժամանակ նրանք ժամացույցին նայում։ Սլաքը դանդաղ եր ընթանում և մոտենում եր տասներկուսին։

Ահա մինչև ժամկետը մնում ե քսան րոպե, ապա տասը, հետո յոթը։

Հանկարծ դուռն աղմուկով բացվում ե ու ներս ե մտնում շնչասպառ սուրհանդակը։

Կոմս Վիտտեյից հեռագիր ե բերել նա Կուշկա բերդի կոմենդանտի անունով։

«Մահվան դատավճիռը վերացնել»։

Այդ միջոցին ժամացույցի սլաքները ցույց եյին տալիս 11 ժամ և 55 րոպե։ Մինչև ժամկետը հինգ րոպե յեր մնում։

Դուրս յեկավ, վոր կոմսը շատ ճշտապահ մարդ ե։

---

Կոմս Վիտտեյին հեռագիր տվողներն իրենց կոչում եյին բանվորական պատգամավորների Պետերբուրգի Խորհրդի Գործադիր Կոմիտե։

Այս բոլորը կատարվում եր 1905 թվին։ Հեղափոխության ալիքները վշշում եյին ամբողջ յերկրում։ Շաբաթ չեր անցնում առանց գործադուլի, շաբաթ չեր անցնում, վոր ժողովրդի ահագին բազմությունը կարմիր դրոշակներով փողոց դուրս չգար։ Թագավորի գահը յերերվում եր։

Հենց այս միջոցին էր, որ Պետերբուրգում կազմակերպվեց բանվորական պատգամավորների խորհուրդը։ Հոկտեմբերի 13-ին ֆաբրիկների ու գործարանների բանվորներն իրենք ստեղծեցին այդ խորհուրդը։

Հաղթական ընթացքով զարգանում էր հեղափոխությունը, տեղի էյին ունենում հաջող գործադուլները, բայց և այնպես իշխանությունը մնում էր թագավորի կառավարության ձեռքում, և նա ում ուզենար՝ կախում, գնդակահարում էր։

Պետերբուրգի խորհուրդն իր առաջին իսկ օրերից շատ վճռական չեղավ ըսկսեց բանեցնել։ Նման ուժ ամեն անգամ չէր ցուցաբերում նույնիսկ թագավորի կառավարությունը։

## ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՉԸ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք,

Գյուղացիներ, ձեզ ենք ուղղում մեր խոսքը։

Լսեցե՛ք, լսեցե՛ք, գյուղացիներ, թե ինչպես էր խոսում թագավորն իր ժողովրդի հետ.....

Պետերբուրգի ամբողջ զորաբանակը վոտքի վրա յեր։ Հետևակ զորքը և այրուձին շարժման մեջ էյին դրված։ Հրացանները լցված էյին ռազմական փամփուշտներով, հարմար և աչքից հեռու տեղերում շարված էյին հրետանիները, վորոնք կարող էյին շատ հեռու խփել։

Ահա այսպիսի ընդունելություն էր պատրաստում «մեծահոգի» թագավորն իր ժողովրդի համար։

Յերկու հարյուր հազար բանվորներ գնում էյին դեպի պալատը։

Լսեցե՛ք, լսեցե՛ք, գյուղացիներ.....

Բոլոր փողոցներն ու ճանապարհները, վորով ընթանալու էյին խաղաղ բանվորները, բռնված էյին զորքերով։

— Թողեք, վոր թագավորին յերթանք, մենք ուզում ենք տեսնել թագավորին, մենք ուզում ենք մեր ցավերը հայտնել նրան։

Յեվ ահա վորոտաց թնդանոթը... Մեկը, մյուսը, յերրորդը...

Ամեն տեղ, Պետերբուրգի բոլոր կողմերում լսվում էր անընդհատ կրակոցը։

Ծավալվեն հառաչում էր մայրաքաղաքը։ Ձյունը ներկվեց բանվորների արյունով։ Գետին էյին տապալվում տասնյակներ, հարյուրավորներ ու հազարավորներ։ Մահաբեր գնդակին փոխարինում էր կազակների նիզակը։

Սպանվեցին ու վիրավորվեցին մի քանի հազար բանվորներ։

Սա տեղի ունեցավ Պետերբուրգում 1905 թ. հունվարի 9-ին։

Բազմությունը յերկյուղից քար էր կտրել...

Ահա ինչպես է դիմավորում մեզ թագավորը... Ահա ինչպես է պատասխանում նա արնաքամ և ցավատանջ ժողովրդին....

— Մենք հավատալով գնում էյինք նրան, ինչպես զավակներն իրենց հորը. իսկ նա մեզ համար, բացի արճճից ու պողպատից, ուրիշ բան չգտավ։

— Մենք թագավոր չունենք, թագավորի ու ժողովրդի միջից հոսեց ժողովրդի արյան գետը։

— Անե՛ծք մարդասպան-թագավորին։

— Անե՛ծք դահիճ-թագավորին։

— Անե՛ծք արյունոտ Նիկոլայ 2-ին։

> «Բավական է ինչքան գյուղացիների վրա խոխեցին կալվածատերերը, վիճակապետերը յեվ այլ չինովնիկները»։
>
> (Վ. Ի. ԼԵՆԻՆ)



## ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ 1905 ԹՎԻՆ

Հեղափոխական պայքարը միայն քաղաքում չէր ծավալվում։ Բանվորների հետ միասին վոտքի յելան նաև գյուղացիները։ Հունվարի կեսից սկսած մինչև խոր աշունն ամբողջ յերկիրը բռնված էր գյուղացիների ապստամբությամբ։

Բանվորների հեղափոխական պայքարն, ինչպես Պետերբուրգում ու Մոսկվայում, այնպես էլ արդյունաբերական մյուս քաղաքներում, ահագին ազդեցություն ունեցավ կալվածատերերի դեմ գյուղացիության մղած պայքարի վրա։ Բանվոր դասակարգը գյուղացիների ուսուցիչն ու ղեկավարը հանդիսացավ հարստահարիչների դեմ նրանց ունեցած կռվում։ Դեռ 1905 թվի հեղափոխությունից առաջ բոլշևիկներն աշխատանք էյին տանում գյուղում։

Գյուղացիների մեջ ագիտացիա յեր տարվում, գրականություն էր տարածվում։ Ագիտատոր բոլշևիկներին գյուղում ջերմությամբ էյին ընդունում ու ճանապարհ գնում և աչալուրջ ուշադրությամբ պաշտպանում էյին վոստիկանության ճիրաններից։ Ի՞նչ էյին ուզում գյուղացիները։ Ամենից առաջ նրանք հող էյին պահանջում։ Այս բանում նրանց շատ էր օգնում բոլշևիկյան կուսակցությունը։ Գյուղացիական խռովությունները բռնել էյին գլխավորապես կենտրոնական սևահող մարզերը, Ուկրայինան, Վոլգայամերձ շրջանը և այլն։

Գյուղացիները ուժով գրավում էյին կալվածատերերի հողերը, վերցնում, տանում էյին կալվածատերերի հացը, խոտը, կենդանիներին, ծառահատում էյին անտառը։ Նրանք հրաժարվում էյին վարձ և հարկ վճարելուց, հրաժարվում էյին թագավորին զինվոր տալուց։ Կարճ ժամանակվա ընթացքում յերկու հազարից ավելի կալվածներ այրեցին և քարուքանդ արին։ Կալվածատերերը փախչում էյին քաղաք, մայրաքաղաք և նույնիսկ արտասահման։

> «Սկսվում են գյուղացիական ապստամբությունները։ Քաղաքային բանվորական շարժումը, նաձին գյուղացիական հեղափոխությանը՝ նոր դաշնակից է ունենում։
>
> Ի՞նչ է ուզում գյուղացիությունը հեղափոխությունից։ Գյուղացիությունն ուզում է հող յեվ ազատություն։ Այդ մասին յերկու կարծիք կարող չէ լինել։ Բոլոր գիտակից բանվորները նույնն են ուզում յեվ ամեն ինչ են թափում, վորպեսզի գյուղացիությունն ստանա ամբողջ հողը յեվ լիակատար ազատություն»։
>
> (ԼԵՆԻՆ)

## ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐՆ ԱՊՍՏԱՄԲԵՑԻՆ

| | |
|---|---|
| 30 հազար կալվածատեր։ Նրանք ունեն 60 միլիոն հեկտար հող։ | 100 միլիոն գյուղացի։ Գյուղացիներն ունեն 73 միլիոն հեկտար հող։ |

## ԳՅՈՒՂԸ ՊԱՅՔԱՐԻ ՅԵԼԱՎ

Գյուղացու պատմածը (ըստ Վոլնովի)։

1905 թվի աշնանը մենք շուտ-շուտ ժողովի էյինք հավաքվում։ Գյուղում լուրեր էյին պտտում, վոր մտադրություն կա կալվածատերերի հողերը բաժանելու։

— Այդ մասին թուղթ կա,— ասում էյին գյուղացիներն ու գեղջկուհիները։ գյուղի մեկ ծայրից մյուսը վազելով։

— Քաղաքներում իբր թե ամեն բան փայ-բաժին են արել։

— Բա վո՞նց են բաժանելու:

Ժողովները միշտ աղմկալից էին անցնում:

Օրերից մեկը քաղաքից գյուղ յեկավ ընկերս, նա շնորհավորեց մեզ, հայտնելով, թե հոկտեմբերի 17-ին թագավորի հրովարտակն է հրապարակված ազատության մասին: Իսկ յերբ նա կարդաց մեզ այդ հրովարտակը, գյուղացիներից վոչ մեկը հրճվանքով չընդունեց նրան:

— Ի՞նչ կարծիք ունեք այս մասին,— հարցրեց յեկողը:

Վեր ցատկեց տեղից մեկը, վորին Շախտեր էին ասում և բարձրաձայն ասաց՝

— Իմ գիտնալովս՝ ձեռներս ծալած նստելու ժամանակն անցել է. իրար գլուխ պատռելու օրերն են հասնում, հա՛:

— Ո՞ւմ է պետք այդ: Հիմա աշխատելու հենց ժամանակն է: Հանդը մեզ է սպասում:

— Ի՞նչ հանդ. հանդի մասին հո լսեցի՞ք, հրովարտակի մեջ վոչ մի խոսք չկա ասված:

Դժվարությամբ սեղանին է մոտենում Իվանիչը ու ասում է.



— Վորովհետև դուք ինձ պատիվ եք արել ու գյուղի տանուտեր ընտրել, յես ուրեմն պետք է ասեմ հետևյալը. առաջինը, վոր մենք չքավոր մարդիկ ենք. յերկրորդը, վոր մենք վոչնչից վոչինչ չունենք. վրա յերրորդը՝ ամեն բարիք տրված իշխաններին է ավել. չորրորդն էլ այն, վոր առանց հողի մենք սկի՞ որ չունենք:

Ասաց ու կողքի քաշվելով սկսեց քրտինքը սրբել գդակով:

Այդ միջոցին գյուղացիներից մեկն ինձ դուրս կանչեց ու ասաց՝

— Տես, Պետրովիչ, ինչե՞ր են ասում էնտեղ:

— Ո՞ւր:

— Գյուղերում, էլի: Ջեռաց ժողովներ են սարքել ու նոր տանուտեր են ջոկել. դատավորն էլ նոր, գանձապահն էլ: Հիմի ասում են, վոչ ովի առջև չենք



ուզում գլուխ ծռել: Ես դեռ վոչինչ: Գիշերանց նրանք ազի կալվածքն են գնում... Էնտեղ, ասում են, պիտի բաժանեն նրա հողն ու ունեցած չունեցածը: Բա մեր գործը վո՞նց է լինելու:

— Կրա՛կ, կանչեց մեկը:

Ժողովուրդն, ասես, քարացավ: Ամենքը յերկինքն էին նայում:

Հյուսիսում կարմրին էր տալիս մի փոքրիկ ամպ: Մի րոպե ևս, և այդ ամպը անագին բոցավառ կրակ դառավ:

— Դեղերն են վառվում:

— Գոմերն էլ են այրվում:

— Դեղե՞րը:

— Հախերն է՛,— գոռաց ամբոխը և փողոցը նետվեց:

## ԼԵՆԻՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հեղափոխության ընթացքում գյուղացիներն էլ պայքարի դուրս յեկան կալվածատերերի ու կառավարության դեմ, բայց նրանց պայքարը շատ թույլ էր:

Հաշված է, վոր ֆաբրիկային բանվորների մեծամասնությունն է մասնակցել հեղափոխության պայքարին ու գործադուլներին, իսկ գյուղացիների, անտարակույս, փոքրամասնությունը միայն, և հավանորեն՝ հինգերորդ կամ չորրորդ մասից վոչ ավելին: Գյուղացիները պայքարում էին պակաս համառությամբ, ավելի բաժան-բաժան, պակաս գիտակցորեն, շատ անգամ էլ թագավորի բարեսրտության վրա հույս դրած: 1905—1906 թվերին գյուղացիները միայն վախեցրին թագավորին ու կալվածատերերին:»

---

ՀԱՐՑԵՐ՝

1. Ովքե՞ր բանվորների հետ միացած կռվում էին 1905 թվին թագավորի հետ:
2. Ի՞նչ էին պահանջում գյուղացիները:
3. Կազմակերպվա՞ծ էր արդյոք գյուղացիական շարժումը:

## ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան գործադուլից հետո թագավորական կառավարությունը նոր ուժով հարձակվեց բանվոր դասակարգի վրա: Դասակարգային պայքարն որեց-որ ավելի յեր բորբոքվում: Դեռ 1905 թվի աշունքից սկսած, բանվորները բոլշևիկների գլխավորությամբ սկսեցին զինված ապստամբության համար պատրաստություն տեսնել:

Մենշևիկները հակառակ էին թագավորի ու բուրժուազիայի դեմ բանվորների զինված պայքար մղելուն: Բոլշևիկները, Լենինի գլխավորությամբ, մաքառում էին մենշևիկների հետ և կոչ էին անում բանվորներին զենք վերցնել ու թագավորական կառավարության դեմ դուրս գալ:

Խարկովում, Նիժնիյ-Նովգորոդում, Կովկասում տեղի ունեցան բանվորների զինված ընդհարումներ թագավորական զորքերի ու վոստիկանության հետ: Զինված ամենախոշոր ապստամբությունը տեղի ունեցավ Մոսկվայում: Ապստամբության ղեկավարը Մոսկվայի խորհուրդն էր: Մոսկվայի խորհուրդը, վոր իր շուրջը միացրել էր մոտ 100 հազար բանվոր, բոլշևիկյան կուսակցության գլխավորությամբ էր գործում: Դեկտեմբերի 7-ին խորհուրդը գործադուլ հայտարարեց, վորն ապա զինված ապստամբության փոխվեց: Զինված կամավորների խմբեր էին կազմակերպված:

Հազարավոր բարիկադներ կառուցվեցին Մոսկվայի փողոցներում և հրապարակներում: Այդ բարիկադները խանգարում էին թագավորի զորքերի ազատ

տեղաշարժը քաղաքում, իսկ կամավորների համար ծառայում էյին վորպես լավ պատսպարան։ Առաջին օրերը Թագավորի զորքերը չկարողացան ճնշել ապստամբներին։ Հինգ որ շարունակ, դեկտեմբերի 11-ից մինչև 16-ը Մոսկվայի բանվորները հերոսաբար կռվում էյին Թագավորի զինված բանակի հետ։

Ապստամբությունը ճնշելու համար կառավարությունը Պետերբուրգից զորքեր փոխադրեց։ Ու թեև Մոսկվայի բանվորները, մանավանդ Պրեսնյայի բանվորները, արիաբար դիմադրում էյին, բայց հավասար ուժեր չէյին։

Պրոլետարիատը տեղի ավեց, վորպեսզի նորից զենք վերցնի 1917 թ. հոկտեմբերին։

> Միայն բոլշեվիկյան կուսակցությունն էր, վոր ընկ. Լենինի գլխավորությամբ, վճռականաբար ու մինչեվ վերջը ղեկավարում էր պրոլետարիատի դասակարգային կռիվներր 1905 թվի հեղափոխության օրերին։ Մյուս կուսակցությունները—մենշեվիկները, սոցիալիստ-հեղափոխականները (էսէռները),—դավաճանեցին բանվորներին 1905 թ. հեղափոխության օրերին։ Նրանք բուրժուազիայի հետ միասին դեմ յելան բանվորների ապստամբությանը։




## ՇԻՆՈՒՄ ԵՆ ԲԱՐԻԿԱԴՆԵՐ

Մութ է։ Փողոցներում բանվորների խմբերը տաք-տաք խոսակցում են։ Մի տղա վազում, անցնում է, կանչելով, թե վոչ հեռու բարիկադներ են շինում։

— Դե՛հ, մենք էլ սկսենք,—ասում է դալուկ ու նիհար գրաշարը։

— Քաշի՛ր, բե՛ր, լսվում է մեկի ձայնը։

— Մի քանի հոգի քաշեքաշ բերում են մի յերկար տախտակե պատ։ Կիսամութ ու արդեն հանդարտ փողոցը մի ակնթարթում կենդանանում է։ Բարիկադն արդեն մի արշին բարձր է գետնի յերեսից։ Նրա հետևում ուրիշ բարիկադ են կանգնում։ Տեղահան են անում տների դարբասները, պատերը, ցուցանակները։

— Վերցրե՛ք, աղերք, պետք կլինի։



Բակերից քաշում, բերում են փայտեր, խողովակներ, հնացած ու դեն գցած իրեր։ Բարիկադների շուրջը դես-դեն են վազում յերեխաներն ու կանայք։ Կտրված յերկաթաթելերի ճարճատյունը և գետին գլորվող ելեկտրական սյունի դղրդյունը միախառնվում են զիլ ու խիզախ ձայների հետ։ Յերգելով դեմ են արել սյուները չուգունե վանդակապատին, վորն աշխատում են տեղահան անել։

## ԿՌՎԻ ՍԿԻԶԲԸ

Թնդում է հրետանին։ Դա կրակում են Տվերսկոյ փողոցի յերկարությամբ։ Բարիկադների մոտ բազմություն է խռնված։ Մեկը փախչում է—դրուժինան։

Դիմացի մայթի վրա յերևում են 15 հոգի։ Նրանց առաջնորդում է մի վոխտ, կորաքամակ կին։ Մարտական դրուժինայի պետն է նա։

— Զենք քիչ ունենք։ Պետք է զենք ճարել—ասում է մեկը խեղդված ձայնով։

Յերկու հոգի, զատվելով բարիկադի շուրջը խռնվողներից, գնում են փողոցով։ Փողոցներում խարույկներ են վառվում, վորոնց մոտ զինվորներն են տաքանում։

— Կանգնի՛ր, ձեռքերդ վեր։

Սվինները դեմ են անում բանվորի կրծքին։ Սպայի ձեռքում աղոտ փայլում է ատրճանակը։

— Խուզարկել։

Շոշափում են պարանոցը, տնտղում են գրպանները։ Հենց վոր մի կասկածելի բան գտնեն, տանում, կանգնեցնում են սառած Մոսկվա-գետի վրա և գնդակահարում են։ Այնտեղ արդեն դիակներ շատ կան։

## ԿԱՐՄԻՐ ՊՐԵՍՆՅԱՆ

Պրեսնյան—բերդ է։ Նրա ամեն կողմը բարիկադներ են ցցված։ Պրոխորովի մանուֆակտուրի ֆաբրիկը մարտական շտաբն է։ Նույնպես շտաբ կա նաև Շմիդտի ֆաբրիկում։ 500-ի չափ կամավոր վոստայնանկներ, վորոնք զինված են



Հեռավոր Արևելքից վերադարձող զինվորների ձեռքից խլված ատրճանակներով, ռումբերով ու հրացաններով, կռվում են Պրեսնյայի բարիկադների վրա։

Բոլոր յերկաթուղիները, բացի Նիկոլայևսկայայից, կանգ են առել։ Նիկոլայևսկայա ճանապարհով դեկտեմբերի 16 ին ժամանեց Սեմյոնովյան գվարդիա-

կան գունդը։ Զինվորները հարբած են։ Նրանց բաց թողին Պրեսնյայի բարիկադների վրա։

Հարյուրավոր կամավորների վրա բաց թողին հազարավոր գազազած, հարբած զինվորներ։ Ատրճանակների դեմ թնդանոթներն ուղղեցին։ Ծխացող ու մոխիր դարձած Պրեսնյան լուռ է։

Զինվոր պահակներ են անցնում փողոցներով։ Ժամանակ-ժամանակ հրացանաձգություն է լսվում։ Ապստամբությունը ճնշողները իրենց զվարճության համար գնդակահարում են փողոցների անցորդներին։ Հաղթողները շրջապատում են բնակարանները, զենքեր են փնտրում, բռնում են նրանց, վորոնց վրա կասկած ունեն, ու տանում են Մոսկվա-գետի վրա։ Այնտեղ արյուն, դիակներ, այնտեղ սառցի մեջ բաց արած և արյունով ներկված ծակեր...

Բանվորական Մոսկվան ընկճվեց, բայց չհաղթվեց։ Նա պատրաստվում էր նորանոր մարտերի։

## ԹԱԳԱՎՈՐԻ ԲՌՈՒՆՑՔԸ

Դաժան կերպով հալածեց թագավորը բանվորներին ու գյուղացիներին։ Քանի որ շարունակ թագավորի զորքերը «խաղաղացնում էյին» Մոսկվան, կրակում էյին հրացաններից, ավեր էյին սփռում թնդանոթներից։ Հրետանիների հարվածներից քարուքանդ էյին լինում տներ, ավերվում էյին ամբողջ թաղեր։

«Խաղաղացնելու» համար ուղարկված Սեմյոնովյան գունդը հրաման ստացավ՝ «ձերբակալվածներ պետք չեն, գործել անխնա»։

Մի առանձին դաժանությամբ աչքի էյին ընկնում գնդապետ Ռիմանի զորախմբերը, վոր ուղարկված էյին Կազանի ճամբով։

Այս պահին կռիվը Մոսկվայում փոխադրվել էր նրա արվարձանները։ Դեռ դիմանում էյին բարիկադներով ողակված Պրեսնյան, Մինսկիյ տրամվայի պարկը, Բրոնըյե քաղաքամասը։ Պաշտպանվում էյին ռոգոժցիները, Զամոսկվորեչյեն։ Սակայն կենտրոնը կառավարության ձեռքումն էր։

Կազանկայի բանվորները յեկան Մոսկվային օգնության։ Մոսկվա—Սոկոլնիկի կայարանի մոտ դրուժիննիկներով լի գնացքն անցնում էր բրեզենտներով ծածկված պլատֆորմների կողքից։ Յերբ գնացքը հավասարվեց հիշյալ պլատֆորմներին, բրեզենտները շպրտվեցին մի կողմ ու զինվորները, վորոնք պահված էյին նրանց տակ, կրակ բաց արին։ Ճարճատեց գնդակացիրը։

Հենց այստեղ էլ, գծի վրա, յերևաց մի շոգեկառք, վորը պատրաստ էր կտրել կամավորների ուղին։

Մեքենավարը՝ Բոլշևիկ Ուխտոմսկին ինքն իրեն չկորցրեց։ Նա հետաշարժ ընթացք տվեց, սակայն մնաց փակիչների մեջ։ Շոգեկառքը սլանում էր գծի հետ, վագոնները յերերվում էյին, կաթսայի գոլորշին ամեն րոպե սպառնում էր պայթյունով։ Մի-յերկու րոպե—և կամավորների խումբն այլևս յենթակա չէ կրակոցին։ Արագ հասան Պերովո։ Կապեցին վեց վիրավորի վերքերը։ Բայց շոգեկառքը վիրակապներով բուժել անկարելի յեր—նա անդառնալիորեն փչացել էր։

Մռայլ տրամադրությամբ ցրվեցին դրուժիննիկները, նոր մարտերի պատրաստվելով։ Մեքենավար Ուխտոմսկին բռնվեց Լյուբերցի կայարանում և գնդակահարվեց։

Յերկրի բոլոր կողմերն ուղարկվեցին պատժիչ խմբեր, վորոնք այրում էյին, կախում ու սպանում էյին հազարավոր մարդկանց։ Շատ մարդ սպանվեց և վիրավորվեց զինվորների հետ յեղած կռիվներում։ Բանտերը լցվեցին ձերբակալված հեղափոխականներով։



Այս գազանավայել դատաստանի հետևանքով 4 հազար հոգի մահվան պատժի յենթարկվեցին, մոտ 80 հազար հոգի յել ձերբակալվեցին ու բանտերը նետվեցին։

> «Հաղթանակը կտանենք մենք համառուսական հաջորդ զինված ապստամբության ժամանակ։
>
> (Վ. Ի. ԼԵՆԻՆ)։

## 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1905 թվի հեղափոխությունը ճնշվեց։ Թագավորի կառավարությունը և բուրժուազիան անխնա կերպով կոտորեցին բանվորներին ու գյուղացիներին։ Այս անհավասար կռվում ընկան մեր լավագույն ուժերը։

Բայց ինչու հաղթական դուրս յեկավ թագավորական կառավարությունը։ Դրա պատճառն այն էր, վոր բանվորները դեռ բավականաչափ փորձ չունեյին հեղափոխական պայքարում։ Գյուղացիները կազմակերպված չեյին, ու նրանց կռիվը շաղկապված չէր բանվորների կռվի հետ։ Զինվորները դեմ էյին գնում և բանվորներին և գյուղացիներին։

Ապստամբությունները բռնկվում էյին մեկ այս, մեկ այն քաղաքում, և կառավարությունը ճնշում էր նրանց։

Ահա թե ինչ էր ասում Լենինը 1905 թվի հեղափոխության մասին.

«Տարաբախտաբար շատ ցան ու ցրիվ էյին գործում գյուղացիները, անկազմակերպ, վոչ բավականաչափ հարձակող, և սրա մեջ է կայանում հեղափոխության պարտության հիմնական պատճառներից մեկը»։

Մեծ նշանակություն ուներ նաև այն, վոր զինված ուժ չունեյին բանվորներն իրենց կողմում։ «Զինված ժողովուրդը միայն,—ասում էր Լենինը,—կարող է իրական պատվարը լինել ժողովրդական ազատության»։

Սակայն 1905 թվականը լավ դաս յեղավ բանվորների և գյուղացիների համար։ Նրանք տեսան, վոր թագավորը կալվածատերերի ու կապիտալիստների հետ ձեռք ձեռքի տված է գործում։

Բանվորներն ու գյուղացիները հասկացան, վոր ազատություն ձեռք բերելու համար հարկավոր է թագավորին, կալվածատերերին ու կապիտալիստին տապալել։ Իսկ դրան հասնել կարելի յե միայն բանվորների և աշխատավոր գյուղացիների միաբան գործակցությամբ։

## 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Վ. Ի. ԼԵՆԻՆԸ 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«...Քաղաքացիական պատերազմից մեծագույն դաս ունեցավ բանվոր դասակարգը։ Առաջին անգամն էր, վոր ռուս բանվորները, վորոնք այդքան տարիներ ստրուկի վիճակ ունեյին, միշտ հալածված ու անգրագետ, վճռեցին փողոց դուրս գալ, կռիվ հայտարարել ինքնակալությանը և թագավորի զորաբանակի հետ մի քանի որ կռվել։ Առաջին անգամն էր, վոր հարստահարված բանվոր դասակարգը վճռեց կռվի դուրս գալ։ Նրան հաղթեցին, բայց այդ այն պարտություններից է, վոր ապագա հաղթանակների գրավականն է հանդիսանում։

Մինչև զինված ապստամբությունները՝ Ռուսաստանի ժողովուրդը անձեռնհաս էր մասսայական զինված պայքար մղելու շահագործողների դեմ։ Դեկտեմբերից հետո այդ ժողովուրդը փոխակերպվեց։ Նա վերածնվեց, մարտական փորձառություն ձեռք բերեց ու դիմացկուն դարձավ ապստամբությունների համար։ Նա առաջ բերեց ու պատրաստեց նոր մարտիկներ, վորոնք և հաղթեցին 1917 թվին»

Առանց 1905 թվի գլխավոր փորձի, Հոկտեմբերի հեղափոխության հաղթանակը չեր կարող տեղի ունենալ»։

ԼԵՆԻՆ

# 1905 ԹՎԻՑ ՀԵՏՈ

1905 թվի հեղափոխության պարտությունից հետո, նրա ակտիվ մասնակիցների մի մասը գնդակահարեցին, մի մասը բանտերի բաժին արին, մի մասն էլ Սիբիր քշեցին։ Կառավարությունն ավելի մոլեգնաբար հարձակվեց բոլշևիկյան կուսակցության վրա, վորովհետև հանձին նրան՝ կառավարությունը տեսնում եր մի համառ ու յեռանդուն հակառակորդ, վոր բանվոր դասակարգի իսկական ղեկավարն եր։

Կուսակցությունն ընդհատակյան գործունեության անցավ։ Ընկեր Լենինն ստիպված յեղավ արտասահման գնալ։ Կուսակցության աշխատանքները պետք է տարվեյին գաղտնաբար՝ ամեն րոպե ոստիկանության ձեռքն ընկնելու ռիսկ անելով։

Բոլշևիկները համառությամբ ու համբերությամբ բացատրում եյին բանվորներին նրանց խնդիրները. մարտիկ-հեղափոխականների նոր կադրեր եյին ստեղծում։

Հեղափոխական պայքարը ղեկավարելու համար, ընկ. Լենինը կազմակերպեց բոլշևիկյան լրագիր։ Այն փողերով, վոր իրենք, բանվորներն եյին հավաքել, նախ սկսեց դուրս գալ «Պրավդա» լրագիրը։ Իր լրագրի միջոցով բոլշևիկյան կուսակցությունն իր շուրջն եր համախմբում բանվորներին, դաստիարակում եր կուսակցության համար նոր անդամներ։ Թագավորի կառավարությունը կատաղաբար հալածում եր բոլշևիկյան մամուլը։

Լրագրեր ու թռուցիկներ տարածելու համար բանտարկում եր և աքսոր եր քշում։ «Պրավդա»-ն օրեց-օր ավելի հաջողություններ եր վայելում բանվորների շրջանում։

1912 թվի ապրիլի 17-ի դեպքերը, վոր տեղի ունեցան Լենայի հանքերում, ցնցեցին բանվորական մասսաններին ու բողոքի ցույցեր առաջ բերին բանվոր դասակարգի կողմից. այդ ցույցերը հետո փոխվեցին գործադուլների և շարժումների։

## ԼԵՆԱՅԻ ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒՄԸ *(1912 թվի ապրիլի 17)*

Յերկաթուղու կայարանից մինչև Լենայի վոսկե հանքերը՝ 1734 կիլոմետր է։

Դաժան ձմեռ, հողամշակմամբ պարապելու հնարավորության կատարյալ բացակայություն, միայն բեռովի մթերքներով սնվելու անհրաժեշտություն, —ահա այն պայմանները, վորոնք հատուկ եյին ամենից մոռացված այդ անկյունին։

Ի՞նչպես եր ապրում բանվորն այդ վոսկեհանքում։

Նա օրական աշխատում եր 11 ժամ։ Աշխատում եյին խոր հանքերում, ուր ջուրը հոսում եր և՛ առաստաղից, և՛ պատերից։ Հանքերում տաք ու խեղդուկ օդ, իսկ դուրսը—40—42 աստիճանոց սառնամանիք։ Բանվորը օրը 4 անգամ, թեթև հագնված, ստիպված եր դուրս ու ներս անել՝ 3—4 կիլոմետր հեռու գտնված իրենց կացարաններ վազելու համար։

Աշխատավարձը հաշվելու ժամանակ նրանց խաբում ու պակաս եյին հաշվում։ Փտած մթերքներ եյին տալիս։ Բանվորների բնակարանային պայմանները սոսկալի եյին։ Բանվորներն իրենց ամբողջ ընտանիքով ապրում եյին փոքրիկ վորջերում, կեղտոտ ու խոնավ կազարմաներում։ Այդպիսի վորջերում ապրող ամբողջ ընտանիքն էլ սովորաբար քնում եր տախտերի վրա։ Մեծ, փոքր,—բոլորը միասին։ Բանվորների հետ գազանաբար եյին վարվում։ Վոսկեհանքերի վարչությունը նրանց մարդատեղ չեր դնում։

Կյանքի դաժան պայմանները հանեցին բանվորների համբերությունը։ Նրանք պայքար սկսեցին իրենց կեղեքիչների դեմ։

1912 թվի մարտ ամսի սկիզբները բոլոր վոսկեհանքերում էլ աշխատանքը դադարեցվեց։ Հազարավոր բանվորներ գործադուլ արին։

Հանքերի վարչությունը Իրկուտսկի նահանգապետին դիմեց, վոր զորք ուղարկի։ Յերբ լուր ստացվեց, վոր զորքն ուղարկված է, հանքերի վարչությունը բանվորներին հայտնեց, վոր նրանց պահանջներին բավարարություն տալուց հրաժարվում է։

Բանվորներն առաջարկեցին՝ կամ վերսկսել աշխատանքները, կամ ստանալ իրենց հաշիվը։

Ապրիլի 4-ին, մոտավորապես յերեկոյան ժամի 5-ին, հինգ վոսկեհանքի բանվորները գնացին դատախազի մոտ, իրենց դիմումը հանձնելու համար։ 3500 բանվորներ, նեղ ժապավենի պես ձգված, ձյունապատ ճամբով գնում եյին դեպի հանքերի գրասենյակը։ Գնում եյին հանգիստ ու անխռով։

Զինվորների հրամանատարը, շտաբռոտմիստր Տերեշչենկովի հրամանով, 160 քայլի վրա սկսեցին կրակել։

Հեռագիրն առանց քաշվելու հաղորդեց՝

— Սպանված են 107, վերքերից մեռածներ 74, վիրավորվածներ 209։

Ցարիզմն իր հաղթանակն եր տոնում։

Բայց ինքնակալության համար ձրի չանցան 400 զոհերը։ Ապրիլի 17-ը մտել է բանվորական շարժման պատմության մեջ վորպես հզոր քաղաքական տեղաշարժի օր, վորպես Հոկտեմբերի նախագուշակը։

Իբրև պատասխան Լենայի սպանդանոցին, բանվորները մի շարք գործադուլներ հայտարարեցին։ Արդյունաբերական բոլոր խոշոր կենտրոններում բռնկվեցին գործադուլներ ու շարժումներ։ Դրանք վոչ միայն Լենայի բանվորների գնդակահարման առթիվ արտահայտված բողոքի բնավորություն եյին կրում, այլ և ցարական ռեժիմի դեմ բողոքի, ցարի և բուրժուազիայի դեմ բողոքի։

---

*ՀԱՐՑԵՐ՝*

1. Ինչո՞վ վերջացավ 1905 թվի Հոկտեմբերյան գործադուլը։
2. Ի՞նչ նշանակություն ունեցան առաջին խորհուրդները։
3. Ո՞վ եր ղեկավարում 1905 թվի դեկտեմբերի զինված ապստամբությունը։
4. Ի՞նչ եյին խոսում զինված ապստամբության մասին մենշևիկները։
5. Ինչո՞ւ հաջողվեց ճնշել ապստամբությունը։
6. Ի՞նչ դաս յեղավ 1905 թվի հեղափոխությունը։
7. Բանվորական շարժման համար ի՞նչ նշանակություն ունեցավ Լենայի գնդակահարումը։

## ՀՈՒՇԱԳԻՐ 1905 ԹՎԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Հունվարի 3. Գործադուլ Պուտիլովի գործարանում։

Հունվարի 9. Բանվորների յերթը դեպի Ձմեռային պալատը։

Հունիս. «Պոտյոմկին» զրահանավի ապստամբությունը։

Հունիս. Սև հարյուրակային ջարդերի սկիզբը։

Հոկտեմբեր. Համառուսական գործադուլը։

Հոկտեմբեր. Նավաստիների ապստամբությունը Կրոնշտադտում։

Դեկտեմբեր. Մոսկվայի բարիկադները։

Դեկտեմբերի 14—17. Պրեսնյայի ջախջախումը և ապստամբության վերջնական ճնշումը։

1905—1906 թիվ. Գյուղացիական ապստամբությունները։

Ի՞նչ էքսկուրսիաներ պետք է կատարել, 1905 թիվը ճանաչելու համար։

Էքսկուրսիա 1905 թվի մասին։

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ՝

1. Պրեսնյայի թանգարանը։

2. ԽՍՀՄ-ի հեղափոխական թանգարանը (1905 թ. դահլիճները։)

3. Բոլշևիկների Կ.Կ.-ի 1905 թվի ընդհատակյա թանգարան-տպարանը։

ՌՈՍՏՈՎՈՒՄ՝

Հեղափոխության թանգարանը Մ. Գորկիյի անվան պարտեզում։

Մյուս քաղաքներում էքսկուրսիա պետք է կազմակերպել դեպի հեղափոխության տեղական թանգարանները։

Ի՞նչ կարելի յե կարդալ դասարանում կամ տանը՝ 1905 թվի մասին:

Լ. Նեյման, Լեյտենանտ Շմիդտը:

Մ. Գորկիյ, Հունվարի 9-ը։

Կասսիլ, Մարտական մկրտում։

Տերյայեվա, Արյունաներկ դասը։

Կոչետկով, Գրիշկինի կամավորական խումբը։

Վերշինին, Մարտական գրուժիննիկների խումբ։

Կոնովալով, Լենայի վրա։

Արիստով, 1905 թիվը—Հոկտեմբերի ուղին է։



# ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1914 թվի օգոստոսին բռնկվեց համաշխարհային պատերազմը։ Պատերազմն սկսվեց Գերմանիայի ու Ավստրիայի միջև՝ մեկ կողմից, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև՝ մյուս կողմից։ Հետո նրանց միացան մյուս յերկրներ, այնպես վոր պատերազմի վերջին նրան մասնակցում եյին 16 պետություններ։ Զանազան յերկրների 70 միլիոն հոգի բանվորներ ու գյուղացիներ մտել եյին զորաբանակների մեջ՝ իրար սպանելու համար։ 10 միլիոն մարդ սպանվեց, 17 միլիոն մարդ վիրավորվեց ու գերվեց։ Կործանվեցին ամբողջ քաղաքներ, ռայոններ ու գյուղեր։ Պատերազմի ծախսերն այնքան մեծ եյին, վոր յեթե այդ փողերը բաժանվեյին Խորհրդային Միության սահմաններում ապրողներին, նրանցից ամեն մեկը կստանար յերեքական հազար ռուբլի։ Այս պատերազմը պետք եր զանազան յերկրների կապիտալիստներին։ Նրանք պատերազմում եյին այն յերկրներին տիրելու համար ուր նրանք կարող եյին հեշտությամբ և շահավետ յեղանակով վաճառել իրենց ապրանքներն ու նրանոր կապիտալներ դնել։




Բոլոր յերկրների տերտերներն էլ օրհնում եյին այդ արյունոտ սպանդանոցը, կոչ անելով մեկ յերկրի զինվորներին՝ մյուս յերկրի գորշ շինելներ հագած նույնպիսի աշխատավորներին սպանելու։

Միայն բոլշևիկներն եյին, վոր Վ. Ի. Լենինի գլխավորությամբ կոչ եյին անում բոլոր յերկրների բանվորներին ու գյուղացիներին՝ վերջ դնել յեղբայրասպան սպանդանոցին ու իրենց զենքն ուղղել բոլոր յերկրների կալվածատերերի ու կապիտալիստների դեմ։

## ԻՆՉՊԵՍ ԵՐ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԵԿԵՂԵՑԻՆ

Պատերազմին մասնակցող բոլոր յերկրների հոգևորականությունն էլ հանդիսավոր մաղթանքներ եր կազմակերպում, վոր աստված հաղթություն շնորհի։ Օրհնած ջրով եր սրսկում նրանց գնդացիրներն ու թնդանոթները, պես-պես լեզուներով օգնություն եր կանչում Քրիստոսին, Մուհամմեդին, Ալլահին, Բուդդային և մյուս աստվածներին ու մարգարեներին։ Բոլոր յեկեղեցիներն էլ սիրով աջակցում եյին իրենց կառավարություններին, իրենց թագավորներին ու բուրժուազիային և սրանք բոլորն էլ հավասարապես խաբում եյին ժողովրդին։

## ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

«ՊԱՏԵՐԱԶՄ—ՊԱՏԵՐԱԶՄԻՆ»
ԼԵՆԻՆ

Լենինին իրենց գլուխ ունենալով՝ բոլշևիկները հենց սկզբից բացարձակապես դեմ էին պատերազմին։

Լենինը բացատրում էր պատերազմի ավազակային էությունը։ Այս մասին նա շատ էր գրում լրագրերում և առանձնապես գրքույկներում։ Արտասահմանում համագումարներ էր կազմակերպում, ուր միշտ էլ արտահայտվում էր պատերազմի դեմ։ Նա բացատրում էր գերմանացի և ռուս բանվորներին ու գյուղացիներին, որ նրանք իրար թշնամի չեն, այլ եղբայրներ են և մեկ ընդհանուր թշնամի ունեն—կապիտալիստները։

Լենինն ասում էր՝ «իմպերիալիստական պատերազմը պիտի փոխվի քաղաքացիական պատերազմի»։

## ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմը (1914—1917 թ.) էլ ավելի վատացրեց ցարական Ռուսաստանի բանվորների և գյուղացիների առանց այն էլ ծանր վիճակը։

Հացը չէր բավում։ Քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաները սոված էին։ Ֆաբրիկներն ու գործարանները կրճատում էին ապրանքների արտադրանքը ազգաբնակչության համար և պատերազմի սպասարկմանն էին անցնում։ Նրանցից մի քանիսն էլ բոլորովին փակվեցին։

Բանվորների վիճակը չափազանց ծանրացավ։

Գյուղերն աղքատացան. գյուղացիներին պատերազմի էին տանում. հացն ու լծկանը խլում էին բանակի համար։ Պատերազմը նպաստեց կուլակին ամրապնդել իր տնտեսությունը գյուղում, ընդարձակել ցանքսի տարածությունը, իսկ չքավորներն ավելի ու ավելի քայքայվում էին։

Բանակում կային միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ։ Տանջված ու սոված՝ նրանք տեսնում էին արդյունաբերության ու գյուղատնտեսության քայքայումն ու ամբողջ ուժով ատում էին պատերազմը։

Բոլշևիկներն ագիտացիա էին անում բանվորների, գյուղացիների ու զինվորների մեջ, որ այլ ևս համբերել կարելի չէ և կոչ էին անում ինքնակալությունը տապալելու։

1917 թ. փետրվարի 18-ին Պետերբուրգում, Պուտիլովսկիյ գործարանում գործադուլ հայտարարվեց։ Բանվորների պահանջներին բավարարություն չտրվեց։ Գործարանի վարչությունն սպառնում էր, որ բանվորներին կարճակի ու ռազմաճակատ կուղարկի։ Պուտիլովցիներին միացան Պետերբուրգի այլ գործարանների բանվորներն ու սկսեցին ընդհանուր գործադուլը։

Փետրվարի 23-ին գործադուլի մեջ էին 100 հազար բանվորներ։ Բանվորների հետ միասին փողոց դուրս յեկան նաև նրանց կանայք ու յերեխաները. նրանք հաց էին պահանջում ու կանչում էին՝ «կորչի՛ ինքնակալությունը», «կորչի՛ պատերազմը»։

Ապստամբության գլուխ կանգնած էր պրոլետարիատը, որն իր հետևից տանում էր աշխատավորների ամբողջ հեղափոխական մասսան։

Պրոլետարիատը պահանջում էր խաղաղություն, հաց և ազատություն։

Փետրվարի 24-ին, 25-ին ու 26-ին Պետերբուրգի բոլոր բանվորներն էլ չէին աշխատում։



Փետրվարի 27-ին մի քանի զորագունդ զենքը ձեռքին բանվորների կողմն անցան և ժամը մոտ չորսին ամբողջ քաղաքը գտնվում էր ապստամբների ձեռքում։

Բանվորներն ու զինվորները գրավեցին Պետրոպավլովսկ բերդի զինարանը։ Քաղաքական բանտարկվածները բանտերից արձակվեցին։ Ինքնակալությունը տապալված էր։

Փետրվարյան հեղափոխությունն առաջ բերողները բանվորներն ու գյուղացիներն էին, մինչդեռ իշխանությունն անցավ բուրժուազիայի ձեռքը։ Ուղիղն ասած՝ դա յերկիշխանություն էր։ Մեկ կողմից՝ ժամանակավոր կառավարությունը—բուրժուազիան, մյուս կողմից՝ բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդը։ Ժամանակավոր կառավարության գլուխ կանգնած էր մեծահարուստ կալվածատեր՝ իշխան Լվովը։ Կառավարության կազմի մեջ՝ էին Գուչկովը, ամենախոշոր արդյունաբերողներից մեկը, Տերեշչենկոն—շաքարի գործարանների տերը, Կոնովալովը—որ մի քանի տեկստիլ գործարաններ ուներ։

Ժամանակավոր կառավարությունը շարունակում էր պատերազմը. հողն առաջվա պես գտնվում էր կալվածատերերի ձեռքում, իսկ գործարաններն ու ֆաբրիկները պատկանում էին կապիտալիստներին։

Բանվորներն ու գյուղացիներն առաջվա պես մեռնում էին խրամատներում։ Սովն ու աղքատությունը քանի գնում ավելի զգալի յեր դառնում զորքի թիկունքում։

Փետրվարյան հեղափոխության ժամանակ էս մենշևիկները դավաճանեցին բանվոր դասակարգին։ Նրանք համաձայնություն կայացրին ժամանակավոր կառավարության հետ։ Ցելույթներ էին ունենում միտինգներում ու ճառում էին այն մասին, թե պետք է աջակցել ժամանակավոր կառավարության և պատերազմը շարունակել մինչև հաղթական վերջը։

Բոլշևիկները բացատրում էին բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին, որ ժամանակավոր կառավարությունը բուրժուական կառավարություն է։

Բոլշևիկները պահանջում էին իսկույն դադարեցնել պատերազմը, իսկ հողերը գյուղացիներին հանձնել։ Նրանք պահանջում էին, որպեսզի իշխանությունն անցնի բանվորական և զինվորական պատգամավորների խորհրդին։

Բոլշևիկները բանվորներին դրդում էին պայքարել ժամանակավոր կառավարության դեմ, ղեկավարում էին պրոլետարիատի պայքարն ու նախապատրաստում էին զինված ապստամբության։

Լենինը գրում էր, որ պրոլետարիատը՝ ցարիզմի դեմ ապստամբելուց հետո՝ կանցնի բուրժուազիայի դեմ ապստամբության։ Նա ասում էր, որ փետրվարյան հեղափոխությունն այն ուղին է, որը տանում է դեպի պրոլետարական հեղափոխությունը, որով և կհաստատվի պրոլետարական իշխանությունը։

---

ՀԱՐՑԵՐ՝

1. Ե՞րբ տապալվեց ցարական ինքնակալությունը։

2. Ցարիզմի տապալումից հետո ո՞վ գրավեց իշխանությունը։

3. Ինչո՞ւ բանվորները, գյուղացիներն ու զինվորները դժգոհ էին այդ իշխանությունից։

4. Բուրժուական կառավարության հետ միաժամանակ ի՞նչ իշխանություն առաջ յեկավ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ դասարանով, կոլեկտիվորեն կազմեցեք այս հարցերի լիակատար պատասխաններն ու ալբոմ կազմեցեք։

> Ո՛չ մի աջակցություն ժամանակավոր կառավարությանը, ամբողջ իշխանությունը խորհուրդներին:
>
> ԼԵՆԻՆ

## ԼԵՆԻՆԸ ՅԵԿԱՎ

— Այսօր գալիս է Լենինը,—ասաց շոֆեր Վլասովը ու նստարանի վրա տեղ բռնեց:—Ընկերներ, գնանք Լենինին դիմավորելու:

Ավտոմոբիլային վաշտի բոլոր ջահել շոֆերներն սկսեցին տաք-տաք խոսել: Մի քանիսն ասում էին՝

— Ո՞վ է Լենինը: Մենք ինչո՞ւ նրան պետք է դիմավորենք:

Վլասովը կանգնել էր նստարանի վրա ու ամբոխից ուժով աղաղակում էր.

— Լենինը բոլոր բանվորների առաջնորդն է: Մենք էլ նույն բանվորներն ենք, ինչ վոր ուրիշները: Յերկար տարիների բացակայությունից հետո, Լենինը Ռուսաստան է վերադառնում արտասահմանից: Մենք ուզում ենք նրան դիմավորել՝ վորպես մեր առաջնորդին ու մտերիմին: Ասածս ուղիղ չէ՞, ընկերներ:

— Ուղիղ է, ուղիղ է, լսվեց ամեն կողմից, և բոլորը դիմեցին դեպի դուռը՝ սենյակից դուրս գալու համար:

Փողոցում, ավտո-կայանի մուտքի մոտ, նրանք շարվեցին զույգ-զույգ ու Վլասովի առաջնորդությամբ առաջ շարժվեցին: Գնում էին դեպի Ֆինլանդիական կայարանը:

Կայարանում լիքը նավաստիներ ու զինվորներ էին հավաքված, կրծքերին կարմիր ժապավեն ամրացրած: Րոպե առ րոպե գնացքի ժամանելուն էին սպասում: Վերջապես հեռվում, մառախուղի միջից, յերևացին փոքրիկ կրակներ:



Գնացքը՝ յերկարավուն օձի պես՝ մի ակնթարթում ծռվեց դեպի կայարանը: Սկսեց իր հեվքը շոգեկառքը, շխշխկացին անիվները,—կապույտ, կանաչ ու գորշագույն վագոնները յեկան կանգ առան պլատֆորմի մոտ:

Վագոնից դուրս յեկան Լենինը և Կրուպսկայան: Զինվորները և նավաստիները շրջապատելով, ուրախ կոչեցին՝ «ուռա», նրանց միացան բանվորները և յերկար, շատ յերկար տևեց ազմուկը, կոչերը, վորոնց մեջ չէր լսվում Լենինի ձայնը: Յերևում էր, վոր նա չէր սպասում մի այդպիսի ընդունելություն:

— Ի՞նչ է նշանակում այս, փոքր ինչ շփոթված հարցրեց Լենինը:

—Սա հեղափոխական զինվորների վողջույնն է ձեզ, ասաց ներկա յեղողներից մեկը:

Լենինը ուրախ և բարեհամբույր ժպտաց, այդ ժամանակ կայարանին մոտեցավ զրահավոր ավտոմեքենան. Լենինը բարձրացավ նրա վրա և խոսեց կարճ:

Շոֆերները կանգնած են հեռու և նրանց հազիվ հասնում էին առանձին բառեր:

—Ժողովրդին պետք է խաղաղություն, պետք է հաց, պետք է հող, իսկ մեզ տալիս են պատերազմ, քաղց, սով, հողին տեր թողնում են կալվածատերերին: Պետք է կռվել մինչև վերջ...



Նորից բարձր «ուռա» ները խլացրին Լենինի վերջին խոսքերը: Ավտոմեքենան շարժվում է և Լենինը, կանգնած նրա վրա, շարժում է յուր գլխարկով—կեպիով վողջունելով շրջապատող բանվորների հոծ բազմությունը:

Զրահավոր ավտոմեքենան դանդաղ առաջ էր շարժվում հազարավոր բանվորների, նավաստիների և զինվորների բազմության մեջ:

Լենինը մի քանի անգամ խոսում է ավտոմեքենայի վրա կանգնած: Ճանապարհին ընդառաջ էին գալիս նորանոր բանվորական մասսաներ, գնում էին Լենինին վողջունելու:

—Լենինը յեկել է, կրկնում են բազմության մեջ, Լենինը յեկել է...

Վլասովը հուզված մոտենալով յերիտասարդ շոֆերին, ասաց.

—Այժմ դու հասկանում ես, թե ինչու յեն ուրախանում, վոր Լենինը յեկել է: Նա ինչպես բանվորների առաջնորդ... իսկույն հասկանալով ժողովրդի դրությունը, ասաց, հաց չկա, հող չկա, իսկ կալվածատերը կա, պատերազմը կա: Ուրեմն պետք է շարունակել պայքարը... ահա հենց այս բանումն է պետք Լենինը: Նա յեկավ և այժմ գործը հաջողությամբ առաջ կգնա:

## ԼԵՆԻՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Վլադիմիր Իլիչ Լենինը արտասահմանից վերադառնալով, իսկույն և յեթ իր անմիջական ելույթներով բանվորական ժողովներում և բանվորների ու զինվորների պատգամավորական խորհրդի նիստերում, ժամանակավոր կառավարության դիմակը պատռեց: Նա ասաց, «Դուք խաբում եք զինվորներին, վորոնց տանք կռվի, գյուղացիներին չեք տալիս հող, բանվորներին կերակրում եք լոկ խոստումներով: Մենք ազատությունը ձեռք ենք բերել, բայց վոչ նրա համար, վոր շարունակենք պատերազմը, կերակրենք կապիտալիստներին և աշխատենք կալվածատերերի համար: Մենք ազատությունը ձեռք ենք բերել, վորպեսզի կործանենք կալվածատերերին, վերջացնենք պատերազմը, դրավենք ֆաբրիկները կապիտալիստներից»:

Բուրժուական կառավարությունը հասկացավ, վոր յեկել է միջազգային պրոլետարական հեղափոխության առաջնորդը:

Այդ օրվանից սկսվեց ռոնադատություն բոլշևիկների դեմ, վորպես ժամանակավոր կառավարության անհաշտ թշնամիների:

Յեվ Լենինը, վոր իր ամբողջ կյանքը նվիրել էր բանվորական գործին, նորիցստիպված էր թաքնվել իր հալածողներից:

## ԼԵՆԻՆԸ ԹԱՔՆՎՈՒՄ Ե

Մի բանվոր-բոլշևիկ, ընկեր Եմիլյանովը, մեծ նախազգուշությամբ ուղեկցում է Լենինին Լենինգրադի մոտ «Րազլիվ» կայարանը Ֆինլանդիայի յերկաթուղու գծի վրա, իր տունը: Առաջին օրերը Իլիչը թաքնվել էր Եմիլյանովի տանը խոտանոցում: Վորպեսզի չճանաչվի, Լենինը բեխերն ու միրուքը ածիլում է:

Բայց խոտանոցը այնքան էլ ապահով չէր. մտածում են և գտնում ուրիշ հնարք: Խոտհարքը մոտ էր և Լենինին վորպես խոտհար ուղարկում են մարգերը: Իհարկե այստեղ ավելի ապահով էր, խուլ անկյուն էր: Այնտեղ գնալու համար, պետք էր գետով գնալ 4—5 վերստ և անտառով մեկուկես վերստ: Այնտեղ գետափին շինում են շալաշ և ծածկում են խոտով: Ցիցերի վրա կախ են տալիս կաթսա՝ կրակի վրա թեյ պատրաստելու համար: Իսկական խոտհարների նման հրնձում և հավաքում էին խոտը: Իլիչը հմուտ կերպով դարսում էր խոտը յեղանով:

Այս բավական խորհրդավոր շալաշից Լենինը կարողացավ ղեկավարել բանվորական շարժմանը։ Այստեղ, Լենինի մոտ եյին գալիս կուսակցական ընկերները, բանվորները։ Եմելյանովի վորդին Կոնդրատին, նախազգուշությամբ ուղեկցում եր նրանց նավակով լճակի վրայով դեպի շալաշ, ուր նրանք տեսնվում եյին Լենինի հետ և ստանում նրանից հրահանգներ և խորհուրդներ։ Բերում եյին լրագիրներ։ Լրագրներում ի միջի այլոց գրած եր, թե ինչպես Լենինը փախել և թագնվել ե, գրած եր, թե ինչպես տեսան նրան ջրախույզ նավակով տեղափոխվելիս, մի ուրիշ լրագրում՝ թե ինչպես նա օդանավով փախչում ե արտասահման։ Իլիչը կարդում եր և խնդում լրագրական այդ «հնարած» տեղեկատուների վրա, անվանում եր նրանց խեղկատակներ և ծիծաղում եր նրանց հնարքների վրա։

Խոտհարքը վերջանալուց հետո, յերբ սկսում են աշնանային անձրևոտ օրերը, Լենինը տեղափոխվում ե Ֆինլանդիա, ուր և մնում ե թագուն՝ մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը։

## ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՈՐԵՐԸ

Որեց-որ ժողովրդի համար պարզ եր դառնում, վոր բուրժուական ժամանակավոր կառավարությունը ժողովրդին չի կարող տալ վոչ հաց, վոչ խաղաղություն և վոչ ել ազատություն։ Կապիտալիստներն առաջվա պես տեր ու տնորեն եյին գործարաններում և ֆաբրիկներում։ Գյուղացիներին մնում եր միայն նայել կալվածատերերի ագարակների վրա և լսել իշխանության սուտ խոստումները՝ կալվածատերերի հողերը գյուղացիներին բաժանելու մասին։ Զինվորները ռազմաճակատներում քաղցից, ցրտից, հիվանդություններից մեռնում եյին անհույս, իսկ պատերազմը չեր վերջանում։

Բոլշևիկները զորքի մեջ, զինվորների մեջ մեծ աշխատանք եյին տանում՝ թե կազմակերպչական և թե բացատրական, տարածում եյին բացիկներ, թերթիկներ և ագիտացիա եյին անում, վոր պատերազմը պետք ե վերջացնել։ Նրանք ասում եյին՝ «ինչու՞ համար դուք պետք ե սպանեք Գերմանիայի զինվորներին։ Չե՞ վոր նրանք նույնպես բանվորներ և գյուղացիներ են, ինչպես դուք։ Նրանք նույնպես ընտանիքի, տան, տնտեսության տեր են, նույնպես պատերազմից քայքայվում են, ընկնում կարիքների մեջ՝ ինչպես դուք։ Նրանք ձեր թշնամիները չեն, այլ յեղբայրները։ Ձեր իսկական թշնամիներն են հարուստները, կալվածատերերը, ֆաբրիկատերերը և բոլոր նրանք, վորոնք ձեզ շահագործում են, ահա նրանց դեմ ե, վոր դուք պետք ե զենք բարձրացնեք»։

1917 թվին ոգոստոս-սեպտեմբեր ամիսներում սկսվեց բանվորների և չքավոր գյուղացիների շարժումը կալվածատերերի և կապիտալիստների դեմ։ Շատ նահանգներում գյուղացիները գրավում եյին կալվածատերերի կալվածները, արտաքսելով կամ սպանելով նրանց։ Զինվորները, չցանկանալով այլևս կռվել ուրիշների շահերի համար, թողնում եյին խրամատները ճակատում և վերադառնում եյին տուն։

Նոր, պրոլետարական հեղափոխությունը աճում եր ուղղված այս անգամ կապիտալիստների դեմ։

Բոլշևիկների ուժերը նույնպես աճում եյին։ Լենինը ասում եր.

—Ժամանակ ե ապստամբելու։

—Ժամանակ ե բուրժուազիայի իշխանությունը կործանելու։

—Հաղթությունը ապահովված ե, միայն կույրերը այդ չեն տեսնում։

—Այլևս սպասելը, համբերելը հանցանք կլինի հեղափոխության դեմ։



## ՀՈԿՏԵՄԲԵՐ

1917 թվի հոկտեմբերի 10-ին բոլշևիկների Կենտրոնական Կոմիտեն վորոշում ե իշխանությունը յերկրում վերցնել իր ձեռքը։ Բոլշևիկյան կուսակցությունը սկսում ե ուժեղ պատրաստություն տեսնել ապստամբության համար։

Լենինը ընկեր Ստալինի հետ միասին մշակում եյին իշխանությունը գրավելու պլանը։ Նրանք պայքարում եյին բոլոր նրանց դեմ, ով չեր հավատում և վստահանում բանվորների ուժին, ով կասկածում եր Հոկտեմբերյան հեղափոխության հաղթության մասին։

Պետերբուրգի և ուրիշ մեծ քաղաքների բանվորները շտապ զինվում եյին։ Որեց-որ աճում եյին կարմիր գվարդիայի ջոկատները։ Զորքերն անցնում եյին բոլշևիկների կողմը։ Գյուղացիները գյուղում սկսում են գրավել կալվածատերերի հողերը։

Բոլշևիկյան կուսակցությունը տանում ե բանվորական մասսաներին իշխանությունը գրավելու։ Պետերբուրգում սկսում ե ապստամբությունը։ Ապստամբությամբ բռնկվում են և մյուս քաղաքները։

## ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎԵՑ

Ապստամբությունը սկսվեց հոկտեմբերի 25-ի առավոտից։ Ապստամբությունը ղեկավարելու համար կազմակերպված եր Ռազմա-հեղափոխական կոմիտե։

Հեղափոխական զորքերը Ռազմա-հեղափոխական կոմիտեյի հրամանով մեկ մեկի հետևից գրավում եյին Պետերբուրգի պետական հիմնարկությունները։

Նրանք գրավում են կայարանները, հեռագիրը, փոստը, պետական բանկը, զինվորական շտաբը։



Ձմեռային պալատի գրավումը

Յերկաթուղագիծը նույնպես գրավվում ե ապստամբներով։ Ապստամբների ձեռքումն եր գտնվում վոսկին, վոր պահված եր պետական բանկի ներքնատներում։ Բոլշևիկյան զորքերը ամեն կողմից մոտենում և շրջապատում են Ձմեռային պալատը, ուր գտնվում եր ժամանակավոր կառավարությունը։ Նևա գետի վրա,

[illegible]
ուղիղ դեպի պալատի պատուհաններին էին նայում թնդանոթների բերանները:

Յերեկոյան ժամը 7-ին պալատը պահպանող զորքերը սկսում են հեռանալ իրենց տեղերից: Մնացին յունկերները, որոնք հարցնում էին՝ «Ինչ է կամենում ժամանակավոր կառավարությունը, պետք պաշտպանվե՞լ մինչև վերջ, թե՞ մտադիր է անձնատուր լինելու»: Նրանց պատասխանում են, որ կառավարությունը կհեռանա, յենթարկվելով բռնի ուժին:

«Ավրորայից» թնդաց առաջին թնդանոթը: Սկսվեց հարձակումը Ձմեռային պալատի վրա: Թնդանոթների ահեղ որոտը, գնդացիրների անդադար ճարճատյունի մեջ չէր լսվում ոտքերի ձայն, զենքերի շառաչյուններ, մարդկանց կատաղի վայնասունը և փոչ էլ հրամանների խոսքերը: Որպես հեղեղ, լցնելով փողոցները գնում էին զինվորները, կարմիր գվարդիան և նավաստիները: Պալատից քսան քայլ հեռավորության վրա նրա բոլոր մուտքերը բռնելով, շարված էին բարիկադները: Պալատի պատուհանները լուսավորված էին: Այդ լույսի տակ բարիկադներում յերևում էին ուրվանկարներ՝ լիքը լցված զինվորներով և նավաստիներով:

Բարիկադներին մոտեցող ջոկատները փոչ մի վայրկյան կանգ չէին առնում: Ամուր բռնած հրացանները, նրանք անվախ բարձրանում էին բարիկադների թաց, սայթաքելի գերանների վրայով: Անցնելով բարիկադից, ջոկատները հարձակվում են պալատի մուտքի վրա: Պալատի առաջին և յերկրորդ հարկի սանդուխքների վրա կանգնած էին յունկերները: Ապստամբ ջոկատների հարվածների տակ յունկերները հետ են նահանջում և անցնում են պալատի խորքերը:



«Ավրորա» զրահանավը

Հրաձգությունը դադարում է, միայն յերբեմն լսվում էին առանձին հրացանի պայթյուններ: Այդ րոպեին սանդուխների վրա հանկարծ անկազմ ամբոխի մեջ իրարանցում է ընկնում, մեկը ամբոխը ճեղքելով առաջ է վազում: Ամբոխը ճամբա յէ տալիս կպչելով սանդուխների ճաղերին:

Կարճահասակ մի մարդ, ակնոցը աչքերին, շտապ գնում էր, համարյա վազում այդ կենդանի սանդուխներով: Դա ընկեր Անտոնով Օվսեենկոն էր:

— Ո՞ւր է ժամանակավոր կառավարությունը, հարցնում է նա:

— Յերկրորդ հարկումն է դեռես:



[illegible]

— Այնտեղ դեռևս յունկերները պահված են, անձնատուր չեն լինում:

Նա արագ վերև բարձրացավ:

Յունկերների մի խումբ հրացանները ձեռքերին անշարժ կանգնած էին պահակասենյակում, որի հետևի սենյակում նիստ ուներ ժամանակավոր կառավարությունը:

Ամբոխը ներս խուժելով Անտոնով—Օվսեենկոյի հետևից պահակասենյակը և հանդիպելով յունկերներին, բարձրացնում է կատաղի աղմուկ: Անտոնով Օվսեենկոն բարձրացնում է ձեռքը և իսկույն ամենքն էլ լռում են:

— Այլևս արյուն պետք չէ, դիմադրությունը անօգուտ է: Ցած դրեք զենքերը:

Այն սենյակից, ուր ժամանակավոր կառավարությունը նիստ ուներ, դուրս է յելնում մի յունկեր և հայտնում.

— Ժամանակավոր կառավարությունը խնդրեց հայտնել, որ նա զիջելով բռնի ուժին՝ անձնատուր է լինում: Այդպես կործանվում է ժամանակավոր կառավարությունը: Բուրժուազիայի իշխանությունը վերջացավ:

> «Կորչի պատերազմը», «հողը աշխատավորներին», «Ֆաբրիկներն ու գործարանները—բանվորներին», «ամբողջ իշխանությունը խորհուրդներին»:

## ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(Ըստ Ն. Կ. Կրուպսկայի)

Միջազգային իմպերիալիստական պատերազմի ամենակատաղի ժամին կատարվեց աշխարհիս յերեսին ամենամեծ հեղափոխությունը՝

— Հոկտեմբերյան հեղափոխությունը:

### Ո՞Վ ԿԱՏԱՐԵՑ ՆՐԱՆ

Նրան կատարեցին կուսակցության հետ բանվորները և չքավոր գյուղացիությունը: Պատերազմը, ավերածությունը, ճնշումը, բանվորների, գյուղացիների և զինվորների կյանքը դարձնում են անտանելի:

Լենինյան կուսակցությունը պատմում է, բացատրում, թե ինչու համար է պատերազմը, թե ինչպես պատերազմի, հայրենիքի փրկության, ազատության հնչյունը դատարկ խոսքերի տակ կապիտալիստներն ու կալվածատերերը սարքում են իրենց գործերը, ավելի ևս կեղեքելով և սարկացնելով բանվորական և գյուղացիական մասսաները:

— Ընկեր բանվորներ,—ասում էր լենինյան կուսակցությունը, դուք կարող եք հաղթել միայն այն դեպքում, յերբ հենվեք չքավոր գյուղացիության միացած միջակների հետ:

— Ընկեր գյուղացիներ,—ասում էր Լենինյան կուսակցությունը,—բանվոր դասակարգը կարող է ձեզ բերել խաղաղություն, կարող է դուրս բերել ձեզ կալվածատերերի և վաճառականների իշխանության տակից. գնացեք նրա հետևից:

Յեվ բանվորներն ու գյուղացիները գնացին ձեռք ձեռքի տված, նրանք միասին տնքում էին կալվածատերերի և կապիտալիստների լծի տակ, աղայական իշխանության տակ և միասին էլ ապստամբվեցին:

Լենինյան կուսակցությունը իր ամբողջ ուժերը նվիրեց՝ ապահովելու պրոլետարական հեղափոխության հաջողությունն ու հաղթանակը:

> Հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային հեղափոխության սկիզբն է:

# ՍՄՈԼՆԻՅՈՒՄ

*(1917 թվի 26 հոկտեմբերին)*

Բանվորների և զինվորների պատգամավորական խորհրդի նիստը սկսվեց։ Լենինը արագ քայլով բարձրացավ ամբիոն։ Ներկա յեղողներին համակեց խանդավառությունը։ Իսկ նա կարծես թափանցում եր ամեն մեկի մեջ, ինքնել համակվում այդ խանդավառ ուրախությամբ։ Ձախ ձեռքով հենվելով ամբիոնին, հանգիստ և պարզ ասաց՝

— Ընկերներ, բանվոր գյուղացիական հեղափոխությունը, վորի անհրաժեշտության մասին միշտ ասում եյին բոլշևիկները, կատարվեց։

Սրահում տիրեց լռություն, բոլորը սրեցին լսողությունները և դարձան դեպի ամբիոն։ Լենինը ասում եր.



Սմոլնի

— Ի՞նչ նշանակություն ունի այդ բանվորա-գյուղացիական հեղափոխությունը։ Ամենից առաջ այս հեղափոխության նշանակությունը նրանումն է կայանում, վոր մեզնում կլինի խորհրդային իշխանությունը, մեր սեպհական իշխանությունը։

Ցեվ նա կռանալով ամբիոնից, կարծես ձգվելով դեպի լսող մասսան, շարունակեց՝

— Մեր հերթական խնդիրներից առաջինն է անմիջապես դադարեցնել պատերազմը։ Բայց դրա համար պետք է հաղթել կապիտալին։ Մենք գյուղացիների վստահությունը ձեռք կբերենք մի դեկրետով, վորը կվոչնչացնի կալվածատերերի սեպհականությունը։ Գյուղացիները կհամոզվեն, վոր իրենց փրկությունը միմիայն նրանց և բանվորների միության մեջ է։ Այժմ մենք պետք է սկսենք կազմակերպել և կառուցել պրոլետարական սոցիալիստական պետությունը։

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԵԿՐԵՏՆԵՐԸ

Ահա ինչ եր ասված բանվորների և զինվորների պատգամավորական խորհուրդների համառուսական համագումարի վորոշումների մեջ՝ Հոկտեմբերյան հեղափոխության հենց յերկրորդ օրը.



### 1) ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բանվորա-գյուղացիական կառավարությունը առաջարկում է բոլոր պատերազմող ժողովրդներին և նրանց կառավարություններին, անմիջական բանակցություններ սկսել արդարացի խաղաղություն կնքելու համար։

Արդարացի խաղաղությունը, վորը սպասում են բոլոր յերկրների բանվոր և աշխատավոր դասակարգերը, մեր կառավարությունը համարում է խաղաղություն կնքել առանց բռնագրավելու ուրիշի յերկրամասեր և առանց պարտվածների կողմից դրամահատուցման։ Ահա այսպիսի խաղաղություն է առաջարկում անմիջապես կնքել Ռուսաստանի կառավարությունը բոլոր պատերազմող ժողովրդներին»։

### 2) ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

«Կալվածատերերի հողի սեպհականությունը անմիջապես վոչնչացվում է առանց գլխագնի։

Կալվածատերերի կալվածքները, ինչպես և իշխանական, վանքային, յեկեղեցական բոլոր կալվածքները, բոլոր ունեցած կենդանի և անկենդան գույքով, տնտեսական շենքերով և բոլոր պարագաներով անցնում են գավառակային հողային կոմիտեների և գյուղացիական պատգամավորական գավառային խորհուրդների իրավունքի տակ»։

### 3) ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Յերկիրը կառավարելու համար կազմել բանվորա-գյուղացիական կառավարություն, վորը կկոչվի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։ Ժողովրդական կոմիսարների գործունեության վերահսկողությունը և նրանց փոխելու իրավունքը պատկանում է բանվորական, գյուղացիական և զինվորական պատգամավորների խորհուրդների Համառուսական համագումարին և նրա Կենտրոնական Գործադիր մարմնին։

---

### ՀԱՐՑԵՐ

1) Յե՞րբ կատարվեց Հոկտեմբերյան հեղափոխությունը։
2) Ո՞վ մասնակցեց նրա կատարմանը։
3) Ո՞վ եր ղեկավարում հեղափոխական շարժումը։
4) Ո՞ւմ անցավ իշխանությունը Հոկտեմբերից հետո։
5) Խորհրդային իշխանության ի՞նչ դեկրետներ գիտես։

### ԽՆԴԻՐ

Իմացեք, խորհրդային իշխանությունը ի՞նչ դեկրետներ է հայտարարել կրոնի մասին, խորհրդային իշխանության ժողովրդների մասին, կնոջ դրության և իրավունքների մասին։ Իմացեք, ինչպես է կատարվել Հոկտեմբերյան հեղափոխությունը ձեր քաղաքում։

Եկսկուրսիա կատարեցեք տեղական հեղափոխական թանգարանը։ Հոկտեմբերյան հեղափոխության նկարների ալբոմ և պատմվածքների ժողովածու կազմեցեք։

### ԻՆՉ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԿԱՐԴԱԼ «ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

Բեռգոլց—Ստալյան պալատում
Կավերին—Պալատի պաշարումը։
Նասիմովիչ—Ահեղ օրեր։
Սավելյեվ—Համար 13 սենյակը՝
Վերեսցայա—Հեղափոխական տանյան։
Դորոխով—Բոլշևիկի տղան։

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Իշխանությունը բանվորներին և գյուղացիներին անցնելուց իսկույն և յեթ սկսվեց կատաղի քաղաքացիական պատերազմը կալվածատերերի և կապիտալիստների դեմ, ինչպես վոր նախատեսել եր Իլիչը: Պարզ եր, վոր կապիտալիստներն ու կալվածատերերը հեշտությամբ և առանց կռվի չեն հաշտվի իշխանությունից և հափշտակած հարստությունից զրկվելու հետ:

Սկսվեց քաղաքացիական պատերազմը:

Դեռ ևս յերիտասարդ բանվորա-գյուղացիական հանրապետությանը մենակ դժվար եր կռվել բոլոր կապիտալիստական յերկրների հետ: Հարավից հարձակվում եր գեներալ Դենիկինը, Արևելքից—Կոլչակը: Արևմուտքից Յուդենիչը իր թաթը մեկնել եր Պիտերին:

Յերկիրը դարձել մի պաշարված բերդ: Թշնամիները ամեն կողմից հրեղեն շրջանակի պես շրջապատել եյին նրան: Բանվորների և գյուղացիների բոլոր ուժերը լարվեց եյին հաղթությունը տանելու համար:

Զորաճակատներում քաղցած, կիսամերկ կարմիր բանակայինը կապիտալիստների հրաշալի զինված և մատակարարված զորքերի հետ կռվում եր խորհրդային իշխանության համար:

Իսկ թիկունքում բանվորները հերոսաբար մարտնչում եյին ավերածության դեմ: Ցուրտը, քաղցը, հիվանդությունները հյուծում եյին ժողովրդին: Այն ժամանակ, յերբ սպիտակների զորքերն ամեն կողմից շրջապատելով, յերկաթե ողակով սղմում եյին խորհրդային հանրապետությանը, յերկրի ներսում դրությունը շատ ծանր եր: Յերկրի ներսում մնացած բուրժուազիան, սպաները և կուլակները սկսում են խորհրդային իշխանության դեմ դավադրություններ և ապստամբություններ կազմակերպել: Հակահեղափոխական բանակների դեմ կռվելու համար ուղարկվում եյին Կարմիր բանակի մասերը: Կուլակների դեմ կռվելու համար գյուղերում կազմած եյին չքավորական կոմիտեներ: Ռուսաստանի բուրժուազիան մենակ չեր կռվում խորհրդային իշխանության հետ. նրան ամեն կերպ ոգնում եր համաշխարհային բուրժուազիան:

Ոտարերկրյա կապիտալիստները ցարական Ռուսաստանում ունեյին շատ ֆաբրիկներ, գործարաններ. նրանց եյին պատկանում Բաքվում նավթի շատ հորեր, Դոնբասի ածխահանքեր: Խորհրդային իշխանություն կազմելուց հետո, այս բոլոր հարստությունները գրավում են աշխատավորները: Այդ պատճառով ել համաշխարհային բուրժուազիան ամեն կերպ և ամեն ոգնություն ցույց եր տալիս սպիտակ գվարդիականներին, բոլշևիկների դեմ կռվելու համար: Նա տալիս եր նրանց փող, զենք և զինվորներ:

1918 թվի ամառը անգլիացիներին հաջողվում ե գրավել Արխանգելսկը: Բացի դրանից, անգլիական զորքերը կարճ ժամանակ տերը տնորեն եյին Անդրկովկասում: Նրանք գրավում են Բաքուն: Բոլշևիկներին դուրս քշեցին: Բաքվի 26 կոմիսարները դավադրությամբ բռնվեցին և գնդակահարվեցին: Ֆրանսիացիները զորք են իջեցնում Ոդեսայում: Հեռավոր Արևելքում Յապոնիան գրավում ե Վլադիվոստոկը:

Այսպես, 1918 թվի վերջերին ամբողջ խորհրդային իշխանությունը շրջապատված եր սպիտակ գվարդիականների և ոտարազգի զորքերի ողակներով: Հակահեղափոխականները կազմակերպում են բոլշևիկյան ղեկավարների մի շարք սպանություններ: 1918 թվի հունիսի 20-ին Պետրոգրադում սպանվում ե Վոլոդարսկին 1918 թվի ոգոստոսի 30 ին Պետրոգրադում սպանում են Ուրիցկուն և Մոսկվայում ծանր վիրավորում են Լենինին:



# ՄԱՀԱՓՈՐՁ ԼԵՆԻՆԻ ՎՐԱ

## (ԲՈՆՉ ԲՐՈՒՅԵՎԻՉԻՑ)

Վլադիմիր Իլիչի հետ միշտ ավտոմեքենայով ուղեկցում եր փորձված շոֆեր Ստեփան Կազիմիրովիչ Գիլը:

Ահա թե ինչ ե պատմում ընկ. Գիլը Լենինի վրա կատարված մահափորձի մասին:

Ոգոստոսի 30-ին Վլադիմիր Իլիչի հետ գնում եյինք հացի բորսան, վորտեղ պիտի կայանար միտինգ: Մեծ բազմություն կար, միտինգը հաջող եր ընթանում և մենք ճանապարհվեցինք նախկին Միխելսոնի գործարանը, Սերպուխովսկայա փողոցում, ուր առաջ ել յեղել յենք մի քանի անգամ: Մտնում ենք ուղղակի բակը, վորտեղ շատ մարդիկ կային: Վոչ ավտոմեքենայում և վոչ ել ճանապարհին վոչ մի պահակ չկար և Վլադիմիր Իլիչին վոչ վոք դուրս չեկավ ընդունելու, վոչ գործարկոմը և վոչ ել մի ուրիշը: Նա մենակ դուրս յեկավ մեքենայից և ուղիղ անցավ գործարան: Յես մեքենան շրջեցի և կանգ առա մուտքից տասը քայլ հեռավորության վրա:

10—15 րոպեից հետո ինձ մոտենում ե մի կին՝ պորտֆելը ձեռքին:

— Ի՞նչ ե, ընկեր Լենինը արդեն յեկե՞լ ե,—հարցնում ե նա:

— Չգիտեմ ով ե յեկել,—պատասխանում յեմ յես:

— Ի՞նչպես թե չգիտեք, դուք շոֆեր եք և գիտեք ումն եք տանում:

— Իսկ յես վորտեղից գիտեմ ով ե, մի ճառախոս ե. քիչ են այդպիսիները, ամեն ժամ գնում, գալիս, բոլորին չես կարող հիշել—պատասխանեցի յես հանգիստ:

Մեզնում միայն մի շատ խիստ պայման կար, յերբեք վոչ վոքի չասել, ով յեկավ, վորտեղից ե, ուր պիտի գնա:

Մեկ ժամից հետո գործարանից դուրս յեկավ բանվորների մի ստվար խումբ և բռնեց բակը: Յես իմացա վոր միտինգը ուրեմն վերջացել ե: Պատրաստվեցի ճանապարհ ընկնելու և լարեցի մեքենան: Մի քանի րոպեից հետո գործարանից դուրս յեկավ բանվորների մի ուրիշ ստվար խումբ, վորոնց մեջ և գտնվում եր Վլադիմիր Իլիչը: Իլիչը խոսում եր բանվորների հետ, վորոնք շրջապատել եյին նրան անթիվ հարցերով:

Խոսակցությունը տևեց յերկու յերեք րոպե: Իլիչի յերկու կողմում կանգնած եյին յերկու կանայք: Նա շրջապատված եր և սեղմված ամբոխով, հենց վոր ուզեց քայլել դեպի մեքենան, լսվեց ատրճանակի պայթուն: Այդ ժամանակ յես նայում եի Իլիչին՝ կիսաշուրջ հետ կանգնած, իսկույն և հետ շուռ գալով պայթյունի կողմը, յես տեսա մեքենայի ձախ կողմից կանգնած մի կնոջ ատրճանակը ձեռքին՝ ուղղած Իլիչի վրա: Լսվեց միմյանց հետևից ևս յերկու պայթուն: Յես իսկույն կանգնեցնելով մեքենան, հարձակվեցի այդ կնոջ վրա նագանը ուղղելով վոտքերին: Նա շտապ շուռ յեկավ և մտավ ամբոխի մեջ, ուղեվորվելով դեպի գործարանի յելքը: Չորս կողմն այնքան բազմություն կար, վոր յես չվորոշեցի կրակել նրա հետևից վախենալով սպանել անմեղ բանվորի: Յես վազեցի նրա հետևից մի քանի քայլ բայց, հանկարծ ուշքի գալով կանգ առա՝ մտածելով, չե վոր Վլադիմիր Իլիչը մենակ ե. ինչ պատահեց նրան: Կանգ առա: Մի վարկյան մեռելային լռություն եր: Հետո հանկարծ կարծես բոլորը միաձայն կոչեցին. «Սպանեցին»: Յեվ մի թափով ամբողջ բազմությունը սկսեց դուրս նետվել գործարանի բակից: Սկսվեց սոսկալի հրում: Յես շուռ յեկա՝ և նկատեցի Վլադիմիր Իլիչին ընկած գետնի վրա: Յես մոտ վազեցի Իլիչին և կռացա դեպի նրան: Նա գիտակցությունը չեր կորցրել և հարցրեց:

— Բռնեցի՞ք նրան, թե վոչ:

Իլիչը կարծում եր, վոր տղամարդ եր կրակողը:

Նրա ձայնը փոխվել էր, խռպոտ էր։ Ցեն ասաց.

— Լուռ կացեք, մի խոսեք, ծանր է ձեզ։ Մեզ շրջապատել էյին, մենք պահանջում էր և պնդում վոր տանեն Իլիչին մոտակա հիվանդանոցը։

— Վոչ մի հիվանդանոց չեմ տանի, այլ ուղիղ տուն։

Իլիչը լսելով մեր վեճը ասաց—Տուն, տուն։

---

Բազմությունը վազում էր, սկզբից չգիտենալով, թե ուր է այն կինը կամ տղամարդը, վորը կրակեց Վլադիմիր Իլիչի վրա։

Ցերեխաները, վորոնք մահափորձի ժամանակ բակումն էյին գտնվում, խմբովի վազեցին կրակող կնոջ հետևից և գոռում էյին—

— Ահա նա, ահա նա։

Առաջին շփոթությունից հետո ամբոխը գլխի ընկավ և սկսեց փնտռել հանցագործին և Նախկին Միխելսոնի գործարանի բանվորների մեկին հաջողվեց նրան բռնել։ Ամբոխը կատաղած ուզում էր նրան պատառոտել։ Մեծ դժվարությամբ նրան կոմիսարիատ հասցրին, վորտեղից նրան խուլյն և յետ ուղարկեցին ՀՉԿ։ Պարզվեց, վոր հանցագործը հակահեղափոխական Ֆանի Կապլանն էր, հակահեղափոխական կուլակային սոցիալիստ հեղափոխականների կուսակցության անդամ։ Դատաստանից հետո նա գնդակահարվում է։

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Կարմիր բանակը կազմվում է հեղափոխության օրերում զինված բանվորների փոքրիկ ջոկատներից։

Սկզբում նա կոչվում էր կարմիր գվարդիա և կազմված էր բանվոր կամավորներից։ Սակայն խորհրդային իշխանության թշնամիները շատ լավ էյին զինված և պատրաստված։ Կարմիր գվարդիայի թույլ և թերատ պատրաստված ջոկատներին դժվար էր հուսալ հաղթության վրա։ Հարկ յեղավ մտածել կանոնավոր Կարմիր բանակ կազմակերպելու մասին։ 1918 թվի փետրվարի 24-ին հայտարարվում է տեկրետ բանվորա-գյուղացիական Կարմիր բանակ կազմելու, ուր կալվածատերերի և ֆաբրիկատերերի տղաները չէյին ընդունվում։ Քաղաքացիական պատերազմի վերջում Կարմիր բանակն ուներ արդեն հինգ և կես միլիոն մարտիկներ և դարձավ ամուր, կազմակերպված ու խիստ դիսցիպլինայով մարտական ույժ։ Կարմիր բանակի գլխավոր ուժը կայանում է նրա մեջ, վոր ամեն մի կարմիր բանակային գիտակցում է թե ինչու համար է նա կռվում։

Նա գիտե, վոր պաշտպանում է իր հողը, իր ֆաբրիկները, գործարանները և իր իշխանությունը։

## ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

1918 թվին Սիբիրում սկսվում է Չեխո-Սլավակների ապստամբությունը Գրավելով ամբողջ Սիբիրը, Չեխո-Սլավակներն առաջ արշավեցին, գրավեցին Ուրալ և ամբողջ Վոլգայի շրջանը։ Սըզրան, Սամարա, Սիմբիրսկ և Կազան քաղաքները գտնվում էյին ապստամբների ձեռքում։ Ամեն ուր, վորտեղ մտնում էյին չեխերը, կազմակերպվում էր հակահեղափոխական կառավարություն։ Տերտերները՝ յեկեղեցու զանգերի ղողանջով ընդունում էյին սպիտակներին և կատարում շնորհակալիքի մաղթանք։ Արևելյան ճակատում մեզ համար ստեղծվեց սպառնալից դրություն։

Խորհրդային իշխանությունն ամեն միջոց ձեռք էր առնում Չեխո-Սլավակներին կազմալուծելու, ջարդելու։ Բոլշևիկները բոլոր բանվորական ժողովներում կոչում էյին «Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է, բոլորը դեպի ճակատ»։



Չեխո-սլավական ճակատը սկսում են ժամանել վոչ թե առանձին խմբեր, ջոկատներ, այլ միանգամայն կազմակերպված կարմիր բանակներ։

Կազան քաղաքի գրավումը կարմիր բանակայիններով սկիզբ է դնում Արևելքում սպիտակ գվարդիականների կործանման։

Այդ ժամանակ Սիբիրում աճում է սպիտակ գվարդիականների մի նոր բանակ, Կոլչակի հրամանատարությամբ։ Կոլչակի ծախսերի փողն ու զենքերը մատակարարում էյին Անգլիան և Ամերիկան։

1919 թվի ամռան Կարմիր բանակը Ֆրունզեյի հրամանատարությամբ մեծ հարձակում է գործում Արևելյան ճակատի վրա։ Գրավվում են Պերմ և Սվերդլովսկ քաղաքները։ Աշնանն արդեն ամբողջ Արևմտյան Սիբիրը մաքրվում է սպիտակ հրոսակախմբերից։

1920 թվի սկզբին Կոլչակը արդեն ջարդված էր։ Իրկուտսկում նրան գտեցին և գնդակահարեցին։

## ԻՆՉՊԵՍ ԸՆԿԱՎ ԿՌՎՈՒՄ Վ. Ի. ՉԱՊԱՅԵՎԸ

1919 թվի մայիսին չեխերը գրավում են Սամարան։ Ամբողջ Միջին Վոլգան գտնվում էր ճերմակների կրունկի տակ։ Այդ դժվար րոպեյին Չապաևը կազմակերպում է պատերազմական ջոկատ։ Իր կարմիր ջոկատներով Չապաևը գրավում է Պուգաչով քաղաքը, գրավելով շատ զենքեր և գերիներ։

Առանց հանգստանալու և կանգ առնելու, նա հարձակվում է չեխերի վրա։

— Ընկեր Չապայև, դուք հոգնած եք, յեկեք փոքր ինչ հանգստանանք։



Վ. Ի. Չապայեվ

— Իսկ գիտե՞ք դուք, թե ինչ են անում այժմ սպիտակները Սամարում։ Այնտեղ նրանք ամեն օր գնդակահարում են մեր ընկերներին հարյուրներով. ամեն մի ժամը թանգ է։ Առաջ։

Չապայևը միշտ վաշտերի առաջն էր։ Նա հոգ էր տանում իր դիվիզիայի մասին։ Նա չէր մտածում, վոր ինքը անքուն է և սոված, միայն թե կուշտ և հագնված լինեն իր դիվիզիան։ Սիրում էին նրան կարմիր բանակայինները, վորպես իրենց հարազատ հորը։

— Ընկեր Չապայևի համար մենք թեկուզ ջուրն ու կրակը կընկնենք։

Սպիտակ հրոսակախմբերը Սամարից դուրս են վռնդված։ Չապաևի մարտիկները հաղթությամբ ներս են մտնում քաղաք։ Բանվորները մեծ ուրախությամբ դիմավորեցին իրենց ազատարարներին։ Բուրժուաները ատելությամբ յէին նայում Չապայևցիներին, սակայն ստիպված էյին լռել։ Սամարում սպիտակների տիրապետությունը վերջացավ, բայց Կարմիր բանակայիններին, կարմիր ջոկատներին, չապայևցիներին հանգստանալու և տոնելու ժամանակ և միջոց չկար։

Կարմիրները քշում են սպիտակներին. ամենից առաջ գնում է անվեհեր Չապայևի դիվիզիան։ Արդեն գրաված են Կինելը, Բուգուրուսլան, Ուֆան։ Այդ ժամանակ Ուրալսկ քաղաքը շրջապատվում է կազակներով։ Չապայևը նետվում է այնտեղ. Ուրալսկ ազատված է։

Հեռանալով և հալածելով կազակներին, Չապայևը ընկնում է թակարդի մեջ: Գարնանային օր էր: Ուրալ գետի ափին սպիտակները շրջապատում են ամեն կողմից Չապայևի դիվիզիայի շտաբը: Չապաևը հավաքում է, համախմբում իր շուրջը մի խումբ քաջարի կարմիրների և սկսում է ինքնապաշտպանվել: Բայց գնդակները արդեն վերջանում են, իսկ սպիտակներն ավելի և ավելի յեն մոտենում... մի խումբ կարմիր-մարտիկներ սեղմված են ափին: Ընկնում են, մեկ մեկու հետևից սպանվում, վիրավորվում, հոշոտվում:

Չապաևը դեռ ևս գտնվում էր դիրքում: Մեկ ձեռքում նա ունի բռնած հրացանը, մյուս ձեռքին ատրճանակը: Չորս կողմը դիակներ են և վիրավորների տնքոցը:

Չապայևը մենակ կանգնած է ափին և ինքնապաշտպանվում է: Մեկ ձեռքը արդեն վիրավոր է, նա թևով սրբում է արյունը և շարունակում է կրակել:

Ահա և վերջին գնդակը կրակվեց:

«Այժմ մենք նրան ողջ կբռնենք»—ուրախանում են թշնամիները: Բայց ոչ, իզուր եք կարծում: Չապայևը անճար, գետափից ջուրն է նետվում և փրփրուն, արագընթաց ալիքները գրկում են նրան...

## ԿԱՐՄԻՐ ԴՈՆԸ

Ինչու՞ բուրժուները, կալվածատերերը, սպաները, կուլակությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո փախան Ռուսաստանի ծայրամասերը:

Այնտեղ, ծայրամասերում,—Դոնում, Կուբանում, Թերեքում, Սիբիրում—գտնվում են կազակների գյուղերը (ստանիցները):

Ցարական կառավարությունը փորձում էր կազակներին դարձնել իր հավատարիմ ծառաներն ու հեղափոխության դահիճներ: Ցարական Ռուսաստանի ամբողջ մյուս գյուղացիության համեմատությամբ կազակները մեծ առանձնաշնորհումներով և արտոնություններով եյին օժտված: Կազակներն ավելի լավ եյին ապրում, քան կենտրոնական Ռուսաստանի գյուղացիները և Դոնի, Կուբանի ու Թերեքի յեկվոր գյուղացիները: Սակայն ինքնակալության ժամանակ ոչ բոլոր կազակությունը միատեսակ լավ են ապրում—չքավոր կազակները նույնպես տառապում եյին իրենց կազակ կալվածատերերի ու կուլակների ձեռքում, ինչպես և յեկվորները: Չքավոր կազակների մեջ կային շատ հեղափոխականներ—բոլշևիկներ—Պոդտյոլկով, Կրիվոշլիկովը և այլն: Յեկվոր կուլակները նույնպես «քեֆով» եյին ապրում Դոնում, ինչպիսի և ցարական Ռուսաստանի բոլոր այլ մասերում: Ինչ վերաբերում է միջակ կազակներին, նրանք տատանվում եյին,—ում հետևից գնալ, կազակ-կուլակների՞, բուրժուների՞, կալվածատերերի՞, ցարական գեներալների՞, թե՞ խորհրդային իշխանության: Միջակ կազակները վախենում եյին կորցնել իրենց առանձնաշնորհումները, վախենում եյին, որ յեկվոր ու կազակ չքավորությունը կտիրե իրենց հողերին:

Սպիտակ-գվարդիականներն էլ օգտվեցին միջակ կազակների այդ տատանումներով: Կազակ և յեկվոր կուլակների օգնությամբ նրանք գրգռում եյին կազակներին յեկվորների դեմ, վերջիններիս—կազակների դեմ: Սակայն շուտով քաղաքացիական պատերազմի խիստ դասերը ցույց տվին ամբողջ կազակության, որ ոչ միայն կազակ չքավորների, այլ և միջակ կազակների համար միայն մի ճանապարհ կա բուրժուա-կալվածատիրական ու կուլակային ճնշումից ազատվելու—պայքարել սպիտակ գվարդիականների դեմ, Կարմիր բանակի դրոշակի տակ: Յեվ Դոնը դարձավ Կարմիր—խորհրդային:



## ԴԵՊԻ ՌՈՍՏՈՎ

Կարմիր հետևազորը, թշնամուց մաքրելով Դոնբասը, հառաջխաղացմամբ մրցելով հեծելազորի հետ, լարելով իր ուժերը, քշում էր թշնամու ուժերը: Ռոստովի մոտ գեներալ Դենիկինը հավաքեց իր ընտիր զորամասերն ու բանակները: Տասնյակ հազարավոր սպիտակ կամավորներ, Շկուրովի և Մամոնտովի վեց հազարանոց հեծելազորը, տասնյակ տանկեր, հարյուրավոր հրանոթներ և զրահագնացքներ բավական սպառնալից ուժ եյին կռիվներից ու արշավանքներից հոգնած, հիվանդություններից պակասող Կարմիր զորամասերի համար:

Հունվարի յոթին սպիտակ հեծելազորը տոնում էր իր հաղթանակը: Յերկու կարմիր հրացանաձիգ դիվիզիաներ, վորոնք բավական թույլ եյին, յուրաքանչյուրը բաղկացած վոչ ավելի, քան 700 մարտիկներից, անզգուշաբար առաջ անցան, հանդիպեցին սպիտակների հինգ հազարանոց հեծելազորին և ծանր կորուստներ տվին: Կարմիր հեծելազորային բրիգադը գեներալյան կամուրջի*) մոտ նույնպես մեծ կորուստներ ունեցավ:

Սպիտակ-գվարդիական Ռոստովը փայլում էր տոնականությամբ: Ռեստորաններից ու կաֆեներից լսվում եյին հարբած, խռպոտ ձայներ—

— «Խիզախ կելնենք մարտի՝ սուրբ
Ռուսիայի համար»...

Հանդիստ եյին և տոնական բնույթ չունեյին բանվորական թաղերը: Բանվորներն սպասում եյին կարմիրներին, պատրաստվում եյին սպիտակ—գվարդիական հրոսակներից ազատվելու օրվան:

* * *

Հունվարի 8-ի առավոտյանից հեծելազորային բանակը հարձակման անցավ: Դիվիզիաները հրաման ստացան՝ հասնել գեներալյան կամուրջը և Սալա գյուղը, ջարդել թշնամուն և գիշերելուց հետո, հունվարի 9-ին հարձակվել Ռոստովի վրա:

Նախորդ հաջողություններից հուսադրված՝ սպիտակները նույնպես առավոտից անցան հարձակման: Բոլշայա Կրեպկայա գյուղի մոտ սկսվեց համառ կռիվը: Հանդես յեկավ վեց հազարանոց սպիտակ հեծելազորը, բայց չկարողացավ կանգնել կարմիր հեծելազորի վեցերորդ դիվիզիայի դեմ: Սպայական կամավոր գնդերը փորձեցին անցնել վեցերորդ դիվիզիայի թիկունքը, սակայն հանդիպեցին Կուբանյան յերեսուներեքերորդ դիվիզիայի հարվածներին: Հրանոթի վորոտներից դողդողում եյին շրջակա դաշտերն ու ձորերը: Ճարճատում եյին հարյուրավոր գնդացիրները: Սուլթան-Սալայի մոտ թնդում եյին պողպատյա դորշ հրեշները—իննը տանկ նետվում եյին կռվի հնոցը:

Տանկերը սակայն չհասան մինչև կռվի տեղը: Սպիտակները չդիմացան կարմիր հեծելազորի ուժեղ, միահամուռ հարձակման: Նրանք հետ շպրտվեցին:

Կատաղաբար կռվելով, նահանջեցին նաև սպայական գնդերը,—դեպի գեներալյան կամուրջը...

Սալայի մոտ հավաքվում եյին կարմիր հեծելազորի մասերը: Կռիվը վերջացավ: Հրամանի համաձայն, պետք է գիշերեյին այստեղ: Սակայն մարտիկները տաքացած եյին: Մարտական ձիերը դեռ չեյին հոգնել: Տեղ հասան Վորոշիլովը և Բուդյոննին: Ցուրտ օդը ճեղքեց բոլորին ծանոթ, քաջարի ձայնը.—

— «Փառապանծ դիվիզիաներ, շնորհավորում եմ ձեր փայլուն հաղթանակը:

— Կեցցե Խորհրդային իշխանությունը և հզոր Կարմիր բանակը—լսվեց մյուս հուժկու ձայնը:

*) Գյուղ, վոր գտնվում է Ռոստովից 50 կիլոմետր դեպի հյուսիս:

— Ընկերնե՛ր, էլ ինչ ենք անելու,—հարցրեց Բուդյոննին կարմիր բանակայիններին:

Մթնշաղի մեջ դեռ յերևում եյին գործարանների խողովակների և զանգատների սուր վերնածայրերի ուրվագծերը:

Այդ Ռոստովն եր:

— Դեպի Ռոստով—հզորաձայն պատասխան տվին կարմիր բանակայինները Բուդյոննուն:

Ցերկու խոսքով տրվեց նոր հրամանը: Աջ կողմից շարժվեց վեցերորդ դիվիզիան: Նրան գլխավորում եյին Բուդյոննին և Վորոշիլովը:

Ուղղակի դեպի Ռոստով:

Ձախ կողմից, դեպի Նախիջևան շարժվեց չորրորդ դիվիզիան:

Անսպասելի կերպով ցուրտ խավարում յերևացին հազարավոր պայծառ լույսեր: Ռոստովի ելեկտրակայանը լույս տվեց: Ռոստովի պրոլետարները, այդ լույսերով ազդանշան եյին տալիս...

Կարմիր զորասյուները հանդարտ լցվում եյին Ռոստովի ու Նախիջևանի լռին ծայրամասերը: Բնակիչներից վոչ վոք բաց չեր արել փակված դռներն ու դարբասները: Վախենում եյին քրիստոսասեր սպիտակ «պաշտպաններից»: Կենտրոնում աղմկում, թնդում եր տոնական Ռոստովը: Ցերթևեկում եյին տրամվայները, վորոնք լիքն եյին լավ հագնված մարդկանցով:

Ծոխ սեղանների շուրջը, վորոնք լի եյին տոնական խորտիկներով, հնչում եյին բաժակները, լսվում եյին պարծենկոտ բաժակաճառեր...

Ցերկու փողոցների անկյունում անսպասելի յերևացին ձիավոր խմբակներ.

— Կանգնի՛ր,—գոռում եյին ձիավորներն անցնող սպաներին:

Սրանք կոտրատվում եյին, մրթմրթալով հայհոյում.

— Դու գիտե՞ս, սրիկա, թե ում ես դիմում:

— Ցեվ ուսադիրները մոտեցնում եյին դեպի լապտերների լույսը...

— Հապա, ընկեր, վերցրու սրան:

— Ընկեր, ընկերներ...

Ընկեր...

Ուշքի գալով, առանձին սպայական խմբակներ զենքի դիմեցին:

Սպայական ջոկատները կռվում եյին գազանային հուսահատ կատաղությամբ: Թագնվելով հարուստ տներում, վերին հարկերից գնդացիրների կրակի տարափ եյին թափում կարմիր զորասյուների վրա: Սալահատակին վորոտում եյին ձեռնառումբերը: Լուսադեմին կարծես թե սպիտակները հուսահատվեցին: Ակսայ կայարանից քաղաքին մոտեցան յերկու սպիտակ զորագնդեր: Դոնի կողմից կարմիր բանակի գրաված փողոցները ամրակոծվում եյին հրանոթներով:

Չորրորդ դիվիզիան անսպասելի հարձակումից հետո քաշվեց դեպի Նախիջևանի հյուսիսային ծայրամասը: Նրանց հետ շատ հեռացան բանվոր բազմությունները, վորոնք կարմիր մարտիկների շնորհիվ ազատվել եյին սպիտակ-գվարդիական բանդերից: Նրանցից շատերը հրացաններ եյին ձեռք բերում և անցնում կարմիր մարտիկների շարքերը:

Կարմիր հեծելազորայիններն իջան ձիերից, սրանց թողին հրապարակում: Փոթորկալից հակահարձակում գործեցին սպիտակների վրա: Գնիլո—Ակսայից, բըլուրից Ռոստովի կայարանի վրա հարձակվեցին բուդյոնովցիների հեծելախմբերը: Սպիտակների մնացորդները զենքը վայր դրին:

Հունվարի 9-ի կեսօրին չչում, աղմկում, ցնծում եր Ռոստովը: Հազարավոր վատ հագնված, բայց հրճվանքով լի բանվոր մարդիկ վողջունում եյին իրենց



ազատարարներին: Ռոստովը դարձավ կարմիր խորհրդային յերկրի հարավային մի հսկա մասի պրոլետարական կենտրոնը:

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

(Մի դեպք քաղաքացիական կռիվներից. (Նիկիֆորովից)

Կոլյայի հայրը մեքենավար եր: Նա հաճախ Կոլյային շոգեկառքով եր տանում: Կոլյան սովորել եր շոգեկառքին; գիտեր ինչպես պետք է վառել հնոցը, ինչպես կանոնավորիչի հետ վարվել:

Ժամանակը տագնապալի յեր, լուրեր եյին պտտվում, վոր սպիտակները մոտ են:

Մի անգամ Կոլյայի հայրը ուղեկցում եր զինվորական գնացքին և Կոլյան շատ խնդրեց, վոր վերցնի իրա հետը:

Հասնում են Տորգովայա կայարանը (այժմ Սալսկ քաղաքը): Կոլյան դուրս թռչելով շոգեկառքից, վազում է դեպի կայարան: Պլատֆորմի վրա դադարկ է: Գնում է կայարան, տեսնում է բոլորը քնած են:

Այդ ժամանակ հանկարծ ինչ վոր բան տրաքում է, դրախ, տրախկ, ո՜ւու՜ւ, վզզում է օդի մեջ և աղմկում ու իրար անցնում տափաստանը: Կոլյան դեռ պտտում, նորից լսվում են տրախկոցները: Կոլյայի ներսը տակն ու վրա յե լինում, այրվում, շուտ անել հասնել.....



Իսկ չորս կողմից փախչողները բղավում են՝

— Չեխերն են, Չեխերը,

— Կանգնիր, մերոնք են.

— Շտապ հասնել եշելոնին:

— Ընկերներ շտապեցեք, թե չե շրջապատում են:

— Ղազախները, Ղազախները:

Կոլյան կատվի պես թռչում է շոգեկառքը, հանկարծ նկատում է, վոր հայրը կուչ է յեկել՝ ծունկ չոքած հատակին:

— Կոլյա, շտապիր կանոնավորիչը:

Կոլյան իսկույն թռչում է հոր վրայից և բռնում կոնոնավորիչը: Իր ամբողջ մարմնի ծանրությամբ ընկնելով նրա վրա, քաշում դեպի իրեն:

Կոնոնավորիչը շրջվում է և շոգեկառքը առաջ շարժվում ու սկսում է արագանալ: Լսվեց աղմուկ և նրա միջից հրաման «կանգնիր, «կանգնեցրու», իսկ Կոլյան ամբողջ ժամանակ լարված հետևում էր հատակին կուչ յեկած հոր կարգադրության և շրջում կանոնավորիչը: Գնացքը սրարշավ առաջ էր վազում: Ահա և կայանը: Գնացքը դանդաղում է և կանգ առնում: Շոգեկառքը շրջապատում են կարմիր բանակայինները և գնացքի կոմենդանտը:

— Դե, ինչպես էր, հաջո՞ղ էր:

— Շնորհակալություն վոր ազատեցիք, թե չէ....

— Ո՞վ այդպես արագ թռցրեց գնացքը: Ո՞ւր է մեքենավարը:

Կոլյան դուրս է թռչում գլխաբաց, վոտաբոբիկ:

— Ընկերներ, ես իմ տարել գնացքը, յես, իսկ հայրիկը շոգեկառքում ընկած է վիրավոր:

— Ի՞նչպես թե վիրավոր, ո՞ւր է... Ցավ մի ակնթարթում կարմիր բանակայինները բարձրանում են շոգեկառքը և ձեռներին ցած բերում վիրավոր մեքենավարին: Բոլորը շրջապատում են Կոլյային: Նա կանգնած էր գունատ, մրոտ:

— Ուրեմն այդ դու եյիր կառավարում շոգեկառքը, այդ դու մեզ թռցրեցիր և հասցրիր այստեղ, ազատեցիր մեզ: Այ քեզ մեքենավար, կեցցե: Կարմիր շքանշանի յե արժանի նա սրա համար: Դե գնանք, յես քեզ շտաբի պետին պիտի ներկայացնեմ:

Կոմենդանտը համարյա գրկում, բարձրացնում է Կոլյային և տանում է շտաբի պետի վագոնը: Կարմիր բանակայինները բարձրացնելով Կոլյայի հորը, տանում են հիվանդանոց:

## ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

1919 թվին սպիտակները մեծ հարձակում գործեցին Պետրոգրադի վրա: Զորքի գլուխն էր կանգնած ցարական գեներալ Յուդենիչը: Անգլիական կառավարությունն էլ էր հերթին չմոռացավ սպիտակներին առատապես զինելու և փող տալու: Այդ ժամանակ մեր կարմիր բանակները զբաղված եյին ուրիշ ճակատներում և Պետրոգրադի ճակատում ուժերը թույլ եյին: Այդ պատճառով էլ Յուդենիչի առաջին գործողությունները Պետրոգրադը գրավելու՝ հաջող եյին: Նրան հաջողվում է ճեղքել մեր շղթան և իրարանցում գցել մեր զորքերի մեջ՝ անգլիացիներից ստացած վիթխարի տանկերով: Մինչև Պետրոգրադ մնացել էր միայն 25—30 կիլոմետր: Անգլիական լրագիրներ արդեն հաղորդել եյին, վոր Յուդենիչը Պետրոգրադը գրավել է: Ֆրանսիական ֆաբրիկները հազարավոր հակերով ապրանքներ են հանձնում փոխադրիչ ընկերություններին Պետրոգրադ ուղարկելու: Սակայն սպիտակները և նրանց հետ նրանց բարեկամ Յեվրոպական բուրժուազիան սխալվում են: Իսկույն և յեթ ամեն կողմերից կայծակի արագությամբ կարմիր զորքերը տեղափոխվում են կարմիր Պետրոգրադի ոգնության և հոկտեմբերի 21-ին կարմիր զորքերը, վորոնց և միացել եյին Պետրոգրադի բանվորները, վճռական ջարդ են տալիս Յուդենիչին: Սպիտակ զորքերը ջարդվում են, իսկ նրանց մնացորդները ցրիվ գալիս, անձնատուր լինում, փախչում:

> «Պետրոգրադի պաշտպանությունը—բանվորների՝ իրենց գործն է: Պետրոգրադի դրությունը ծանր է, վրտանգը մեծ: Պետք է անհապաղ տալ: Պետք է վոտքի կանգնեցնել ամբողջ բանվորությունը: Պետք է բոլորին զինել»
>
> (Պետրոգրադի խորհրդի կոչը)



## ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Կալվածատիրական մի հսկա տան մոտ հավաքվել եյին գյուղացիները: Նրանց շուրջը կանգնած եյին զինվորները: Տան պատուհանների ապակիները ջարդված եյին: Դուռ չկար, քանդված էր: Մուտքի աստիճանների վրա կանգնած էր մի պարոն շլյապան գլխին և ասում էր՝

— Աստված մեզ վողորմաց: Գեներալ Յուդենիչի հաղթական զորքերը վաղը կմտնեն Պետրոգրադ: Յերկիրը կազատվի բոլշևիկներից, ամեն ինչ նորից կդառնա հին կարգով, ինչպես առաջ էր: Յես անպատճառ բռնել կտամ իմ կալվածները գրավողներին: Բացի դրանից, բոլոր նրանց, վորոնք մասնակցել են իմ տան ավերման, տեղն ու տեղը շան պես պիտի ծեծել տամ:

Ամբոխը լուռ էր և նայում էր զինվորներին:

— Դե այժմ կարող եք հեռանալ, վերջացրեց նա: Այդ ժամանակ առաջ յեկավ մի սպա և գոռաց:

— Հեռացեք, ցրիվ շուտով, ընկեր:

Ամբոխի միջից գեղջկուհիներ մոտենում են սպային և աղերսում.

— Ձերդ գերազանցություն, բարի յեղեք պաշտպանեցեք մեզ: Մեր ձիերը տարան, ասացին թե շտաբից կստանաք փողը: Մենք անգրագետ ենք, վորտեղից մենք գտնենք այդ շտաբին: Կարգադրեցեք վոր վճարեն:

— Դե լավ, գնացեք Գաչչինա, դիվիզիայի շտաբը այնտեղ է: Այնտեղ կվճարեն ձեզ, պատասխանում է սպան:

— Վողորմած յեղեք, Ձերդ գերազանցություն, շարունակում եյին գեղջկուհիները,—Ձին վերցրին և լծեցին թնդանոթին: Միթե կարելի յե, կորավ, փչացավ ձին:

— Սուտ ես խոսում, քաֆթառ, բարկացավ սպան,— Այստեղ մենք թնդանոթ չունենք, թնդանոթները տասը վերստ հեռու են կանգնած:

Կանայք լաց լինելով հեռացան գյուղից: Քիչ հեռանալով և դաշտ դուրս գալով, դադարեցին լաց լինելուց: Փոքրը դառնալով մյուսին, ասում է.

— Ինչպես ուտել եմ ուզում. մի, յեթե մի աման տաք սուպ լիներ: Յերեք որ է, վոր հացով ենք ապրում, գիշերում ենք անտառում:

— Այսոր տանը կլինենք—պատասխանում է մյուսը: Նեղություն շատ քաշեցինք, բայց ինչե՞ր ասես այս ժամանակամիջոցում վոր չտեսանք: Լավ հնարեցինք ձիու պատմությունը: Այստեղ այնտեղ քշեցին մեզ, մեզ էլ հենց այդպիսի բան էր հարակավոր:

— Ուրեմն թնդանոթաձիգ վաշտը դեռևս Գաչչինան է, այստեղ թնդանոթ չունեն—ասաց յերկրորդ—ուրեմն այստեղից հեշտ կլինի նրանց դուրս վռնդել:

— Գյուղացիք բոլորը նրանց վրա չարացած են, կալվածատիրոջը նորից են վզներին նստեցնում:

---

Յուդենիչը ռադիոյով հաղորդում է ամբողջ աշխարհին, վոր նա գրավել է արդեն Պետրոգրադը:

— Կարմիրները պատրաստվում եյին Պուլկովյան բարձրություններում վճռական մարտի:

— Մարտի նախորյակին, ուշ գիշերին, բանվորական ջոկատների մեկի հսկիչը նկատում է յերկու ուրվականներ, վորոնք մոտենում եյին խրամատներին:

— Ահա, սպիտակները սողում են, մտածեց նա և կրակեց, բայց վրիպեց:

— Մի կրակիր, մերոնք ենք—ձայնեցին յերկու կանայք և յերկու ուրվականներ տուրուպներում, ձեռքերը շարժելով, վազեցին արագ դեպի խրամատները:

— Ովքե՞ր եք—զարմացած հարցրեց հսկիչը, վորը փաթաթված եր գնդացիրի ժապավենով։ Ախ, Ոբվոդնի Ջրանցքի գեղջկուհիներն են։ Ցես այն ժամանակ ասում եյի, վոր Պետրովան և Մորոզովան շորերը փոխել են։

— Մենք հետախուզելու եյինք գնացել—ասաց Պետրովան—յերեք որ ճերմակների թիկունքում ման եյինք գալիս և ամեն տեղ հոտոտում։ Ճանապարհին բռնեցինք սուրհանդակին թղթերով։

Շտաբում հետախուզողները պատմեցին մանրամասն ամեն տեսածի և լսածի մասին։ Հանձնեցին թղթերը—Դիվիզիայի գեներալի հրամանը, զորամասի հրամանատարների զեկուցումը։ Այդ հարկավոր լուրերը շատ լավ հասան իր ժամանակին։

---

1919 թվի հոկտեմբերի 21-ին կարմիր զորքերը սկսում են հարձակումը։

Ցերկու որ Պուլկովում և դետսկոյե Սելոյում կռիվները չեյին դադարում։

Հոկտեմբերի 23-ին յերեկոյան Պիտերի կուրսանտները և Լատիշ հրացանաձիգները դուրս են քշում սպիտակներին իրենց դիրքերից։ Սակայն Պետերբուրգը վտանգից դեռևս ազատ չեր։

Կարմիրները մարտնչելով առաջ եյին գնում։

Յուդենիչը ամրանում է Գատչինայում։

Կարմիր բանակը շարունակում է հարձակումը։

Յուդենիչը հետ է փախչում և պահվում է Յամբուրգում։ Նրա ուժերը ցրիվ եյին գալիս, հալչում, զինվորները անցնում եյին կարմիրների կողմը։ Բնակիչները թշնամությամբ եյին ընդունում նահանջող զորքերին։

Կարմիրները դուրս են վռնդում սպիտակներին Յամբուրգից և նեղում են Նարվայում, Եստոնիայի սահմանագլխում։

## ԹՇՆԱՄԻՆ ՀԱՐԱՎՈՒՄ

1918 թվին, հարավում, ցարական գեներալների, Կրասնովի և Կորնիլովի ղեկավարությամբ կազմվում է սպիտակ բանակը։ Այդ զորքերը կենտրոնից կտրում են Հյուսիսային Կովկասը, Բաքուն, Դոնբասը։ Կորնիլովի սպանությունից հետո, սպիտակ զորքերի գլուխն է անցնում Դենիկինը։

Դենիկինին հաջողվեց գրավել համարյա թե ամբողջ Ուկրաինան։ 1919 թվի ամառը սպիտակ հեծելազորքը ճեղքում է կարմիրների ճակատը և ստիպում է նրանց նահանջել։ Քաղաքները մեկը մյուսի հետևից անցնում եյին Դենիկինին։ Վորոնեժ, Կուրսկ, Որյոլ։ Դենիկինը պատրաստվում եր հարձակվելու Մոսկվայի վրա։ Նրան ամեն կերպ ոգ՚նում եյին ֆրանսիացիք և անգլիացիք։ Դենիկինի զորքի գլխավոր ուժը կազմում եր նրա հեծելազորը։ Կարմիր բանակը դրան հակառակ կազմում է իր հեծելազորը։ Կազմվում է Բուդյոննու հեծելազորը։ Կարմիր հեծելազորը Բուդյոննու և Վորոշիլովի գլխավորությամբ ջարդում է սպիտակներին և Դենիկինին հետ է շպրտում դեպի հարավ։

Դենիկինին ջարդելուց հետո, նրա զորքի մնացորդները հավաքվում են Ղրիմում։ Նրանց գլուխն է անցնում պարոն Վրանգելը։ Սպիտակները Ղրիմում իրենց ապահով եյին զգում։ Սակայն 1920 թվին կարմիր զորքերը ուղարկվում են Վրանգելի դեմ։ Բուդյոննու հեծելազորը ջարդ ու փշուր է անում թշնամուն գրավելով Պերեկոպի անմատչելի դիրքերը։

## ՊԵՐԵԿՈՊԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Աշնանային մութ գիշեր եր։ Պատրաստվում են կռվի։ Այսոր միայն կարդացին հրամանը Պերեկոպի դիրքերը գրավելու համար՝—«Կարմիր ճակատի մար-



տիկներ, հասել է մեզ համար կռվի վճռական և վերջնական ժամը։ Վոչ մի դեպքում նահանջ չպետք է լինի։ Ամեն մեկը իր պարտքը պիտի կատարի մինչև վերջը։ Հառա՜ջ, դեպի թշնամու վրա»։

Ամեն մի կարմիր բանակայինի ականջին հնչում եյին հրամանի վերջին խոսքերը։ Ամեն մեկը պատրաստ եր մեռնելու բանվորական գործի հաղթության համար։ Մինչդեռ թնդանոթների պայթյունը, գնդացիրների և հրացանների զարկերը վոչ մի րոպե չեյին դադարում։



Այդ դղրդյունի, գնդակների շառաչյունի մեջ, շտապ փորված փոքր խրամատում թիկն եր տված հրացանին յերիտասարդ կարմիր բանակային Սերգեյ Պոտապովը։ Նրա նիհար դեմքին յերևում եր խորը մտահոգություն։ Նա կոմյերիտական եր, նոր սկսում եր մարտական կյանքը։ Բայց նա ինչով է վատ ուրիշներից։ Նա ցույց կտա իրեն, վոր նա չի վախում լինել առաջին շարքերում։ Սերգեյն ամուր սեղմում է հրացանն իր ձեռքում։

Հրետանու կրակը քանի գնում՝ անտանելի յեր դառնում։ Գնդացիրներն անդադար տրաք-տրաքում եյին... Փոթորիկը մոտենում եր...

Սերգեյը նկատում է, վոր մեծ քանակությամբ մարդիկ, մոխրագույն շինելները հագին, թե սողալով, և թե ցատկելով անդադար առաջ եյին շարժվում..,

Նա հասկացավ, վոր հասել է վճռական ժամը։ Կամ մահ, կամ հաղթություն։ Նա բարձրանում է և բոլորի հետ միասին առաջ շարժվում։ Անցնում են ինչ վոր ճահիճով, ինչ վոր ջրանցքներով և դուրս յելնում բաց դաշտը։

Առջևում յերևում եյին մետաղե լարի լարափակոցները, վորպես անտառ... Նրանց հետևում —Վրանգելի մնացորդները։

— Ընկերներ, հետևեք ինձ—բղավեց գնդի ծեր կոմիսարը։ Լարափակոցները կտրատված են գիշերով, մեր հետախուզողների միջոցով։ Հառա՜ջ, Խորհրդային Հանրապետության համար։

Հրաբուխի լավայի պես կարմիր զորքերը հարձակվում եյին թշնամու ամրության վրա։ Կարծես թե վոչ վոք չեր տեսնում հարյուրավոր սպանվածներին, հաշմանդամներին, վորոնք ամեն քայլափոխում ընկնում եյին՝ արյունով ներկելով հողը։ Վոչ վոք դրա վրա ուշադրություն չեր դարձնում... ամենքը ձգտում եյին միայն մի բանի—հաղթության։

Սերգեյը գնում էր առաջին շարքերում... Նա վոչինչ չէր տեսնում, վոչինչ չէր լսում, նա մի բան էր ուզում—գնալ առաջ, հաղթել և գրանով կատարել հրամանը: Նա բոլորի հետ անցավ լարափակոցի առաջին գիծը, անցավ յերկրորդը, յերբ հանկարծ ձախ կողմից լսվեց՝

—Թշնամին թիկունքումն է:

Սերգեյը չկարողացավ հասկանալ, թե ինչ է կատարվում չորս կողմը: Նա մի բան էր ուզում—ճեղքել Վրանգելի խրամատները և անցնել առաջ, առաջ... Իսկ այստեղ հանկարծ ահ ու իրարանցում:

«Ցեղիր առաջին շարքերում»—անցավ նրա մտքով:

—Ընկերներ,—բղավեց նա,—մենք պահեստի զորքեր ունենք, նրանք թշնամուն հետ կտան: Գլխավոր թշնամին մեր առաջն է... Ջարդենք նրան, մերն է հաղթանակը, հառաջ,—և նա առաջ վազեց:

Հարյուրավոր կարմիր բանակայիններ գնում եյին նրա հետ միասին: «Ուռա, ուռա» հնչում էր ամբողջ դաշտում:

Կարմիր զորքերը գրավում են թշնամու գլխավոր ամրությունները: Պերեկոպը գրավված է:

Նոյեմբերի 12-ին, Ջանկոյ կայարանում ծեր կոմիսարը կարմիր բանակայինների, բանվորների և գյուղացիների հազարավոր խմբված ամբոխին ասում էր՝ —մենք մերկ, վոտաբոբիկ, հոգնած նախկին կռիվներից, դեն շպրտեցինք սպայական ընտիր գնդերին իրենց անմատչելի դիրքերից:

Մենք ցույց տվինք ամբողջ աշխարհին, թե ինչեր կարող է ձեռք բերել բանվոր դասակարգն իր ազատության համար տարվող կռվում:

Մենք գործի—կռվի մեջ ցույց տվինք, թե ինչպես են կռվում կոմունիստները հզոր Կարմիր բանակի շարքերում:

Մեր գնդի քաղվար—Սերգեյ Պոտապովը յերեկ գիշեր ընկավ կռվի մեջ, տանելով իր հետ հազարավոր ընկերներին դեպի հաղթանակ:

Խոնարհեցնենք գլուխներս մեծ հեղափոխության զավակների թարմ գերեզմանների առաջ, վորոնք դուրս քշեցին մեր հանրապետության սահմաններից Խորհրդային իշխանության վերջին թշնամիներին:

## ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԵՀ. ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ՀԵՏ

1920 թվի ապրիլի վերջերին լեհացիները կռվի են դուրս գալիս Խորհրդային իշխանության դեմ: Նրանք ուզում եյին գրավել Բելոռուսիան և Ուկրաինայի հացաբեր մասը: Սկզբում լեհերի հարձակումները հաջող եյին: Նրանք զորքերը քշում են Ուկրաինա և ճեղքելով խորհրդային ճակատը, գրավում են Կիևը:

Այդ ժամանակ Խորհրդային իշխանությունը զորքերը համախմբում է լեհական ճակատում: Կարմիր բանակին հաջողվում է ջարդելով լեհերին, դուրս քշել Ուկրաինայից և մաքրելով Ուկրաինան, մտնել Լեհաստանի խորքը: 1920 թվի ամառը կարմիր զորքերը մոտենում են Լեհաստանի մայրաքաղաքին—Վարշավային:

Կարմիր բանակի այդպիսի փառավոր հաղթանակները յերկյուղի մեջ են գցում Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստներին:

Լեհաստանին օգնության հասավ Ֆրանսիան: Լեհաստանին ուղարկում են ռազմամթերք, ոպաչուներ, մեծ քանակությամբ հրետանի: Լեհաստանը, իրեն հասցրած հարվածից հետո ուղղվում է, զինվում:

1920 թվի հոկտեմբերին, Լեհաստանի հետ հաշտություն է կնքվում, վորի համաձայն Ուկրաինայի և Բելոռուսիայի մի մասը մնում են Լեհաստանի սահմաններում, նրա իշխանության տակ:



## ԻՄ ԿՅԱՆՔԸ

(Վորոշիլովն իր մասին)

«Յես ծնվել եմ 1881 թվականին Յեկատերինոսլավ նահանգի Վերխնի գյուղում: Հայրս յերկաթուղու կայարանում ծառայում էր վերպես պահապան, մայրս բանում էր օրավարձով:

Մանկությունից յես զգացել եմ դառն կարիքը: Յոթը տարեկան գնում եմ աշխատելու. հանքերում հրաքարեր եյի ջոկում և այս աշխատանքի համար ստանում եյի օրական 10 կոպեկ:

Հորս հետ տասը տարի արածացնում եյի կալվածատիրոջ նախիրը: Հետո նորից գնում եմ հանքերը. արհեստանոցում աշակերտ դառնում:


Վորոշիլով

Մեծանում եմ յես անգրագետ: Այդ մասին շատ մտատանջվում էր մայրս: 12 տարեկան դպրոց եմ գնում և սովորում եմ յերկու ձմեռ: 18 տարեկան եյի գործարանում, յերբ բանվորները իմ ղեկավարությամբ գործադուլ արեցին: Գործարանից ինձ արձակում են: Յերեք տարի յես շրջում եմ անգործ: Վոչ մի տեղ ինձ չեյին ընդունում: 1905 թվին յես նորից ղեկավարում եմ գործադուլ: Ինձ ձերբակալում են, ծեծում մինչև կիսամեռ դրության և բանտ են դնում: Այդ ժամանակվանից յես շատ շրջեցի բանտերը, յեղա աքսորում: Ամբողջ ժամանակ աշխատում եյի բոլշևիկյան կուսակցության զինվորական կազմակերպության մեջ:»

## Մ. Վ. ՖՐՈՒՆԶԵ


Ֆրունզե

ԽՍՀՄ-ում և մինչև իսկ կապիտալիստական յերկրներում չկա վոչ մի բանվոր, վոր չիմանա Միխայիլ Վասիլյեվիչ Ֆրունզեյին: Գիտեն նրան և դպրոցականները, աշակերտները, և բոլոր աշխատավորները. գիտեն նրան և սիրում են նրան:

Բայց կատաղի ատելություն են տածում դեպի նրան բանվոր դասակարգի բոլոր թշնամիները: Ի՞նչու համար, վորովհետև նա իր ամբողջ կյանքը տալիս է համայն աշխարհի բանվորության՝ կապիտալիստական շահագործումից ազատագրվելու գործին:

Այդ նա յեր, Ֆրունզեն էր, վոր 1919 թվի սկզբին Իվանովսկու մանագործ բոլշևիկներին առաջնորդեց դեպի ճակատամարտ Կոլչակի դեմ:

Այդ նա յեր, վոր պատրաստեց պլան և կազմակերպեց Պերեկոպի գրավումը 1920 թվին և այդպիսով վերջնականապես վոչնչացավ սպիտակ բանակը:

Ընկեր Ֆրունզեն աչքի յեր ընկնում իր արիությամբ, կռվի ամենավտանգավոր ժամին նա համարձակ գնում եր կարմիր բանակայինների առաջից։ Նա հմուտ կրակում եր։ Մի անգամ Ֆրունզեն կարմիր բանակայինների հետ անցնելով մի գյուղից, հանդիպում ե ավազակների խմբին։ Կարմիր բանակայինները սպանվում են, Ֆրունզեն մենակ մնալով, ձին հետ ե դարձնում։ Նրա ձին շատ լավ ձի յեր, սակայն հոգնած եր։ Նրան շատ մոտ վազում են յերկու հրոսակներ։ Մահը կամ գերությունն անխուսափելի յեր։ Ֆրունզեն արագ արշավելով ձիու վրա, հրացանի գնդակով հրոսակներից մեկին ձիուց ցած ե գլորում։ Հրացանի մեջ մնում ե միայն մի գնդակ։ Պետք ե կրակել առանց վրիպելու։ Յեվ ահա քշելով իր ձին, Ֆրունզեն, հենց վոր հնարավոր ե լինում մի քիչ հեռանալ հարձակվող հրոսակներից, ձիու վազքի ժամանակ ներքև ե թռչում և ծունկ չոքելով, նշան ե գնում և կրակելով սպանում հրոսակին։ Յեթե Ֆրունզեյի սառնարյունությունը և անվրեպ ձեռքը չլիներ, Կարմիր բանակը կորցրած կլիներ իր հերոս հրամանատարին։

Ֆրունզեն մեռնում ե 1925 թվին։ Կարմիր բանակը հերոսաբար կատարում ե իր հրամանատարի պատգամները։

## ՍԱՀՄԱՆԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԸ

Ուրիշ յերկրների պրոլետարիատը Ռուսաստանի բանվորների կռվին անմասն չի մնացել։

Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ ընդարձակվում և ուժեղանում ե հեղափոխական շարժումը։ Սկսվում են հեղափոխությունները Գերմանիայում, Լատվիայում և Ֆինլանդիայում։ Վենգրիայում և Բավարիայում կազմված եյին խորհուրդներ։ Բայց վորովհետև ուժեղ կոմունիստական կուսակցությունը բացակայում եր այդ յերկրներում, այդ պատճառով էլ պրոլետարական հեղափոխությունը չկարողացավ հաղթանակել և բուրժուազիան ճնշում ե բանվորական շարժումը։

Չնայած դրան, արտասահմանյան բանվորները ամեն կերպ աշխատում եյին այս կամ այն ոգնությունը մատուցել իրենց ընկեր՝ Ռուսաստանի բանվորներին։ Այդպես, գերմանական յերկաթուղու բանվորները հրաժարվեցին տեղափոխել զորքերը բուրժուական Լեհաստանի ոգնության։ Ֆրանսիական նավաստիները, վոր ուղարկված եյին Ռուսաստան սպիտակներին ոգնելու, Ոդեսսայում, Անդրե Մարտիի ղեկավարությամբ ապստամբվում են, հրաժարվում են կռվել բոլշևիկների դեմ և նավերի վրա բարձրացնում են կարմիր դրոշակներ։ Աշխարհիս բոլոր յերկրներում բանվորները բողոքում են խորհրդային յերկրի գործին միջամտելու համար։ Կազմակերպված եր «Ձեռներդ հեռու Խորհրդային Ռուսաստանից» ընկերությունը։ Այս բոլոր բողոքների ազդեցության տակ կապիտալիստները ստիպված յեղան զիջելու։ Ֆրանսիական կառավարությունը ստիպված եր շտապ հրաման տալու, վոր Ոդեսսայից նավերը վերադառնան Ֆրանսիա։ Դրանից հետո Անգլիան նույնպես հետ ե կանչում իր զորքերը Արխանգելսկից։

## ԱՆԴՐԵ ՄԱՐՏԻ

(Բանվորի պատմածը)

Մոսկվան մերն ե, Լենինգրադն էլ մերն ե։ Սակայն մեզանում, Ոդեսսայում կռիվը տևեց շատ յերկար։ «Մենք դեռևս կկռվենք»—ասում ե բուրժուազիան, տեսնենք «Ով՝ ում» Նրան դեպի Ոդեսսա ոգնության են գալիս Գերմանական զորքեր, անգլիացիներ, հույներ։ Ֆրանսիական զինվորական նավերը մտնում են մեր նավահանգիստը։ Մեզ, Ոդեսսայի բանվորներիս, չեն բավականանում հրա-



յաններ, չեն բավականանում գնդակներ։ Քաղաքում մենք շատ թշնամիներ ունենք։ Ծովից մեզ եյին նայում թնդանոթի բերանները։ Ֆրանսիական ռազմանավերը, ականանավերը, թնդանոթաձիգները իրենց թնդանոթներն ուղղել եյին դեպի բանվորական թաղերը։

—Բոլշևիկներին մահ—ասում եյին ֆրանսիական սպաներն ու գեներալները։

—Մահ բոլշևիկներին։

Իսկ Կարմիր բանակը արդեն Ոդեսսայի մոտ եր։ Ֆրանսիական մի ականանավում վորպես մեխանիկ, ծառայում եր նավաստի Անդրե Մարտին։ Նա բոլշևիկ եր։

Անդրե Մարտին ֆրանսիական նավերից հավաքում ե նավաստիներին և ասում ե նրանց՝

—Ռուսաստանում հեղափոխություն ե։ Բանվորները պետք ե հաղթեն։ Իսկ մենք պարտավոր ենք նրանց ոգնել։ Թնդանոթաձիգներ, ի՞նչ կանեք դուք, յեթե մեր գեներալը հրամայե կրակել բանվորների վրա։

—Մենք կկրակենք գեներալի վրա—պատասխանում են թնդանոթաձիգները։

Ոդեսսայից քիչ հեռու, հին քարահանքում, բանվորները կազմակերպում են գաղտնի տպարան։ Լրտեսները շատ փնտռեցին նրան, բայց չկարողացան գտնել։ Այստեղ գետնի տակ տպվում եր «Կոմունար» թերթը։ Բացի դրանից, ֆրանսերեն լեզվով տպվում եր նավաստիների համար լրագիր, թռուցիկներ և կոչեր։ Անդրե Մարտինին հաջողվում ե տալ մի մասը նավաստիներին։ Բանվորներն ամբողջ քաղաքում այդ կոչը տարածել, փակցրել եյին պատերին, իսկ ֆրանսիական նավաստիներն ու զինվորները կարդում եյին նրանց։ Պատրաստվում եր ապստամբություն ճերմակների դեմ։

Վերջապես, կարմիր զորքերը մտնում են Ոդեսսային։ Բանվորները զինվում են։ Բուրժուաները դիմում են ֆրանսիական նավերին։ Նավերը շուտ գալով դուրս են յելնում նավահանգստից։ Ոդեսսան դառնում ե կարմիր։

—Անիծված բոլշևիկներ,—ասում եյին գեներալները, նրանք գրավեցին Խերսոնը, գրավեցին Նիկոլաևը, գրավեցին Ոդեսսան։

—Փորձենք պահպանել Սեվաստոպոլը, վճռում են գեներալները։ Ֆրանսիական նավախումբը մտնում ե Սեվաստոպոլին։ Նավերը ուղղում են թնդանոթները քաղաքի վրա։

Սակայն Անդրե Մարտին իզուր չեր աշխատել։ Հանկարծ ֆրանսիական նավերում ծածանվում են կարմիր դրոշակները և վորոտում ե Ինտերնացիոնալը։ Նավաստիները արձակում են նավակները և շտապում են ափ յելնել։

—Կեցցե հեղափոխությունն, կեցցեն բոլշևիկները,—գոռում են նրանք։

Նրանք խառնվում են մեր նավաստիների և բանվորների հետ և գնում են փողոցներով։ Ցույցը բռնեց մի քանի թաղեր։ Ֆրանսիական նավերը անուժ դուրս յեկան։ Նրանք դատարկաձեռն հեռացան Սեվաստոպոլից։ Մի շաբաթից կարմիր զորքերը մտնում են Սեվաստոպոլ։ Սեվաստոպոլի փողոցներում «կեցցե հեղափոխությունը» բղավող ոտարազգի նավաստիների մեջ չկար Անդրե Մարտին։ Ֆրանսիական նավերի վրա կարմիր դրոշ ծածանվելու որից յերեք որ առաջ նա ձերբակալվում ե։

Անդրե Մարտին դատապարտվում ե քսանամյա տաժանակիր աշխատանքի, սակայն բանվորները կարողանում են իր ժամանակին ազատել ֆրանսիական բոլշևիկին։

Անդրե Մարտին յեկել ե մեզ մոտ—Խորհրդային Միություն։

Խորհրդային Միության Ռազմա-հեղափոխական խորհուրդը հրաման է արձակում.

«Բանվոր դասակարգի հաղթության տասնամյա տոնակատարության օրերին՝ ֆրանսիական նավատորմի նախկին նավաստի ընկեր Անդրե Մարտիին պարգևատրել Կարմիր դրոշի շքանշանով, ի նշան ամբողջ աշխարհի աշխատավորության եղբայրական միության»։

**Կեցցե բոլոր երկրների բանվորների միջազգային համերաշխությունը։**

## ԿԱՐԼ ԼԻԲԿՆԵԽՏ ՅԵՎ ՌՈԶԱ ԼՅՈՒՔՍԵՆԲՈՒՐԳ

1919 թվի հունվարի 15-ին սպանվում են գերմանական պրոլետարիատի առաջնորդները —Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսենբուրգը։ Տասնյակ տարիներ նրանք հեղափոխական պայքար են մղել։

Մահը ընդունում են նրանք մարտական դիրքերում։

Իմպերիալիստական պատերազմի վտանգի դեմ պայքարը նրանք սկսել և տարել են մինչ հեղափոխական տարիներում Լենինի հետ միասին։



Կարլ Լիբկնեխտը

Լիբկնեխտը բացատրում էր պատերազմի ավազակային բնույթը և կոչ էր անում հեղափոխության, վորի համար էլ նա յենթարկվում է բանտարկության։

Լիբկնեխտը «Սպարտակցիների միության» հիմնադիրն էր և առաջնորդը։ Այս միության մեջ է հավաքվում գերմանական բանվորության ամենահեղափոխական մասը։ Բոլոր յերկրների բանվորները գիտեյին Լիբկնեխտի անունը։ Լիբկնեխտի կազմակերպած «Սպարտակովցիների միության» օրինակով և կազմակերպվում է ուրիշ յերկրների հեղափոխական յերիտասարդությունը։

1918 թվի նոյեմբերի 9-ին Գերմանիայում բռնկվում է հեղափոխություն։ Մի շարք քաղաքներում կազմակերպվում են խորհուրդներ։ Լիբկնեխտն ու Լյուքսենբուրգը գտնվում են պրոլետարական հեղափոխության համար կռվող մարտիկների առաջին շարքերում։

Բուրժուազիան կազմակերպում է կռիվը հեղափոխության դեմ։

Լիբկնեխտն ու Լյուքսենբուրգը ձերբակալվում են։ Բուրժուազիայի վարձկանները տեղափոխելով նրանց բանտից-բանտ, գաղտնաբար և տմարդի կերպով սպանում են նրանց։

## ԻՆՉՈ՞Ւ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹՈՒՄ Է ԻՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

Ինչո՞ւ ցարական գեներալները ջարդվեցին։

Ինչո՞ւ չհաջողվեց նրանց խեղդել խորհրդային յերկիրը։ Վորովհետև բանվորներն ու գյուղացիները գիտեյին, վոր սպիտակները հաղթելով, կխլեն նրանցից ֆաբրիկներն ու հողը և պրոլետարական հեղափոխությունը կխեղդեն արյան ծովի մեջ։ Բանվորները բոլշևիկական կուսակցության ղեկավարությամբ,



չքավոր գյուղացիության և միջակների հետ դաշնակցելով, իրենց արյամբ պաշտպանում են իրենց իշխանությունը, իրենց հողը, ֆաբրիկները, գործարանները։ Նրանք իրենց լավագույն ուժերը տալիս են ռազմաճակատներին, նրանք ստեղծեցին հզոր, անհաղթելի Կարմիր բանակը։ Ահա ինչ է ասում Լենինը.

«Յերբ կալվածատերերն ու կապիտալիստներն արյունոտ ռազմաճակատում փորձեցին Ռուսաստանում կործանել խորհրդային իշխանությունը, թվում էր, վոր խորհրդային հանրապետության գործը անհույս է, վոր խորհրդային Ռուսաստանը ամենաթույլն է, ամենահետամնացն է, ամենաավերված յերկիրն է և չի կարող դիմանալ ամբողջ աշխարհի կապիտալիստների դեմ։

«Սակայն պատերազմելով աշխարհիս ամենահարուստ պետությունների դեմ, Խորհրդային Ռուսաստանը հաղթող է դուրս գալիս։ Ինչո՞ւ համար։

«...Մենք ունենք ճիշտ պատասխան—բացատրում է Լենինը,—Այս կարող էր լինել և կատարվում են դրա համար, վոր բոլոր կապիտալիստական յերկրների պրոլետարիատը մեր կողմն էր»։



Ռոզա Լյուքսեմբուրգ

Մեր հաղթությունը բացատրվում է նայև նրանով, վոր Կարմիր բանակի կազմակերպության մեջ հիանալի կերպով իրականացվում են պրոլետարական ղեկավարության հետևողականությունն ու հաստատակամությունը։

«Ամեն անգամ,—ասում էր Լենինը,—յերբ պատերազմում վրա յէր հասնում դժվար րոպեն, կառավարությունը զորահավաքում էր կոմունիստներին, և գլխավորապես նրանք են զոհվում առաջի շարքերում»։

Հազարներով եյին ընկնում Յուդենիչի և Կոլչակի ռազմաճակատներում, ընկնում և կորչում են բանվոր դասակարգի լավագույն մարդիկը, վորոնք զոհում են իրենց, գիտենալով, վոր իրենք կնկնեն, կկորչեն, բայց կազատեն սերունդը, կփրկեն հազար ու հազար բանվորներին ու գյուղացիներին։

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

1917 թիվ։ Բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ կազմակերպվում էր գվարդիայի առաջին ջոկատները։

1918 թիվ։ Փետրվարի 23 ին հրատարակվում է բանվորա-գյուղացիական Կարմիր բանակ ստեղծելու օրենքը։

1919 թիվ։ Կոլչակի հարձակումը։ Հարձակման է անցնում Դենիկինը։ Լենինգրադի վրա յէ հարձակվում սպիտակ գվարդիայի գեներալ Յուդենիչը։ Լենինգրադի բանվորները, կուրսանտները և կարմիր բանակայինները հերոսաբար պաշտպանում են Լենինգրադը։ Յուդենիչը դեն է շպրտվել։ Հարյուր հազարավոր բանվորներ, գյուղացիներ, աշխատավորներ խորհրդների իշխանության համար կռվում եյին անձնազոհ։

1920 թիվ։ Հաղթություն Կոլչակի վրա։ Կարմիր զորքերի հարձակումներից սպիտակները փախչում են։ Պատերազմ լեհ սպիտակների հետ։ Սպիտակ գվարդիայի գեներալ Վրանգելի վոչնչացումը Ղրիմում և անթիվ ավազակախմբերը Ուկրաինայում։

1921 թիվ։ Քաղաքական պատերազմը վերջանում է։ Կարմիր բանակը շատ կրճատում է իր մարտիկների քանակը։

ՀԱՐՑԵՐ.

1. Յե՞րբ և ի՞նչու համար է կազմակերպվում Կարմիր բանակը։
2. Ո՞ւմ հետ է կռվում Կարմիր բանակը։
3. Քաղաքացիական պատերազմի ի՞նչ ճակատներ են լինում։
4. Ո՞վքեր են օգնում սպիտակներին։
5. Ուրիշ յերկրների պրոլետարիատը ի՞նչպես է վերաբերվում սպիտակների կռվին կարմիրների հետ։

ԽՆԴԻՐ.

1. Նշանակեցեք քարտեզի վրա, վո՞րտեղ եյին սպիտակները քաղաքացիական պատերազմի ժամանակ. ցույց տվեք քարտեզի վրա Սամարան, Ուֆան, Ստալինգրադը, Վորոնեժը, Կիևը, Արխանգելսկը, Լենինգրադը։

Իմացեք, ինչպե՞ս եր կատարվում քաղաքացիական պատերազմը ձեր բնակավայրում։ Հարց ու փորձ արեք ձեր ծնողներին կամ ձեր յենթաշեֆ ֆաբրիկայի բանվորներին, ովքե՞ր են մասնակցել այդ կռվին։ Գրեցեք հոդվածներ և պատմվածքներ, հավաքեցեք հարմար նկարներ, պատկերներ և ալբոմ կազմեցեք։

## ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Անծայրածիր հարթավայրերում, վորոնք փռված են մինչև Կովկասյան մըշտաձյուն լեռները, մինչև Սև ծովը,—գտնվում է Հյուսիսային Կովկասը։ Հյուսիսից նա սահմանակից է կենտրոնական Սևահող շրջանին, արևմուտքից—Ուկրաինային, արևելքից—Ստորին Վոլգյան յերկրամասին։ Յերկրի խորքերում անսպառ հարստություններ են թաղնված։ Այստեղ կա նավթ, ածուխ, վոսկի, արծաթ, ցինկ, կրակկավ (մերգել)։ Այստեղ կան շատ ուրիշ հարստություններ, վորոնք հարկավոր են Խորհրդային Միության։

Վորպեսզի ավելի լավ պատկերացնել այն հիմնական արդյունաբերական նըշանակությունը, վոր ունի Հյուսիսային Կովկասն ամբողջ Խորհրդային Միության համար, պետք է նրան բաժանել յերեք գլխավոր մասերի։

Նովորոսիյսկ, Կրասնոդար և Մայկոպ քաղաքների ռայոններում կենդրոնացված է ցեմենտի խոշորագույն արդյունաբերություն, վորտեղից մենք ստանում ենք բարձր վորակի ցեմենտ։ Այդ նույն ռայոններում մենք ունենք հսկայական նավթաշերտեր, վորոնք լավագույն վորակի նավթ են տալիս։ Կան նաև մեծաքանակ անտառներ։

Յերկրորդ մասի մեջ մտնում են Հանքային Ջրերը, Գրոզնին, Նալչիկը, Վլադիկավկազը և ազգային մարզերի մեծ մասը։ Այստեղ գտնվում են ամենահարուստ նավթաշերտեր, վորոնք կազմում են ԽՍՀՄ կարևոր նավթային բազան։ Այստեղ կա արծաթ, արճիճ և այլն։

Յերրորդ մասը, ամենահարուստը, հյուսիսային ռայոնն է։ Այստեղ մտնում են Շախտին, Ռոստովը, Տագանրոգը։ Այս մասումն են գտնվում խոշորագույն գործարանները։ Աշխատում են յերկու մետաղագործական գիգանտներ—Սուլինի և Տագանրոգի մետաղագործարանները։ Այստեղ է տարածել իր հզոր շենքերը հնգամյակի առաջնեկը—կարմրադրոշ Սելմաշը։ Այս ռայոնում հանվում է քարածուխ, վորի քանակությունը հնգամյակի վերջում պիտի հասնի մինչև $12\frac{1}{2}$ միլիոն տոննի։ Այստեղ գոյություն ունեն հսկայական քանակությամբ շինանյութերի վիթխարի պաշարներ։

Մի ամբողջ շարք արագահոս գետեր, ինչպիսին են Դոնեցը, Կուբանը, Թերեքը, Բելայա և այլն,—տալիս են ելեկտրավորման ամենալայն հնարավորություններ։



Մեր յերկրամասը մեծ հաջողություններ ունի սոցիալիստական արդյունաբերության շինարարության գործում։ Մենք բավական առաջ ենք քայլել յերկրամասը արդյունաբերական-գյուղատնտեսական յերկրամասի վերածելու ասպարեզում։

Մենք արդեն կատարել ենք աշխատանքների պլանը տնտեսության գլխավոր ճյուղերում—մետաղագործություն, քարածուխի հանույթ և գյուղատնտեսական մեքենաշինություն։

Գրոզնու նավթահանքերն արդեն իրենց հնգամյակը կատարել են յերկու և կես տարում։ 1931 թվականին մենք հանել ենք 10 միլիոն տոնն նավթ, իսկ հընգամյակի 4-րդ տարում մենք մեր յերկրին կտանք 19 միլիոն տոնն։

Մեր յերկրամասը հսկայական հաջողություններ ունի գյուղատնտեսական մեքենաշինարարության գործում։ Միմիայն Սելմաշը տարեկան արտադրում է 100000 գյուղացիական սայլեր, 166 հազար ձիափոցխեր, 3 հազար տրակտորային ցանիչներ, 45 հազար տրակտորային գութաններ, 17 հազար խոտահնձիչներ, 6 հազար տրիյերներ, 20 հազար տրակտորային խուրձկապ մեքենաներ և այլն։

Յերկրամասում մեծ չափով զարգացան ալրաղացի, յուղագործական, կաշու և բրդեղենի արդյունաբերությունները։

Սկսել են գործել և գործում են նոր ելեկտրակայանները—Գրոզնու, Գիզելդոնի, Բակսանի, Ալխանչուրի, Բեսլանի, Նովորոսիյսկու և այլ ելեկտրակայանները

Մեծ աշխատանք է կատարված մեր յերկաթուղային և ջրային տրանսպորտի վերակառուցման համար։

Մեկը մյուսի հետևից բացվում են նորանոր գործարաններ։ Արդեն բարձրանում են Կոմբայնաշենի շենքերը։ Կառուցված են և կառուցվում են՝ ապակե գործարանը Խոպերում, յեգիպտացորենի—շաքարի կոմբինատը Գիրեյում, պոտաշի գործարանն Արմավիրում, պարկերի—կենաֆի գործարանը Կրասնոդարում, ինկուբատորների գործարանը Նալչիկում և այլն և այլն։

Յերկրորդ հնգամյակում մեր կուսակցությունը լենինյան կուսակցության ղեկավարությամբ ավելի մեծ հաջողությունների կհասնի։ Ծրագրվում է յերկրորդ հնգամյակի վերջում հանել 28—30 միլիոն տոնն նավթ։ Շատ ավելի բարձր չափով պիտի աճի ածուխի արտադրությունը։ Զգալի չափով կլայնանա գունավոր մետաղների (ցինկ, արճիճ, ալյումին) հանույթը։ Յենթադրվում է կառուցել սուպերֆոսֆատի (սուպերֆոսֆատը—պարարտանյութ է դաշտերի համար) գործարաններ։ Կկառուցվեն պահածոների նոր գործարաններ, կենաֆի ֆաբրիկա և այլն։

Դաղստանում կկառուցվի Սուլակի խոշոր հիդրո-ելեկտրակայան։

Մեր յերկրամասում լայնորեն կծավալվի թե յերկաթուղային և թե ջրային ճանապարհների շինարարությունը։ Ռոստովում կավարտվի Նավակայանի և ծովային ջրանցքի շինարարությունը։ Զգալի չափով կլայնացվի Դոն գետի նավարկությունը։

Հյուսիսային Կովկասի բանվոր դասակարգը ՀԿ(բ)Կ ղեկավարությամբ անշուշտ կկատարի այս և մի շարք ուրիշ խնդիրներ։

## ՄԵՐ ՅԵՐԿՐԱՄԱՍԸ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍ Է

Մեր Հյուսիսային Կովկասն առանձնապես աչքի ընկնող հսկայական հաջողություններ է ձեռք բերել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում։

1931 թվականին, գարնանացանի ժամանակ մեր յերկրամասի խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունները կատարել են ամբողջ գարնանացանի 87 տոկոսը։ Կուսակցության ու խորհրդային կառավարության առաջադրությունները կատար-

վեցին։ Այդ նույն 1931 թվականին Հյուսիսային Կովկասը հիմնականում ավարտեց համատարած կոլեկտիվացումը։ Շատ մեծ չափերով ավելացավ ցանքերի տարածությունը, հասնելով 7 միլիոն 600 հազար հեկտարի։

Հյուսիսային Կովկասն ունի մի ամբողջ շարք ուժեղ հացահատիկային խորհտնտեսություններ, վորոնք արդեն համամիութենական նշանակություն են ստացել։ Այդ խորհտնտեսություններն են բոլորին հայտնի «Գիգանտը», ընկ. Ստալինի անվան խորհտնտեսությունը և այլն։ Այս խորհտնտեսությունները, շնորհիվ տեխնիկական լավ սարքավորանքի, առաջնորդող դեր են խաղում յերկրամասի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մեջ։ Հյուսիսային Կովկասի գյուղատնտեսությունը մեր՝ յերկրին շատ ցորեն է տալիս։ Մենք ուշադրություն ենք դարձնում մեր յերկրամասում տեխնիկական կուլտուրաների զարգացման, օրինակ, արևածաղկի, գենագերչակի, բամբակի և այլն։ Մենք շատ խորհտնտեսություններ ունենք, վորոնք զբաղվում են տեխնիկական բույսերի—բամբակի, կտավատի և այլն մշակությամբ։

Լայնորեն ծավալված է գյուղատնտեսության մեքենայացումը։ Մեր յերկրամասը ունի շատ խոշոր ՄՏԿ-ներ։ Դոնի ու Կուբանի լայնարձակ տափաստաններում աշխատում են տրակտորները, կոմբայնները, ավտոմբիլները, կատարելագործված, բազմախոփ գութանները։

Յերկրամասում հաջողությամբ զարգանում է նաև անասնաբուծությունը։ Այստեղ գտնվում են շատ խոշոր անասնաբուծական խորհտնտեսություններ։ 1931 թվականի վերջին անասնատրեստի խորհտնտեսություններն ունեյին 250 հազար գլուխ անասուն, վոչխարաբուծական տրեստի խորհտնտեսություններ—800 հազար, խոզաբուծական խորհտնտեսությունները—132 հազար, թռչնաբուծական ու թռչնեղենի տրեստների խորհտնտեսությունները—960 հազար ձուածան հավեր։

Անասնաբուծական խորհտնտեսությունների աճման հետ միասին լայնորեն ծավալված է նաև կաթնա-ապրանքային ֆերմաների շինարարությունը։ Կուսակցության Յերկրային Կոմիտեյի վորոշման համաձայն, 1931 թվականին կազմակերպված է 900 կաթնա-ապրանքային ֆերմա, վորոնք ունեն 160 հազար գլուխ կով։

Մեզանում համատարած կոլեկտիվացման հիմունքով, կուլակությունը հիմնականում վերացված է իբրև դասակարգ։ Կոլտնտեսային գյուղացիությունը կոմունիստական կուսակցության և բանվոր դասակարգի ղեկավարությամբ դառնում է գիտակից, սոցիալիստական մշակներ։

Մեր յերկրամասի գյուղատնտեսության առաջ հսկայական խնդիրներ են դրված յերկրորդ հնգամյակում։ Տեխնիկական կուլտուրաների մշակման տեսակետից Հյուսիսային Կովկասը կդառնա Խորհրդային Միության հիմնական ռայոններից մեկը։ Մեծ չափերով կավելանա ցորենի արտադրությունը։ Հսկայական ծավալով պիտի զարգանան կենաֆը, անջրդի բամբակը, շաքարի ճակնդեղը, սոյան, գենագերչակը, այգեբուծությունը և այլն։ Գյուղատնտեսության մեքենայացումն այնքան կընդարձակվի, վոր 1934 թվականին խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում վարը, ցանը, բերքահավաքը կկատարվեն մեքենաներով։ Յերկրորդ հնգամյակում դաշտերի բերքատվությունը բարձր մակարդակի կհասնի,— մի հեկտարից կստացվի աշնանացան ցորեն—մինչև 14 ցենտներ, գարնանացան ցորեն—մինչև 19 ցենտներ, յեգիպտացորեն—2 ցենտներ։

Յերկրորդ հնգամյակում բոլոր խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում վոչ ցեղային անասունները կփոխարինվեն զտարյուն ցեղային անասուններով։ Այսպիսով ուժեղ չափով կզարգանա անասնաբուծությունը։



Ներկայումս մեր յերկրամասի առաջ դրված են հետևյալ խնդիրները.—ամրապնդել համատարած կոլեկտիվացումն և նրա հիմունքով կուլակության վերացումն իբր դասակարգի։ Պայքարել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար, աշխատանքի ճիշտ կազմակերպման, գործավարձի կիրառման, անասնաբուծության ընդարձակման, դաշտերի բերքատվության բարձրացման համար։ Այս բոլոր խնդիրները կոլտնտեսականներ կկատարեն բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

---

ՀԱՐՑԵՐ

1) Մեր յերկրամասը վո՞ր թվականին հիմնականում ավարտեց համատարած կոլեկտիվացումն և նրա հիմունքով կուլակության վերացումն իբր դասակարգի։

2) Ներկայումս ի՞նչ խնդիրներ են դրված մեր յերկրամասի կոլտնտեսությունների առաջ։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գնացեք գյուղխորհուրդ կամ ձեր կոլտնտեսության վարչություն և իմացեք, թե ձեր կոլտնտեսությունն ինչպես է պայքարում իր ամրապնդման համար, ինչպես է կիրառվում գործավարձը։ Այս տարի վո՞րքան է ավելանում ցանքատարածությունը և այլն։

## ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԸ—ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒ ԱԶԱԿԻՑՆԵՐ

Մեր յերկրի ղեկը կուսակցության ձեռքումն է գտնվում։ Նրա ղեկավարությամբ բանվոր դասակարգն ու կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմ են կառուցում։ Մենք արդեն մեծամեծ հաջողությունների յենք հասել սոցիալիստական շինարարության ճակատում։ Բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական Կոմիտեն, համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ, հաստատ բռնել է Լենինյան ճանապարհը, կատարում է Վ. Ի. Լենինի պատգամները։

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և նրա ղեկավարությամբ բանվոր դասակարգն ու կոլտնտեսային գյուղացիությունը վճռականապես պայքարում են այն բոլորի դեմ, ով մեզ ուզում է տանել դեպի հետ, արգելակել սոցիալիստական շինարարությունը։

Իսկ ո՞վ է փորձում վիժեցնել սոցիալիստական շինարարությունը. ո՞վ է խանգարում Խորհրդների յերկրի միլիոնավոր աշխատավորներին կառուցել իրենց ազատ սոցիալիստական կյանքը.—Իհարկե դասակարգային թշնամիները—կուլակները, տերտերները, մոլլաները, վնասարարները, արտասահմանյան կապիտալիստները։ Ո՞վ է օգնում դասակարգային թշնամիներին սոցիալիստական շինարարության դեմ պայքարելու—ոպորտունիստները, վորոնք յերկու տեսակ են—աջ և «ձախ» ոպորտունիստներ։

Ովքե՞ր են աջ ոպորտունիստները։ Կուսակցության տասն և վեցերորդ համագումարումը այսպես վորակեց աջ ոպորտունիստներին.—Աջ ոպորտունիստները—դրանք այնպիսի մարդիկ են, վորոնք չեն ուզում ճանաչել, վոր մեր յերկրի ինդուստրացումը սոցիալիստական շինարարության հիմքն է, վոր առանց յերկրի ինդուստրացման սոցիալիզմ չես կառուցի։ Աջ ոպորտունիստները չեն ուզում ճանաչել դասակարգային անհաշտ պայքարն՝ ընդդեմ կապիտալիստական տարրերի—կուլակների, առևտրականների և այլն։ Աջ ոպորտունիստները կարծում են, թե սոցիալիզմը կարելի յե կառուցել սուս ու փուս, ինքնահոսով, առանց դասակարգային պայքարի, առանց հարձակում գործելու կապիտալիստական տարրերի դեմ։ Նրանք կարծում են, թե կապիտալիստական տարրերը (կուլակներն, առևտրա-

կանները, չարաշահողները և այլն) կամ իրենք իրենց աննկատելիորեն կչքանան կամ խաղաղ կներաճվեն սոցիալիզմում։ Աջ ոպորտունիստները չեն ուզում ընդունել, վոր միայն խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների միջոցով կարելի յե սոցիալիստորեն վերակառուցել գյուղատնտեսությունը։ Աջ ոպորտունիստները դեմ են կուլակների դասակարգի վերացման։ Նրանք դեմ են նաև մեր յերկրի ինդուստրացման արագ տեմպերին։

Այս բոլորից կարելի յե գալ միայն մի յեզրակացության,—աջ ոպորտունիստներն իրականում հանգում են մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության ժխտման, աշխատավոր գյուղացիության սոցիալիզմի կառուցման գործին ներգրավելու հնարավորության բացասման։ Չընդունելով դասակարգային անհաշտ պայքարը դասակարգային թշնամու—կուլակի դեմ, աջ ոպորտունիստները հենց դրանով հանդիսանում են մեր գլխավոր թշնամու—կուլակության աջակիցներ յեվ պաշտպաններ։

Իսկ ովքեր են «ձախ» ոպորտունիստները։

«Ձախ» ոպորտունիստները, կամ ինչպես նրանց հաճախ անվանում են—«ձախ» խոտորիչներն այն մարդիկն են, վորոնց համար ամեն ինչ հեշտ է, վորոնց համար, ինչպես ասում են, ծովը մինչև ծունկն է հասնում։ Յեթե աջ ոպորտունիստները վախենում են սոցիալիստական շինարարության բարձր, արագ տեմպերից, ապա «ձախերն» ընդհակառակը, գտնում են, վոր իբր թե կուսակցությունն և խորհրդային իշխանությունը չեն վերցրել սոցիալիստական շինարարության բավականաչափ ուժեղ տեմպեր։ Այսպես, օրինակ, «ձախ» խոտորիչները մտածում եյին կոլեկտիվացումն արագացնել վոչ թե աշխատավոր գյուղացիների միջև բացատրական ու դաստիարակչական աշխատանքներ կատարելու միջոցով, այլ ընդհակառակը, նրանց սպառնալիքով, հրամաններով քշելով դեպի կոլտնտեսությունները։ «Ձախերի» այդպիսի վերաբերմունքը դեպի կոլեկտիվացումն՝ ուղղակի հեռու կփախցներ չքավոր ու միջակ գյուղացիներին կոլտնտեսություններից և նրանք չեյին մտնի կոլտնտեսությունները։ «Ձախ» ոպորտունիստները խախտում են կուսակցության ցուցումներն այն մասին, թե կոլտնտեսությունները պետք կազմակերպել կամավոր հիմունքներով։ «Ձախ» ոպորտունիստներն ըստ էության նույնպես ջուր են լցնում դասակարգային թշնամու ջրաղացին, վորովհետև նրանք աշխատավոր գյուղացիներին հեռացնում են կոլտնտեսություններից։

Թե աջ և թե «ձախ» ոպորտունիստները սոցիալիստական շինարարության թշնամիներ են, դասակարգային թշնամիների—կուլակների, առևտրականների, չարաշահողների և այլոց աջակցողներ։ Այժմ մեզ համար գլխավոր դասակարգային թշնամի հանդիսանում է կուլակը, ուստի աջ թեքումն մեզ համար հանդիսանում է իբր գլխավոր վտանգ։

Ահա թե ինչու կոմունիստական կուսակցությունը և նրա ղեկավարությամբ բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունն ամենավճռական, ամենախիստ կերպով պայքարում են թե աջ և թե «ձախ» ոպորտունիստների դեմ։

Բացի աջերից ու ձախերից, կան նաև ուրիշ ոպորտունիստներ—այսպես կոչված՝ հաշտվողականներն ու յերկերեսանիները։ Հաշտվողականները վճռական պայքար չեն մղում կուսակցության գլխավոր գծից թեքումների դեմ, չեն մերկացնում ոպորտունիստներին, այլ հաշտվում են նրանց հետ և հենց դրանով նրանք իրականում ոպորտունիստներ են դառնում։

Յերկերեսանի մենք անվանում ենք նրանց, ովքեր խոսքով կողմնակից են կուսակցության գլխավոր գծին, իսկ գործով կամ աջ և կամ «ձախ» ոպորտունիստներ են։



Յերկերեսանիների և հաշտվողականների դեմ ևս կուսակցությունն ուժեղ պայքար է մղում, վորովհետև նրանք նույնպես խանգարում են սոցիալիստական շինարարության։

Մեր ամենաչար թշնամիները տրոցկիստներն են։ Տրոցկին և նրա կողմնակիցները շարունակ պնդում եյին, վոր մեկ յերկրում, ԽՍՀՄ-ում չի կարելի սոցիալիզմ կառուցել։ Կուսակցությունը ջարդ ու փշուր արեց տրոցկիստներին և մեր սոցիալիստական շինարարության օրինակով ապացուցեց, վոր մենք կառուցում ենք և յերկրորդ հնգամյակում կկառուցենք անդասակարգ սոցիալիստական հասարակություն։ Տրոցկիստները, պնդելով, թե մի յերկրում չի կարելի սոցիալիզմ կառուցել, հանդիսանում են վոչ այլ վոք, վորքան միջազգային հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատը. չե՞ վոր այդ բուրժուազիան ևս բղավում, կոկորդ է պատռում այն մասին, վոր իբր թե Խորհրդային Միությունը չի կարող սոցիալիստական հասարակություն կառուցել։

Լենինյան կուսակցությունը ջախջախիչ հարված հասցրեց տրոցկիստներին, մերկացրեց նրանց սուտն ու բանբասանքը։ Սակայն տրոցկիստներն ամեն տեսակ զարտուղի ճանապարհներով դեռ այժմ էլ ձգտում են հրամցնել իրենց հակահեղափոխական հայացքները։ Կուսակցությունն ու բանվոր դասակարգը ամենավճռական կերպով պայքարում են տրոցկիստական հակահեղափոխական յելույթների դեմ։

## ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՐԿԻՐ

Մեր սոցիալիստական հաջողակ շինարարության հիման վրա, տարեց-տարի ավելի և ավելի բարելավվում է աշխատավորների կյանքը։ Աճում է բանվորների աշխատավարձը։ Ավելանում են կոլտնտեսականների յեկամուտները։ Տարեց-տարի մեր յերկրում ավելի և ավելի ուժեղ թափով է վերացվում աղքատությունն ու հետամնացությունը, արագությամբ աճում է աշխատավոր մասսաների կուլտուրականությունը։

1930-31 ուսումնական տարվանից մտցված է 8-ից մինչև 10 տարեկան յերեխաների ընդհանուր պարտադիր ուսում։ Այժմ խորհրդային դպրոցներում սովորում են 20 միլիոն մարդ։ Յեթե տարրական դպրոցներում այժմ սովորողների քանակությունը համեմատենք անցյալ տարվա սովորողների քանակության հետ, կտեսնենք, վոր միայն մեկ տարվա ընթացքում սովորողների քանակն ավելացել է համարյա յերկու անգամ։

Միևնույն ժամանակ մենք ուժեղ աշխատանք ենք կատարում հասակավորների անգրագիտությունը վերացնելու համար, Հասակավորների համար մենք բացել ենք հսկայական քանակությամբ անգրագիտության վերացման դպրոցներ, վորտեղ սովորում է 11 միլիոն մարդ։ 1932 թվականին մենք կաշխատենք, վոր մեր յերկրի բոլոր բանվորներն ու գյուղացիները գրագետ լինեն։ Մենք հաջողությամբ կատարում ենք Իլյիչի պատգամը, բոլոր աշխատավորների գրագիտության մասին։ 1934 թվականին մենք 6—7 անգամ կգերազանցենք գրագիտության նախապատերազմյան մակարդակը։ Կուլտուրայի վերաբերմամբ մենք արդեն անցել ենք առաջավոր կապիտալիստական յերկրներից։

Խորհրդային Միության մեջ շատ ազգություններ կան։

Հոկտեմբերյան հեղափոխությունը բոլոր այդ ազգություններին արագ զարգանալու և առաջադիմելու հնարավորություն տվեց։

Առաջ, ցարական կառավարության ժամանակ վոչ ռուս ազգությունները չեյին կարող յերեխաներին դպրոցներում կրթել մայրենի լեզվով։ Այժմ ուսումը տեղի յե ունենում 70 մայրենի լեզուներով։

*Բացի դրանից, մենք խորհրդների յերկրում ունենք բազմաթիվ բարձրագույն դպրոցներ, վորտեղ գլխավորապես սովորում են բանվորներն ու աշխատավոր գյուղացիները։ Բարձրագույն դպրոցները մեր սոցիալիստական շինարարության համար պատրաստում են հարյուր հազարավոր ինժեներներ, տեխնիկներ, բժիշկներ, մանկավարժներ, գյուղատնտեսներ և այլն։*

*Հյուսիսային Կովկասը ևս կուսակցության ղեկավարությամբ հսկայական հաջողություններ ձեռք բերեց աշխատավորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում։ 8—10 տարեկան յերեխաները սովորում են ընդհանուր պարտադիր ուսման կարգով։*

*Մեր յերկրամասի քաղաքներում արդեն մտցված է յոթնամյա պարտադիր ուսում։ Յոթնամյա պարտադիր ուսում է մտցվում նաև խորհտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում և խոշոր կոլտնտեսություններում։*

*1932 թվականին մեր յերկրամասը կդառնա համատարած գրագիտության յերկրամաս։*

*Քաղաքներում, խորհտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում, կոլտնտեսություններում աճում են ամեն տեսակ կուլտուրական հիմնարկներ—ակումբները, գրադարանները, խրճիթ-ընթերցարանները, թատրոնները։*

*Ազգաբնակության դարավոր հետամնացությունն ու խավարամտությունն արմատախիլ է արվում։ Աշխատավորական մասսաների մեջ աճում է գրագիտությունն ու կուլտուրան։ Գիտության ծարավ բանվորները և աշխատավոր գյուղացիներն անգրագիտության վերացման դպրոցների—տարրական, միջին և բարձրագույն դպրոցների միջոցով, ներդաշնակ շարքերով քայլում են դեպի գիտություն։ ԽՍՀՄ—բարգավաճող, մեծագույն կուլտուրայի յերկիր է։ Սոցիալիզմը հաղթանակում է նաև այս ֆրոնտում։*

---

*ՀԱՐՑԵՐ*

*1) Ո՞վ է ղեկավարում մեր սոցիալիստական շինարարությունը։*

*2) Ո՞վ է խանգարում, փորձում վիժեցնել մեր սոցիալիստական շինարարությունը։*

*3) Ովքե՞ր են աջ ոպորտունիստները։*

*4) Ովքե՞ր են «ձախ» խոտորիչները։*

*5) Ինչպե՞ս կուսակցությունը, նրա ղեկավարությամբ նաև բանվոր դասակարգն աշխատավոր գյուղացիության հետ մեկ տեղ, վճռականապես պայքարում են ոպորտունիստների դեմ։*

## ԼԻՆԵՆՔ ԱԶԱԼՈՒՐՋ

*Կապիտալիստական աշխարհը խեղդվում է տնտեսական ծայրագույն ճգնաժամի ճիրաններում։ Ձեռնարկությունները կանգ են առնում։ Հանգչում են մետաղհալոց վառարանները։ Կապիտալի յերկրներում ավելի և ավելի յե աճում գործազրկությունը։ Աշխատավորների ընտանիքներն աղքատանում են։*

*Կապիտալիստները դես-դեն են ընկնում, աշխատում են յելք գտնել հուսահատ ճգնաժամից։ Նրանք կրճատում են բանվորների աշխատավարձը, յերկարացնում են բանվորական օրը։*

*Միևնույն ժամանակ աճում և ամրապնդվում է խորհրդների յերկիրը։ Մեզանում արդեն կառուցված է սոցիալիզմի հիմքը։*

*Յերկրորդ հնգամյակում մենք կկառուցենք սոցիալիզմը մեր յերկրում։ Տարեց-տարի բարելավվում է ԽՍՀՄ աշխատավորների դրությունը։*



*Կատաղելով ու փրփրելով մեր յերկրի, մեր հաջողությունների դեմ, կապիտալիստները պատրաստվում են հարձակվել խորհրդների յերկրի վրա։ Պատերազմի համար նրանք փող չեն խնայում։ Նրանք հնարում են պատերազմի ամենասարսափելի զործիքներ։ Ծով են իջնում նոր, դեռ ևս չտեսնված զրահանավեր, հնարվում են նոր թունավոր գազեր և այլն։*

*ԽՍՀՄ բոլոր աշխատավորները պետք է պատրաստ լինեն կապիտալիստական աշխարհի այդ հարձակումը փշրելու համար, ուժեղացնելով Կարմիր բանակը, մեր յերկրի պաշտպանունակությունը։*

Ի՞նչ կարելի յե կարդալ «Քաղաքացիական պատերազմը» բաժնի վերաբերյալ։

Սեմյոնով—*Մակարկա։*

Գոլուբեվ—*Բուրան*

Գրիգորիյեվ—*Գնացք* Є—Т

Նույնը—*Սպիտակ թշնամին։*

Կոժեվնիկով—*Բախտ վաճառողը։*

Դրեբնյով—*1-ին հեծելազորի հրամանատարը։*

Նեվերով—*Միշկա Դոդոնով։*

Դրոխով—*Սպիտակ գայլերը*

Նիկիֆորով—*Մեքենավար։*

Պորես—*Անդրե Մարտի*

Մ. Դարբինյան—*Կիկոսը*

Նույնը—*Ջաղացպան Անտոնը։*

---



# ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ)—ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է

*Ահա տասնհինգերորդ տարին է արդեն, մեր կոմունիստական կուսակցությունը ղեկավարում է Խորհրդային պետությունը, ղեկավարում է թշնամիներով շրջապատված ահագին յերկրի ամբողջ կյանքը։*

*Շատ ծանր փորձանքներ է կրել, շատ անհավատալի դժվարություններ է հաղթահարել։*

*Թագավորական կառավարությունից Խորհրդային հանրապետությանը ժառանգություն մնացին քանդված ֆաբրիկներն ու գործարանները, ամայի դաշտերը, սովը, տիֆը, քայքայվածությունը։ Ահագին չարչարանք պահանջեց վերականգնելու քայքայված տնտեսությունը, վոտի կանգնելու պատերազմներից ուժասպառված յերկիրը։*

*Միայն բանվոր դասակարգը կարող է մինչև վերջը տանել հեղափոխական պայքարը կապիտալիստների դեմ։*

*Միայն բանվոր դասակարգը կարող է հեղափոխական ուղիով իր հետևից տանել աշխատավոր մասսաներին։*

*Բանվոր դասակարգը չի կարող հաղթել կապիտալիստներին, կառուցել սոցիալիզմ՝ առանց կռիվներում ամրապնդված, յերկաթյա կոմունիստական կուսակցության։*

*Բոլշևիկների կուսակցությունը հանդիսանում է բանվոր դասակարգի ղեկավարն ու կազմակերպիչը։ Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի կուսակցությունն է։ Ներկայումս կուսակցության մեջ կան 2 միլիոնից ավելի կոմունիստներ, նրանց 66 տոկոսը կազմում են բանվորները։*



*Կոմունիստական կուսակցությունը սերտ կապված է բանվոր դասակարգին։ Նա բանվոր դասակարգի անբաժան մասն է։*

*«Բանվոր դասակարգն առանց հեղափոխական կուսակցության՝ նույնն է, ինչ վոր բանվորն առանց հրամանատարության»։* (ՍՏԱԼԻՆ)։

*Յեթե բանվոր դասակարգի գլուխն անցած չլիներ յերկաթյա, համախմբված կոմունիստական կուսակցությունը, այն ժամանակ կապիտալիստները կջարդեյին Խորհրդային Միության բանվոր դասակարգին, կապիտալիստները կոչնչացնեյին այն ամենը, ինչ վոր այնպես դժվարությամբ ձեռք են բերել բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, վոչ միայն մեզանում, այլև արտասահմանում։*

*«Կուսակցությունը—դա բանվոր դասակարգի ազատության համար գիտակից, առաջավոր պայքարողների միությունն է»։* (ԼԵՆԻՆ)։

*Կուսակցություն մտնում են կամավոր կերպով, ընդունվում են միայն նրանք, ովքեր իրենց ամբողջ ուժը նվիրում են բանվոր դասակարգին և առաջին հերթին ընդունվում են բանվորներն ու կոլտնտեսականները։*

*«Կուսակցությունն իր մեջ է առնում այն բոլորին, ովքեր բանվոր դասակարգի մեջ ամենալավերն են, ամենահերոսականը, կայունը, անձնազոհը, առաջավորը, գիտակիցը»....* (ԼԵՆԻՆ)։

*Կուսակցությունը ղեկավարվում է համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդների—Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի ուսմունքով։*




*Կոմունիստական կուսակցությունը հանդիսանում է բանվոր դասակարգի ամենաուժեղ կուսակցությունն աշխարհում։ Նա ունի բոլշևիկյան յերկաթյա կարգապահություն։*

*Կուսակցության յուրաքանչյուր անդամ մասնակցում է կուսակցության վորոշումների քննարկմանը և ընդունվելուն։*

*Վորոշումներն ընդունվելուց հետո, նրանք առանց վորևե առարկության պետք է կատարվեն կուսակցության յուրաքանչյուր անդամի, կուսակցության*

յուրաքանչյուր կազմակերպության կողմից։ Կուսակցության հիմնական կազմակերպություն հանդիսանում է բջիջը ֆաբրիկներում, գործարաններում, կոլտնտեսություններում, հիմնարկներում։ Բջիջի միջոցով կուսակցությունը կապվում է բանվորական և կոլտնտեսային մասսայի և ղեկավարում է նրան։

Կոմունիստները տանում են մշտական դաստիարակչական աշխատանք անկուսակցականների միջև։

Բջիջը կազմակերպում է աշխատավորներին արդֆինպլանի կատարման համար, վերացնելու ճեղքվածքները, լավացնելու ապրանքների վորակը և այլն։

Ընկեր Ստալինն ասում է, վոր «մեր կուսակցությունը պետք է լինի բանվոր դասակարգի առաջ, նա պետք է իր հետևից տանի բանվոր դասակարգին»։

Խորհուրդները, արհեստակցական միությունները, կոմյերիտմիությունը, կոոպերացիան, զանազան հասարակական կազմակերպություններ հանդիսանում են վորպես շարժիչ փոկ, վոր կուսակցությունը կապում են մասսաներին։ Բոլոր մարմիններում (խորհուրդներում), արհմիություններում, կոոպերատիվներում և այլն, վորտեղ կան վոչ պակաս, քան կուսակցության յերեք անդամները, կազմակերպվում է կոմունիստների ֆրակցիա (խորհրդակցություն)։ Այդ բոլոր կազմակերպություններում կան կուսակցության անդամներ և նրանց միջոցով կուսակցությունն իրականացնում է իր ազդեցությունը, մասնակցությունը և հսկողությունը բոլոր հիմնարկների և կազմակերպությունների վրա։

## ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՎԱՔԸ

Հյուսիսից, հարավից, արևմուտքից, արևելքից, քաղաքներից, գյուղերից, գործարաններից, շախտերից, կոլտնտեսություններից, սովխոզներից և մեքենաներից, հաճարի դաշտերից գալիս եյին նավերով, գնացքներով, ուղտերով, յեղջերուներով—ածխահատները, փականագործները, ձուլողները, ջուլհակները, տպագրիչները, կոլտնտեսականները, կառուցողները, գալիս եյին բոլշևիկ—պատգամավորները Համկոմկուսի (բոլշևիկների) համագումարին—բոլշևիկյան հավաքին։

Նրանք գալիս եյին ստուգելու—արդյոք ամեն տեղ լավ է գնում աշխատանքը, արդյոք ամուր կառուցվում են խորտնտեսությունները և կոլտնտեսությունները, վոչնչացրե՞լ են կուլակին գյուղում, արդյոք շախտերում բավական ածուխ է արդյունահանվում, գործարանները լա՞վ պողպատ են տալիս, բավականացնու՞մ է մետաղը տրակտորների և ուրիշ մեքենաների համար, արա՞գ են շինվում արդյոք նոր ֆաբրիկները, նոր ելեկտրակայանները և յերկաթուղիները։

Նրանք գալիս եյին ստուգելու, թե ինչպես է կատարվում մեր հնգամյակը։

Գալիս եյին պատգամավորները, վորպեսզի վորոշեն, թե ինչպես ավելի լավ կարելի յե կատարել հնգամյակը, ինչպես հասնել համատարած կոլեկտիվացմանը, ինչպես բարելավել աշխատանքը ֆաբրիկներում և գործարաններում, ինչպես ամեն տեղ—կառուցումներում, սովխոզների մոտ, նաև գյուղատնտեսության մեջ ունենալ ինժեներներ, գյուղատնտեսներ բանվոր դասակարգից։

Պատգամավորները նույնպես պետք է վորոշեյին, թե Խորհրդային Միության մեջ ինչպես վերջնականապես ազատվել գյուղի կուլակներից, քաղաքի փաստարարներից, ինչպես կառուցել սոցիալիզմը։

> Խիտ շարքերով թշնամու վրա դիմում ենք հարձակման, ղեկավարությամբ բոլշևիկների յերկաթյա կուսակցության։



## ԿՈՄԻՆՏԵՐՆԸ

Կոմունիստական Ինտերնացիոնալը կազմակերպեց Վլադիմիր Իլիչ Լենինը 1919 թվին։ Կոմինտերնը միացնում է բոլոր յերկրների կոմունիստական կուսակցություններին։

Կոմինտերնի ծագման ժամանակ ուժեղ կոմունիստական կուսակցություն կար միայն Խորհրդային յերկրում։ Այն ժամանակվանից կոմունիստական կուսակցությունների (Կոմինտերնի հատվածների) քանակն ավելացել է մինչև 51։



Նրանցից 26 գտնվում են Յեվրոպայում։ Յեվրոպական կոմկուսակցություններից ամենաուժեղներն են Համամիութենական Կոմկուսը (բոլշևիկների), գերմանական Կոմկուսը, լեհականը, չեխոսլովակյանը։ 14 Կոմունիստական կուսակցություններ աշխատում են Արևելքի յերկրներում։ Նրանցից ամենաուժեղը չինական Կոմկուսն է։ Մնացած 11 կոմունիստական կուսակցությունները պայքարում են Ամերիկայում։

Բոլոր յերկրների կոմունիստական կուսակցությունները հետզհետե ավելի յեն ձեռք բերում բանվորների, գյուղացիների և աշխատավոր լայն մասսաների վստահությունը։

Կոմկուսներն իրենց աշխատանքը տանում են արյունալի հետապնդումների պայմաններում։ Ջինաստանում գլխատում են միայն կոմունիստական կուսակցությանը պատկանելու համար։ Ամերիկայում կապիտալիստների վարձական զինված ավազակախմբերն անկյուններից սպանում են կոմունիստներին։ Բայց վոչ մի հալածանք չի կարող դադարեցնել կուսակցության աշխատանքը։

Այդ բոլորը վկայում են համաշխարհային կոմունիստական շարժման հզորության մասին։ Կոմինտերնի ղեկավարությամբ կոմկուսները վճռական պայքար են տանում։ Աշխատավորության լայն մասսաները հետզհետե ավելի յեն հետևում Կոմինտերնին։

Ամեն տեղ, վորտեղ կա պայքարող հեղափոխական պրոլետարիատ—նեգրեր, չինացիներ, հնդիկներ, սպիտակ, դեղին, սև ցեղի ժողովրդներ, ամեն տեղ Կոմինտերնն է ղեկավարում նրանց պայքարը ճնշողների դեմ, և հեռու չէ այն ժամանակը, յերբ Կոմինտերնի կարմիր դրոշն ազատ ծածանվելու յե ամբողջ աշխարհում։

## ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻՉ ԼԵՆԻՆ

Լենինի իսկական ազգանունը Ուլիանով է, Լենին—դա նրա կուսակցական կոչումն է. այդ անունով նա տանում եր կուսակցական աշխատանք։

Լենինը ծնվել է 1870 թվի ապրիլի 23-ին Սիմբիրսկ քաղաքում, որի անունն այժմ փոխվել է նրա պատվին՝ Ուլյանով: Այնտեղ Լենինի հայրը ժողովրդական դպրոցների տեսուչ էր:

Փոքրիկ Վոլոդյան լավ էր սովորում և գիմնազիան ավարտելով, մտնում է համալսարան, բայց այնտեղից նրան հեռացնում են հեղափոխական աշխատանքի համար:

Վլադիմիր Իլիչ Լենինն իր կյանքում գիտեր մի մեծ գործ—նա պայքարում էր բանվորների և աշխատավոր գյուղացիների ազատության համար ֆաբրիկանտների, կալվածատերերի և վաճառականների ծանր ճնշումից:

Թագավորի ծառաները խիստ հալածում էին Լենինին: Նրան բանտ էին նստեցնում, Սիբիր աքսորում: Լենինն ստիպված էր յերկար տարիներ ապրել արտասահմանում: Բայց բանտերում, թե աքսորում, ամեն տեղ Լենինը շարունակում էր իր համառ աշխատանքը, սովորում էր և սովորեցնում էր ուրիշներին, գրքեր էր գրում, այդ գրքերում ցույց էր տալիս աշխատավորությանը, թե ինչպիսի ճանապարհով նրանք պետք է հասնեն ցանկալի հաղթանակին:



Վ. Ի. Լենին 3 տարեկան

Վլադիմիր Իլիչին հավատում էին, նրան հետևում էին բոլոր յերկրների աշխատավորները: Նա նրանց փորձված բարեկամն էր, իմաստուն ուսուցիչը, տոկուն առաջնորդը:

Լենինը հիմնեց բոլշևիկ կոմունիստների կուսակցությունը: Նա ղեկավարում էր բանվորների և գյուղացիների պայքարը թագավորի, վաճառականների, գործարանատերերի և կալվածատերերի դեմ:

Նա հիմք դրեց կոմունիստական կուսակցության:

Ծանր աշխատանքով Վլադիմիր Իլիչը քայքայեց իր ուժերը և՝ մահացավ 1924թվի հունվարի 21-ին Գորկում, Մոսկվայի մոտ:

Լենինը մեռավ, բայց նրա գործը չմեռավ, բայց կոմունիստական կուսակցությունը չթուլացավ: Նրա մահից հետո յերկու հարյուր հազար բանվորներ մտան Իլիչի կուսակցությունը, որպեսզի իրենց աշխատանքով փոխարինեն առաջնորդի կորուստը:

Լենինի պատգամները տրվում են յերիտասարդ սերնդին: Ահա թե ինչ է գրում մի մայր պրոլետարների մեծ առաջնորդի մահից հետո:

«Թանգագին Իլիչ, թույլ տուր ինձ յել, որպես անկուսակցական կնոջ, քո դագաղին դնել իմ համեստ պսակը:

Յես խոսք եմ տալիս իմ բոլոր ուժերը, իմ ամբողջ սերը նվիրել այն բանին, որ իմ որդին սիրի և աշխատի աշխատավորների համար այնպես, ինչպես սովորեցնում էիր դու, Իլիչ»:

---

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Կազմակերպեցեք գրքույկների, բրոշյուրների, ժուռնալների, պատմվածքների, հոդվածների, նկարների հավաքածու Լենինի մասին և հավաքած նյութերի հիման վրա տեղեկություններ տվեք խմբին:

## ՍԳԻ ՈՐԵՐ

Գորկի... Ցուրտ է... Փոքրիկ անտառային բլրի վրա յերկհարկանի սպիտակ տուն սյունաշարքով: Տան հետևում պարտեզն է: Շուրջն ամեն ինչ սպիտակ է,



ամեն ինչ ծածկված է արծաթագույն յեղյամով: Միայն տան վրա կարմրին է տալիս սևաշուրջ դրոշը:

Յեվ մարդիկ գալիս են, գալիս դեպի այդ տունը — բարեկամները, ընկերները:

Լուռ բարձրանում են աստիճաններով:

Նա պառկած է, սևավուն ֆրենչը հագին:

Հարթվել են կնճիռներն աչքերի շուրջը:

Դիմագծերում արտահայտվում է հանգստություն, բարություն, համարյա քնքշություն:

Մեկը նրա կրծքին դրեց Կարմիր դրոշի շքանշանը:

Գալիս են նրա մոտ, կանգնում են յերկար, լուռ, անընդհատ նայում են դեմքին:

Վրա յե հասնում յերկար, յերկար գիշերը... Լուռ է...

Անքուն, անընդհատ նրա մոտն է նրա ընկերը, կինը, բարեկամը—Նադեժդա Կոստանդինովնան:

... Իսկ Մոսկվան սպասում էր: Ամբողջ այդ օրը, սառնամանիքային ու լուսավոր առավոտից ժողովրդի բազմությունը պսակներով ու դրոշներով գնում էին կայարան:

Կտուրները, պատուհանները, պատշգամբները, ցանկապատները, ծառերը լցված էին մարդկանցով:

Ահա և Միության Տան սյունազարդ դահլիճը, որն ամբողջովին ծածկված է սև ու կարմիր կտորով:

Իլիչի դագաղը դնում են դահլիճի մեջ տեղում պատվանդանի վրա — շուրջը արմավենիներ են, ծաղիկներ, պսակներ...

Դագաղի մոտ կանգնած է պատվավոր պահակը:

Բեմից լսվում են մահերգի ազդու հնչյունները...

Իսկ փողոցներում նորանոր բազմություններ են յերևում: Յերկու վիթխարի հոսանքներով ձգվում են մարդկանց շարքերը հրապարակներով, փողոցներով:

Գիշեր, ցերեկ... Հինգ օր հերթը չէր պակասում: Ծառնամանիք է: Բարձրանում է խարույկների ծուխը: Լսվում են լուռ խոսակցություններ: Հարյուր հազարավոր մարդիկ կանգնած են յերկու, յերեք ժամ: Բայլ առ քայլ շարժվում են հերթերը: Ահա վերջապես դռները: Խոսակցությունները լռեցին: Մարդիկ պահած իրենց շնչառությունը բարձրանում են մարմարե սանդուխքով, տղամարդիկ գլխարկները հանել են:

Հեռվից լսվում են սգերգի խուլ հնչյունները:

Լռություն... Հանկարծ կողքից լսվեց մեկի լացը: Մեկի նյարդերը չդիմացան:

Իսկ տխուր նվագախումբն ավելի լսելի չէ: Դանդաղ շարժվում է ամբոխը... Ահա Կարմիր պատվանդանը: Յեվ բարձր պառկած էր նա: Նա բոլորին յերևում է:

Դագաղի մոտ լուռ կանգնած է պատվի պահակը: Այդ հինգ օր ու գիշերվա ընթացքում դագաղի մոտ յեղան 700 հազար մարդ:

... Համառուսական Խորհուրդների համագումարը բացվեց մահվան նվագով: Յերեք հազար մարդ անշարժ կանգնած էր գլխիկոր, շատերը լալիս էին:

— Խոսքը պատկանում է ընկեր Կրուպսկային:

Ամբողջ դահլիճը պապանձվում է: Մի յերկու րոպե մեռելային լռություն է: Կարծես մարդու սիրտը պատռվելու յե սարսափելի լարվածությունից: Պարզ և հանգիստ նա ասում է Լենինի մասին այն, ինչ ոչ ոք յերբեք չի ասել:

Հետո լենինյան կուսակցության Կենտկոմի կողմից խոսում է ընկեր Ստալինը: Դա ավելի շուտ յերդում է, քան թե ճառ:

Հետո լսվում են Դոնբասի բանվորների, Կարմիր Պրեսնյայի բանվորուհու պարզ խոսքերը։ Յեվ յուրաքանչյուր ճառից հետո հնչում են մահերգի տխուր ձայները։

Շատ ուշ, նիստից հետո, համագումարը հրաժեշտ է տալիս Լենինին...

Դագաղը դուրս են բերում Միությունների Տնից։

Բազմության գլուխների վրա, բարձր լողում է կարմիր դագաղը։

Այդ առավոտյան պայծառ փայլում եր ձմռան արևը։ Շուրջն ամեն տեղ պսպղում եր յեղյամը և խարույկների ծուխն ուղիղ բարձրանում եր։

Մոտավորապես ժամի տասին դագաղը Կարմիր հրապարակումն է։ Սկսվում է սգահանդեսը։

Անվերջ շարքերը դրոշներով դանդաղ անցնում են դագաղի մոտով։

Վոչ մի ճառ։ Մեկ, յերկու, յերեք ժամ—այդպես ամբողջ որը, մինչև ժամի 4-ը։ Ժամի չորսին լսվում է հրամանը. «Ուղիղ»։

Զորքերը բռնում են հրացանները «պահակություն»։ Մոսկվայի բոլոր ծայրերից լսվում են գործարանների, ֆաբրիկների, շոգեշարժների տխուր շչոցները...

Լսվեց թնդանոթի ձայնը։ Դագաղը տանում են դամբարան։ Խոնարհվում են բազմաթիվ դրոշներ։ Թնդում են համազարկերը, լալիս են շչակները...

Իլիչը—գերեզմանումն է։

Բազմահազար ժողովուրդ յերգում եր «Դուք զոհ գնացիք...»։

Այդ վայրկյանին բոլոր կենտրոնական ռադիոկայաններից ազդանշան է տրվում. «Կանգնեք, ընկերներ, Իլիչին գերեզման են դնում»։

Այդ լուրը մի վայրկյանում սլացավ ամբողջ յերկիրը։

Յեվ ամբողջ աշխարհն իմացավ այդ մեծ վայրկյանի մասին։

Ռադիոն տալիս է նոր ազդանշան.

«Լենինը մեռավ—բայց կա լենինիզմը»։

Յեվ Խորհրդային հանրապետությունների ամբողջ Միության մեջ 5 րոպե կանգնեցին բոլոր մեքենաները, գնացքները, նավերը։

Իսկ այնտեղ, Արևելքում, Արևմտքում, Անգլիայում, Ամերիկայում, Նորվեգիայում, Շվեցիայում, Գերմանիայում այդ րոպեյին տագնապալի կանչում եյին շչակները և աշխատանքը կանգ եր առել գործարանում։

Լուռ հեռացավ ամբոխը մեծ գերեզմանից, վորը ծածկված եր հազարավոր պսակներով։ Այդպես ուղեկցեցին բոլոր աշխատավորներն իրենց շատ սիրելի առաջնորդին։

---

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Անհրաժեշտ է ցույց տալ յերեխաներին «Լենինի թաղումը» կինոնկարը։

---

Հունվարի 21—ամբողջ աշխարհի աշխատավորության սգի օրն է։
**ԱՅԴ ՕՐԸ ՄԵՌԱՎ Վ. Ի. ԼԵՆԻՆԸ։**

---

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՅԵՐԴՈՒՄԸ

**ՍՏԱԼԻՆ**

Ընկեր Լենինը, հեռանալով մեզանից, կտակեց մեզ պահել և ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան։

—Յերդվում ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք չենք խնայի մեր ուժերը, վորպեսզի պատվով կատարենք մենք քո այդ պատգամը։

Ընկեր Լենինը, հեռանալով մեզանից, կտակեց մեզ ամբողջ ուժով ամրացնել բանվորների և գյուղացիների միությունը։



—Յերդվում ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք պատվով կկատարենք նաև քո այդ պատգամը։

Ընկեր Լենինը, հեռանալով մեզանից, կտակեց մեզ ամրացնել և ընդարձակել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

—Յերդվում ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք պատվով կկատարենք նաև քո այդ պատգամը։

Ընկեր Լենինը, հեռանալով մեզանից, կտակեց մեզ հավատարիմ լինել կոմունիստական Ինտերնացիոնալին։

—Յերդվում ենք, կրկին յերդվում ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք չենք խնայի մեր կյանքը, վորպեսզի ամրացնենք և ընդարձակենք ամբողջ աշխարհի աշխատավորության միությունը—Կոմունիստական Ինտերնացիոնալը։

## ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՎՈՐՊԵՍ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Ընկեր Ստալինի իսկական ազգանունն է Ջուղաշվիլի։

Մինչև հեղափոխությունը, բոլշևիկները ստիպված թաքնվում եյին վոստիկանությունից։ Բոլշևիկները հնարում եյին իրենց համար նոր ազգանուններ, փոխադրվում եյին տեղից տեղ, վորպեսզի վոստիկանությունը չկարողանար նրանց ձերբակալել։

Ընկեր Ջուղաշվիլին հանդես եր գալիս բանվորական ժողովներին։ Վորպեսզի վոստիկանական լրտեսները նրան չճանաչեյին, ժողովի նախագահն ասում եր «խոսքը պատկանում է ընկեր Իվանովիչին»։ Ուրիշ տեղերում Ջուղաշվիլուն ասում եյին Նիժերաձե, Ստալին։ Այդպես էլ մնաց ընկեր Ջուղաշվիլու կուսակցական անունը—Ստալին։

Ընկեր Ստալինն այժմ 53 տարեկան է։ Նա ծնվել է 1879 թվին Վրաստանում։ Ընկեր Ստալինի հայրը կոշկի ֆաբրիկայի բանվոր եր։

Դեռևս դպրոցում յեղած ժամանակ, ընկեր Ստալինը կազմակերպում է ընդհատակյա խմբակ, վորտեղ կարդում եյին Մարքսի, Ենգելսի և ուրիշ հեղափոխականների գրքերը։

Այսպես է գրում ընկեր Ստալինն իր մասին.

«Հեղափոխական շարժման մեջ յես մտա 15 տարեկան հասակից, յերբ կապվեցի ռուսական մարքսիստական ընդհատակյա խմբերին, վորոնք այն ժամանակ ապրում եյին Անդրկովկասում։ Այդ խմբերն ինձ վրա մեծ ազդեցություն ունեյին և ինձ վարժեցրին ընդհատակյա մարքսիստական գրականությանը...

Իմ ծնողները կրթություն չունեյին, բայց նրանք ինձ հետ վատ չեյին վարվում։ Ուրիշ բան է հոգևոր սեմինարիան—վորտեղ յես սովորում եյի այն ժամանակ։ Սեմինարիայի հեգնող ռեժիմի դեմ յեղած բողոքից յես պատրաստ եյի դառնալ, և իսկապես դարձա հեղափոխական, մարքսիզմի կողմնակիցը, վորպես իսկական հեղափոխական ուսմունք...»

Այսպես է նա գրում.

«Գիշերաթիկում տեղի ուներ խաղարկում։ Ժամի 9-ին տալիս եյին թեյի զանգը, գնում եյինք ճաշարան և յերբ վերադառնում եյինք մեր սենյակները, բանից դուրս եր գալիս, վոր այդ ժամանակամիջոցում խուզարկել և իրար են խառնել մեր բոլոր իրեղենների արկղները»։

19 տարեկան հասակում ընկեր Ստալինը մտավ կուսակցություն և սկսեց ղեկավարել բանվորների խմբակները։ Յերբ այդ մասին իմացան ուսուցիչները, նրան հեռացրին դպրոցից։

Ցեվ այն օրվանից ընկեր Ստալինն իր ամբողջ կյանքում աշխատում է կուսակցության մեջ։ Նա աշխատել է Թիֆլիսում, Բաթումում և Բաքվում, հետո Լենինգրադում։ Ընկեր Ստալինն կազմակերպում էր գործադուլներ, գրում էր կոչեր, հանդես էր գալիս ժողովներին։

1912 թվին նա մյուս բոլշևիկների հետ միասին կազմակերպեց առաջին բոլշևիկյան ամենօրյա «Պրավդա» թերթը։

Ընկեր Ստալինը բոլշևիկների առաջնորդն էր Անդրկովկասում։ Անդրկովկասի բոլշևիկների կողմից նա գնում էր կուսակցության համագումարները։

Յոթն անգամ ընկեր Ստալինին բանտ են նստեցրել, Սիբիր աքսորել և յոթն անգամ նա փախել է աքսորից, վորպեսզի նորից կուսակցական աշխատանք տանի։

1917 թվին, Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ, ընկեր Ստալինը բոլշևիկների Կենտրոնական Կոմիտեյի անդամ էր և Կենտկոմը հանձնարարեց նրան ամենապատասխանատու, ամենաբարդ աշխատանքը։ Ընկեր Լենինի հետ միասին, ընկեր Ստալինը հանդիսանում էր զինված ապստամբության կազմակերպիչը Հոկտեմբերին։ Այնդեղ, վորտեղ սպիտակները ճեղքում էյին ֆրոնտը, վորտեղ կարմիրները նահանջում էյին, ընկեր Ստալինը գնում էր այնտեղ։ Նա կանգնեցնում էր նահանջը, ամրացնում էր ֆրոնտը, հաստատ կերպով իր ձեռքն էր առնում խախտված հրամանատարական կազմը։



Ի. Վ. Ստալին

Զուր չէ, վոր Ցարիցին քաղաքը փոխեցին Ստալինգրադ անունով։ 1918 թվին, յերբ սպիտակները հարձակվում էյին Ցարիցինի վրա, ընկեր Ստալինը կազմակերպեց քաղաքի պաշտպանությունը, բանտարկեց հրամանատարական կազմում յեղած դավաճաններին։ Կարմիր բանակը քշեց սպիտակ գվարդիականներին։

1919 թվին Յուդենիչը հարձակվում է Պետրոգրադի (Լենինգրադի) վրա։ Պետրոգրադը վտանգի մեջ է։ Կենտկոմն ուղարկում է ընկեր Ստալինին Պետրոգրադ։ Կարմիր բանակը և Պետրոգրադի բանվորները հետ մղեցին Յուդենիչի հարձակումը։

Ֆրոնտում ընկեր Ստալինը մշակում էր հարձակման պլանը, ղեկավարում էր տեղական խորհուրդները, կուսակցական կազմակերպությունները և ամեն կերպ աշխատում էր, վորպեսզի կարմիր բանակայիններն ստանային ամեն ինչ, վորպեսզի միշտ լիներ փամփուշտ, ռումբ։ Որ ու գիշեր, ամեն տեղ, թե հրամանատարները և թե կարմիր բանակայիններն զգում էյին, վոր նրանք աշխատում են փորձված բոլշևիկի ղեկավարությամբ։

Ընկեր Ստալինն առաջինը մտածեց կազմակերպել Բուդյոննու հեծելազորը, չնայած վոր զինվորական մասնագետները դեմ էյին այդ բանին։ Այդպիսի բանակ յերբեք չեր կազմվում։ Ընկեր Ստալինը պնդեց իր ասածը, հեծելազորը կազմվեց և նա մեծ դեր խաղաց քաղաքացիական պատերազմում։

1922 թվից ընկեր Ստալինը Համկոմկուսի (բոլշևիկների) Կենտկոմի գլխավոր քարտուղարն է։ Ընկեր Ստալինը Լենինի լավագույն աշակերտն է և բոլշևիկյան կուսակցության առաջնորդը։



Ահա թե ինչ է գրում նա իր մասին.

«Ինչ վերաբերվում է ինձ, յես միայն Լենինի աշակերտն եմ և իմ նպատակն է լինել նրա արժանի աշակերտը։ Այն խնդիրը, վորին յես նվիրում եմ իմ կյանքը, դա բանվոր դասակարգի բարձրացումն է։ Այդ խնդրի եյությունը վոչ թե վորևե ազգային պետության ամրացումն է, այլ սոցիալիստական, նշանակում է նաև ինտերնացիոնալ պետության ամրացումը։ Իսկ այդ պետության ամեն մի ամրացումը նպաստում է միջազգային բանվոր դասակարգի ամրացմանը։ Յեթե իմ աշխատանքի յուրաքանչյուր քայլը բանվոր դասակարգի բարձրացման և այդ դասակարգի սոցիալիստական պետության ամրացման վերաբերյալ ուղղված չիլիներ՝ բանվոր դասակարգի դրության լավացման և ամրացման համար, յես իմ կյանքը կհամարեյի աննպատակ»։

Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարությամբ, ընկեր Ստալինի գլխավորությամբ բանվոր դասակարգը ձեռք բերեց ամենամեծ հաղթանակը սոցիալիզմի կառուցման մեջ։

Բոլորը գիտեն ընկեր Ստալինի կոչը տեխնիկային տիրապետելու վերաբերյալ։ Ընկեր Ստալինի վեց պայմանները դարձան դրոշ բոլոր բանվորների համար։ Ընկեր Ստալինի վեց պայմաններն օգնում են առաջին հնգամյակը շուտով ավարտելու և կառուցելու անդասակարգ հասարակություն յերկրորդ հնգամյակում։

Լավագույն հարվածային բրիգադները կոչվում են Ստալինի անունով։ Ավտոմոբիլների ամենամեծ գործարանը բանվորները կոչեցին Ստալինի անունով։ Ստալինին գիտեն ամբողջ աշխարհի բանվորները։ Նա ամբողջ աշխարհի բանվորների առաջնորդն է։ Նա բանվոր դասակարգի ղեկավարն է։

---

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ է յեղել կոմկուսակցության ղեկավարողը։
2. Ի՞նչպես է կառուցված կուսակցությունը։
3. Ո՞վ է ղեկավարում կուսակցության աշխատանքը։
4. Ո՞վ է մեր կուսակցության առաջնորդը։
5. Ու՞մ է միացնում Կոմինտերնը։
6. Ի՞նչ աշխատանք է տանում Կոմինտերնը։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Իմացեք ձեր շեֆի—ֆաբրիկի, գործարանի, կոլտնտեսության կուսակցական բջիջի աշխատանքի մասին։ Ի՞նչ մասնակցություն է ցույց տալիս ֆաբրիկի, խորհտնտեսության, կոլտնտեսության աշխատանքներում։

Հրավիրեցեք կոմունիստ ծնողներին, վորպեսզի նրանք ձեզ ծանոթացնեն բջիջի աշխատանքներին։

Ժուռնալներից և գրքերից ընտրեցեք նյութեր կոմունիստական կուսակցության մասին և ալբոմներ կազմեցեք հոդվածներից, նկարներից։

Այդ նյութերի հիման վրա դասարանում կազմակերպեցեք հաղորդագրություններ։

---




# ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

«Կոմյերիտմիությունն իր ամբողջ աշխատանքում պետք է լինի վորպես բոլշևիկներ պատրաստող դպրոց»:

**ԿԱԼԻՆԻՆ**

## ՀԻՇԵՑԵՔ

Կոմյերիտմիությունը կազմակերպվել է 1918 թվին: Խորհրդային յերկիրն պաշտպանում եր սպիտակ գվարդիականներից: Կաշվե բաճկոններով, զինվորական շինելներով բանվոր յերիտասարդությունը հավաքվեց համագումարի Մոսկվայում: Համագումարում յերիտասարդությունը հայտնեց.

— Մենք ուզում ենք օգնել կոմունիստական կուսակցությանը: Ուզում ենք պայքարել բուրժուազիայի, կապիտալիստների դեմ, ուզում ենք կառուցել սոցիալիզմ:

Համագումարը վորոշեց կազմակերպել յերիտասարդության Կոմունիստական Միությունը—Կոմյերիտմիությունը:

Կոմյերիտմիությունը ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը: Կուսակցության առաջնորդ Վ. Ի. Լենինը 1920 թվին ասաց.

«Յերիտասարդության Միության խնդիրն այն է, վոր սովորի... սովորի կոմունիզմը»:

Ի՞նչպես սովորել:

«Առանց աշխատանքի, առանց պայքարի կոմունիզմի ճանաչումը գրքով—վոչինչ չարժի»—ասում եր Իլյիչը: Նշանակում է կոմունիզմը պետք է սովորել վոչ միայն գրքով: Պետք է սովորել դասակարգային թշնամու դեմ վարած պայքարում: Պետք է սովորել գործարանի, կոլտնտեսության աշխատանքում:

Կոմյերիտմիությունը կատարում է Լենինի պատգամները: Զուր չէ, վոր նա կոչվում է լենինյան:



## ՖՐՈՆՏՈՒՄ

Կոմյերիտմիությունը հերոսաբար պայքարում եր քաղաքացիական պատերազմի ֆրոնտներում: Նա հանդես բերեց հեղափոխական խիզախություն, հեղափոխության թշնամիների դեմ յեղած պայքարներում:

Կոմյերիտականներն առաջ եյին շարժվում, գրավելով իրենց հետևից մարտիկների մասսային: Նրանցից շատերն ընկնում եյին թշնամու գնդակից:

1918, 1919 և 1920 թվականները հանդիսանում եյին կոմյերիտական շարքերի մարտական ամրապնդման տարիներ՝ քաղաքացիական պատերազմի ֆրոնտներում, քայքայման և սովի դեմ մղած պայքարի ֆրոնտներում:

Սիբիրի, Վոլգայի, Ուկրաինայի գյուղերի կոմյերիտականներն օգնում եյին Կարմիր ջոկատներին—վորպես կապի աշխատողներ, հետախույզներ, մարտիկներ: Քաղաքացիական պատերազմի պատմության եջերը լի յեն Կարմիր բանակին հերոսաբար օգնելու օրինակով:

Թշնամին իր հաշիվը մաքրում իր Կարմիր բանակի ակտիվ մարտիկների—կոմյերիտականների հետ՝ տանջանքով ու գնդակով:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քաղաքացիական պատերազմը վերջացավ: Սառած ֆաբրիկներում և գործարաններում, լքված շախտերում և հանքերում յեռում եր համառ աշխատանքը:



Կոմյերիտմիությունը կրկին հետ չի մնում: Սկսեցին կառուցել նոր ֆաբրիկներ, գործարաններ: Ֆաբրիկներում և գործարաններում Կոմյերիտմիությունը կազմակերպում է սոցմրցում և հարվածայնություն, մասնակցում է բոլոր աշխատանքներին: Կարմրադրոշ Կոմյերիտմիությունն է, վոր առաջինը վերցնում է հարվածային տեմպեր: Կարմրադրոշ կոմյերիտականն է, վորը հանդիսանում է կուսակցության առաջին, հավատարիմ օգնականը հնգամյակի պայքարում, կատարելու վերջինս չորս, յերեք, մինչև անգամ յերկու և կես տարում:

Կոմսոմոլը ծովային և օդային տորմիղի շեֆն է: Կառուցելով սոցիալիզմ, նա պատրաստ է պատերազմի առաջին բոպեյին կանգնել Կարմիր բանակի մարտական դրոշների տակ:

Ռազմածովային ժողկոմ ընկեր Վորոշիլովը Կոմյերիտմիության համագումարում ասաց.

«Ցես խորապես համոզված եմ, վոր ձեզանից ամեն մեկն առանց վորևե տատանման ցանկություն և պատրաստակամություն կհայտնի վերցնել հրացանը կամ գնալ թնդանոթի մոտ և անձնվիրաբար պաշտպանել իր սոցիալիստական հայրենիքը, յեթե նրա վրա հարձակվեն թշնամիները»։

Ներկայումս բոլոր կոմյերիտականները սովորում են անվրեպ կրակել, տիրապետել հակագազը։ Կոմյերիտականները սովորում են կապել վիրավորներին։

Լավագույն կոմյերիտականները գնում են ոդաչուների դպրոցը։ Նրանք սովորում են խփել թշնամու սավառնակներից։

Ականակիրի, հածանավերի վրա գտնվում են լավագույն կոմյերիտականները։ Նրանք սովորում են ռազմա-ծովային գործը։

Կոմյերիտմիությունը վերցրել է ելեկտրիֆիկացիայի շեֆությունը։ Հազարավոր կոմյերիտականներ աշխատում են ահագին ելեկտրոկայանների կառուցումներում։

Կոմյերիտմիությունը վերցրել է ընդհանուր պարտադիր ուսման շեֆությունը։

Կոմյերիտմիությունը սովորեցնում է իր փոխարինողին—պատանի պիոներներին—աշխատել և պայքարել սոցիալիզմի համար։

Կոմյերիտմիությունը պետք է ոգնի սովորողներին—տիրապետելու գիտությանը։ Կոմյերիտմիությունը ղեկավարում է սովորողների պայքարը դպրոցի վերակառուցման համար, իրականացնելու կուսակցության Կենտկոմի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցի մասին։

## ԻՆՉ Է ԱՍԵԼ ԼԵՆԻՆԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լինել Յերիտասարդության Միության անդամ, նշանակում է այնպես տանել գործը, վոր քո աշխատանքը, քո ուժերը տրվեն ընդհանուր գործին։ Ահա այդ է կոմունիստական դաստիարակությունը։

Միմիայն այդպիսի աշխատանքում յերիտասարդը կամ աղջիկը կդառնա իսկական կոմունիստ։

Միայն այն դեպքում, յեթե նրանք այդ աշխատանքով ձեռք բերեն գործնական հաջողություն, նրանք կլինեն կոմունիստներ։

Միայն բանվորների և գյուղացիների հետ միասին աշխատելով կարելի յե լինել կոմունիստ։

Յերիտասարդության Կոմունիստական Միությունը պետք է լինի հարվածային խմբակ, վորն ամեն աշխատանքում ցույց է տալիս իր ոգնությունը, յերևան է բերում իր նախաձեռնությունը»։

(Լենինի ճառից, արտասանած Կոմյերիտմիության 3-րդ համագումարին 1920 թվին)։

> Կոմյերիտական, յեղիր որինակելի արտադրական աշխատող գործարանում, որինակելի կոլտնտեսական գյուղում։
>
> Ցեվ հարկավոր է, վորպեսզի Կոմունիստական Յերիտասարդության Միությունն ...իր դաստիարակությունը միացնի բանվորների յեվ գյուղացիների աշխատանքին, վորպեսզի նա չփակվի իր դպրոցներում... միայն բանվորների յեվ գյուղացիների հետ միասին աշխատելով կարելի յե լինել իսկական կոմունիստ»:
>
> ԼԵՆԻՆ



ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հրավիրեցեք դպրոց կոմյերիտական բջիջի ներկայացուցչին և նրա հետ միասին պարզեցեք հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ աշխատանք է կատարում տեղական բջիջը։
2. Ի՞նչ ոգնություն կարող են ցույց տալ պիոներները և սովորողները բջիջին՝ նրա նշանակած պլանի կատարման գործում։

## ՅԵՐԻՏԿՈՄԻՆՏԵՐՆ

Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալը (Յերիտկոմինտերնը) միացնում է կոմունիստական յերիտասարդությունը, վորը պայքարում է կոմունիզմի համար ամբողջ աշխարհում։

Հեղափոխական յերիտասարդության բուրժուազիան սպանում է, բանտարկում, աքսորում, տաժանակիր աշխատանքի դատապարտում։ Չնայած հալածանքներին, յերիտասարդությունը պայքարում է Լենինի և Կարլ Լիբկնեխտի պատգամների համաձայն։

Չնայած բանտերին, աքսորին, գնդակահարություններին, Յերիտկոմինտերնը Կոմինտերնի ղեկավարությամբ պայքարում է բոլոր յերկրների ֆաշիստների դեմ։ Յերիտկոմինտերնը պատրաստում է ամբողջ աշխարհի յերիտասարդ բանվորներին և յերիտասարդ գյուղացիներին պայքարելու կապիտալի դեմ։ Յերիտ-

կոմինտերնի մեջ է մտնում, վորպես բազմազանակ կազմակերպություն, ՀԼԿՅԵՄ-ը—Համամիութենական Լենինյան Կոմունիստական Յերիտասարդության Միության համկոմկուսի (բոլշևիկների) հավատարիմ օգնականը:

Յերիտկոմինտերնը և նրա բոլոր կազմակերպությունները հոգեն տանում կրտսեր սերնդի—հոկտեմբերիկների և պիոներների մասին: Նրա ղեկավարությամբ աճում և ծավալվում է մանուկների—պիոներների և հոկտեմբերիկների կոմունիստական շարժումը:

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Յերկրագնդի բոլոր յերկրներում ծածանվում է կոմյերիտմիության դրոշը—վորպես պայքարի և հաղթանակի դրոշ:

Դժվար, շատ դժվար է կոմյերիտմիության համար աշխատել արտասահմանյան յերկրներում: Կոմյերիտականներին բանտարկում են, սպանում: Բայց չնայած դրան, կոմյերիտմիությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պայքարում է լենինյան ձևով:

Պատերազմը Չինաստանում գրավեց բոլոր աշխատավորների ուշադրությունը: Ճապոնական արշավանքը չինական ժողովրդի դեմ, չինական աշխատավորու-




թյան հառաչանքները, Չինաստանի քանդված քաղաքներն ու գյուղերը—ահեղ ազդանշան են ամբողջ աշխարհի աշխատավորության համար:

Տեղի ունի զինված պայքարը Չինաստանի գրավման համար, առաջին հերթին Ճապոնիայի կողմից: Չինական հողերը ցանկանում են գրավել նաև Ամերիկան ու Անգլիան:

Չին-ճապոնական պատերազմի առթիվ կոմյերիտմիությունը կատարում է մարտական աշխատանք: Օրինակ, Գերմանիայի գործարաններում, ճաշի ընդմիջումներին կազմակերպվել են մեծ ժողովներ: Ահա թե ինչպես է նկարագրում ականատեսը. «Ժողով են ուղարկվում յերկու ընկեր—մեկը ճառախոս, մյուսը պաշտպանության համար: Յերկուսն էլ ժամի 12 քառորդ պակաս պիտի գտնվեն



գործարանի դարպասի մոտ: 12 ժամը 15 րոպե անց, բանվորները գնում են ճաշարան, վորպեսզի այնտեղ շտապ ճաշեն (նրանց թիվը 1400 է, վորի կեսը յերիտասարդներ են): Կոմյերիտականներն ավելի խոր են քաշում գլխակն աչքերին, մտնում են բանվորների բազմության մեջ և անցնում են դարպասի մոտ կանգնած պահապանների մոտով: Նրանք ճաշարանումն են:

Դահլիճի լայնությամբ ձգված է ճաղապատը, վորը կոմյերիտականների համար ծառայում է վորպես ամբիոն:

Զեկուցողը թռչում է ճաղերի վրա և սկսում է խոսել: Գդալները դրվում են սեղանի վրա: Բոլորովին լռություն է տիրում:

— Ընկերներ, յերիտասարդ բանվորներ և բանվորուհիներ, Շանհայում վորոտում են թնդանոթները: Ճապոնական ռազմանավեր գնում են, վոր ճնշեն և վոչնչացնեն յերիտասարդ Խորհրդային Չինաստանը: Ճապոնական զորքերը Խարբին են մտել: Այնտեղ սպիտակ գվարդիականները պատերազմի պրովոկացիա յեն անում Խորհրդային Միության դեմ: Գործարանատերերը ցանկանում են իջեցնել մեր առանց այդ էլ խղճուկ աշխատավարձը: Մի պատասխան կարող է լինել



—պայքարը: Մենք պետք է պաշտպանվենք, վորպեսզի կազմակերպենք գործադուլ, պետք է մեր ուժը հանդես բերենք:

Այդպիսի ժողովների ալիքն անցավ ամբողջ Գերմանիայում և մյուս յերկրներում.

—Ռազմական գործարանների և նավահանգստների յերիտասարդ բանվորներ,

Մերկացրեք ռազմական պատրաստությունները յուրաքանչյուր գործարանում: Խանգարեցեք ռազմական պատվերների կատարումը: Ճապոնական կապիտալիստներին սպառազինում ուղարկելու փորձերի դեմ՝ պատասխանեք գործադուլներով: Ձեզանից է կախված թույլ չտալ հեռավոր Արևելքի համար ռազմամթերք բեռնավորել: Վոչ մի տակառ վառոդ, վոչ մի արկղ զենք սպանդանոցի համար—այդ է ձեր գործողության լոզունգը:

Նոր պատերազմներում յուրք գտնելու բուրժուական փորձերին վորպես պատասխան, համախմբվեք Յերիտասարդության Կոմունիստական Միությունների շուրջը, Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշի տակ պայքարելու պրոլետարիատի դիկտատուրայի համար։

Բարձր պահեք Լենինի և Լիբկնեխտի դրոշը պատերազմի դեմ մղվող պայքարում։

Վոչ մի տակառ վառոդ, վոչ մի արկղ զենք կապիտալիստական սպանդանոցի համար։

Թույլ չենք տա ռազմամթերք բառնալու Չինաստանի դեմ։

Կոմյերիտմիությունը կազմակերպում է գործադուլներ և միջոցներ է ձեռք առնում հետ պահելու, փչացնելու ռազմամթերքը։

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕՐԸ

Ինչ բան է Միջյերիտ օրը։

Միջազգային յերիտասարդության օր։ Բանվորական յերիտասարդության հեղափոխական ուժերի ստուգատես։ Նա հաստատված է յերիտասարդության կոմունիստական միությունների միջազգային միացման պատվին։

Յերիտկոմինտերնի հիմնադիրներից մեկը, Գերմանիայի պրոլետարների առաջնորդ Կարլ Լիբկնեխտն եր, վորին սպանեցին ֆաշիստները 1919 թվին։



Առաջին անգամ Միջյերիտ օրը տոնվեց 1915 թվին։ Այն ժամանակ կապիտալիստները համաշխարհային պատերազմ եյին վարում իրենց շահի համար։

Իրենք, կապիտալիստները պատերազմ չեյին գնում, նրանք բանվորներին և գյուղացիներին եյին ուղարկում պատերազմ։

1915 թվին շատ յերկրներում բանվորական յերիտասարդությունն անցկացրեց միտինգներ և ցույցեր պատերազմի դեմ, կապիտալիստների դեմ։ Խորհրդային Միության բանվոր յերիտասարդությունն առաջին անգամ մասնակցեց Միջյերիտ օրվան 1917 թվին, Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին։ Այդ ժամանակից ամբողջ աշխարհի յերիտասարդության հետ միասին մենք ամեն տարի տոնում ենք միջազգային յերիտասարդական օրը։

Միջյերիտ օրվա գլխավոր խնդիրն է պայքարել կապիտալիստ ճնշողների դեմ, պատերազմի և պատերազմական վտանգի դեմ։



Կապիտալիստները փորձում են Խորհրդային Միությանը քաշել պատերազմի մեջ։ Մեր սոցիալիստական շինարարության հաջողությունները նրանց հանգիստ չեն տալիս։ Ցեվ ամբողջ աշխարհի հեղափոխական յերիտասարդությունը հետևյալ լոզունգներն է տալիս—

«Բոլորը խորհրդային Միության պաշտպանության համար»։

«Վերածենք իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի»։



«Անցկացնելով Միջյերիտ օրը, մենք պետք է հիշենք յերկրի պաշտպանունակության ամրացման մասին, պետք է հիշենք այն մասին, վոր հարկավոր է ավելի արագ կատարել հնգամյակը, վորովհետև յուրաքանչյուր նոր գործարան ամրացնում է մեր Միության ուժը և հզորությունը։

Միջյերիտ օրը մենք պետք է հիշենք բանվոր դասակարգի դրությունն արտասահմանում։ Պետք է հիշենք, վոր անհրաժեշտ է ուժեղացնել մեր օգնությունը մյուս յերկրների բանվորներին, վորոնք պայքարում են բանվորության գործի, կոմունիզմի համար։

Ձեռքերը հեռու Խորհրդային Միությունից, Խորհրդային Չինաստանից։

Կեցցե լենինյան Կոմինտերնը։

Կեցցե Խորհրդային Միությունը—ամբողջ աշխարհի պրոլետարների հարվածային բրիգադը։

## ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս է աշխատում ձեր դպրոցի կոմյերիտ բջիջը:
2. Ո՞վ է ղեկավարում պիոներներին:
3. Ինչպե՞ս է պայքարում Կոմյերիտմիությունն արտասահմանյան յերկրներում:
4. Ե՞րբ և ինչ պայմաններում կազմվեց Յերիտասարդության Կոմունիստական Միությունը:
5. Ինչո՞վ է արտահայտվում Կոմյերիտմիության մասնակցությունը յերկրի տնտեսական և քաղաքական կյանքում:
6. Ինչպիսի՞ կազմակերպության մեջ են միանում բոլոր յերկրների կոմյերիտները:
7. Ինչպիսի՞ խնդիրներ են դրված Յերիտկոմինտերնի առաջ:

## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հիշեցեք, ինչպես անցկացրիք այս տարի Միջյերիտ օրը և գրեցեք փոքրիկ շարադրություն:

> «Յերիտասարդության բաժին է ընկնում վերջացնելու, ավարտելու կոմունիզմի գործը, հենց նրան է բաժին ընկնում պայքարելու կոմունիզմի համար յեվ նա այդ պայքարը պիտի դիմավորի ամուր, առողջ, պողպատե նյարդերով յեվ յերկաթե մկաններով»:
>
> ԼԵՆԻՆ

## ՊԻՈՆԵՐՆԵՐԸ

1922 թվին մեր յերկրի զանազան քաղաքներում Կոմյերիտմիության ղեկավարությամբ սկսեցին կազմակերպվել պատանի պիոներների վաշտերը:

Յերեխաները սիրով մտնում եյին պիոներական վաշտերը և նրանց կազմակերպությունն արագ աճեց: Այդպես օրինակ, 1924 թվին կար 122 հազար պիոներ, իսկ 1925 թվի հունվարի մեկին արդեն կային մի միլիոն պիոներ և հոկտեմբերիկներ:

1932 թվին, պիոներական առաջին վաշտի կազմակերպումից 10 տարի հետո, պիոներների թիվը արդեն հասնում է 5 միլիոնի:

Իր գոյության տաս տարվա ընթացքում, պիոներական կազմակերպությունը ոչ միայն աճել, այլև ամրացել է և գրավել Խորհրդային Միության աշխատավորության խորը սերը:

Պիոներական կազմակերպությունը դաստիարակել է միլիոնավոր յերեխաներ և տվել է Կոմյերիտմիության հազարավոր անդամներ:

Պիոներական կազմակերպությունը մեծ դեր խաղաց իսկական խորհրդային աշխատանքային դպրոց ստեղծելու գործում:

Պիոներական կազմակերպությունը մեծ աշխատանք է տանում կապիտալի արտասահմանյան բանտարկյալներին օգնելու համար:

1924 թվի մայիսին Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի ունեցավ պիոներների հանդեսը, որտեղ պիոներները կոլեկտիվ կերպով տվին հանդիսավոր խոստում:

Հանդիսավոր խոստումն ընդունեցին այդ ժամանակ Մոսկվայում տեղի ունեցող կուսակցության 23-րդ համագումարը, կառավարության անդամները, Ռազմա-հեղափոխական խորհուրդը և Մոսկվայի ու մյուս քաղաքների հազարավոր աշխատավորները:



Հարյուրավոր նվագախմբեր նվագում եյին հզոր «Ինտերնացիոնալը»: Լենինի դամբարանի վրա յերևաց Կոմյերիտմիության Կենտկոմի քարտուղարը և հայտարարեց.

«Ընկեր պատանի պիոներներ, յերիտասարդության Կոմունիստական Միության Կենտկոմի անունից հայտարարում եմ, որ պատանի պիոներներն այսօրվանից կոչվում են Վլադիմիր Իլիչ Լենինի անվան պատանի պիոներների մանկական կոմունիստական խմբեր:

Ընկեր պատանի պիոներներ, մեր Կոմյերիտմիությունը կոչ է անում ձեզ —փոքր յեղբայրներիդ, բանվորական գործի պայքարում «Լինել պատրաստ»:

«Միշտ պատրաստ», լսվեց պիոներների հազարաձայն պատասխանը: Բարձր «ուռան» յերկար ժամանակ չէր լռում Կարմիր հրապարակում:




Կրեմլի աշտարակի հին ժամացույցը խփեց ժամի 4, և ամբիոնի վրա յերևաց հին բոլշևիկ Ֆելիկս Կոնը:

— Պատանի ընկերներ, ինձ հանձնարարել են, որպես մեծերից մեկի, ձեզ հանդիսավոր խոստում անել տալ:

Ցեղեք պատրաստ այդ հանդիսավոր խոստմանը»:

«Միշտ պատրաստ» նորից թնդում է Կարմիր հրապարակը:

«Ընկեր պիոներներ, այս հանդիսավոր խոստումը յես կտեղեկացնեմ ձեր անունից կուսակցության 13-րդ համագումարի նախագահությանը»:

Հիշենք 1924 թվի մայիսի 23-ի այդ մեծ օրը, կուսակցության պատմական համագումարը և խոստումը, որ տվին Խորհրդային Միության պիոներները, որոնք կրում են լենինցիներ պատվավոր կոչումը:

Դաստիարակվենք այնպես, ինչպես սովորեցնում եր մեզ Լենինը, պայքարենք այնպես, ինչպես պայքարում եր Լենինը:

# ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄ

> Յես, Խորհրդային Միության պատանի պիոներս, իմ ընկերների առաջ հանդիսավոր խոստանում եմ, վոր 1. հաստատ կանգնելու յեմ բանվոր դասակարգի գործի համար, վորը պայքարում ե ամբողջ աշխարհի բանվորների յեվ գյուղացիների ազատության համար 2. ազնվորեն յեվ անշեղ կատարելու յեմ Իլիչի պատգամները, պատանի պիոներների օրենքները ու սովորությունները։

## ՊԱՏԱՆԻ ԼԵՆԻՆՑԻՆԵՐԻՆ

*«...Պատանի լենինցիներ, ձեր հայրերն ու մայրերը, յեղբայրներն ու քույրերն իրենց ամբողջ ուժերն ու ձգտումները գործադրել են սոցիալիստական պետություն կառուցելու մեր յերկրում։ Ֆաբրիկներն ու գործարանները, հանքահորերն ու դաշտերը, վորտեղ աշխատում ե ձեր ավագ սերունդը, մենք ձեռք ենք բերել յերկար պայքարով։ Այդ բանի համար հազարավոր մեր լավագույն ընկերներն իրենց գլուխներն են տվել։ Յեվ ձեզանից, պատանի պիոներներ, կառավարությունն սպասում ե, վոր դուք մեր ընդհանուր գործի համար նույնպես տոկուն, նույնպես անշեղ և անվախ կպայքարեք։*

*Ձեր յերիտասարդ սերունդը պետք ե սովորի, թե ինչպես պետք ե աշխատել, ինչպես կառավարել ֆաբրիկներն ու գործարանները։ Դուք պետք ե սովորեք կուլտուրապես մշակել հողը, կառավարել պետությունը։*

*Պատանի պիոներներ, յեղեք համաշխարհային հեղափոխության նշանաձիգները, համաշխարհային հրդեհի փողահարները։ Սոցիալիզմի, կոմունիզմի գալիք պայքարներին և հաղթանակներին յեղեք պատրաստ»։*

## ՊԻՈՆԵՐՆԵՐԸ—ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՂՆԵՐՆ ԵՆ

> «Հարկավոր ե, վոր յուրաքանչյուր պիոներ ամեն տեղ—դպրոցում, ընտանիքում, փողոցում, պիոներ ակումբում, պիոներական ճամբարում իսկապես լինի բոլորին օրինակ»։
>
> (ՌՈՒԶՈՒՏԱԿ)
>
> *(Կուսակցության կենտկոմի վորոշումից պիոներկազմակերպության 10 ամյակի առթիվ)։*

## ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Յուրաքանչյուր պիոների նպատակն ե դաստիարակվել վորպես ապագա լավ կոմյերիտական և կոմունիստական հասարակության ազատակար, արժանի անդամ։*

1. Պիոները հավատարիմ ե բանվոր դասակարգի գործին յեվ Լենինի պատգամներին։

*Պիոներներն, ինչպես և նրա ավագ ընկերները-կոմյերիտականները և կոմունիստները, պետք ե միշտ պատրաստ լինեն դուրս գալու ամբողջ աշխարհի աշխատավորության ազատությունը պաշտպանելու համար.*

2. Պիոները կուլակի յեվ բուրժուների թշնամին ե։

*Կուլակներն ու բուրժուները բանվորների և գյուղացիների ամենաչար թշնամիներն են, հետևաբար նրանք հանդիսանում են նաև պիոներների թշնամիները։*



3. Պիոները բանվորների, գյուղացիների յեվ ամբողջ աշխարհի աշխատավորության յերեխաների հավատարիմ բարեկամն ե ու ընկերը։

4. Պիոները կոմունիստի յեվ կոմյերիտականի կրտսեր յեղբայրն ու օգնականն ե կոմունիզմի պայքարում։

*Պիոներները բացատրում են գյուղացիներին կոլտնտեսությունների և կոմունաների նշանակությունը, վորոնք կազմակերպում են օրինակելի գյուղատնտեսություն։*

5. Պիոները հակառակ ե ազգային խտրության յեվ թշնամության, նա կողմնակից ե բոլոր բանվորների յեվ աշխատավորների ինտերնացիոնալ մարտական միությանը։

*Պիոներն ինտերնացիոնալիստ ե—նրա բարեկամները բոլոր ազգությունների բանվորներն են։*

Պիոները պայքարում ե հարբեցողության յեվ խուլիգանության դեմ, կրոնական հիմարացնող թույնի դեմ։

*Պիոները չի հավատում աստծուն, մեծերի օգնությամբ բացատրում ե տերտերների խաբեբայությունը։*

7. Պիոները կազմակերպում ե, միացնում ե յերեխաներին Իլիչի դրոշի տակ։ Պիոները հանդիսանում ե վորպես օրինակ բոլոր յերեխաներին։

*Պիոները պիոներական վաշտերն ե գրավում իր ընկերներին։ Պիոները բոլոր յերեխաների համար օրինակ ե. թե դպրոցում, թե դպրոցից դուրս բոլոր յերեխաները պետք ե նրանից օրինակ վերցնեն։*

8. Պիոներն ամեն բան անում ե արագ յեվ ճիշտ։ Գնահատում ե իր յեվ ուրիշների ժամանակը։ Պիոներն աշխատում ե, սովորում ե յեվ հանգստանում ե միասին յեվ կազմակերպված։

*Յեթե մեծ ընկերները տալիս են պիոներին առաջադրություն, նա պետք ե կատարի արագ և ճիշտ։ Չպետք ե առարկի՝ թե հետո կանի, ժամանակ չունի և այլն։*

*Պիոները պետք ե միահամուռ և կոլեկտիվ կերպով աշխատի, սովորի և հանգստանա։*

9. Պիոները թշնամին ե կեղտոտության յեվ ծխելուն։ Պիոները պաշտպանում ե իր յեվ ուրիշների առողջությունը։

*Պիոները չի ծխում և միշտ պետք ե մաքուր և կարգապահ հագնվի։ Պիոները վորտեղ վոր գտնվելու լինի, պետք ե բացատրի կեղտի և ծխելու վնասը։*

*Պիոները պաշտպանում ե իր և ուրիշների առողջությունը։*

10. Պիոներն աշխատասեր ե յեվ համառ։ Պիոները չի վախենում դժվարություններից, նա միշտ տոկուն ե յեվ աշխույժ։

*Պիոներն աշխատասեր ե և համառ և չպետք ե ամաչի վոչ մի աշխատանքից։*

*Գյուղում պիոներները պայքարում են կոլտնտեսությունների կազմակերպման համար։*

*Պիոներները մասնակցում են բոլոր մյուս կամպանիաներին, վորոնք նպաստում են Խորհրդային Միության տնտեսության թերությունները վերացնելուն։*

11. Պիոները պատրաստվում ե դառնալ անձնազոհ պայքարող աղքատության յեվ ճնշման դեմ, սոցիալիզմի համար։

*Այդ օրենքն ասում ե այն մասին, վոր պիոները չխնայելով վոչ իր ուժերը, վոչ ժամանակը, պատրաստվում ե պայքարել մյուս յերկրների աղքատությունն ու ճնշումը վոչնչացնելու համար։*

12. Պիոները ձգտում ե գիտության յեվ օգնում ե ուրիշներին սովորել։ Գիտությունն ու հմտությունը բանվորական գործի պայքարում ուժ են։

*Յուրաքանչյուր պիոներ պետք է լինի լավ աշակերտ խմբում և դպրոցում։ Այն ընկերներին, վորոնք վատ են յուրացնում դպրոցական ուսումը, պիոները պարտավոր է օգնել,*

*Գիտությունը—դա այն ուժն է, վորը ծառայում է բանվորին պայքարելու բուրժուազիայի դեմ։*

13. Պիոները պայքարում է ուսման յեվ աշխատանքի կարգապահության համար, խնայողաբար վերաբերվելու հասարակական գույքին։

14. Պիոները խորհրդների, պրոֆմիությունների, կոոպերացիայի գործունյա օգնականն է։ Պիոները Կարմիր բանակի բարեկամը, օգնականը յեվ ապագա մարտիկն է։

*Պիոները յերբ մեծանա, կծառայի Կարմիր բանակում։ Պիոներական կազմակերպությունը հնարավորություն է տալիս պիոներին ուսումնասիրել վաշտերում ազդանշանները, հրացանաձգությունը, ֆիզկուլտուրան, արշավանքները, ռազմական խաղերը, ռազմական պատրաստությունը։ Պիոներները պետք է կապվեն կարմիր բանակայիններին, օգնելով նրանց աշխատանքներում, կազմակերպելով պիոներական անկյուններ, տեղեկանքի սեղաններ և այլն։*



15. Պիոները աջակցում է ֆաբրիկների յեվ գործարանների աճմանը, տեխնիկական գիտելիքներին, աշխատանքային կարգապահությանը։

*Յուրաքանչյուր պիոներ պետք է տեխնիկապես գրագետ լինի։ Նա պետք է ուսումնասիրի էլեկտրականությունը, շինի ռադիո-ընդունարաններ և այլն։ Պիոներն արտադրության մեջ պետք է մյուսների համար օրինակ լինի։*

16. Պիոները բերքի պայքարի ակտիվ մասնակիցն է, կոլտնտեսության յեվ խորհտնտեսության օգնականը։

> Բարձրացնել ուսման վորակը—դա յե խնդիրը, վոր դրել է կուսակցության Կենտկոմը դպրոցների առաջ։

---

*ՀԱՐՑԵՐ*

*1. Ի՞նչ խնդիրներ է դնում պիոներ կազմակերպությունը։*

*2. Ի՞նչպես է աշխատում ձեր պիոներ բազան։*



*3. Խնդրեցեք կովարին, վորպեսզի նա պատմի, թե ինչպես են կազմակերպված պիոներները։*

## ԻԼԻՉԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ ՀՅՈՒՐ

*(Բոնչ-Բրույեվիչի հիշողությունները)*

*1919 թվի ձմեռը Վլադիմիր Իլիչը յեղավ մանկական հանդեսին Սոկոլնիկի անտառային դպրոցում,*

*Հենց վոր Վլադիմիր Իլիչը մոտեցավ յերեխաներին, նրանք ուրախ շրջապատեցին նրան և իրար ընդհատելով սկսեցին հարցեր տալ.*

*— Ի՞նչ պիտի խաղանք—հարցրեց Վլադիմիր Իլիչին տաս տարեկան շատ աշխույժ մի աղջիկ։ Շուտ արեք, թե չէ ձանձրալի յէ, մենք ձեզ յերկար սպասեցինք։ Դե, ի՞նչ պիտի խաղանք։*

*— Յերգելու յենք, իսկ հետո մուկ ու կատու յենք խաղալու—աշխույժ պատասխանեց Վլադիմիր Իլիչը։*

*—Համաձայն ենք, համաձայն ենք—ծափահարելով ուրախ բացականչեց աղջիկը։*

*— Համաձա՜յն եք, դե, էլ ի՞նչ կա, ինչո՞ւ գործը կանգ է առել... Արի, շուտ։*

*Բարշ տուր ահա դրանց։ Դեհ. շուտ, միացեք։—Յեվ մի ակնթարթում յերեխաների մի մեծ շրջան կազմվեց։*

*—Դեհ, յերգիր. ի՞նչ է, դու....—շուտով դարձավ Վլադիմիր Իլիչն այդ աղջկան։*

*Վլադիմիր Իլիչն ամբողջովին տարվել եր յերեխաների տոնով, ուրախանում եր, ծիծաղում եր և սիրով յերգում եր յերեխաների հետ։ Նրան անվերջ հարցեր եյին տալիս և նա ամեն մեկին պատասխանում եր, կատակներ, զվարճախոսություններ անում, ինքն էլ հարցեր, հանելուկներ տալիս, և զարմանում եր միայն, թե վո՞րտեղից նա այս բոլորը գիտե, բոլորը հիշում է։ Միաձայն ծիծաղն ու կատակները դահլիճում իրար եյին խառնվում։*



*Մեծերը, Վլադիմիր Իլիչի վարակիչ օրինակով համակված, նույնպես ներշնչվեցին ընդհանուր ուրախ վոգով։*

*—Դե, ահա, իսկ յերբ մուկն ու կատուն... Այս ի՞նչ է, դուք մոռացե՞լ եք,—գրգռում եր Վլադիմիր Իլիչը։*

*Յեվ նորից կազմվում եր շրջան, և նորից յերեխաների մեջ նա հրապուրանքով խաղում եր, բաց չթողնելով կատվին և պաշտպանելով մկան։ Նա աչալուրջ կերպով նայում եր և նրան չես կարող խաբել։ Նրա պաշտպանությունը հաստատուն է և վստահելի։*

*Այնպես յեղավ, վոր Վլադիմիր Իլիչը այս յերեխաների հետ առաջին անգամ ծանոթանալով, նրանց ամենալավ բարեկամը և ընկերը դարձավ։*

*Յերեխաները նրա հետ խոսում եյին հասարակ կերպով, «դու»-յով, կատակ եյին անում, նրա խոսքը կտրում եյին, և զգացվում եր, վոր նա նրանց համար մոտիկ մարդ է դարձել։ Նրանք խլեցին նրան մեծերից։ Բարշ տվին նրան իրանց*

հետ թեյ խմելու, մուրաբա եյին լցնում նրա համար և վճռականապես բոլորը ցանկանում եյին նրա համար մի բան անել, իսկ նա նրանց համար ընկույզ եր կոտրում, թեյ եր ածում և աչալուրջ կերպով ամենքին հետևում եր։ Չե՞ վոր նա այնքան շատ և ջերմ կերպով սիրում եր յերեխաներին։ Յեվ յերեխաները զգում եյին այդ ու պարգևատրում եյին նրան իրենց չքնաղ սիրով և բոլորն էլ ցանկանում եյին նրա հետ լինել։ Վլադիմիր Իլյիչը շատ շուտ սովորեց յերեխաների անունները։ Զարմանալի յեր, վոր նա նրանց չեր շփոթում և բոլորին էլ հիշում եր։

Յերեխաների հետ վոչինչ չես կարող անել։ Նրանք Վլադիմիր Իլյիչին բոլորովին տիրապետել եյին։ Նրան քարշ եյին տալիս մեկ սենյակից մյուս սենյակը։ Ցույց եյին տալիս կենդանի անկյունը, թռչուններին, ձկներին, սկյուռին, և Վլադիմիր Իլյիչը խորացավ նրանց գործերի մեջ, և այնպես, կարծես թե նա յուր ամբողջ կյանքում հենց միայն դպրոցականների հետ եր պարապել։

Բոլոր յերեխաները պետք է գիտենային, վոր Վլադիմիր Իլյիչի սիրտը միշտ յերեխաների ուրախության և բաղտավորության համար եր բաբախում։ Նա նրանց գնահատում և սիրում եր։

Յեվ թող յերեխաները իմանան, վոր Վլադիմիր Իլյիչի համար վոչ մի ավելի ուրախալի բան չկար, քան այն, վոր մեր յերեխաներից անում յեվ մեծանում են անձնազոհ կոմունիստներ, մեր կուսակցության գործիչներ, սոցիալիզմի մարտիկներ։

Ձգտենք բոլորս էլ դրան։

> *ԼՍԵՑԵ՛Ք, ՊԻՈՆԵՐՆԵՐ,*
> *ԼՍԵՑԵ՛Ք, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԵԽԱՆԵՐ,*
> *ԼՍԵՑԵՔ,*
>
> «Չկան այնպիսի ամրոցներ, վորոնց բոլշևիկները չկարողանային վերցնել։ Մենք մի շարք ամենադժվարին խնդիրներ ենք լուծել։ Մենք տապալեցինք կապիտալիզմը։ Մենք վերցրինք իշխանությունը։ Մենք կկառուցենք ամենախոշոր սոցիալիստական արդյունաբերությունը:
>
> Մենք միջակ գյուղացուն դեպի սոցիալիզմի ճանապարհը դարձրինք։ Ամենակարեվորը մենք արդեն կատարեցինք։ Մեզ քիչ մնաց անելու—ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել գիտությանը, յեվ յերբ մենք այդ անենք, այնպիսի տեմպեր կունենանք, վորոնց մասին այժմ չենք էլ համարձակվում յերեվակայել։
>
> **ՍՏԱԼԻՆ**

## ՍՈՎՈՐԻՐ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏ ԼԻՆԵԼ

*(Ըստ Բարանովսկու)*

Բուրժուական յերկրներում հազարավոր հեղափոխականներ գտնվում են բանտերում։ Բանտը պատժի սովորական ձև է դարձել վոչ միայն կոմունիստների և կոմյերիտների, այլ և պիոների համար։

Միայն անցյալ տարվա մեջ 380 հազար հեղափոխական եր սպանված, իսկ յեթե սրա վրա ավելացնել բոլոր կալանավորվածներին, վիրավորվածներին և դատավճռով բանտարկվածներին, դուրս է գալիս, վոր մի միլիոն հարյուր հիսուն հազար մարդ է տուժել կապիտալիստների հալածանքներից։

Մենք վոչ մի վարկյան չենք կարող մոռանալ նրանց մասին։ Ամեն որ նրանց մասին աշխատավորության հիշեցնում է ՄՈՊՐ՚ը։



Հեղափոխության մարտիկների ոգնության միջազգային կազմակերպության մեջ (ՄՈՊՐ) կարող են և պարտավոր են մասնակցել վոչ միայն հասակավորները, այլ և պիոներները, հոկտեմբերիկները և ԽՍՀՄ-ի բոլոր յերեխաները։

Յուրաքանչյուր դպրոցում Մոպրի պատանի բարեկամների հատուկ խմբակներ են ստեղծված։

Այս խմբակում ընդունվում են 8-ից 14 տարեկան յերեխաներ, նրանք ունեն իրենց անդամատոմսը, մուծում են անդամավճարներ, ընտրում են խմբակի բյուրո։

Բոլոր միջոցները, վորոնք հավաքվում են ամբողջ աշխարհում Մոպրի անդամների և Մոպրի պատանի բարեկամների շնորհիվ, գնում են կապիտալի գերիների ոգնության՝ նրանց շոր, սնունդ ձեռք բերելու, դատարանում նրանց պաշտպանների վարձատրության, նրանց ընտանիքներին, հատկապես յերեխաներին ոգնելու համար։

Մոպրի պատանի բարեկամները վոչ միայն իրենք պարտական են ոգնել հեղափոխության մարտիկներին և նրանց յերեխաներին, այլ և պարտական են այդ գործի մեջ քաշել և իրանց ծնողներին ու ընկերներին։ Միայն այդ պայմանով կարելի յե արդարացնել Մոպր-ի բարեկամների կոչումը։



## ՊԻՈՆԵՐՆԵՐԸ—ՀԵՐՈՍՆԵՐ

Չինացի պիոներները իբրև հերոսներ կռվում և իբրև հերոսներ մեռնում են։ Այն դժվար որերին, յերբ չինական կոմունիստական կուսակցությունը ստիպված եր գաղտնի աշխատել, հեղափոխական գրականության տարածելը պատժվում եր մահվան պատժով։

Անխոնջ կերպով վազվզում եյին պիոներները փողոցներով։ Ճարպիկ կերպով պահվում եյին վոստիկաններից և տարածում եյին կոչեր ու թռուցիկներ։

1927 թ. վոստիկանները բռնեցին յերկու աղջիկ և հինգ տղա և տարան նրանց հրապարակ, վորտեղ դատապարտվեցին կախաղանի։

Յերբ նրանք անցնում եյին քաղաքային բանտի մոտով, աղջիկներից մեկը, Ցան Կան-Պայի անունով, կանչեց։

—Ցեչլայրներ և քույրեր, մենք գնում ենք մեռնելու: Բայց դուք կենդանի մնացողներդ, պարտական եք տոկունությամբ կռվել բանվոր դասակարգի գործի համար:

Զինվորներից մեկը հրացանից կրակեց, և Ցան-Կան-Պային ընկավ մահացած:

Սակայն բոլոր քաջ փոքրիկ ընկերները շարունակում են կռվել այն գործի համար, որի համար հերոսական մահով ընկավ Ցան-Կան-Պային:

## ԻՆՉՊԵՍ ՆԱՄԱԿ ՈՒՂԱՐԿԵԼ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ—ՊԻՈՆԵՐՆԵՐԻՆ

*Ուղարկեցեք վաշտի, խմբի նամակը իր տեղական յերկրային ДКО-ն:*

*Կարելի յե նամակը ուղարկել ուղղակի Մոսկվայի վրայով՝ այս հասցեով,* Москва, 34, Мертвый переулок, дом № 3. *Մանկական կոմունիստական շարժման կենտրոնական տուն, միջազգային բաժին:*

---

*ՀԱՐՑԵՐ.*

*1. Ի՞նչպիսի մասնակցություն ունեն պիոներները դպրոցի աշխատանքի լավացման մեջ:*

*2. Ի՞նչպիսի աշխատանք են տանում պիոներները կապիտալիստական յերկրներում:*

*ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.*

*1. Ձեր վաշտի, կամավոր ընկերությունների, Մոպր-ի, Պաշը-Ավիաքիմի, «կորչի անգրագիտությունը» և մանուկների բարեկամների ընկերությունների աճման դիագրամներ կազմեցեք:*

*2. Նամակագրություն սկսեցեք արտասահմանյան պիոներների հետ:*

*3. Խնդրեցեք վաշտավարին պատմել, թե ի՞նչպես պետք է դպրոցականները-պիոներները յերկրի պաշտպանության համար պատրաստվեն:*

*Սրանից հետո կազմեցեք ձեր աշխատանքի պլանը:*



## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

*Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ բուրժուայից ֆաբրիկներն ու գործարանները խլվեցին, իշխանությունն անցավ բանվոր դասակարգի ձեռքը:*

*Իր իշխանությունը—պրոլետարիատի դիկտատուրան—բանվոր դասակարգը իրականացնում է խորհուրդների միջոցով:*

*Ինչո՞ւմն է խորհուրդների ույժը:*



*Խորհուրդների ույժը նրանումն է, որ յերկիրը կառավարում են աշխատավորները: Լենինը ասում եր՝*

*«Ամեն մի խոհարարուհի պետք է կարողանա կառավարել պետությունը», Խորհուրդները վերակրթում են աշխատավոր մասսաները և նրանց դարձնում են սոցիալիզմի իսկական շինարարներ:*

*Բայց խորհուրդների մեջ ղեկավարող դերը պատկանում է բանվոր դասակարգին:*

*Ինչո՞ւ:*

*Որովհետև բանվորները բոլոր աշխատավորներից ավելի յեն պատրաստված սոցիալիզմի համար կռիվ մղելու: Նրանք մասնավոր սեփականություն չունեն, ֆաբրիկում աշխատանքը նրանց կազմակերպել ու դիսցիպլինայի յե յենթարկել: Բանվորներն անցել են բուրժուազիայի դեմ կռվի դաժան դպրոցը:*

*Նրանց գլխին կանգնած է ամուր կարգապահ կոմունիստական կուսակցությունը, որը միշտ կռվի և հաղթության ուղիղ ճանապարհ է ցույց տալիս:*



*Խորհուրդների հիմնական խնդիրն է—ճնշել դասակարգային թշնամու յուրաքանչյուր յելույթը, վոչնչացնել դասակարգային հասարակությունը և կառուցել սոցիալիզմ:*

*Խորհուրդները պրոլետարիատի շուրջը են միացնում բոլոր աշխատավորներին սոցիալիստական շինարարության համար: Խորհուրդներն ամրացնում են Կարմիր բանակը, որը պաշտպանում է մեր սահմանները:*

*Խորհուրդները կառավարում են մեր յերկրի տնտեսությունը, հոգում են նոր ֆաբրիկներ և գործարաններ կառուցելու մասին, նոր հանքեր և հանածոներ մշակելու մասին: Նրանք ղեկավարում են գյուղական տնտեսության վերաշինությունը—ամրացնում են կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները:*

*Խորհուրդները հոգում են աշխատավորների կուլտուրական սպասարկության մասին—բաց են անում դպրոցներ, մսուրներ, հիվանդանոցներ:*

*Յուրաքանչյուր քաղաքում ընտրվում է քաղխորհուրդ, գյուղում գյուղխորհուրդ:*

Խորհուրդները կազմվում են աշխատավորների ընտրած ամենալավ բանվորներից և գյուղացիներից։

Խորհուրդների մեջ ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն բոլոր 18 տարեկան հասակին հասած աշխատավորները։

Ամեն մի աշխատավոր, բանվոր, կոլտնտեսական, մենատնտես գյուղացի, տնայնագործ, տանտիրուհի, կարմիր բանակային կարող է ընտրել և ընտրվել խորհուրդի մեջ։

Խորհրդի մեջ ընտրվել և ընտրել չեն կարող շահ ստանալու համար վարձու աշխատանքի դիմող անձնավորությունները։ Չեն ընտրում և չեն կարող ընտրվել անաշխատ յեկամտով ապրող անձնավորությունները՝ կուլակները, մասնավոր առևտրականները, բոլոր կրոնների վարդապետներն ու տերտերները։

ԶԱՅՆԱԶՈՒՐԿՆԵՐ (ձայնից զրկված դասակարգային թշնամիներ)



Տերտերը, կուլակը, յեվ առևտրականը



Նախկին վոստիկաններ, ժանդարմներ, փաբրիկատերեր յեվ կալվածատերեր

Ընտրողական իրավունքից զրկված են ցարական նախկին ծառաները՝ ժանդարմները, վոստիկանները, գեներալները, սպաները և մինիստրները։

Չեն կարող ընտրվել և ընտրել այն անձնավորությունները, վորոնք ձայնի իրավունքից զրկված են դատով, օրենքով սահմանված ժամանակի ընթացքում։

Խորհրդի մեջ ընտրված անդամն իր աշխատանքի մասին ընտրողների առաջ հաշիվ է տալիս։ Յեթե ընտրողներն անբավական են իրենց պատգամավորից, նրանք կարող են նրան հետ կանչել և նրա տեղը մի ուրիշին ուղարկել։

> ԽՍՀՄ միակ պետությունն է աշխարհում, վորտեղ հողը յեվ ֆաբրիկը պատկանում են աշխատավորներին։

---

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչումն է խորհուրդների ույժը։
2. Ի՞նչպիսի հիմնական խնդիրներ են կանգնած խորհուրդների առաջ։
4. Ո՞վ է ընտրում և ո՞վ կարող է ընտրվել խորհուրդների մեջ։

## ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Քաղաքում իշխանության ամենաբարձր օրգանը հանդիսանում է քաղաքային խորհուրդը (քաղխորհուրդ)։



Ինքը, քաղաքային պրոլետարիատը—բանվորներն ու բանվորուհիները—կառավարում և ղեկավարում են քաղաքի կյանքը խորհրդի միջոցով։ Քաղխորհրդի մեջ բանվորների ներկայացուցիչներն ամենից շատն են։ Քաղխորհուրդները միացնում են ամենալավ, ամենաառաջավոր և գիտակից բանվորներին։

Քաղաքային խորհուրդների նպատակներն են հանդիսանում քաղաքի տնտեսության վերակառուցումը և աշխատավորների կյանքի ու կենցաղի բարելավումը։ Քաղխորհուրդը հոգում է արդյունաբերության աշխատանքի բարելավման, բանվորների աշխատանքի արտադրության բարձրացման, մթերքների ինքնարժեքի իջեցման մասին։

Քաղաքի ազգաբնակչությունը կյանքի համար մի ամբողջ շարք պայմանների կարիք ունի։ Հարկավոր են բնակարաններ, տներ. հարկավոր է սնունդ—կոոպերատիվներ, հասարակական սեղանատներ, հարկավոր են դպրոցներ, մսուրներ, մանկապարտեզներ, հարկավոր են բաղնիքներ, ջրմուղ, էլեկտրականություն, էլեքտրաքարշ։

Քաղխորհուրդը կառավարում է ամբողջ քաղաքի տնտեսությունը, մաքրապահությունը, առողջության պահպանությունը, ժողովրդական լուսավորությունը, հրդեհային գործը։

---

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ի՞նչ եք արել դուք քաղխորհրդի վարչման հետ կապված քաղաքի ծառատունկի վերաբերմամբ։ Խորհրդակցության դրեք այս հարցը դասարանական ժողովում և աշխատանքի պլան կազմեցեք։

2. Ինչպե՞ս օգնեցիք դուք քաղխորհուրդին փողոցներում անկանոն շարժման դեմ տարված կռվում։

Գիտե՞ք արդյոք փողոցում շարժման կանոնները։ Ծանոթացեք նրանց, կատարեցեք խիստ կերպով և հետևեցեք, վորպեսզի ուրիշներն էլ կատարեն։

> Խորհուրդները ղեկավարում են մեր յերկրում մեծ շինարարությունը։

## ԻՆՉՊԻՍԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Գյուղխորհուրդների միջոցով բանվոր դասակարգը ղեկավարում է գյուղական տնտեսության վերակառուցումը։



Գյուղում կուլակը կատաղի դիմադրություն է ցույց տալիս կոլտնտեսային շարժման։ Նա ամեն կերպ աշխատում է խանգարել մեզ կոլտնտեսությունններ կազմակերպելու։ Կուլակն ամեն միջոց գործ է դնում, վորպեսզի արգելի կոլտն-

տեսային շինարարությունը։ Նա դիմում է ակտիվ կոլտնտեսականների սպանության, կոլտնտեսային գույքի հրդեհման, մեքենաների, տրակտորների փչացման։

Գյուղխորհուրդները պայքար են մղում կուլակի դեմ։ Նրանք հետևում են, վորպեսզի կուլակը կամ նրա արբանյակները խորհուրդի մեջ չընկնեն, աշխատում են գյուղացիությունը խորհրդի և կոմունիստական կուսակցության շուրջը համախմբել՝ կուլակի դեմ միասին կռիվ մղելու համար։

Գյուղխորհուրդները չքավոր և միջակ գյուղացիությանը կոլտնտեսությունների մեջ են ներգրավում, կարգի յեն գնում կոլեկտիվ տնտեսությունը, հոգ են տանում բերքի բարձրացման մասին։

Բացի այս խնդրից, գյուղխորհուրդները նաև ուրիշ գործեր էլ ունեն։ Գյուղխորհուրդը հավաքում է գյուղտնտհարկը, կազմակերպում է հացամթերումները և անասնամթերումները։ Նա յե հոգում անասնաբուծության բարձրացման մասին։ Գյուղխորհրդի պարտականությունների վրա յե ընկած գյուղի բարեկարգության հոգսը. ճանապարհների, ամբարտակների նորոգումը, կամուրջների, ջրաղացների կառուցումը։

Գյուղխորհուրդը հոգ է տանում գյուղական ազգաբնակության կուլտուրական կարիքների և առողջության մասին։ Դպրոցների, հիվանդանոցների, խրճիթ-ընթերցարանների կանոնավոր պահպանելը—այս բոլորը ընկնում է գյուղխորհրդների պարտականության վրա։

> Կոլտնտեսականը խորհրդային իշխանության հենցուկն է գյուղում։

---

ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Գրեցեք շարադրություն, թե ինչպես է աշխատում ձեր գյուղխորհուրդը։

## ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղխորհուրդը և քաղխորհուրդը իր անդամներից ներկայացուցիչներ են ընտրում խորհրդների ռայոնական համագումարը, վորն արդեն վճռում է վոչ թե մի քաղաքի կամ գյուղի, այլ ամբողջ ռայոնի գործերը։

Ռայոնում ամենաբարձր իշխանությունը հանդիսանում է խորհրդների ռայոնական համագումարը, նահանգում—նահանգականը, հանրապետության մեջ—խորհրդների հանրապետական համագումարը։

ԽՍՀՄ-ում բարձրագույն իշխանությունը պատկանում է խորհրդների համամիութենական համագումարին։ Խորհրդների համագումարները տեղի յեն ունենում տարին մեկ անգամ։

Համագումարների միջև յեղած ժամանակամիջոցում բարձրագույն իշխանությունը հանդիսանում են Գործադիր Կոմիտեները, ընտրված համագումարների կողմից։ Ռայոնում—ռայոնական Գործադիր Կոմիտեն, հանրապետության մեջ—հանրապետականը, ԽՍՀՄ-ում—Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։

Գործադիր կոմիտեներն իրենց միջից ընտրում են նախագահություն։ Գործադիր կոմիտեների նիստի միջև յեղած ժամանակամիջոցում, բարձրագույն իշխանությունը հանդիսանում են նրանց կողմից ընտրված նախագահությունները։

Նախագահությունը իր աշխատանքի մասին հաշիվ է տալիս է Գործադիր Կոմիտեյին, Գործադիր Կոմիտեն—համագումարի առաջ։

ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն յերկրի կառավարության մշտական աշխատանքների համար ընտրում է Ժողովրդական Կոմիսարների խորհուրդ (Ժողկոմխորհ)։



## ԴԵՊԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հեռու ձգվում են յերկաթուղու ռելսերը։ Նրանց վրա գլորվում են շոգեկառքերի և վագոնների անիվները։ Ռայոններից դեպի յերկրամասերը գնում են պատգամավորները։ Բոլոր ռայոնական կենտրոններից ժամանում են յերկրային կենտրոնը։

Ահա և կայանը. շոգեկառքը սկսում է սուլել, պատգամավորները մտնում են վագոններին և շոգեկառքը թռչում է դեպի կենտրոն։




Խորհրդների յերկրային համագումարը լինելու յե թատրոնում։ Վերջինս լիքն է ժողովրդով։ Թատրոնը զարդարված է դրոշակներով, կանգնած է զինվորական պահակը մաքուր, կոկիկ հագնված։ Իմացեք, պատգամավորներ, վոր Կարմիր բանակը կազմ ու պատրաստ է, վոր ամեն րոպե նա կարող է դիմադրել թշնամուն խորհրդների պաշտպանության համար։

Իսկ այնտեղ, ներսում, զեկուցվում է Գործադիր Կոմիտեյի աշխատանքի մասին, խոսվում է, թե ինչպես խորհրդային կառավարությունը կռվում է տնտեսական դրությունը բարելավելու համար, թե ինչպես նա իր ուժերն է լարում նոր գործարաններ և նոր յերկաթուղիներ կառուցելու համար։ Ընտրվում են ներկայացուցիչներ համամիութենական խորհրդների համագումարին մասնակցելու։

Օրենբուրգից և Աստրախանից, Թիֆլիսից և Քութայիսից, Ստալինգրադից և Մինսկից, Նիժնի-Նովգորոդից և Վյատկայից, Վոլոգդայից և Արխանգելսկից յերկաթուղիների ցանցը ձգվում է դեպի քարտեզի վրա նկարված ամենամեծ կենտրոնը—Մոսկվան։

Գնում են պատգամավորները՝ ամեն ցեղի, տարբեր լեզուների, վորը մեծ մուշտակ հագին, վորը բլուզ, վորը գույնզգույն խալաթ, վորը մեծ գտակ և վորն էլ գլխարկ դրած, գնում են Մոսկվա, պրոլետարիատի մայրաքաղաքը՝ խորհուրդների համագումարին մասնակցելու։

Գյուղից ռայոն, ռայոնից մարզ, յերկրամաս, այնտեղից էլ մայրաքաղաք։ Դեպի Մոսկվա, Մոսկվա յեն տանում ճանապարհների պողպատյա ռելսերը։ Այնտեղ, վորտեղ բանվորներից և գյուղացիներից ընտրվածները կառավարում են մեր մեծ Միության գործերը, կառավարում և միևնույն ժամանակ նայում սահմաններին։ Արդյոք մեր թշնամի կապիտալիստները վորոգայթներ չեն լարում մեր մեծ Միության հանդեպ։

> Պայքարեցե՛ք բոլոր յերկրներում խորհրդային իշխանություն հաստատելու համար։

Մենք քաջաբար
Արյունների սուլոցի տակ
Պաշտպանենք խորհուրդների երկիրը
Պաշտպանենք մենք մեր գործը։

## ՄԻԽԱՅԻԼ ԻՎԱՆՈՎԻՉ ԿԱԼԻՆԻՆ

*(Նրա ինքնակենսագրությունից)*

### ԻՄ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

*Ես ծնվել եմ 1875 թ. նոյեմբերի 7-ին Տվերյան նահանգի, Յակովլևսկայա գավառի, Կարչևսկի գավառակի Վերին Տրոիցա գյուղում։ Շատ լավ եմ հիշում այն օրը, երբ հայրս վերադարձավ զինվորական ծառայությունից։ Մի բան, որ աչքի էր ընկնում և որը խորը տպավորվեց իմ ուղեղում, այդ նրա խոզանակի նման խուզած մազերն էին։ Զինվորությունից վերադառնալուն պես մեր գյուղական տունը բաժանվեց, մեզ բաժին ընկավ մի ձի, մի կով, ոչխար և ձիասարքը։ Տունը և մյուս շինությունները բաժին ընկան մյուս եղբորը։*

*Հայրս գնեց մի հին խրճիթ 36 ռուբլու, որտեղ ապրեցինք 11 տարի։*

*6 տարեկան հասակից ինձ վիճակվեց խնամել իմ փոքր եղբայրներին և քույրերին։ Հիշում եմ, երբ խաղի ժամանակ հսկում էի իմ առաջին քրոջս՝ հաճախ նրան կորցնում էի—գնում էինք բանջարանոց, որտեղ նա մարգերի մի կողմում կուչ գալիս և քնում էր։ Կանաչը բարձր էր լինում. պատահում էր—որոնում ես, որոնում ամենուրեք և չես կարողանում գտնել։ Անտառ գնալը, կամ դաշտ դուրս գալը ինձ համար մեծ բավականություն էր, որովհետև տնային աշխատանքը ամեն ինչ կլանում էր։*

*Տասը տարեկան էի, երբ առաջին անգամ սկսեցի սովորել։ Սովորեցնողը մի ծեր զինվորական էր, որը սովորեցնում էր եկեղեցական այբուբենը։*

*Մեր տղերքը շատ էին և բոլորս էլ ձայնով կարդում էինք, վանկ-վանկ, իրար հետևից շարելով։ Երեք ամիս այսպես բերանացի սովորեցի, մինչև կարողացա շարելով կարդալ։*

*1885 թվին ինձ տվին դպրոց. վերջինս մեր գյուղից գտնվում էր 12 վերստի վրա։ Սովորում էի լավ և շատ շուտով առաջ գնացի։ 2 տարվա ընթացքում մեր դպրոցի գրադարանի բոլոր գրքերը արդեն կարդացել էի։ Հայրս շատ էր աշխատում, որ ես սովորեմ։ Նա ինքը գրել չէր իմանում, բայց զինվորության ժամանակ մի քիչ սովորել էր կարդալ և շատ կարդում էր։*

*Երկու տարվա մեջ ես ավարտեցի գավառական դպրոցը. դասարանի մեջ առաջին աշակերտն էի և դրայի հարուստ կալվածատերերը վերցրին ինձ իրանց մոտ որպես «աշակերտ»։ Նրանց մոտ մնացի 4 տարի՝ 12-ից մինչև 16 տարեկան հասակս։*

*1889 թ. աշնանը ես նրանց հետ միասին անցա Պետերբուրգ։ Առաջին օրը քաղաքում, երբ կառքով գնում էինք, ես մարդկանց հանդիպելիս միշտ գլխարկս էի հանում՝ ինչպես սովորեցրել էին ինձ դպրոցում։*

*Ինձ մոտ նստող ավագ սպասավոր Իվան Նիկիֆորովիչը ասեց ինձ, որ ամենի դիմաց գլխարկ հանել չարժի, որովհետև նրանց թիվը խիստ շատ է։ Հետո սկսեցի ծառայել։ Ինձ ուղարկում էին կաթի, հացի և այդպիսով ծանոթացա Պետերբուրգի հետ։ Իմիջի այլոց երբ գյուղից դուրս էի գալիս, ինքս ինձ մտածում էի՝ «Մեկ հասնեյի Պետերբուրգ, էլ բան հարկավոր չէր. ճամբաս դիմացս բաց կլիներ»։ Եվ իսկապես, հասնելով Պետերբուրգ, ես ազատությամբ հարձակվեցի թերթերի վրա։ Մոտավորապես 1895 թ. ես մտա աշխատելու Պուտիլովի գործարանում։*



*Պուտիլովի գործարանում Միխայիլ Իվանովիչը սկսում է մասնակցել հեղափոխական շարժմանը։*

*Շուտով ցարական ոստիկանությունը ձերբակալում է, բանտարկում, իսկ հետո աքսորում նրան դեպի Կովկաս։ Հարավային Կովկասում նա չի դադարում իր հեղափոխական աշխատանքներին մասնակցելուց։ Թիֆլիսում Միխայիլ Իվանովիչը ղեկավարում է բանվորների գործադուլը։ Այս առթիվ նա նորից է ձերբակալվում և բանտարկվում։*

*Համաշխարհային պատերազմի ժամանակ Միխայիլ Իվանովիչը աշխատում էր Պետերբուրգում գործարանի մեջ և բացատրում էր բանվորներին կապիտալիստների կողոպտիչ նպատակների մասին։ Նա կազմակերպում է բանվորների մեջ խմբեր և հարաբերությունների մեջ մտնում բոլշևիկների Կենտրոնական Կոմիտեի հետ։*



*1919 թվին մարտի մեջ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ Միխայիլ Իվանովիչը ընտրվում է Համառուսական Կենտգործկոմի նախագահ։*

*1923 թվին Կալինին ընտրվում է Միության «ԿԳԿ»-ի նախագահ և այդ ժամանակվանից սկսած նա կանգնած է ամբողջ Միության խորհրդային հանրապետությունների գլուխը։*

*Ինչպես բանվորների, նույնպես և գյուղացիների հետ նա պահպանում է կենդանի կապ։ Նրան իր ուղեկցության ժամանակ Խորհրդային Միութան մեջ զանազան հարցերով ու խնդիրներով դիմում են բանվորներն ու գյուղացիները։ Հազարավոր մարդիկ գնում են նրա մոտ, դեպի Մոսկվա։*

*Ընկեր Կալինինը ամենին էլ ընդունում, լսում է և ընդառաջ գնում նրանց օգնելու գործում։ Թե բանվորների և թե գյուղացիների շահերը համահավասար մոտիկ են նրա սրտին։*

### Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

*Մոլոտով (Սկրյաբին) Վյաչեսլավ Միխայլովիչը ներկայումս Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահն է։*

*Մոլոտովը, Լենինի ղեկավարությամբ, անցել է հեղափոխական մեծ ճանապարհը։ Ծնվել է նա 1890 թվին։ Կուսակցության մեջ մտել է 1906 թվին։ Սովորել է Կազանում, որտեղ և սկսել է աշխատել բոլշևիկների ընդհատակյա կազմակերպություններում։*

*Ցարական կառավարությունը նրա հեղափոխական գործունեության համար քանի-քանի անգամ ձերբակալել է և աքսորել։ Բայց և այնպես, թե բանտում և թե աքսորավայրում ընկեր Մոլոտովը սովորել է, գիտության պաշար հավաքել, որպեսզի բանտից դուրս գալուց հետո ավելի մեծ ուժով շարունակի իր հեղափոխական պայքարն ընդդեմ ցարական կառավարության և բուրժուազիայի։*

Մինչև հեղափոխությունն, ընկեր Մոլոտովը աշխատել է Պետրոգրադում, յեղել է բոլշևիկյան «Պրավդա» թերթի քարտուղար: Թերթի նպատակն եր կոչ անել բանվորությանը կռվել ցարական իշխանության և բուժուազիայի դեմ: Հեղափոխության այդ գործունեյության համար՝ նա նորից ե ձերբակալվում և ուղարկվում Սիբիր:

1916 թվին նա փախավ Սիբիրից Պետրոգրադ, վորտեղ վոստիկանությունից ծածուկ նորից սկսեց իր հեղափոխական գործունեյությունը:



Վ. Մ. Մոլոտով

1916 թվի վերջերին ընկ. Մոլոտովը ընտրվեց Կենտկոմի բյուրոյի մեջ: Իսկ փետրվարյան հեղափոխությունից հետո նա աշխատում եր Պետրոգրադի բոլշևիկյան կոմիտեյի մեջ, միևնույն ժամանակ լինելով Պետրոգրադի Գործադիր Կոմիտեյի անդամ:

Հոկտեմբերյան որերում ընկ. Մոլոտովը Ռազմա-հեղափոխական կոմիտեյի անդամ եր Պետրոգրադում, իսկ 1921 թվից նա ընտրվում ե կուսակցության Կենտկոմի անդամ:

1930 թվի դեկտեմբերի մեջ ընկ. Մոլոտովը ընտրվում ե Ժող. Կոմիսարների Նախագահ:

> Մենք ուզում ենք կամավոր միություն, վորով ներճում-գործ չդներ մի ազգը մյուսի վրա, այնպիսի մի միություն, վորը հիմնված լիներ կատարյալ վստահության վրա, յեղբայրական պարզ գիտակցության, փոխադարձ կատարյալ համաձայնության վրա:
>
> **ԼԵՆԻՆ**

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ Ե

1923 թվի հուլիսի 6-ին բոլոր խորհրդային մանր ու մեծ հանրապետությունները միացան և կազմեցին Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների մեկ Միություն: Այդ որը բոլոր ժողովրդների կողմից, վորոնք ապրում են Միության մեջ, տոնվում ե:

Խորհրդային Հանրապետությունների Միությունը միակն ե, վորտեղ ճնշվող ազգություն չկա: Մեզանում ամեն ազգություն իրավունք ունի ինքնորոշման: Ցարական կառավարության ժամանակ Ռուսաստանի ազգությունները վոչ միայն իրավունք չունեյին ինքնորոշման, այլ և իրավունք չունեյին իրենց լեզվով սովորելու, չունեյին իրենց գրքերն ու թերթերը: Ցարական իշխանությունը ուրիշ ազգությունների վրա նայում եր վորպես իրենից ցածր և ամեն կերպ արգելք եր հանդիսանում նրանց զարգացմանը:

Հիմա ուրիշ բան ե. յուրաքանչյուր ազգություն, վորը մտնում ե մեր Միության մեջ, իրավունք ունի օգտվել մայրենի լեզվով, ունի իր դպրոցները, գրքերը և թերթերը:

Խոշոր ազգությունները, վոր ապրում են մեր Միության մեջ, կազմում են ինքնուրույն հանրապետություններ: Այդպիսիների թիվը 7 ե,—Ռուսական (ՌԽՖՍՀ), Ուկրայնական (ՈՒԽՍՀ), Բելոռուսական (ԲԽՍՀ), Անդրկովկասյան (ԱԽՖՍՀ), Թուրքմենական, Ուզբեկյան և Տաջիկյան: Դրանցից յուրաքանչյուրը իր խորհուրդների համագումար հրավիրելու իրավունք ունի, ունի իր Կենտկոմը, իր Ժողկոմխորհը:

Այս հանրապետությունները կազմում են Միության մեջ ապրող ազգությունների յեղբայրական հավասարազոր Միություն:



Փոքրազգությունների հասակավորները սովորում են մայրենի լեզվով

Այս հանրապետությունների մեջ ապրող մանր ազգություններն այսպիսով կազմել են ինքնուրույն հանրապետություններ և ռայոններ: Այսպես, օրինակ, Ռուսական հանրապետության մեջ կան հետևյալները.—Թաթարական, Բաշկիր-յան, Կազակստանի, Յակուտական, Բուրյաթ-Մոնղոլական և ուրիշները. այլև ինքնուրույն շրջաններ՝ Ոյրատական, Զիրյանական, Մորիի և այլն: Անա ինչու կապիտալիստական յերկրների ճնշվող ժողովրդները ձգտում են դեպի Խորհրդային Միությունը: Նրանք անհամբերությամբ սպասում են այն ժամանակին, յերբ ընկնելու յե կապիտալիստական իշխանությունը և բոլոր յերկրների ազգությունները պիտի կազմեն մի ընդհանուր, բոլոր ժողովրդների յեղբայրական Միություն:

> Ցեղբայրական փոխադարձ աջակցության հիմունք-
> ների վրա աճում, զարգանում յեվ ամրապնդվում ե Խոր-
> հրդային Հանրապետությունների Մեծ Միությունը:

## ՉԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Բացի մեր Միությունից, խորհուրդներ գոյություն ունեն և Չինաստանում: Չինական Կարմիր բանակը հիմք դրեց խորհրդային իշխանության չինական այն մասի վրա, վոր բռնել ե Չինաստանի կենտրոնական և հարավային մասը: Խորհուրդները գլխավորապես հաստատված են Ցզյանսիի և Յունանի նահանգներում: Այս վայրերում բոլոր գործարանները անցած են բանվորների ձեռքը, իսկ հողը բաժանված ե գյուղացիների մեջ:

Աշխատավոր դասակարգի դրությունն այս տեղերում ավելի լավ ե, քան ուրիշ տեղերում: Այստեղ չկա քաղցածություն և ճնշում վոչ բանվորների և վոչ էլ գյուղացիների մեջ:

Խորհուրդները բաց են անում դպրոցները, մինչդեռ առաջ դրանց մասին մտածող նույնիսկ չկար և ժողովրդի մեծամասնությունը անգրագետ էր: Այդ ռայոններում հաստատված են պիոներական կազմակերպություններ, վորոնք օգնում են իրենց մեծերին սպիտակների դեմ պատերազմելու գործում:

Սպիտակ Չինաստանում կանանց դրությունը խիստ ծանր է. այնտեղ կանայք վոչ մի իրավունքով չեն օգտվում և այնտեղ նրանց ծախում են, վորպես կենդանու: Նրանց աշխատավարձը ավելի ցածր է, քան այր մարդոցը: Աշխատանքը տևում է 16—17 ժամ: Խորհրդային Չինաստանում խստիվ արգելված է կանանց ծախելը և վերջիններս իրենց իրավունքներով հավասարեցրած են այր մարդկանց:

Մի քանի ամիս առաջ Ցզյանսիյում կայացավ Համաչինական խորհրդների առաջին համագումարը: Համագումարը կոչ ուղղեց բոլոր աշխատավորներին, վորով խնդրում էր օգնություն սպիտակ գեներալների դեմ կռվելու գործում:

---

### ՀԱՐՑԵՐ

1. Վո՞րն է գերագույն իշխանությունը գյուղում, ռայոնում, նահանգում, հանրապետության մեջ և ամբողջ յերկրում:
2. Ո՞վ էր առաջին Ժողովրդական Կոմիսարների նախագահը և ո՞վ է հիմա:
3. Ի՞նչպես էյին ապրում նախկին ցարական կառավարության ժամանակ ազգային փոքրամասնությունները:
4. Ի՞նչպես են ապրում ներկայումս նրանք և ինչպես Խորհրդային կառավարությունը բարելավում է նրանց տնտեսական դրությունը և բարձրացնում նրանց կուլտուրական մակարդակը:
5. Մեր Միությունից բացի՝ այլես վո՞րտեղ գոյություն ունի Խորհրդային իշխանություն:
6. Ի՞նչպես է կռվում չինական պրոլետարիատը խորհրդային իշխանության համար:



## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



### ՀԱՍՆԵՆՔ ՅԵՎ ԱՆՑՆԵՆՔ

Բանվոր դասակարգը իր ձեռքը վերցրեց իշխանությունը, վորպեսզի կառուցե սոցիալիզմ: Սոցյալիստական յերկրում չեն լինելու տերեր և ծառաներ, հարուստներ և աղքատներ: Մարդկությունը դասակարգերի չի բաժանվելու:

Հասարակությունը պիտի կազմված լինի միայն աշխատավորներից:




Սոցիալիզմ կառուցել մեր յերկրում, այդ նշանակում է—վերաշինել մեր տնտեսությունը:

Մենք պետք է հասնենք և անցնենք առաջնակարգ կապիտալիստական յերկրներից, այն է՝ Ամերիկայից, Գերմանիայից, Անգլիայից: Պետք է այնպես անենք, վոր մենք նրանցից կախում ամենևին չունենանք: Այս իրականացնելու համար, կուսակցությունն առաջադրեց յերկրի ինդուստրացման խնդիրը:

Մեր յերկրում ամենից առաջ պետք է շինել այնպիսի գործարաններ, վորոնք մեզ պետք է տան մեքենաներ. սարքոցներ, շոգեկառքեր, տրակտորներ,

կոմբայններ, ավտոմոբիլներ։ Բացի դրանից, հարկավոր ե, վորպեսզի մեքենաներ շինելու համար ունենանք անհրաժեշտ մետաղ։ Պետք են նոր ածխահանքեր, վորպեսզի գործարանների համար ածուխ ունենանք։ Մեզ պետք են ելեկտրական կայաններ, վորպեսզի գործարանները ստանան ելեկտրական եներգիա—ույժ։




Մեր գյուղական տնտեսությունն ել հետ չպիտի մնա արդյունաբերությունից։ Նա պիտի հում նյութ մատակարարի մեր գործարանների համար։ Նա պետք ե քաղաքներին հաց տա։ Գյուղական մանր տնտեսությունները իրենց հետամնաց տեխնիկայով ինարկե այդ բանը չեյին կարող անել։ Դրա համար ել կուսակցությունը վորոշեց միացնել բոլոր մանր գյուղական տնտեսությունները, ստեղծել կոլտնտեսություններ և նրանց տալ ամենալավ գյուղատնտեսական մեքենաները։

Սոցիալիզմ առանց դասակարգային կռվի չի կառուցվի։ Սոցիալիզմի հակառակ դուրս յեկան կուլակները, առևտրականները և քահանաները։ Կուսակցությունը անխնա կռիվ ե մղում թե առաջինի և թե մյուսների հետ։ Մեր յերկրի տնտեսությունը առաջ ե տարվում վորոշ պլանով։ 1929 թվին հաստատվեց մեր տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը։ Հնգամյակը մեր գյուղատնտեսական - արդյունաբերական յերկիրը դարձնում ե արդյունաբերական - գյուղատնտեսական։




Յերեք տարվա պայքարը հնգամյա պլանը իրականացնելու համար մեր յերկիրը անճանաչելի դարձրեց։ Մեր յերկիրը դարձավ ամբողջ յերկրագնդի վրա առաջինը՝ իր խոշոր գյուղատնտեսությամբ։

Ստեղծվեց 5383 խորհտնտեսություն և 218 հազար կոլտնտեսություն։

1931 թվին մեր յերկրի դաշտերում արդեն աշխատում եյին մոտ 140 հազար տրակտորներ։

Տրակտորը վոչ միայն հերկեց մեր դաշտերը, այլ և արմատապես փոխեց մեր գյուղի կերպարանքը։

Արդյունաբերության շատ ճյուղեր հնգամյա պլանը կատարեցին 3 և $2^1/_2$ տարվա ընթացքում։

1930 թ. նավթը մենք հանեցինք այնքան, վորքան ըստ պլանի պետք եր հանել հնգամյակի վերջին տարում։




Հնգամյակով նախատեսնված տրակտորները և ավտոմոբիլները մենք արտադրեցինք յերեք տարում։

Կուսակցությունը բանվորների և գյուղացիների ամբողջ ույժը ուղղել եր դեպի հնգամյա պլանի կատարումը։

Բանվորները և ամբողջ աշխատավորությունը իրար հետ սոցմրցման մեջ մտան։

Կոմունիստական կուսակցության անդամները հանդիսացան առաջնակարգ հերոսներ հնգամյա պլանը իրականացնելու գործում։ Նրանք հարվածային աշխատանքներ են տանում գործարաններում, ածխահանքերում, կոլտնտեսություններում և նոր շինությունների վրա։

Ամենալավ բանվոր հարվածայինները մտնում են կուսակցության շարքերը։ Բանվորությունն ու գյուղացիությունը հնգամյա պլանը կատարում են վոչ թե 5, այլ 4 տարում։ Առաջին հնգամյա պլանը՝ ներկա տարում պետք ե ավարտվի։




XVII կուսկոնֆերանսը, ինկատի ունենալով առաջին հնգամյակի հաջողությունները, ճանաչեց, թե ինչպես պետք ե կատարել յերկրորդ հնգամյա պլանը։ Յերկրորդ հնգամյակի վերջում մեր մեքենաների քանակը 3 անգամ ավելի պետք ե լինի, քան մենք այս տարի յենք շինել։ $2^1/_2$ անգամ ավելի ածուխ պետք ե արտադրել։ Շատ ավելի մահուդ, սապոն, շաքար և այլ նյութեր պետք ե տանք յերկրորդ հնգամյակում։

XVII կուսկոնֆերանսը իր առաջ խնդիր ե դնում—յերկրորդ հնգամյակում 2—3 անգամ ավելի լավացնել բանվորների, կոլտնտեսականների և մյուս աշխատավորների սնունդը, ավելացնել վառնամաննների և մանուֆակտուրայի մատակարարումը, ուժեղացնել բնակարանային շինարարությունը։

Թե առաջին և թե յերկրորդ հնգամյակների հաջող կատարմանը դիմադրում են բանվորության անհաշտ թշնամիները—կուլակը, վնասարարները և

բոլոր յերկրների կապիտալիստները։ Բայց կուսակցությունը և բանվոր դասակարգը անհաշտ կռիվ են մղում դասակարգային թշնամու դեմ և ամեն դժվարության հաղթահարում են։ Կուսակցությունը և բանվորությունը արագ տեմպով մեր յերկիրը տանում են դեպի սոցիալիզմը։ Յերկրորդ հնգամյակի վերջի տարում չպետք ե լինեն վոչ կուլակներ և վոչ ել չքավորներ։ Դասակարգ գոյություն չպիտի ունենա։

Ամբողջ աշխատավորությունը պետք ե գիտակից, սոցիալիստական աշխատողներ լինեն։

Մենք կկառուցենք սոցիալիզմը։

## ՀՆԳԱՄՅԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ

Սոցիալիստական արդյունաբերության շարքերն են մտնում նոր հսկաներ։

Խորհուրդների յերկիրը հասնում ե տեխնիկայով առաջին տեղը բռնող կապիտալիստական յերկրներին։

## Դ Գ Ե Ս

Դնեպրոստրոյն ել չկա. կա Դգեսը.—Դնեպրի հիդրո-ելեկտրական կայանը։ Դգեսը յերկրի վրա ամենամեծն ե, նա 10 անգամ ուժեղ ե, քան Լենինի անվան Վոլխովի կայանը։ Դնեպրը ահագին ջուր ե տանում։ Այս հսկայական ջուրը ստիպեցին թափել ահագին բարձրությունից, վորով նա տալիս ե մեծ ուժ և վորը ոգտագործում են ելեկտրական եներգիա ստանալու համար։



766 մետրանոց ահագին պատնեշը հենված ե 49 ճաղերի վրա։ Սրանց միջև տարածությունը փակված ե վահաններով։ Դրված ե 9 տուրբին։ Վահանները բարձրանալով, բաց են թողնում ջուրը։ Պատնեշի շնորհիվ նավերն սկսեցին ազատ յերթևեկել Դնեպրի վրա։ Նրանց համար 3 անցք ե շինված։ Դգես-ի շրջակայքում լայն տարածվել են ելեկտրալարերը։ Կապվել ե Դոնբասի հետ։ Նա ելեկտրականություն ե տալիս շրջակա 60 գործարաններին։

Պրոլետարները, բոլշևիկները, կոմյերիտականներն ստեղծեցին աշխարհի ամենամեծ ելեկտրակայանը։



## ՄԱԳՆԻՏՈԳՈՐՍԿԻ ԳԻԳԱՆՏԸ

Հարյուրավոր տարիներ Մագնիտնայա լեռան շուրջը մերկ անապատային տափաստան եր։ Այստեղ յերջանիկ եյին զգում իրենց տափաստանային գազաններն ու գիշատիչ թռչունները։

Այստեղ ապրում եյին պոնտական մկներ և տափաստանային արծիվներ։ Խաղաղ, դատարկ եր տափաստանը։

Իսկ այժմ ամեն ինչ փոխվել ե։ Սկսվել ե հսկայական շինարարություն։

Տափաստանը լցվել ե մարդկանցով։

Թխթխկացնում են մուրճերը, ընդընդացնում բահերը։

Այնտեղ, ուր յերկու տարի առաջ դատարկ տեղ եր, այժմ կառուցված ե վոչ միայն ԽՍՀՄ-ում, այլ և ամբողջ Յեվրոպայում չեղած խոշորագույն մետաղագործարանը։ Մագնիտոգորսկի գիգանտը միանգամից դրեց մեր յերկիրը ամենազարգացած ինդուստրիալ կապիտալիստական յերկրների շարքում։ Մագնիտոգորսկի գործարանը 1932 թվին աշխատանքի անցնելուց հետո, տալու յե 4 միլիոն տոնն չուգուն։

Բացի չուգունից և պողպատից, գործարանը տարեկան տալու յե մոտ $3^1/_2$ միլիոն տոնն ռելսեր, պողպատե ձողեր և տեսակավոր մետաղ։

Այդ համաշխարհային գիգանտի դոմենյան հնոցները կառուցվում են համաձայն նորագույն տեխնիկայի և ունեն հսկայական արտադրողականություն—որեկան 1000 տոնն մետաղ։

## ԹՈՒՐՔՍԻԲ

Մեզ մոտ, շատ տեղերում չեն բավականանում յերկաթուղիները, իսկ դրա պատճառով առանց ոգուտ տալու մնում են հողի մեջ յերկաթի, ածխի, պարարտանյութերի զանգվածները, փտում են անտառները։ Թուրքեստանում վոռոգվող արտերի միայն քառորդ մասն ե ցանված բամբակով։ Իսկ բամբակը մեզ պետք ե մեր Լենինգրադի, Մոսկվայի, Իվանովո—Վոզնեսենսկի գործարանների համար։




Մենք ներմուծում ենք բամբակը Ամերիկայից, Յեգիպտոսից և դրա վրա ծախսում ենք միլիոնավոր ռուբլիներ։ Ինչու Թուրքեստանում ամեն տեղ բամբակ չեն ցանում։ Վորովհետև այնտեղ ստիպված են լինում հացահատիկ ցանել։ Յեթե մենք կարողանայինք հացով բավարարել Թուրքեստանը, նա կզբաղվեր իր անմիջական գործով, և մենք կունենայինք բամբակ։ Իսկ հաց ինչքան ուզեք կա նրան մոտիկ՝ Սիբիրում։ Յեվ միայն յերկաթուղի չլինելու պատճառով ե վոր հացը Սիբիրից չեն տանում Թուրքեստան։

Ահա ինչ ե նշանակում ճանապարհը։ Ճանապարհ չկա, և դա անդրադառնում ե և Սիբիրում, և Թուրքեստանում, և Մոսկվայում, և Ամերիկայում և Յեգիպտոսում։

Բայց այժմ այդ ճանապարհը կառուցված է։ Ընդամենը յերեք տարի առաջ Զեկպարյան լեռների գագաթների վրայով թռչում եյին ոդաչուները լուսանկարչական ապարատներով, լուսանկարում եյին ապառաժների ծովը, գծում եյին ապագա յերկաթուղու ճանապարհը։ Պետք եր անցկացնել 1442 կմ ճանապարհ՝ Սիբիրը Թուրքեստանի հետ կապելու համար։ Աշխատանքը սկսեցին միանգամայն յերկու կողմից։ Վոլորվելով տափաստանների և անապատների միջով, սողալով լեռնաշղթաների վրայով, իրար դիմաց տարածվեցին նույն յերկաթուղու յերկու կեսերը։ Յեվ 1930 թվի ապրիլի 28-ին, տասնյոթ ամիս ժամանակից առաջ, յերկու կեսերը միանալով՝ կազմեցին Թուրք—Սիբիրի հսկա ճանապարհը։

Դա դեռ նոր ճանապարհներից մեկն է։ Մեզ պետք են և ուրիշները։ Պետք է միացնել Մագնիտի լեռը Կուզբասի հետ, չէ վոր հակառակ դեպքում Կուզնեցկի ածուխը և Մագնիտոգորսկի հանքը չեյին կարող իրար հանդիպել և այդ հանքից մենք չուգուն չեյինք ստանա։

Պետք է ճանապարհներ գցել դեպի հյուսիսային խիտ անտառները, բացել Հյուսիսի և Սիբիրի հարստությունները։ Պետք է յելք տալ Անդրվոլգյան հացին և Ղազախստանի մսին։

Իսկ Վյատկայի մոտի ֆոսֆորաքարը։ Չէ վոր յեթե մենք չգնանք ֆոսֆորաքարի մոտ, նա ինքը մեզ մոտ չի գա, և մեր խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները կմնային առանց պարարտանյութերի։

25 հազար կիլոմետր յերկրորդ հնգամյակի վերջին,—ահա ինչքան նոր յերկաթուղիներ են մեզ պետք։ Յեվ ամեն մի նոր յերկաթուղի-դա յերկաթե բանալի յե, վորը բացում է բնության փակ դռները։

> «Հնգամյակի վերջին ԽՍՀՄ-ի կոլեկտիվացումը հիմնականում պետք է ավարտվի»։
>
> ՍՏԱԼԻՆ

## ԻՆՉՈ՞Ւ ՅԵ ՊԵՏՔ ՏՐԱԿՏՈՐԸ

Տրակտորն ոգնում է գյուղացիներին անցնելու կոլեկտիվ աշխատանքին։ Շնորհիվ տրակտորի, բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության մեջ։

Տրակտորները շինում են բանվորները գործարաններում։ Նշանակում է տրակտորների միջոցով ամրանում է բանվորների և գյուղացիների կապը։ Բանվորները շինում են տրակտորները, վորպեսզի հեշտացնեն 130 միլիոն կոլտնտեսային գյուղացիության աշխատանքը։

Տրակտորը շինվում է մեզ մոտ՝ Լենինգրադում նախկին Պուտիլովյան գործարանում, Խարկովում և Ստալինգրադում։

Տրակտորային մի գործարան գիգանտ յեվս կառուցվում է Չելյաբինսկում։ Նա բաց է թողնելու տարեկան 40 հազ. տրակտոր։

Ռոստովի գործարանը բաց է թողնելու տրակտորային գութաններ՝ 50 հազար տրակտորների համար։

Ռոստովի գործարանը բաց է թողնելու տարեկան 30 հազար ցանիչներ, 40 հազար հնձիչ, խրձկապ-մեքենաներ, 30 հազար խոտհնձիչներ և 25 հազար կոմբայն։

Ռոստովի գործարանը գյուղատնտեսական մեքենաների և գործիքների խոշորագույն գործարանն է հանդիսանալու վոչ միայն ԽՍՀՄ-ում, այլ և ամբողջ աշխարհում։

Յերկրորդ հնգամյակի խնդիրն է հանդիսանալու՝ բոլոր կոլտնտեսությունները մեքենա-տրակտորային կայաններով ընդգրկումը։ Գործն այնպես դնել, վոր գյուղատնտեսական բոլոր աշխատանքները կատարվեն մեքենաներով։ Այդ բոլորը կամրապնդի կոլտնտեսությունները։



Մեքենաներն արմատապես փոխում են մեր գյուղը՝
Գյուղը դառնալու յե սոցիալիստական։

> «Յերկրին տրվելիք տարեկան 50 հազար տրակտորներ՝ 50 հազ. ռումբ են, վորոնք պայթեցնում են հին բուրժուական աշխարհը յեվ ճանապարհ բացում նոր սոցիալիստական կենցաղին գյուղում»։
>
> ՍՏԱԼԻՆ

---

«Յերկրորդ հնգամյակի կենտրոնական խնդիրը պիտի լինի (սոցիալիստական հողագործության բնագավառում) խորհտնտեսային և կոլտնտեսային դաշտերի բերքատվության վճռական բարձրացումը և յերաշտի դեմ պայքարի խնդրի բոլշևիկյան լուծումը»։ (XVII կուսկոնֆերանսի վորոշումը)։

## ԻՆՉ ՊԻՏԻ ԳԻՏԵՆԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՉՔԱՎՈՐ ՅԵՎ ՄԻՋԱԿ

1932 թվի Մայիսի 10-ին բոլշևիկների կուսակցության Կենտկոմը և Ժողկոմխորհը վորոշում ընդունեցին կոլտնտեսային առևտրի ծավալման մասին։ Այդ կարևորագույն վորոշումը պիտի իմանա յուրաքանչյուր կոլտնտեսական, յուրաքանչյուր չքավոր և միջակ։ Այդ վորոշման մեջ ասվում է կոլտնտեսությունների հետագա ամրապնդման, գյուղի և քաղաքի աշխատավորության մատակարարման բարելավման մասին։

Յուրաքանչյուր կոլտնտեսություն, յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է իմանա, վոր ժամկետից առաջ հացամթերումների կատարման համար, կոլտնտեսությունը կստանա գյուղտնտհարկի մոտ 25 տոկոս զիջում պարտքի գումարից, վորը պիտի մտնի կոլտնտեսությունը։

Յուրաքանչյուր կոլտնտեսական պիտի գիտենա, վոր կոլտնտեսությունը և առանձին կոլտնտեսականները, կատարելով հացամթերման իրենց պարտավո-

րությունները պետության առաջ, «Լիակատար հնարավորություն ունեն ծախելու, ըստ իրենց հայեցողության, իրենց հացի ավելցուկը՝ ինչպես շուկաներում, այնպես էլ իրենց կոլտնտեսային խանութներում»։

Նրանք ունեն «լիակատար հնարավորություն անարգել կերպով ծախելու խոշոր անասուններ, խոզեր, թռչուններ և միս իրենց տնտեսություններից շուկաներում և կոլտնտեսային խանութների միջոցով»։

Այդ վորոշումը նպաստում ե կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և աշխատավոր գյուղացիների յեկամուտների բարձրացմանը և կոլտնտեսային առևտրի ծավալմանը։ Վորոշումը վերացնում ե ամեն տեսակ սահմանափակումները խոշոր և մանր անասունների մորթելու գործում՝ ինչպես իրենց գյուղատնտեսության սեփական կարիքների, այնպես էլ ծախելու համար։

Դրա հետ միասին պետությունն ու կուսակցությունը նշում են չարաշահողների դեմ անխնա պայքարի անհրաժեշտությունը։

Դասակարգային թշնամին, կուլակությունը փորձելու յե օգտագործել անասունների մորթելու սահմանափակումների վերացումը, վորպեսզի խանգարի կոլտնտեսությունների աճը։ Կուլակության փորձերը պետք ե անխնայորեն ճնշվեն։ Կենտկոմի և Ժողկոմխորհի վորոշումներին պատասխանենք սոցիալիստական տնտեսության ամրապնդմամբ, հոտերի ավելացմամբ, կոլտնտեսային ֆերմաների ընդլայնմամբ, ֆերմաների կողմից մատղաշներ աճեցնելու և անասուններ գնելու միջոցով։ Զորահավաքենք մեր ուժերը կուսակցության Կենտկոմի մարտի 26 ի վորոշման իրագործման համար, «վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսական ունենա իր կովը, մանր անասունն ու թռչունը»։

---

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Թերթից, բրոշյուրներից նյութեր հավաքեցեք յերկրորդ հնգամյակի մասին և ալբոմ կազմեցեք։
2. Նկարեցեք յերկրորդ հնգամյա պլանի դիագրամը։
3. Փակցրեք յերկրորդ հնգամյակի վերաբերյալ պլակատներ դպրոցում, գործարանի կամ խրճիթ-ընթերցարանի կարմիր անկյունում։
4. Տեղեկացեք ձեր մարզի, ռայոնի, գործարանի, կոլտնտեսության հնգամյակին։

> «Առանց սկզբնական ընդհանուր պարտադիր ուսուցում մտցնելու, մենք չենք կարող առաջ գնալ»։
>
> **ՍՏԱԼԻՆ**

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե

Մթության և տգիտության մեջ եր ապրում ցարական Ռուսաստանը։ Յերեխաների կեսից ավելին մնում եր նույն իսկ տարրական դպրոցից դուրս։

Ցարական կառավարությունը վախենում եր, վոր գրագիտությունը կոգնի բանվորին և գյուղացիներին, չքավորներին և միջակներին ավելի շուտ ճնշումից ազատվելու։

Խորհրդային իշխանությունը կուսակցության ղեկավարությամբ, սկսած 1930 թվից, սկսեց անցկացնել ընդհանուր սկզբնական ուսուցումը։ Դա պետք ե անցկացվի յերկու տարվա ընթացքում։ Այս տարի դա պարտադիր ե 8, 9 և 10 տարեկան յերեխաների համար։ Այդ նշանակում ե, վոր ծնողները պարտավոր են իրենց յերեխաներին դպրոց տալու։ Այդ նշանակում ե, վոր Խորհրդային Միության յուրաքանչյուր յերեխա պարտավոր ե ավարտելու տարրական դպրոցը

այսինքն՝ չորս խումբ։ Բացի յերեխաների պարտադիր ուսուցումից, անցկացվելու յե 12—15 տարեկան անգրագետների ուսուցումը։ Իսկ քաղաքներում և ֆաբ-գործարանային ավաններում, չորրորդ խմբում սովորող բոլոր յերեխաները փոխադրվելու յեն հինգերորդ խումբ։ Դրանով մենք սկիզբ ենք դնում յոթնամյա պարտադիր ուսման անցնելուն։ Միաժամանակ ավելացվում ե յոթնամյակի թիվը գյուղում։

Յոթնամյա պարտադիր ուսումն՝ արդեն այս տարի անցկացված ե մի քանի մարզերում և ռայոններում։

Իսկ ով եր սովորում միջնակարգ դպրոցում (գիմնազիայում) թագավորի որոք։

Բուրժուազիայի, հոգևորականության և կուլակների յերեխաները։

Միայն նրանք էլ մտնում եյին համալսարանները։

Իսկ մեզ մոտ և միջնակարգ դպրոցները և համալսարանները և ուրիշ դպրոցներն առաջին հերթին սպասարկում են բանվորներին և աշխատավոր գյուղացիների հիմնական մասսաներին։

## ԿԱՏԱՐԵՆՔ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

1931 թվի սեպտեմբերի 5-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը վորոշում ընդունեց դպրոցի մասին։ Այդ վորոշման մեջ ասվում ե, վոր մեր դպրոցներում նվաճումների շարքում գտնվում են և պակասություններ։

Ամենամեծ պակասությունը կայանում ե նրանում, վոր դպրոցներում քիչ ուշադրություն եր դարձվում ուսուցման վրա։ Դպրոցականները հաճախ վատ գիտեյին մաթեմատիկան, մայրենի լեզուն, ֆիզիկան, քիմիան, պատմությունը։ Դպրոցը վատ եր պատրաստում լիովին գրագետ մարդիկ տեխնիկումների, ԲՈՒՀ-երի համար։

Մեր յերկրում կատարվում ե ֆաբրիկների և գործարանների հսկայական շինարարություն, բուռն կերպով զարգանում են կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները։ Մենք թևակոխել ենք սոցիալիզմի ժամանակաշրջանը։ Գրագիտության, խորհրդային պոլիտեխնիկական ուսուցման համար պայքարը՝ սոցիալիզմի շինարարության մի մասն ե։ Մեր խորհրդային շինարարության համար պետք են գիտուն բանվորներ, տեխնիկներ, ինժեներներ, ուսուցիչներ, բժիշկներ։ Մեզ պետք են լավ գրագետ մարդիկ տեխնիկային տիրապետելու համար։

Աշակերտությունը պետք ե պայքարի իր դպրոցական ծրագրների իրագործման համար այնպես, ինչպես բանվորներն ու կոլտնտեսականները պայքարում են իրենց պլաններն իրագործելու համար։ Մեր խնդիրն ե՝ գիտությունների 100 %-ային յուրացում. ծրագրերը չյուրացրած վոչ մի աշակերտ։

Բայց մեր դպրոցը պոլիտեխնիկական ե, մեր դպրոցը չի կարող կտրված լինել շրջապատող կյանքից, սոցիալիստական շինարարությունից։

Մեր դպրոցը պետք ե պատրաստի իր գործն իմացող հասարակական գործիչներ և կոլեկտիվիստներ։ Դպրոցը պիտի տանի հասարակական աշխատանք։ Պետք ե այնպիսի հասարակական աշխատանք, վորը դաստիարակի յերեխաների մեջ հասարակական ունակություններ և ծառայե այն առարկաների յուրացման, վորոնք ուսումնասիրվում են դպրոցում։

Դպրոցը սերտ կապված պիտի լինի ֆաբրիկի, գործարանի և կոլտնտեսության հետ։

Ինքնավարությունը դպրոցում պետք ե ուղղված լինի ուսուցման և կարգապահության կողմը։

ՀԿ(բ)Կ Կենտկոմն իր վորոշման մեջ ասում է, վոր խորհրդային դպրոցը պետք է լինի յերկրին գրագետ և գիտուն մարդիկ տվող պոլիտեխնիկական դպրոց։

Աշակերտությունը պետք է կոմյերիտականների, պիոներների, ուսուցիչների հետ միասին կուսակցության ղեկավարությամբ սկսի այդ գործը։

«Չկա այնպիսի ամրոց, վորին չհաղթահարեյին բոլշևիկները...» Անհրաժեշտ է ուսումնասիրել կուսակցության Կենտկոմի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցների մասին և վճռականորեն պայքարել այդ իրագործելու համար։

> Պատանի պիոներներ յեվ դպրոցականներ, ավելի ուշադրություն, ավելի օգնություն ուսուցչին՝ նրա աշխատանքի ընթացքում։
>
> Մանկական ինքնավարության օրգանների աշխատանքը դպրոցում դնել այնպես, վորպեսզի նա գլխավորապես ուղղված լինի ուսուցման վորակի բարձրացման յեվ դպրոցում գիտակից կարգապահության ամրապնդման կողմը։

## ՀԱՐՑԵՐ

1. Ինչու յե մեզ պետք հասնել և անցնել կապիտալիստական յերկրներից։

2. Ինչու յե հնգամյա պլանում առանձին ուշադրություն դարձվում ծանր արդյունաբերության զարգացման վրա։

3. Արդյունաբերության վո՞ր ճյուղերն ենք մենք ավելի զարգացնում։

4. Ի՞նչպես է հնգամյակը վերակառուցում գյուղական տնտեսությունը։

5. Ի՞նչ տվեց հնգամյակի հաջող իրագործումը չորս տարում։

## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրադարանից գրքեր վերցրեք հնգամյակի մասին։

2. Վերցրեք վերջին տասնօրյակի թերթերը և կարդացեք։ Ի՞նչ տեղեկություններ կան նոր գործարանների, ֆաբրիկների, էլեկտրակայանների շինարարության մասին։

3. Ի՞նչ տեղեկություններ կան Խորհրդային Միության զանազան անկյունների տնտեսության և կուլտուրայի աճման մասին։

> Սոցիալիզմի կառուցման ռաները մեր յերկրում ամբողջապես յեվ լրիվ կերպով զուգադիպում են բոլոր յերկրների հեղափոխական շարժման շահերի հետ, կազմելով մեկ ընդհանուր շահ՝ հեղափոխության հաղթանակ բոլոր յերկրներում»:
>
> **ՍՏԱԼԻՆ**
>
> «Մեր յերկիրը—բոլոր յերկրների պրոլետարիատի, ամբողջ աշխարհի ճնշված ժողովուրդների հպարտությունն ու հույսն է»
>
> (Համ. Կոմյերիտմիության Կենտկոմի կոչից)։

## ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ

Նրանց մոտ—վոչնչացնում են մըթերքներն ու հումույթը։ Այրում են բամբակը, ցորենն ու սուրճը. Դրանով կապիտալիստներն ուզում են բարձր պահել մթերքների, հումույթի գները և ստանալ ցանկալի շահերը։

Մեզ մոտ— հացի, բամբակի, կտավատի և այլ տեխնիկական մշակույթների ցանքսերի չտեսնված աճ։ Ցարական Ռուսաստանում պատերազմից առաջ ցանքսատարածությունը տասը տարվա ընթացքում ավելացել էր միայն 15 միլիոն հեկտարով։ Իսկ մեզ մոտ, միայն 1929 30 թվին և 1930-31 թվին ցանքսատարածությունն ավելացավ 18 միլիոն հեկտարով։



Նրանց մոտ—գոյություն ունի կապիտալի իշխանությունը, այդ պատճառով ազգերի վոչ մի հավասարություն չի կարող լինել:

Մեզ մոտ—ազգային կուլտուրայի չտեսնված ծաղկում: Ամենահետամնաց մութ և ճնշված ազգությունններն անցնում են կուլտուրական ժողովրդների շարքերը։ Տասնյակ ժողովուրդներ առաջին անգամ միայն խորհրդային ռոճ ստեղծեցին իրենց տառերը։

Նրանց մոտ—գործազրկության սարսափներ։ Կապիտալի գլխավոր յերկր-

Մեզ մոտ—ԽՍՀՄ-ում—գործազուրկներ չկան։ Մեր ֆաբրիկների, գործա-



ներում կան 62 միլիոն գործազուրկ պրոլետարներ։

Իրենց ընտանիքների հետ, դա 150 միլիոն մարդիկ են, վորոնց վիճակված է քաղցածություն, փողոցներում թափառել և դանդաղ վոչնչացում։

Նրանց մոտ—նրանց ամենասաստիկ թշնամին է հեղափոխական բանվորը։ Գործազուրկների համար նրան սպասում է աքսոր։ Ֆաբրիկների դարպասները պահպանվում են պոլիսմեններով (վոստիկաններով)։ Միայն գործից դուրս հանելու, քաղցի, բանտի վախն է ստիպում աշխատել ատելի տիրոջ համար։

րանների, նորակառույցների, դպրոցների համար պահանջվում են բանվորներ, ինժեներներ, ուսուցիչներ, բժիշկներ։

Մեզ մոտ—ԽՍՀՄ-ում—բանվորների և կոլտնտեսականների աշխատանքային ենտուզիազմի աճ, սոցմրցման և հարվածայնության աճ։

ԽՍՀՄ-ում կան 200 հազար հարվածային բրիգադներ և նրանց մեջ՝ 3,500 հազար հարվածայիններ։



Նրանց մոտ—անտուն բանվորներ։ Բնակարաններ կան, բայց բնակարանային վարձը շատ բարձր է բանվորի աշխատավարձի համեմատ։ Յեթե բանվորը ժամանակին չմուծեց բնակարանային վարձը, տանտերը բանվորին իր ընտանիքով և իրերով փողոց է նետում։ Նրանք ապրում են հին սարայներում, գիշերում են կամուրջների տակ, պուրակների նստարանների վրա։

Նրանց մոտ—վայրենի վրեժխնդրություն աշխատավոր ժողովուրդներին ջարդարար-ֆաշիստների կողմից։

Մեզ մոտ—նոր բանվորական քաղաքներ։ Մեծ գումարներ են ծախսվում բանվորների բնակարանների շինարարության վրա։

Մեզ մոտ—հավասար իրավունքներ վայելող ժողովուրդների կամավոր միություն։

Ամերիկայում նեգրին տանջում են, կախում։ Սպանել, կտոր-կտոր անել (կախել և այրել) նեգրին—համարվում է իրավունքի խնդիր։

Նրա կյանքը գնահատվում է 70 դոլար (140 ռուբլի)։

Հնդկաստանում գյուղացի-հնդիկներին գնդակահարում են հազարներով։

Լեհաստանում ֆաշիստները վառում են գյուղերը և գնդակահարում բելոռուս և ուկրայինացի գյուղացիներին։

Ռումինիայում ճնշում են ռուս և հրեյա բանվորներին։

Կապիտալիզմը-ճնշված ազգությունների բանտն է։

Ազգային հանրապետություններում կառուցվում են ֆաբրիկներ, ելեկտրակայաններ, հիվանդանոցներ, ռադիո, դպրոցներ, տպագրվում են թերթեր և գրքեր մայրենի լեզվով։ Միայն Խորհրդային իշխանության օրով հնարավոր է ազգությունների իրավունքների հավասարությունն ու յեղբայրությունը։

ԽՍՀՄ—բանվոր ազգությունների աշխատավորության յեղբայրական միությունն է։

**Մենք պատերազմ չենք ուզում, բայց կռվի պատրաստ ենք։**

## ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ

Խորհրդային Միությունը—աշխարհի վեցերորդ մասն է։

Աշխարհի վեցերորդ մասը կառուցում է սոցիալիզմ և դասակարգային կռվի յե կանչում կապիտալի լծի տակ գտնվող բոլոր աշխատավորներին։ Կապիտալիստական տնտեսությունն արագ ընկնում է, իսկ մեր, խորհրդայինն՝ անշեղ աճում է։ Կապիտալիստները գիտեն, որ խորհրդային յուրաքանչյուր նոր գործարան, յուրաքանչյուր նոր կոլտնտեսություն կործանում է բերում հին աշխարհին։ Նրանք վճռական կռվի յեն պատրաստվում մեր դեմ։ Մեր սոցիալիստական շինարարությունն ամրապնդում է յերկրի պաշտպանությունը։

Կապիտալիստները, գրավելով 1929 թվի աշնան Չին—Արևելյան յերկաթուղին, փորձ արին պատերազմի քաշելու ԽՍՀՄ-ը։ Բայց այդ փորձը հաջողություն չունեցավ։ Խորհրդային Միության կառավարությունն ու Կարմիր բանակը ցույց տվին, որ պայքարելով խաղաղության պաշտպանության համար, միշտ պատրաստ են վճռական հարված տալու կապիտալիստական բանակից դուրս յեկող յուրաքանչյուր թշնամուն։

Կապիտալիստներն օրեց-օր ավելի և ավելի յեն պատրաստվում պատերազմի։ Նրանք կառուցում են ռազմական նոր նավեր և սավառնակներ, ձուլում են նոր հրանոթներ և արկեր, պատրաստում են թունավոր գազեր, կառուցում են նոր նավահանգիստներ և ամրոցներ կապիտալիստական յերկրներում։ Տարեց-տարի աճում են զինման ծախսերը, նրանք պատերազմի յեն պատրաստվում մեր դեմ։ Մեր Մեր Միությունն ամեն կերպ ամրապնդում է յերկրի պաշտպանությունը։ Կարմիր բանակն այժմ ավելի ուժեղ է, քան առաջ։

Խորհրդային Միությունը մենակ չէ։ Ամբողջ աշխարհում աճում է բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժումը։ Հեռագրերն ամեն օր հաղորդում են դասակարգային պայքարի աճման, նոր գործադուլների, ցույցերի, ապստամբությունների մասին։ Չինաստանի աշխատավորները չին գեներալների դեմ մղած սոսկալի կռվում խորհուրդներ են կազմակերպել Չինաստանում։ Ճապոնիան գրավել է Մանջուրիան, ձգտում է խեղդելու չինական խորհուրդները և հարձակվելու Հեռավոր Արևելքի վրա։

—Պաշտպանենք ամենքս խորհուրդների յերկիրը, պայքարենք կապիտալի դեմ, կռվենք կապիտալիզմի դեմ:

> «Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ուզում, բայց յեվ մեր հողից վոչ մի վերշոկ վոչ վորի չենք տա»:
>
> **ՍՏԱԼԻՆ**

## ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՅԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՄԵՐ ԴԵՄ ԵՆ

*Յեկեղեցիները, հոգեվորականությունը դուրս են գալիս մեր շինարարության դեմ: Նրանք մեր դեմ պատերազմել ուզողների առաջին շարքերումն են գտնվում: Հռոմի պապը պարտավորեցրել ե բոլոր տերտերներին ճառեր արտասանելու Խորհրդային Միության դեմ: 1932 թվի մայիսի 8-ին Հռոմի պապը ճառում եր յեկեղեցիներում և ռադիոյով, վոր Խորհրդային Միության մեջ վոճրագործություններ են կատարվում յերեխաների վերաբերմամբ, վոր նրանցից անաստվածներ են պատրաստում: Պապը միջոցների յե դիմում և քարոզիչներ ե պատրաստում՝ բոլոր յերկրներում կոմունիստական շարժման դեմ պայքարելու համար:*



*Բոլոր յերկրների յեկեղեցիները Խորհրդային Միության ամենակատաղի թշնամիներն են հանդիսանում: Այդ նպատակի համար նրանք ոգտվում են ամեն ինչով: Նրանք սուտ լուրեր են տարածում Խորհրդային Միության դեմ ռադիոյի, մամուլի, կինոյի, յեկեղեցիների միջոցով և բոլոր ժողովներում:*

## ՅԵՍ ԲԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԱՆԴԱՄ ԵՄ

*—Այդ ի՞նչ նոր շքանշան ես կպցրել շապկիդ, Սուրեն,—ուրախ հարցրեց հայրը ճաշի ժամանակ:*

*Սուրենը պատասխանեց:*

*—Սա շքանշան չե, այլ Պաջը-Ավիաքիմի նշան ե: Յերեկ յես անդամագրվեցի:*

*—Ահա՛ թե ինչ,—բացականչեց հայրը, մոտեցնելով հացը բերնին:—Այդ լավ ե, բայց գիտե՞ս արդյոք, թե ինչ ե Պաջը-Ավիաքիմը:*

*—Իհարկե գիտեմ, դրա համար էլ անդամագրվել եմ,—նեղանալով պատասխանեց Սուրենը:—Դա կամավոր ընկերություն ե: Ոգնում ե յերկրին պատրաստվել պաշտպանվելու, յեթե կապիտալիստները հարձակվելու լինեն ԽՍՀՄ-ի վրա: Չե՞ վոր նրանք շարունակ պատրաստվում են պատերազմելու: Իսկ մենք թեև պատերազմ չենք ուզում, բայց կկարողանանք պաշտպանվել:*

*Ճիշտ ե, դավակս: Բայց ինչպե՞ս ե Պաջը-Ավիաքիմը ոգնում պաշտպանվելու—հարցաքննում ե հայրը: Սուրենը ձգում ե ձեռքի գդալը, շտապ կուլ ե տալիս հացի պատառը և սկսում ե պատմել.*

*—Մի՞թե դու չես հասկանում: Չե՞ վոր ընկերությունը շատ անդամներ ունի: Նրանք անդամավճարներ են տալիս և իրենք էլ վարժվում են ռազմական գործին: Այդ փողերով արդեն շատ սավառնակներ և դիրիժաբլներ են կառուցված և դեռ կառուցվում են:*

*Պաջը-Ավիաքիմը ոգնում ե նաև քիմիական գործին: Պաջը-Ավիաքիմը սովորեցնում ե գյուղացիներին դաշտերը պարարտացնել քիմիական պարարտանյութերով և կռվել վնասատուների դեմ: Պաջը-Ավիաքիմի խմբակներում անդամները սովորում են ռազմական գործը—կրակել հրացանից, վիրավորվածների վերքերը կապել:*

*Մենք էլ կխնդրենք ընկ. Գասպարին, վոր մեզ էլ մի բանի վարժեցնի:*

*—Կեցցես, Սուրեն,—ասաց հայրը, վեր կենալով սեղանի մոտից,—ամեն բան գիտես:*

*—Յես միայն Պաջը-Ավիաքիմի անդամ եմ,— համեստ կերպով պատասխանեց Սուրենը:*

> «Լավ սովորիր ռազմական գործը: Այդ գիտությունն անհրաժեշտ ե պրոլետարիատին վոչ թե իր յեղբայրների—ուրիշ յերկրների բանվորների վրա կրակելու, այլ բուրժուազիայի դեմ կռվելու համար, վորպեսզի վերջ տրվի շահագործման, չքավորության յեվ պատերազմներին»:
>
> **ԼԵՆԻՆ**
>
> Բոլոր դպրոցականներին անհրաժեշտ ե լինել Պաջը-Ավիաքիմի շարքերում:

*ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.—*

*Իմացեք ձեր ավագ ընկերից, թե ի՞նչպես ե աշխատում Պաջը-Ավիաքիմի ձեր դպրոցական բջիջը: Թող նրանք ցույց տան ձեզ հակագազ-դիմակը և սովորեցնեն ոգտվել նրանից:*

*Ձեր ծնողներին ներգրավեցեք Պաջը-Ավիաքիմի խմբակները: Այդ աշխատանքով սոցմրցման հրավիրեցեք ձեր դպրոցի մյուս խմբերը:*

> «Մենք պետք ե այնպես առաջ գնանք, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, նայելով մեզ վրա, կարողանա ասել—ահա նա, իմ առաջավոր ջոկատը, ահա նա, իմ հարվածային բրիգադը, ահա նա, իմ բանվորական իշխանությունը, ահա նա, իմ հայրենիքը»:
>
> **ՍՏԱԼԻՆ**

Отв. редактор А. Г Авакьян
Техн. редактор Г. Маркарьян.

2706
А У-1

Сдано в наб. 26|VIII 1932г.
Сдано в печ.28|IX 1932 г
Об'ем 9 1/4 печ. листа
Тираж 2635 экз.

Уполкрайлита № 1747. Ростов н-Д. Газ. кн. тип. СККЮ Ст.-форм. Б5-176х250. Зак. № 4475

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ինչու համար պետք է գիտենալ հասարակագիտությունը . . . . 2

**Բանվորների յեվ գյուղացիների հեղափոխական պայքարը մինչև 1905 թ.**

Ճորտատիրությունը . . . . . 3
Ճորտատեր կալվածատիրոջ իշխանությունը 5
Ինչպես էին ճնշում ազգությունները 6
Գյուղացիների պայքարն ստրկությունից ազատագրվելու . . . . . 7
Պուգաչովյան ապստամբությունը . . 10
Ինչու վերացրին ճորտատիրական իրավունքը 12
Ինչ էր գրում Լենինը ճորտատիրական կախումից գյուղացիների "ազատագրվելու" մասին . . . . . . . 13
Հարկահավաքը . . . . . 15
Ինչպես էին հարստանում ֆաբրիկատերերը, կապիտալիստները ճորտատիրական իրավունքը վերացնելուց հետո . . 16
Հեղափոխական նարոդնիկները . . 17
Ձմեռային պալատի պայթումը . . 18
Կարլ Մարքսն ու Ֆրիդրիխ Էնգելսը . . 19
Փարիզի կոմունան . . . . . 20
Ֆաբրիկատերերի դեմ բանվորների կազմակերպված պայքարի սկիզբը Ռուսաստանում . . . . . . 22
Մորոզովյան գործադուլը . . 23
Չպետք է գնալ այն ճանապարհով, վորով գնում էին նարոդնիկները . . 25
Նիկոլայ Պետրովիչը . . 26
Վ. Ի. Լենինը բանտում . . 28
Լենինն արտասահմանում . . 29
Ցարական կառավարության պայքարը բոլշևիկների կուսակցության և բանվոր դասակարգի դեմ . . . . . 30
Մայիսի մեկը—պայքարի տոն . . 31
Հայ-թուրքական ընդհարումները . . 32
Բանվոր դասակարգի աճը Հյուս. Կովկասում 33
Ռոստովի գործադուլը . . . 34
Մինչև 1905 թվականը բանվորների ու գյուղացիների հեղափոխական դեպքերի հիշատակագիրը . . . . . 35

**1905 թվի հեղափոխությունը**

1905 թվի նախօրյակին . . . . 37
Բավական է համբերել . . . 38
Բանվորների խնդիրը թագավորին . . 39
1905 թ'ի հունվարի 9-ից հետո . . 42
Ապստամբություն նավատորմիղում . . 43
1905 թվի հոկտեմբերյան ընդհանուր գործադուլը . . . . . 44
Լենինը հրեական ջարդերի մասին . 45
Պետերբուրգի խորհուրդը . . 46
Բոլշևիկների կոչը գյուղացիներին . . 48
Գյուղացիները 1905 թ.-ին . . . 49
Լենինը գյուղացիական ապստամբությունների մասին . . . . 51
Կռվի սկիզբը . . . . . 53
Թագավորի բռունցքը . . . 54
1905 թվի հեղափոխության պարտվելու պատճառները . . . . . 55
1905 թվից հետո . . . . . 56

**Հոկտեմբերյան հեղափոխությունը յեվ քաղաքացիական պատերազմը**

Համաշխարհային պատերազմը . . . 59
Ինչպես էին վերաբերվում պատերազմին բոլշևիկները . . . . 60
Լենինը յեկավ . . . . 62
Լենինը ժամանակավոր կառավարության դեմ . . . . . 63
Լենինը թաքնվում է . . . . 63
Բուրժուազիայի վերջին օրերը . 64
Հոկտեմբեր . . . . . . 65
Լենինյան կուսակցությունը և Հոկտեմբ. հեղափոխությունը . . . . 67
Սմոլնիում . . . . . 68
Քաղաքացիական պատերազմ . . 70
Մահափորձ Լենինի վրա . . . 71
Կարմիր բանակը . . . . . 72
Ինչպես ընկավ կռվում Վ. Ի. Չապայևը 73
Կարմիր Դոնը . . . . . 74
Դեպի Ռոստով . . . . . 75
Հեղափոխական մանուկները . . 77
Թշնամիներն արևմուտքում . . . . 78
Սպիտակների թիկունքում . . . . . 79
Պատերազմ լեհ սպիտակների հետ . . . 82
Իմ կյանքը (Վորոշիլովն իր մասին) . . 83
Մ. Վ. Ֆրունզե . . . . . . . . 83
Սահմանի մյուս կողմը . . . . . . . 84
Անդրե Մարտի . . . . . . . . . . 85
Կարլ Լիբկնեխտ և Ռոզա Լյուքսենբուրգ . 86
Ինչու Խորհրդային իշխանությունը հաղթում է իր թշնամիներին . . . . 86
Քաղաքացիական պատերազմի հուշատետր 87
Հյուսիսային Կովկաս . . . . 88
Մեր յերկրամասը համատարած կոլեկտիվացման յերկրամաս է . . . . . 89
Օպորտունիստները — դասակարգային թշնամու աջակիցները . . . . . 91
Բարգավաճող կուլտուրայի յերկիրը . 93

**Կոմունիստական կուսակցությունը** . 96

Բոլշևիկյան հավաքը . . . . . . . 98
Կոմինտերնը . . . . . . . . . 99
Պրոլետարիատի յերդումը . . . . . 102
Ընկեր Ստալինը վորպես ամբողջ աշխարհի բանվորների առաջնորդ . . . 103

**Կոմյերիտմիությունը յեվ պիոներական կազմակերպությունը** . . . . 106

Սոց. շինարարության մեջ և Խորհրդ. հանրապ. պաշտպանության գործում . 107
Ինչ է ասել Լենինը կոմյերիտմիության մասին . . . . . . . 108
Յերիտկոմինտերն . . . . . . . 109
Կոմյերիտմիությունն արտասահմանյան յերկրներում . . . . . . 110
Միջազգային յերիտասարդական օրը . . . 112
Պիոներները . . . . . . . . 114
Պատանի լենինցիներին . . . . . 116
Իլիչը յերեխաների մոտ հյուր . . . . 119
Խորհուրդներ . . . . . . . . 122
Ինչպիսի աշխատանք են կատարում գյուղխորհուրդները . . . . . 125
Ինչպես է կառուցված խորհուրդների իշխանությունը . . . . . . 126
Դեպի խորհուրդների համամիութենական համագումարը . . . . . . 127
Միխայիլ Իվանովիչ Կալինին . . . . 128
Վ. Մ. Մոլոտով . . . . . . . 129
Չինական խորհուրդները . . . . 131

**Սոցիալիստական շինարարություն** . 133

Դզես . . . . . . . . . 136
Մագնիտոգորսկի գիգանտը . . . . . 137
Ինչու յե պետք տրակտորը . . . . . 138
Ընդհանուր սկզբնական ուսուցումը — սոցիալիզմի հաղթական գրավականն է 140
Կատարենք ՀԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը դպրոցի մասին . . . . . . . . 141
Յերկու աշխարհ . . . . . . . 142
Պատրաստ ենք պաշտպանելու . . . . . 145
[illegible]-Ավիաքիմի անդամ եմ . . . . 146


Гос. Библиотека

Գինը 1 ռուբ.
цена 1 руб.

На армянском языке

Потемкин И. Е.

РАБОЧАЯ КНИГА
ПО ОБЩЕСТВОВЕДЕНИЮ
III год

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ"
ԳՐԱՊԱՀԵՍՏԸ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂ, 58
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ «ԿՆԻԳՈՑԵՆՏՐ»

ՀՀ Ազգային գրադարան
NL0194618

4-450a